

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
1917 – 1941 ԹԹ.

ԵՐԵՎԱՆ 2011

9(47.925)  
2h-29<sup>1</sup>

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
(ԲՆԱԿԱՆԱԳՐԱԿԱՆ)

# ՀՈԿՐԱՆՆԵՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 1917 – 1941 ԹԹ.

4564

ՄԵՆՐՈՂ ԱՐԷ. ԱՇԿԵԱՆ  
ՄԱՏԵԼԱՇԱՐ  
69



ARCH. MESROB ASHJIAN  
BOOK SERIES  
69

*Sp...*



ԵՐԵՎԱՆ 2011

## Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ԳԱԱ պատմության ինստիտուտ Սփյուռքի նախարարություն**

**Տպագրվում է ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով**

Աշխատությունը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ  
պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը

Պատասխանատու խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Բ. Բարխուդարյան  
Գրախոս՝ պ. գ. ք., դոցենտ Կ.Յ. Խաչատրյան

Ա 296 Ալեքսանյան Գ. Ս. - Հայկական համայնքները խորհրդային հանրապետու-  
թյուններում 1917 - 1941 թթ. / Գ. Ս. Ալեքսանյան; Պատ. խմբ.՝ Վ. Բ. Բար-  
խուդարյան. - Եր.: Պատմ. ինստ., 2011, 221 էջ:

Սույն աշխատությունը ներկայացնում է կազմավորված խորհրդա-  
յին Ռուսաստանի, այնուհետև ԽՍՀՄ տարածքի հայկական համայնքերի  
հասարակական-քաղաքական, հոգևոր, մշակութային, կրթական կյանքը,  
խորհրդային հանրապետություններում բնակվող հայության թվաքանակը,  
տեղաբաշխման շրջանները, մայրենի լեզվին տիրապետելու աստիճանն ու  
զրազիտությունը: Լուսաբանվում են ստալինյան բռնաճնշումների տա-  
րիներին հայկական հասարակական-քաղաքական շրջանակներին ու ազգա-  
յին հաստատություններին հասցված կորուստները, ինքնությունն ու ազգա-  
յին արձանները պահելու հայության փորձերը:

Ռուսումնասիրությունն առաջին փորձն է՝ ուրվագծելու խորհրդային  
հանրապետությունների հայության պատմությունը: Այն նախատեսված է  
պատմաժողովրդագրության հարցերով զբաղվող մասնագետների, պատմա-  
բանների ու ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏՂ 941 (479.25)  
ԳՄՂ 63.3 (23)

ISBN 978-99941-73-55-6

© ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
© ՍԹՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանի հայկական գաղութները նշանակալի դերակատա-  
րություն են ունեցել հայ-ռուսական հարաբերություններում: Հայկա-  
կան այս գաղութների պատմության ուսումնասիրությունն ունի ինչ-  
պես գիտական, այնպես էլ քաղաքական կարևոր նշանակություն: Ռու-  
սահայ համայնքների ուսումնասիրությունը գիտական ամուր հիմքերի  
վրա դրվեց միայն XX դարի երկրորդ կեսին, որի արդյունքում  
հնարավոր դարձավ վեր հանել հայկական այդ գաղութների սոցիալ-  
տնտեսական, հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային  
կյանքի պատմությունը, ինչը կարևոր է ոչ միայն հայագիտության, այլ  
նաև ռուս պատմագիտության համար:

Ռուսաստանի հայկական գաղթօջախների և համայնքների մինչ-  
խորհրդային շրջանի պատմությունը լայնորեն ուսումնասիրվել է  
խորհրդահայ պատմագրության կողմից, հրապարակի վրա են արժե-  
քավոր աշխատություններ:

Ռուսահայ գաղութների պատմությունը խորհրդահայ պատմագի-  
տության մեջ ուսումնասիրել և մեծագրություններով հանդես են եկել  
մի շարք անվանի պատմաբաններ՝ Ա. Աբրահամյանը, Վ. Ոսկանյանը,  
Վ. Միքայելյանը, Վ. Բարխուդարյանը, Ժ. Անանյանը, Ա. Յուխտը, Վ.  
Խաչատրյանը և ուրիշներ:

1917 թ. բոլշևիկյան հեղաշրջումով ավարտվում է ռուսահայ  
գաղթօջախների պատմության ուղղությամբ կատարված ուսումնասի-  
րությունների ժամանակագրական սահմանագիծը, որն իրականացվել  
է խորհրդահայ պատմագիտություն կողմից: Այս իրադարձությունը  
դիտարկվել է որպես գաղութահայ կյանքի ավարտը:

Խորհրդային հանրապետությունների հայ համայնքների պատ-  
մությունը չի ենթարկվել առանձին հետազոտության, քանի որ դի-  
տարկվել է ԽՍՀՄ ժողովուրդների միասնական, ընդհանրական պատ-  
մության մաս: Ցարիզմի կողմից դեռևս XIX դարի 60-70-ական թթ.  
վերացվել էին հայկական համայնքների ինքնակառավարման վերջին  
մարմիններն ու նախկինում տրված արտոնությունները: Հայկական  
համայնքներին, նրանց ազգային-մշակութային կյանքին ու ինքնու-  
թյանը հասցված լրջագույն հարված էր նաև խորհրդային իշ-  
խանությունն ու համակարգը, ինչի մասին գրել, ներկայացնել  
խորհրդային տարիներին անհնարին խնդիր էր: 1917 թ. իրադար-  
ձություններով ամփոփվում է Ռուսաստանի հայկական գաղութների  
պատմության ցարական շրջանի փուլը:

Ռուսաստանի հայկական համայնքների պատմության հետեղափոխական շրջանի ուսումնասիրության կարևոր կողմերից մեկը հանդիսանում է այն, որ թվում էր՝ կարելի է ավարտված համարել Ռուսաստանի տարածքում հայկական համայնքների և գաղութների հիմնադրման, ձևավորման փուլը, սակայն հենց խորհրդային իշխանության առաջին տարիներին, պայմանավորված պատմական հայրենիքում հայության ցեղասպանությամբ և տեղահանումներով, այստեղ ստվարանում են և առաջանում նոր հայկական համայնքներ, ընդլայնվում է հայերի բնակության աշխարհագրությունը: Խորհրդային Ռուսաստանի տարածքում 1917 թ. ընդհուպ մինչև 1920-ական թթ. սկիզբն ընթացավ ծանր քաղաքացիական պատերազմ, որն իր մերձործությունն ունեցավ տեղի հայ համայնքների և հայության վրա:

Ռուսահայ գաղութների խորհրդային շրջանի պատմության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն քաղաքացիական պատերազմի կիզակետում հայտնված հայկական համայնքների դիրքորոշում-մոտեցումների վերհանումը, հայության մասնակցությունն ու դերակատարությունը Ռուսաստանի քաղաքական հեռանկարի կերտման գործում: Ռուսաստանում իշխանությունը վերցնելու համար բուլշևիկների և «սպիտակ շարժման» մղած պայքարն ուղեկցվեց ակտիվ ռազմական գործողություններով, որոնց իր մասնակցությունը տարբեր տարածաշրջաններում տարբեր կերպ է հանդես բերել նաև տեղի հայ բնակչությունը՝ ելնելով ռազմաքաղաքական իրավիճակից և պահի թելադրանքից:

Ռուսաստանում քաղաքական անկայունության պայմաններում տեղի հայկական մի շարք համայնքներում՝ Դոնում, Դրինում, Զյուսիսային Կովկասում, Ուկրաինայում, Թուրքեստանում, ստեղծվեցին ու զգալի դերակատարություն ստանձնեցին հայկական համայնքային կազմակերպությունները, հասարակական-բարեգործական և մշակութային-լուսավորական հիմնարկները:

Քաղաքացիական պատերազմի տարիներին ռուսահայ այն կենտրոններում, որոնք դուրս էին խորհրդային իշխանության վերահսկողությունից, հայկական համայնքային կառույցների օժանդակությամբ գործել են բարեգործական-գաղթականախնամ մարմիններ, հայկական դպրոցներ, մանուկի միջոցներ, կապեր են հաստատվել Զայաստանի և, մասնավորապես, Ռուսաստանում ԶԶ դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

Խորհրդային իշխանությունն ամեն կերպ խոչընդոտել է Ռուսաստանում ազգային կազմակերպությունների գոյությանը, կոշտ վերաբերմունք է հանդես բերել կրոնի, եկեղեցու և մանուկի նկատ-

մամբ, փակել է ազգային հաստատությունները: Այսպիսի պայմաններում, երբ ազգային հիմնարկները որակվում էին բուրժուական, ազգայնական-հակախորհրդային և ենթակա էին լուծարման, խորհրդային իշխանությունն ազգային խմբերի մեջ տարվող աշխատանքներն իրականացնում էր Ազգությունների ժողկոմիսարիատի ազգային բաժանմունքների միջոցով:

Ռուսաստանում խորհրդային իշխանության հաղթանակն ազդարարեց ոչ միայն հայկական, այլ նաև ազգային բոլոր հաստատությունների լուծարման մասին: Մինչ այդ հայկական տեղական կառույցներն ամբողջովին տնօրինում էին համայնքային կյանքը, որը կարճատև, սակայն որոշ աշխուժություն, թարմ լիցքեր հաղորդեց գաղութահայ կյանքին: Խորհրդային իշխանությունների ազգային քաղաքականությունը բացասական հետևանքներ ունեցավ խորհրդային Զայաստանի սահմաններից դուրս ապրող հայության համար: ԽՍՀՄ-ում, ազգային հիմունքների վրա ստեղծելով առանձին հանրապետություններ, խորհրդային իշխանությունները միևնույն ժամանակ անտեսեցին այդ հանրապետություններում ապրող ազգային փոքրամասնությունների իրավունքները:

Թեպետ խորհրդային իշխանության տարիներին թե պաշտոնական, և թե գիտական հրապարակումներում խոսվում էր ԽՍՀՄ տարածքում խորհրդային Զայաստանի սահմաններից դուրս ապրող հայերի մասին, սակայն երբևէ չէր կիրառվում գաղթօջախ կամ սփյուռք անվանումը: Գաղափարախոսական միտվածություն ունեցող այս մոտեցումը հիմնավորվում էր նրանով, որ հայերն (այդ թվում Զայկական ԽՍՀ-ում բնակվող), որպես խորհրդային Միության լիիրավ քաղաքացիներ, «պատմական նոր հանրության»՝ խորհրդային ժողովրդի բաղկացուցիչ մասն են:

Զարկ է ընդգծել իրողությունը, որ այդ համայնքները միասնական պատմական կենսագրություն են կերտել նախ ռուսական կայսրության, ապա նաև խորհրդային պետության կազմում՝ շուրջ երկու դար գտնվելով նույն մշակութային-հասարակական և սոցիալ-քաղաքական միջավայրում: Առանձնահատուկ կողմերով հանդերձ, պատմական ընդհանրությունը կիրառական է նաև հետխորհրդային տարածաշրջանի նորանկախ հանրապետությունների հայ համայնքները բնորոշելու համար:

Յետազոտության շրջանակներից դուրս է թողնված Անդրկովկասի ԽՖՍՀ հայության հասարակական-քաղաքական, մշակութային-կրթական հիմնահարցերի ամբողջական ուսումնասիրությունը, քանի որ Անդրկովկասի հայությունը, նրա բնակության և ազգային-մշա-

կութային միջավայրը սերտորեն կապված է եղել Հայաստանի հետ և բազմաթիվ թելերով շաղկապված հայ իրականությանն ընդհանրապես:

Անդրկովկասի միութենական հանրապետությունների հայ բնակչության վերաբերյալ ներկայացվում է միայն մեկ բաժնում՝ կապված Միության հայ ազգաբնակչության թվի և տեղաբաշխման գործընթացների վեր հանման հետ, որն անհրաժեշտ է ամբողջացնելու Հայկական ԽՍՀ-ից դուրս ապրող հայության ամփոփ պատկերը:

Խորհրդային համակարգի քաղաքականությունը մշակութային-կրթական, սոցիալ-հասարակական բնագավառներում, ինչպես նաև մերժողական վերաբերմունքը կրոնի ու եկեղեցու նկատմամբ լրջագույն սպառնալիք դարձան հայ ազգային-համայնքային կյանքի համար:

1920-ական թթ. 2-րդ կեսից ամբողջատիրական համակարգի պայմաններում խորհրդահայ համայնքների մշակութային կյանքը անկում է ապրել: Փակվել են Ռուսաստանի հայկական կենտրոնները, գործող ազգային մամուլի օրգանները, որոնք հանդիսանում էին նաև համայնքային կառույցների պաշտոնաթերթերը, լուծարվել կամ վերակազմվել են տասնյակ հայկական դպրոցներ, որոնք գործում էին դեռևս XIX դարից: Հետապնդումների և ունեզրկման են ենթարկվել հայ եկեղեցին: Խորհրդային իշխանությունը ծանր հարված հասցրեց համայնքային-հասարակական կյանքին:

Խորհրդային իշխանությունն անմիջապես ձեռնամուխ եղավ կրթական ոլորտի վերակազմմանը, որոնք հիմք հանդիսացան ձևավորելու խորհրդային դպրոց: Խորհրդային իշխանության առաջին տարիներին միութենական հանրապետությունների հայկական դպրոցական ցանցը կրճատվեց, և միայն 1930-ական թթ., երկրի տնտեսական կայունացումից հետո, ՌԽՖՍՀ հայաշատ կենտրոններում՝ Հյուսիսային Կովկասում, Դոնում և այլն, դրանք ընդլայնվեցին:

Խորհրդային հանրապետությունների հայահոծ շրջաններում կուսակցական տեղական օրգանների կազմում գործել են հայկական սեկցիաներ, որոնք զգալի աշխատանք են տարել հայության շրջանում՝ ներկայացնելով, քարոզելով և ներգրավելով վերջիններիս խորհրդային գաղափարախոսության դաշտ: ԽՍՀՄ-ում կիրառվող ռուսականացման քաղաքականությունը և համայնքներում հայկական ազգային հաստատությունների բացակայությունն անհնարին էին դարձնում տեղի հայության ազգային-մշակութային հետագա գործունեությունը: Անհամեմատ թույլ էր ազգամշակութային ծուլումն ու

ներգործությունը մահմեդական բնակչություն ունեցող միութենական հանրապետություններում:

1920-1930-ական թթ. խորհրդահայ համայնքներում հասարակական կյանքն ուղղորդվում էր Միությունում ընթացող գործընթացներին համահունչ: Հայությունը ներգրավվեց նոր սոցիալ-արտադրական հարաբերությունների մեջ՝ իր վրա կրելով նաև բռնաճնշումների քաղաքականության, աքսորի և տեղահանումների ծանրությունը: Այսպես, Հյուսիսային Կովկասի և Դոնի հայկական շրջանների կուսակցական-պետական ղեկավարությունը մեղադրվել է իր «փորձերում» խորհրդային տնտեսության և հասարակական հարաբերությունների կազմալուծմանն ուղղված գործունեության, տրոցկիստա-բուխարինյան խմբավորման, հակահեղափոխական-դաշնակցական շրջանակների և անգամ ճապոնա-գերմանական ուժերի հետ խափանարարական-վնասարարական գործողությունների մեջ:

ԽՍՀՄ հայահոծ համայնքեր ունեցող տարածաշրջանների համար (Հյուսիսային Կովկաս, Դոն), 1920-1930-ական թթ. դարձան ինդուստրացման և գյուղատնտեսության վերակառուցման տարիներ: Ժամանակաշրջանը մեկ այլ առումով էթնոժողովրդագրական գործընթացների քայքայմանը նպաստող սոցիալական գործոնների ներգործության փուլ էր՝ ոչ պակաս սուր, քան հեղափոխությունն ու քաղաքացիական պատերազմը:

Ժողովրդագրական գործընթացները ԽՍՀՄ-ում 1920-1930-ական թթ. զգալիորեն պայմանավորված էին նաև երկրում ծայր առած համատարած սովի գործոնով: Խորհրդային իշխանության առաջին տարիներն ուղեկցվեցին սոցիալ-տնտեսական հարաբերությունների քայքայումով, բնակչության տեղաշարժերով, թվի անկմամբ, որոնք հեղափոխության և քաղաքացիական պատերազմի, 1920-1930-ական թթ. տեղ գտած սովի ու բռնի, պլանային վերաբնակեցման արդյունք էին:

1920-1930-ական թթ. ԽՍՀՄ-ում տեղ գտած հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական ցնցումներն ուղղակիորեն իրենց ազդեցությունն ու հետևանքները թողեցին Միության ժողովուրդների, այդ թվում՝ հայության վրա: Փոփոխվեց և խնդրահարույց դարձավ երկրում ժողովրդագրական իրական պատկերի վեր հանումը:

Առաջին աշխարհամարտի ու հայության ցեղասպանության, 1917 թ. ռուսական հեղափոխության ու սկսված քաղաքացիական պատերազմի արդյունքում ռուսահայ գաղթօջախները համալրվեցին այստեղ ապաստան գտած տասնյակ հազարավոր հայ փախստա-

կաններով: Անընդհատ տեղաշարժերի արդյունքում ընդլայնվեց հայության բնակության աշխարհագրությունը:

Առանձնահատուկ կարևորություն և անհրաժեշտություն է ներկայացնում 1920-1930-ական թթ. խորհրդային հանրապետություններում բնակվող հայության թվի, տեղաբաշխման շրջանների, լեզվական պատկանելիության, գրագիտության աստիճանի ու այլ գործընթացների վերհանումը: Այդ խնդիրների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում հետևել բախտորոշ դարձած 1915-1920-ական թթ. հետո հայ զանգվածների տեղաշարժերին, թվին և այլ գործընթացներին, ինչպես նաև հստակեցնել Մեծ Հայրենականի նախօրյակին ԽՍՀՄ հայության շրջանում կատարված նույն այդ գործընթացների շարժընթացը:

1920-1930-ական թթ. խորհրդային համայնքների պատմության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն են ձեռք բերում հայության թվաքանակի և տեղաբաշխման շրջանների բացահայտումն ըստ պաշտոնական վիճակագրական նյութերի, քանի որ դրանք անհնարին է կատարել կամերալ ցուցակագրումներով ու հաշվառման այլ ձևերով:

Վերոհիշյալ ժամանակագրական շրջանակներում նախ խորհրդային Ռուսաստանում, ապա ԽՍՀՄ-ում անցկացվել են 5 մարդահամարներ, որոնց համապատասխան վիճակագրական տվյալների ուսումնասիրության շնորհիվ հնարավոր է դառնում լույս սփռել հայությանը վերաբերող գործընթացների ու դրանց զարգացման դինամիկայի վրա: Այս հիմնահարցերի կարևորությամբ են պայմանավորված հետագա բազմաթիվ գործընթացները, ուր ներգրավված էր հայությունը:

Խորհրդային համայնքների պատմության ուսումնասիրությունն ունի կարևոր քաղաքական բաղկացուցիչ. ԽՍՀՄ-ում «վերակառուցման» տարիներից սկսած և փլուզումից հետո ընկած ժամանակաշրջանում լիովին բացահայտվեց «ազգային քաղաքականության» սնանկությունն ու կոնֆլիկտայնությունը, նախկին միութենական հանրապետություններում գլուխ բարձրացրեց ազգայնականությունը: Անդրկովկասի, Միջին Ասիայի հանրապետություններում, Ռուսաստանի տարբեր տարածաշրջաններում բնակվող հայությունը հայտնվեց ազգայնական դրսևորումների թիրախի դերում. մեջտեղ էր բերվում ոչ տիտղոսակիր ազգ լինելու, կրոնական-ազգային, ավելի բարեկեցիկ ապրելու և բազմապիսի այլ «նկատառումներ», տեղ գտան բռնությունների և արտաքսման դեպքեր: Այս նկատառումներից ելնելով՝ առանձնակի կարևորություն է ներկայացնում նախկին խորհրդային հանրապետություններում բնակվող հայության պատմության ուսումնասիրությունն ու ներկայացումը, նրանց այստեղ հաստատվելու, գործունեության ու դերի վեր հանումը:

## Աղբյուրների և գրականության տեսություն

Հայ պատմագիտության մեջ խորհրդային համայնքներին նվիրված գիտական ուսումնասիրությունները բացակայում են, առանձին ուսումնասիրողներ ներկայացրել են խորհրդային տարբեր համայնքների վերաբերյալ մասնակի, հպանցիկ ակնարկներ: Խորհրդային համայնքների պատմության ամբողջական ուսումնասիրություն կամ թե խորհրդային ժամանակաշրջանի որևէ պատմափուլն ընդգրկող ուսումնասիրություն կատարված չէ: Մինչևիդևափոխական Ռուսաստանի հայ գաղթօջախների սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային և հասարակական-քաղաքական պատմության բազմաթիվ իրողություններ հանգամանալի ուսումնասիրվել են հայ գաղթօջախների պատմության խնդիրներով զբաղվող պատմաբանների կողմից<sup>1</sup>:

Խորհրդային համայնքների 1920-ական թթ. պատմության որոշ խնդիրներով զբաղվել է Վ. Աղոբաշյանը, մասնավորապես, Կրասնոդարի երկրամասի հայ ազգաբնակչության սոցիալ-տնտեսական և կրթական հիմնահարցերով: Խորհրդային համայնքների պատմության հետազոտության համար նոր փուլ ազդարարվեց 1990-ական թթ., երբ մի շարք հետազոտողներ՝ Մ. Մինասյանը, Վ. Գրիգորյանը, Ժ. Անանյան, Վ. Խաչատրյանը, Ա. Դավթյանը, Ա. Տերեշչենկոն և այլք ձեռնամուխ եղան նորովի արժևորելու ռուսահայ տարբեր գաղութների պատմությունը, հրատարակեցին նոր աշխատություններ<sup>2</sup>: Այդ հրատարակություններն իրենց ժամանակագրական շրջանակը հասց-

<sup>1</sup> Արրահմյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ.1, Երևան, 1964, հ. 2, Ե., 1967; Միքայելյան Վ., Դրիմի հայկական գաղութի պատմություն. 1801-1917, Երևան, 1970, նույնի՝ Դրիմահայոց պատմություն, Ե., 1989; На Крымской земле, Е., 1974: Բարխուդարյան Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779-1861թթ.), Ե., 1967; նույնի, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, հ. 2, (1860-1917թթ.), Ե., 1985: Ананян Ж. А., Армянская колония Григориополь, Е., 1969; Погосян А. А., Армянская колония Армавира, Е., 1981; Григорьянц А. А., Армяне в Средней Азии (вторая половина XIX в.-1917 г.), Е., 1984: Хачатурян В. А., Образование армянской колонии в Астрахани, ԴԲՀ, 1983, № 4: Адобашьян В. А., Из истории армянского населения на территории Краснодарского края, ԼՀԳ, 1968, № 7: Արշարունի Ա. Մ., Մոսկվայի հայ մամուլը, Ե., 1971: Չեվիրզյան Գ. Գ., Հայ ազգագրություն և բանախոսություն, գիրք 10, Ե., 1980:

<sup>2</sup> Минасян М., Армяне Причерноморья, Е., 1990: Григорьянц В., Армяне Средней Азии. История, современное положение, перспективы, Е., 1994: Ананян Ж., Хачатурян В., Армянские общины России, Е., 1993: Терещенко А., Армянское население Донском и Северо-кавказском регионах в 20-х годах XX века, ԴԲՀ, 1992, № 2-3: Դավթյան Ա., Հայկական և հայախառն բնակավայրերը Հյուսիսային Կովկասում, Ե., 2001: Բարխուդարյան Վ., Համառոտ ուրվագիծ ռուսական կայսրության հայկական դպրոցների պատմության, Ե., 2006:

նում էին մինչև խորհրդային առաջին տարիները և ամբողջական ու բազմակողմանի ուսումնասիրություններ չեն հանդիսանում խորհրդահայ համայնքների պատմության վերաբերյալ: Չնչին բացառություններով, այդ աշխատությունները կրկնում էին նախորդ շրջանի ուսումնասիրությունները, բացակայում են նոր նյութերի և խորհրդահայ համայնքների պատմության բազմակողմանի հետազոտումը:

Վերջին շրջանում ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հայ գաղթօջախների պատմության բաժնի աշխատակիցների ջանքերով հրատարակվել են ռուսահայ գաղթօջախների մինչխորհրդային շրջանի պատմությունն ընդգրկող արժեքավոր ուսումնասիրություններ<sup>3</sup>, ուր ամփոփ կերպով ներկայացված են այդ գաղութների պատմությունը, որոնք սակայն ավարտվում են 1917 թ. իրադարձություններով, մասնակի դեպքերում հպանցիկ ներկայացված են մինչև 1920 թ. ընկած իրողությունները: Հայ սփյուռք հանրագիտարանը, ներկայացնում է Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմության մինչհեղափոխական շրջանը, մասնակիորեն նաև քաղաքացիական պատերազմի շրջանը: Հաջորդ կոլեկտիվ աշխատանքը երկհատոր «Հայ գաղթաշխարհի պատմություն»-ն է, որը սակայն հայ գաղթօջախների պատմությունը հասցնում է մինչև 1920 թ.: Առաջին հատորում հանգամանալից ներկայացված են Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմությունը, որը սակայն նախկինում կատարված ուսումնասիրությունների համառոտ շարադրանք է: Երկրորդ հատորում առանձին ընդգրկված է Սիջին Ասիայի հայ գաղթօջախի պատմությունը մինչև երկրամասի խորհրդայնացումը: Երկհատորյակը ներկայացնում է ընդամենը 1917-1920 թթ. ընդգրկող որոշ իրադարձություններ, այն էլ ոչ բոլոր տարածաշրջանների հայության վերաբերյալ:

Ուսումնասիրությունը հիմնականում գրված է ՀՀ, ՌԴ և Ղրիմի ԻԶ պետական արխիվների փաստաթղթերի և արխիվային այլ նյութերի, ԽՍՀՄ Կենտրոնական Վիճակագրական Վարչության (ԿՎՎ) կողմից հրատարակված տարբեր մարդահամարներին վերաբերող հրատարակությունների, պատմաժողովրդագրական և էթնոքաղաքական, հասարակական-քաղաքական, խնդիրներով զբաղվող մի շարք ուսումնասիրողների աշխատությունների, մինչխորհրդային և խորհրդահայ մամուլի հարուստ նյութերի հիման վրա:

<sup>3</sup> Հայ սփյուռք հանրագիտարան, Ե., 2003; Հայ գաղթաշխարհի պատմություն, հ.1, Ե., 2003, նույնի հ.2., Ե., 2003:

Ներկա ուսումնասիրության համար կարևոր աղբյուր են հանդիսացել ՌԴ Դոնի Ռոստովի մարզի պետական արխիվի (ԴԱՊՕ) նյութերը, մասնավորապես, 151,181, 806 և 1818 ֆոնդերի նյութերը, որոնք վերաբերում են Դոնի հայկական համայնքի հասարակական, համայնքային, բարեգործական, մշակութային-լուսավորական, հայրենակցական և այլ բազմաբնույթ կազմակերպությունների հիմնադրման ու գործունեության պատմությանը՝ ընդգրկելով 1917-1922 թթ. ընկած ժամանակաշրջանը: Արխիվային այս նյութերի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռել վեր հանել ռուսահայ ամենաստվար և հին գաղութներից մեկի՝ Դոնի հայության հասարակական, հոգևոր-մշակութային կյանքի բազմաթիվ կարևոր կողմեր, մինչ այս անհայտության մեջ գտնվող հաստատություններ և կառույցներ, որոնք գործել են ինչպես Նոր Նախիջևանում և Դոնի Ռոստովում, այնպես էլ նրանց մերձակա հայկական գյուղերում: Վերոհիշյալ ֆոնդերում հայտնաբերված նյութերի շնորհիվ հնարավոր է դառնում ամբողջովին վերհանել Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի տարիներին Դոնի հայության և այստեղ ապաստանած հայ գաղթականության գործունեությունը:

ՀԱԱ մի շարք ֆոնդերում՝ 1265, 200, 276, 178 և այլն, առկա արխիվային նյութերի հիման վրա լույս է սփռվել Ռուսաստանի հայկական համայնքների պատմության որոշակի դրվագների վրա: Այսպես, ֆ. 1265 նյութերը ներկայացնում են Ղրիմի և Դոնի հայկական համայնքների հասարակական-քաղաքական և կրթամշակութային կյանքի կարևոր խնդիրներ, ՀՀ-ում 1919 թ. հիմնված Ղրիմ-Դոնյան հայրենակցական միության (նախ.՝ Ս. Վրացյան) հետ փոխհարաբերությունները:

ՀՀ կառավարության և Ռուսաստանի տարբեր քաղաքական միավորների (Դոն-Կուբան, Սիբիր, Հեռավոր Արևելք ևն) հետ և տեղի հայկական համայնքների պատմության, հայրենիքի հետ նրանց փոխհարաբերությունների և ծրագրերի վերաբերյալ հետաքրքիր նյութեր են առկա ՀԱԱ ֆ. 200-ում: Այս ֆոնդի նյութերի շնորհիվ վեր են հանված ռուսահայ մի շարք համայնքների հասարակական-մշակութային կառույցների գոյության ու գործունեության որոշ դրվագներ, որոնք առավել կարևոր են փոքրաթիվ հայ ազգաբնակչություն ունեցող երկրամասերի կտրվածքով: Այս ֆոնդում առկա նյութերի միջոցով հնարավոր է հետևել ՀՀ քաղաքականությանը՝ ռուսահայ համայնքները ներգրավելու երկրի սոցիալ-տնտեսական կարիքներին և ռազմաքաղաքական աջակցության ապահովման առումով:

ՀԱԱ ֆ. 178-ում, ուր ամփոփված են ՀՕԿ-ի գործունեությունը լուսաբանող նյութերը, կարևոր են ուսումնասիրելու համար այս կառույցի գործունեությունը խորհրդահայ տարբեր համայնքների կտրվածքով:

Ղրիմի ԻՅ (Սիմֆերոպոլ) պետական արխիվի 663 (Ղրիմյենտ-գործկոմ), 1188 (Ղրիմհեղկոմ), 4988 (Սիմֆերոպոլի հայկական համայնքային վարչություն) ֆոնդերում առկա նյութերի միջոցով հնարավոր է դարձել ներկայացնել Սիմֆերոպոլի հայկական համայնքային վարչության գործունեությունն, որն ընդգրկել է ամբողջ Ղրիմը, երկրամասի հայկական համայնքային, հայրենակցական այլ կառույցների գործունեությունը, հայության զբաղվածության և այլնի վերաբերյալ հարուստ տվյալներ:

Ուսումնասիրության համար առանցքային նյութեր են հանդիսացել ԽՍՀՄ ԿԿՎ և Խորհրդային Ռուսաստանի Ազգգործժողկոմատի հրատարակությունները, որոնք վերաբերում են ԽՍՀՄ-ում 1920-1930-ական թթ անցկացված քաղաքային և Համամիութենական մարդահամարների վիճակագրական ամփոփ տվյալներին<sup>4</sup>: Վերոհիշյալ ժամանակաշրջանում Խորհրդային Ռուսաստանում, ապա ԽՍՀՄ-ում

<sup>4</sup> Итоги Всесоюзной городской переписи 1923 г., часть IV, М., 1927: Жизнь национальностей, книга I (VI), М., 1924: Всесоюзная перепись населения 1926 года, том IX, Российская Социалистическая Федеративная Советская Республика, Издание ЦСУ СССР, М., 1929; նույնի, том I, Северный район. Ленинградско-Карельский район, М., 1928; том II, Западный район. Центрально-Промышленный район. М., 1928; том III, Центрально-Черноземный район. Средне-Волжский район. Нижне-Волжский район, М., 1928; том IV, Вятский район, Уральская область, Башкирская АССР, М., 1928; том V, Северо-Кавказский край. Крымская АССР. Дагестанская АССР, М., 1928; том VI, Сибирский край. Бурято-Монгольская АССР, М., 1928; том VII, Дальне-Восточный край. Якутская АССР, М., 1928; том VIII, Казахская АССР. Киргизская АССР, М., 1928; том X, Белорусская Социалистическая Советская Республика, М., 1928; том XI, Украинская Советская Социалистическая Республика. Итоги по республике. Полесский подрайон, М., 1929; том XII, Украинская Советская Социалистическая Республика, Правобережный подрайон. Левобережный подрайон, М., 1928; том XIII, Украинская Советская Социалистическая Республика. Степной подрайон. Днепропетровский подрайон, Горнопромышленный подрайон, М., 1929; том XIV, Закавказская Социалистическая Федеративная Республика, М., 1929: ЗЦСУ. Население Закавказья. Всесоюзная перепись населения 1926 г.. Краткие итоги, Издание ЗакЦСУ, Тифлис, 1928: Итоги Всесоюзной переписи населения 1926 года по г. Баку и Примыслово-Заводскому району, том I, Издание Баксовета., 1929: Итоги десятилетия Советской власти в цифрах (1917-1927), ЦСУ СССР, М., 1928: Всесоюзная перепись населения 1937 г. Краткие итоги, М., 1991: Всесоюзная перепись населения 1939 года. Основные итоги., М., 1992:

անցկացվել են 5 մարդահամարներ՝ 1920 թ. օգոստոսի 28-ին, 1923 թ. մարտի 15-ին, 1926 թ. դեկտեմբերի 17-ին, 1937 թ. հունվարի 6-ին և 1939 թ. հունվարի 17-ին: Այս մարդահամարների նյութերի շնորհիվ հնարավոր է դարձել ներկայացնել նախկին Ցարական Ռուսաստանի տարբեր տարածաշրջաններում բնակվող հայության թիվը, տեղաբաշխվածությունն ըստ նահանգների, երկրամասերի, սեռային և տարիքային կազմերը, գրագիտության աստիճանն ու լեզվական պատկանելիությունը:

Հայության ցեղասպանությունն ու տարահանումն Արևմտյան Հայաստանից և Թուրքիայից, մուսավաթականների կողմից իրականացված հայության կոտորածներն ու արտաքսումը Արևելյան Անդրկովկասից դարձան հայրենագրված հայության տեղաշարժերի պատճառ: Այս ողբերգությունների հետևանքով հայության զգալի հատվածն իր ապաստանը գտավ քաղաքացիական պատերազմի թոհուրեհում գտնվող Ռուսաստանում, ուստիև միանգամայն կարևոր է դառնում այստեղ ապաստանած հայության թվաքանակի ճշգրտումը, տեղաբաշխվածության շրջանների վեր հանումը և այլն: Բացի այդ, 1920-1930-ական թթ. հանդիսացան երկու աշխարհամարտերի միջև ընկած կարևոր պատմական մի ժամանակահատված, երբ ընդամենը քառորդ դարի ընթացքում հայությունը կրեց մարդկային վիթխարի կորուստներ և սիռիվեց տարբեր երկրամասերում:

ԽՍՀՄ-ում անցկացված մարդահամարների արդյունքների շնորհիվ հնարավոր դարձավ վերջնականապես ճշգրտված տվյալներ ունենալ հայության արևելյան հատվածի կտրվածքով: ԽՍՀՄ ԿԿՎ հրատարակություններն իրավամբ սկզբնաղբյուրներ են հանդիսանում, քանի որ արտացոլում են պաշտոնական տվյալներ, բայցևայնպես, մարդահամարների քաղաքական մեծ նշանակությամբ պայմանավորված, մասնավորապես, 1930-ական թթ. անցկացված մարդահամարների տվյալներին (ԽՍՀՄ-ում տեղ գտած բռնաճնշումների, պլանային տեղահանությունների, կոլեկտիվացման և այլ գործընթացներով պայմանավորված 1930-ական թթ. մարդահամարներն իրենց վրա կրել են որոշակի «պետական պատվեր»), հարկ է որոշակի վերապահումով մոտենալ:

1920-1930-ական թթ. ԽՍՀՄ հայ ազգաբնակչության թվի, նրա աճի շարժընթացի, տեղաբաշխման և այլ գործընթացների վերաբերյալ բացի վերոհիշյալ նյութերից առկա են նաև այլ մարդահամարների



համեմատական նյութեր, ինչպես նաև թեմատիկ հետազոտություններ<sup>5</sup>:

Հետազոտության համար սկզբնաղբյուր ծառայած նյութերի հաջորդ խումբը կազմում են երկրում խորհրդային իշխանության հաստատման և քաղաքացիական առճակատման պատմությունն ամփոփող ժողովածուները, տարբեր համագումարների նյութեր և այլ տարեկան հրատարակություններ<sup>6</sup>:

Որպես հիմք են ծառայել նաև հրապարակի վրա եղած ժամանակակից որոշ հետազոտություններ, որոնք սակայն անուղղակիորեն կամ մասնակիորեն են արծարծում ատենախոսության մեջ բարձրացված հարցերը:

Այդ հետազոտողների աշխատություններում մասնավորապես ներկայացված են 1917 թ. հեղափոխությունից հետո Ռուսաստանում ծավալված քաղաքացիական պատերազմի տարիներին հայ բնակչությանը և գաղթականությանը վերաբերող խնդիրներ, քաղաքացիական պայքարին հայության մասնակցությունը, հայ մամուլի գործունեության որոշ կողմեր, հայ եկեղեցուն և դպրոցին վերաբերող հարցեր: Վերոհիշյալ հետազոտողների շարքում կան ինչպես հայ, այնպես էլ նախկին միութենական հանրապետությունների առանձին ուսումնասիրողներ<sup>7</sup>:

Հետազոտության շարադրելիս կարևոր դեր է վերապահվել Հայաստանում, Սփյուռքում և արտերկրում հրատարակված բազմաբնույթ գիտական, գրական-հասարակական և հանրամատչելի հան-

<sup>5</sup> Кадыров Ш. Х., Народонаселение Туркменистана: История и современность, Ашхабад, Ылым, 1986: Итоги Всесоюзной переписи населения 1959 года. Туркменская ССР, М., 1963: Вудро М. Я., Население Москвы (по материалам переписей населения 1871-1970 гг.), М., Статистика, 1976: Игнатьева В. Б., Национальный состав населения Якутии, Якутск, 1994: Լրաբեր հասարակական գիտությունների, հ. 12 (432), Ե., 1976:

<sup>6</sup> Декреты Советской власти, том I, М., 1957, նույնի՝, том II, М., 1959; том III, М., 1964; том IV, М., 1968: Борьба за Советскую власть на Кубани в 1917-1920 гг., сб. Док. и мат., Краснодар, 1957; Борьба трудящихся масс за установление и упрочение Советской власти на Ставрополье (1917- апрель 1921 гг.), сб. Док. и мат., Ставрополь, 1968; Борьба за власть Советов на Дону 1917-1920 гг., сб. Док., Ростов-на-Дону, 1957: Резолюции первой Всекрымской армянской беспартийной конференции (23-26 янв. 1926 г.), Симферополь, 1926. Армянский настольный календарь на 1919 год, Ростов-на-Дону, 1918: Ռուսահայ հոգեւորականութեան համագումարի (1917 թ. Յունիս) բանաձեւեր, Ս. Էջմիածին, 1917:

<sup>7</sup> Պետրոսյան Գ., Հայաստանի հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), Ե., 2006: Белозеров В., Этническая карта Северного Кавказа, М., 2005: Агзамходжаев С., История Туркестанской Автономии (Туркистон Мухторияти), Ташкент, 2006:

դեսներին<sup>8</sup>: Դրանք միութենական հանրապետություններում բնակվող հայության հոգևոր-մշակութային և հասարակական-քաղաքական կյանքին վերաբերող ուսումնասիրություններ են, գիտական հոդվածներ և փաստաթղթեր:

Առանցքային նշանակություն ունեն հետազոտության ժամանակաշրջանի հայկական մամուլի ուսումնասիրությունը, որոնք հարուստ նյութ են պարունակում ինչպես Ռուսաստանի, այնպես էլ միութենական հանրապետությունների հայության կյանքի տարբեր կողմերի վերաբերյալ: Հատկանշական է, որ 1917 թ. հեղափոխությանը հաջորդած 2-3 տարիներին, ռուսահայ տարբեր կենտրոններում կյանք մտան հայկական համայնքային մամուլի մի շարք օրգաններ, որոնք կաղապարված չէին գաղափարական սահմանափակումներով և, իրավամբ, հանդիսանում էին ազատ, ազգային մամուլ: Նրանց գործունեությունը կասեցվեց խորհրդային իշխանության հաստատումով, մի մասն էլ կրեցին նյութատեխնիկական դժվարություններ և անկանոն պարբերականությամբ լույս ընծայվելուց հետո փակվեցին: Այդ պարբերականների շարքում ուրույն դերակատարություն ունեցան Նոր Նախիջևանում հրատարակվող «Հայ համայնք»-ն<sup>9</sup> ու Օդեսայում հրատարակվող «Հոսանք»-ը<sup>10</sup>: Այս պարբերականների հրատարակությունը թեև կարճատև եղավ, սակայն նրանք համակողմանի լուսաբանեցին հայության վիճակը քաղաքական անկայուն այդ տարիներին և լապես խթանեցին հայ կյանքի զարթոնքին:

Մինչև 1920-ական թթ. սկիզբը, Ռուսաստանի հայաբնակ տարածաշրջաններում հրատարակվեցին բազմաթիվ այլ հայ մամուլի օրգաններ, այդ թվում՝ բուլշևիկյան ուղղվածության, որոնք թեև իրենց կարճատև գործունեությանը, չդարձան համայնքային կյանքի հայելին՝ ունենալով ավելի համեստ դերակատարություն և նշանակու-

<sup>8</sup> Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 1983, № 2/66/; 1967, № 3 (18/); 1970, № 3 (27/); 1979, № 3 (55/); 2006, № 1 (107/); նույնի՝ № 2/108/; Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 1975, № 6 (390/); նույնի՝ 1978, № 12 (432):

Վեմ, Փարիզ, 1934, Յունուար-Փետրուար; նույնի՝ Սեպտեմբեր-Հոկտեմբեր; 1935, Յունուար-Ապրիլ; 1938, Յունուար, նույնի՝ Յունուար-Մայիս: Ալիք, Պյատիգորսկ, գիրք 1, 1919; նույնի՝ գիրք 2, 1920: Բուրա, Մոսկվա, № 1, 1923; նույնի՝ № 2, 1923; № 3, 1928: Լրաբեր Հայաստանի Ոգնության Կոմիտեյի Մոսկվայի ճյուղի, Ս., 1924, № 1: Բազմավեպ, Վենետիկ-Ս. Ղազար, թիւ 1-4, 2003:

<sup>9</sup> Հայ համայնք, Նոր Նախիջևան, 1918, №№ 7, 8, 9, 10, 11, 16, 21, 23, 24, 25; նույնի՝ 1919, №№ 17, 21, 26, 27, 28, 29:

<sup>10</sup> Հոսանք, Օդեսա, 1918, №№ 1, 6, 7, 9, 11, 12, 13, 17, 26, 27, 28, 29, 38; նույնի՝ 1919, №№ 12, 15, 16, 17, 18, 21, 23, 24, 25, 26, 33, 14, 37, 38, 45, 54, 66, 67; 1920, № 1:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ՈՒՒՍԱՍՏԱՆՈՒՄ 1917-1920 ԹԹ.

1.1. Հայերը Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի տարիներին 1917-1920 թթ.

Առաջին աշխարհամարտի արդյունքում հայ ժողովուրդը կրեց վիթխարի կորուստներ, ազգի բեկորները սփռվեցին աշխարհի տարբեր անկյուններում: Արևմտյան Հայաստանում Օսմանյան Թուրքիայի կողմից հայերի նկատմամբ իրականացված ցեղասպան քաղաքականության հետևանքով վերապարծների մի զգալի մասը, գաղթականի կարգավիճակով, հայտնվեց Ռուսաստանում: Շեշտակիորեն աճեց Ռուսաստանի հայկական համայնքների թիվը, բազմաթիվ նոր համայնքներ առաջացան Հարավային Ռուսաստանում, Ուկրաինայում և այլուր: Հայ փախստականների նոր ալիք դեպի Ռուսաստանի և Միջին Ասիայի տարբեր շրջաններ սկիզբ առավ նորահռչակ Ադրբեջանի հակահայ քաղաքականության հետևանքով: Այս ամենին հավելելով նաև Ռուսաստանում ընթացող քաղաքացիական պատերազմը, նախկին եվրոպական դաշնակիցների ներխուժումն ու միջամտությունը Ռուսաստանի ներքաղաքական խնդիրներին, ապա լիովին ամբողջանում է այն քառսային իրավիճակն ու անհուսալի հեռանկարը, որում հայտնվել էր մազապուրծ հայ գաղթականը: Վերոնշյալ զարգացումներին զուգընթաց, փախստական հայերի անընդհատ տեղաշարժերի պայմաններում, դժվարին խնդիր է ամփոփ և ամբողջական պատկեր վեր հանել Ռուսաստանում վերջիններիս տեղակայման, տնտեսական և հասարակական գործունեության վերաբերյալ:

4564

1917 թ. փետրվար-հոկտեմբերյան իշխանափոխությունները Ռուսաստանի հայաբնակ շրջաններում ազգային կյանքի հզոր խթան հանդիսացան: Քաղաքական բարդ պայմանները խոչընդոտ չդարձան ազգային դպրոցների, մամուլի, հրատարակչությունների, ազգային-համայնքային կառույցների ստեղծման համար: Ռուսաստանի հայկական կենտրոններում ազգային կյանքը սկսեցին տնօրինել նախ պատերազմի կարիքների համար հիմնված հայ օգնության կոմիտեները, ավելի ուշ՝ նրանց հիմքի վրա ձևավորված հայկական ազգային խորհուրդները:



Ավելի ուշ՝ 1920-1930-ական թթ., միութենական հանրապետություններում, տեղական կուսկազմակերպությունների հայկական բաժանմունքներին կից հանդես եկան խորհրդահայ մամուլի տասնյակ օրգաններ, որոնց շարքում իրենց բովանդակային, հասարակական լուրջ դերակատարությունով հատկապես առանձնացան Տաշքենտում հրատարակվող «Կարմիր շող»<sup>11</sup> և Դոնի Ռոստովում հրատարակվող «Բուլշևիկ»<sup>12</sup> պարբերականները: Այս պարբերականների բազմաբնույթ նյութերի և հրապարակումների շնորհիվ հնարավոր է դառնում վեր հանել խորհրդահայ համայնքների կյանքի բազում կողմեր, մինչ այս չարժարժված թեմաներ, որոնք արժանի են առանձին ուսումնասիրության:

ԽՍՀՄ-ում տեղ գտած բռնաճնշումները 1930-ական թթ., իրենց հետևանքները թողեցին նաև Հյուսիսային Կովկասում և Դոնում հրատարակվող հայ մամուլի վրա:

Այսպիսով, խորհրդային իշխանության հաստատումով հայկական համայնքային կառույցների գործունեությունը կասեցվեց, ստեղծվել էին ազգային հանրապետություններ: Միևնույն ժամանակ ազգային հանրապետությունները, այդ թվում՝ ՀԽՍՀ-ն, խիստ սահմանափակ հնարավորություն ունեին սատարելու իրենց սահմաններից դուրս բնակվող ազգակիցներին՝ լռությամբ հետևելով նրանց համայնքային կյանքի քայքայմանը:

<sup>11</sup> Կարմիր շող, Տաշքենտ, 1924, №№ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9:

<sup>12</sup> Բուլշևիկ, Դոնի Ռոստով, 1937, №№ 44, 47, 48, 53, 54, 62, 68, 69, 70, 71, 73, 77, 78, 80, 86, 87, 88, 91, 95, 100, 104, 118; նույնի՝ 1938, №№ 4, 6, 14, 28, 62, 95:

1917-1920 թթ. Ռուսաստանի հայկական համայնքների կյանքը տնօրինեցին ազգային-համայնքային մի շարք կառույցներ, որոնց գործունեությունն ու գոյությունը անընդունելի էր խորհրդային իշխանությունների համար՝ դրանք դիտվում էին սոցիալական անհավասարության, բուրժուական գաղափարախոսության և ազդեցության տարածող «գործիքներ»։ Այդ կառույցների փոխարեն ամրապնդվող խորհրդային իշխանությունը նպատակահարմար էր գտնում ձևավորել տեղական խորհուրդներին և գործկոմներին կից հայկական բաժանմունք-սեկցիաներ՝ Հայկական Գործերի Կոմիսարիատի ենթակայության ներքո։ Ռուսաստանում հայկական համայնքային կառույցների գործունեությունը շատ կարճ տևեց, այնտեղ, որտեղ հաստատվում էր խորհրդային իշխանություն դրանք ուղղակիորեն փակվում էին։

Դեռևս 1914 թ. հոկտեմբերի 26-ին Մոսկվայում հիմնվել էր Մոսկվայի հայկական կոմիտեն, որի նպատակն էր հայ կամավորներին և մարտերում վիրավորվածներին, ինչպես նաև արևմտահայ փախստականներին օգնություն ցուցաբերելը։ Կոմիտեի նախագահն էր հրապարակախոս, հասարակական գործիչ Ստեփան Մամիկոնյանը, իսկ ակտիվ մասնակիցների թվում էին Ա. Ծատուրյանը, Ա. Ջիվեխգոյը, Կ. Կուսիկյանը և ուրիշներ։ Վերոհիշյալ խնդիրներից զատ կոմիտեն նախաձեռնեց հրատարակչական լայն գործունեություն՝ հայ և ռուս հասարակությանը ներգրավելու համար հայ հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի դաշտ։

Մոսկվայի հայկական կոմիտեի գործունեությանն ակտիվորեն մասնակցում էր հայ ուսանողությունը՝ ստանձնելով հիվանդանոց-կացարանների կազմակերպումն ու հայ երեխաների կրթության գործը։ Փետրվարյան հեղափոխությունից հետո Մոսկվայի հայկական կոմիտեն ուղղություն էր տալիս Մոսկվայի հայ համայնքի ազգային-մշակութային և հասարակական կյանքին՝ ստանձնելով համայնքի ղեկավար կենտրոնի դերը։ Ինչպես այս կոմիտեն, այնպես էլ եկեղեցական խորհուրդը, Մոսկվայում բոլշևիկյան իշխանության հաստատումից հետո փակվեցին (1918)։

ՌուՖՍՄ Ժողկոմխորից (նախագահ Վ. Լենին) 1918 թ. հունիսի 12-ին ղեկրետ է ընդունում «Հայկական ազգային խորհուրդները, պաշտպանության խորհուրդները, ռազմա-հեղափոխական կոմիտեները և մյուս բուրժուական կազմակերպությունները լուծարելու մասին»։ Այս ղեկրետի հրապարակումով էլ սկիզբ է դրվում խորհրդային իշխանության վերահսկողության տակ գտնվող բոլոր տարածքային կառույցների՝ խորհուրդների, համայնքային կառույցների, հայ քա-

ղաքական կազմակերպությունների գործունեության դադարեցման գործընթացը։ Դեկրետում այդ մասին հստակորեն նշվում էր. «Նկատի ունենալով, որ Ռուսաստանի խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության տարբեր քաղաքներում գոյություն ունեցող հայկական ազգային խորհուրդները և կոմիտեները, ինչպես նաև Հայաստանի պաշտպանության խորհուրդների կամ ռազմա-հեղափոխական կոմիտեների անվան տակ գործող, կամ այլ, բուրժուական կազմակերպությունները փաստացիորեն հանդիսացել և հանդիսանում են Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի մասնաճյուղեր՝ գտնվելով կապի մեջ Անդրկովկասի հակահեղափոխական կառավարության հետ, ինչպես նաև այն, որ այդ բուրժուական կազմակերպությունները, որոնց մեջ են մտնում բացահայտ հակահեղափոխական տարրեր, քողարկվելով Հայաստանի պաշտպանության կեղծ խոսքերով իրականացնում են դրամահավաք և ձևավորում են ջոկատներ հակահեղափոխական Հայկական ազգային խորհրդի տրամադրության տակ ղեկու համար և խորհրդային իշխանության դեմ ուղղված քարոզչություն են տանում ...»<sup>13</sup> ենթակա էին անհապաղ լուծարման։ Այդ կառույցների լուծարումից հետո նրանց փաստաթղթերը, գույքն ու կապիտալը, ինչպես նաև զբաղեցրած շինությունները դրվում էին Հայկական գործերի կոմիսարիատի ենթակայության տակ, որը ստեղծվեց 1917 թ. դեկտեմբերին<sup>14</sup>։ Այն վայրերում, որտեղ Հայկական գործերի կոմիսարիատը բաժանմունքներ չուներ, վերոհիշյալ գույքը հանձնվելու էր տեղական խորհուրդներին։ Չնայած այն հանգամանքին, որ հայկական կառույցների ճակատագիրը կանխորոշված էր, Հայկական ազգային կոմիտեն բողոքարկեց Ժողկոմխորի վերոհիշյալ որոշումը, որի լուծմանը անցան հունիսի 27-ին Ժողկոմխորին կից հանձնաժողովում։ Հանձնաժողովի ղեկավար նիստի արդյունքում օգոստոսի 1-ին հայկական ազգային կազմակերպությունների փակման որոշումը համարվեց ճիշտ, իսկ օգոստոսի 3-ին Ժողկոմխորին իր նիստում հաստատեց հանձնաժողովի որոշումը։

Ռուսաստանի հայերի ազգային կյանքի ղեկավարությունը բոլշևիկյան իշխանությունը դրեց Հայկական գործերի կոմիսարիատի վրա, որը գործում էր Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատին կից և մյուս ազգային բաժանմունքների հետ միասին

<sup>13</sup> Декреты Советской власти, том III, М., 1964, с. 15.

<sup>14</sup> Ալիխանյան Ա., Հայկական գործերի Կոմիսարիատի գործունեությունը, Ե., 1958, էջ 21:

առաջադրանք ուներ պայքար ծավալելու հակահեղափոխության դեմ՝ նրա ազգային դրսևորումներով հանդերձ<sup>15</sup>, անշուշտ, նկատի էր առնվում նաև հայկական ազգային կառավարության դեմ տարվելիք գործունեությունը: Կոմիսարիատն իր հակահեղափոխական պայքարի առանցքն էր դիտում Ռուսաստանի տարածաշրջաններում գործող և հայ «բուրժուա-նացիոնալիստական» որակում ստացած հայկական կազմակերպությունների վերացումն ու նրանց ունեցվածքի բռնագրավումը հոգուտ Կոմիսարիատի<sup>16</sup>, ինչն էլ նույնօրինակ հակազդեցություն էր բերում. «Ուկրաինան, Կուբանը, Դոնը և Գյուսիսային Կովկասը քաղաքացիական պատերազմի տարիներին ցարական զեներալների ձեռքն անցնելուց հետո Կոմիսարիատի բաժանմունքները դադարում են գործելուց»<sup>17</sup>: Հայկական գործերի կոմիսարիատի գործունեության առաջին փուլում ՌևՖՍՅ ժողովուրդի դեկրետով (1918 թ. մարտ) փակվեց Պետերբուրգի Հայկական Ռազմական Կոմիսարիատը, «որի գլուխ կանգնած էր Կերենսկու Շտաբի պետ, ոչ անհայտ զեներալ Բագրատունին:... Հայկական Կոմիսարիատն իր ձեռքն է վերցրել հայկական դեմոկրատիայի քաղաքական և մշակութային կյանքի ղեկավարումը, ծիշտ է միայն խորհրդային տարածքի սահմաններում»<sup>18</sup>: Այսպես, Ռուսաստանի տարբեր շրջաններում գործող հայկական բազմաբնույթ կառույցների դեմ պայքարի սկիզբ դրվեց:

Հայկական գործերի կոմիսարիատի նախագահն էր Վառլամ Ավանեսովը (Մարտիրոսյանը), աշխատակցում էին Վ. Տերյանը (տեղակալ), Պ. Մակինցյանը, Ա. Գովհաննիսյանը և ուրիշներ: Ռուսահայերի շրջանում խորհրդային քաղաքականության իրագործումը, մասնավորաբար, ազգային քաղաքականության սկզբունքների տարածումը դիտելով իր գլխավոր խնդիրը, Կոմիսարիատը կարողացավ զգալի քարոզչական աշխատանք կատարել մշակութային-լուսավորական ասպարեզում, օգնել Մոսկվայում և Ռուսաստանում կենտրոնացած մեծաթիվ հայ փախստականներին, կարիքավորներին: Այս ուղղությամբ անգնահատելի աշխատանք է իրականացրել Վ. Տերյանը, ում գործունեությունն ընդգրկել է հայ գաղթականներով լեցուն Գյուսիսային Կովկասն ու Պոլովոժին: Կոմիսարիատի գործունեության վերաբերյալ Վ. Տերյանի կազմած 1918 թ. նոյեմբերի 25-ի հաշվե-

տվության մեջ ներկայացված է այդ շրջաններում Գաղթականական բաժանմունքի իրականացրած գործունեությունը: Հայ գաղթականներին աջակցություն ցուցաբերելու համար ԵԳ ժողովուրդիատը ավելի քան 6 մլն. ռուբլի է հատկացրել Գաղթականական բաժանմունքին բժշկասանիտարական ջոկատ կազմակերպելու և Պոլովոժին, Գյուսիսային Կովկաս գործուղելու համար. «Առաջին ջոկատը հուլիսի 29-ին ուղևորվեց Աստրախան ընկ. Տերյանի գլխավորությամբ՝ իր հետ տանելով անհրաժեշտ քանակի զուգար և երկու վագոն դեղորայք ու այլ ապրանքներ Աստրախանի և Գյուսիսային Կովկասի փախստականների կարիքների համար»<sup>19</sup>:

Կոմիսարիատն ու նրա տեղական բաժանմունքները Աստրախանում, Դոնի Ռուստովում, Արմավիրում, Սարատովում, Խարկովում և այլն հայ գաղթականների համար բացել են հիվանդանոցներ, որբանոցներ, հոգացել կարիքները: 1919-1920 թթ. ընթացքում Կոմիսարիատը ստեղծել է իր տեղական բաժանմունքների լայն ցանցը «...սկսած Սիբիրից մինչև Բելոռուսիա և Բաքու»<sup>20</sup>:

1919 թ. Կոմիսարիատը ձեռնամուխ է եղել Ուկրաինայի տարածքում հայկական ազգային կազմակերպությունների վերացման և միաժամանակ Կոմիսարիատի բաժանմունքներ ձևավորելու գործին: Ուկրաինայում Հայկական գործերի կոմիսարիատի լիազոր է մշանակվել Ս. Մարգարյանը, բաժանմունքներ են հիմնվել Կիև, Խարկով և Օդեսա քաղաքներում:

Ռուսահայ շրջաններին քաղաքական գործընթացներին ծանոթացնելու և ներգրավելու նպատակով Կոմիսարիատը հայերեն լեզվով հրատարակել է «Կոմունիստ» և «Կարմիր դրոշակ» լրագրերը, որոնք քարոզել են խորհրդային իշխանությունների քաղաքական գիծը: Չնայած վերջին հանգամանքին այս թերթերը որոշակի դրական լիցք են հաղորդել Մոսկվայի հայ համայնքի ազգային կյանքին:

Հայկական գործերի Կոմիսարիատը գոյատևեց մինչև 1921 թ. մարտ ամիսը, երբ ՌևՖՍՅ Ազգությունների գործերի ժողովուրդի որոշմամբ լուծարվեց:

Ռուսաստանում հեղափոխական իրադրության և քաղաքացիական հակամարտության պայմաններում տարբեր տարածաշրջաններում բնակվող հայությունը կամա թե ակամա ներքաշվեց հասարակական-քաղաքական գործընթացների մեջ: Ռուսաստանի հայաշատ տարածաշրջաններում՝ Դոնում, Գյուսիսային Կովկասում,

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 26:

<sup>16</sup> Ալիխանյան Ս., Վահան Տերյանի պետական գործունեությունը, Ե., 1956, էջ 133:

<sup>17</sup> Ալիխանյան Ս., Հայկական գործերի Կոմիսարիատի..., էջ 47:

<sup>18</sup> Великая Октябрьская Социалистическая революция и победа Советской власти в Армении, сб. док., Е., 1957, с. 243.

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 247:

<sup>20</sup> Ալիխանյան Ս., Հայկական գործերի Կոմիսարիատի..., նշվ. աշխ., էջ 38:

Ղրիմում, Կուբան-Չերնոմորիեում, Միջին Ասիայում ևն, հայությունը հայտնվեց հակամարտ ճամբարների բախման կիզակետում, առավել ևս, որ այդ տարածաշրջաններում էր վճռվում Ռուսաստանի ապագայի հեռանկարը:

Հայությունը, տեղերում կազմակերպվելով իր ազգային-համայնքային կառույցների շուրջը և կոչված լինելով լուծելու բազմաբնույթ հիմնախնդիրներ, այնուհանդերձ, որոշակի մասնակցություն ունեցավ հասարակական-քաղաքական խնդիրներին:

Այսպես, հայահոծ Կուբան-Չերնոմորիեում հայությունը 1917 թ. փետրվարյան իրադարձություններից անմիջապես հետո ներգրավվեց հասարակական-քաղաքական գործընթացների մեջ, թեև ժամանակավոր կառավարությունը առաջ էր քաշել պահանջ ոչ ռուսահպատակներին խորհուրդների մեջ թույլ չտալու մասին, ինչը, ոտնահարում էր բազմահազար թուրքահպատակ հայության շահերը, ովքեր անօգուտ բողոքեցին դրա դեմ: Արդեն 1917 թ. օգոստոսին Ադլերի շրջանի Նիժնի Շիլովկա հայկական գյուղում Կ. Օֆյանի գլխավորությամբ գործում էր կարմիր ջոկատ՝ հակահեղափոխական ուժերի և ավազակախմբերի դեմ պայքարի համար: 1918 թ. հունվարին, Սոչիում խորհրդային իշխանության հաստատումից հետո, տեղի քաղաքային խորհրդի նախագահ է ընտրվում Ս. Տեր-Գրիգորյանը, իսկ ձևավորված Յեդկոմի անդամ՝ Լ. Տիրաքյանը: Վերջինս, մինչև ժամանակ, ֆինանսների կոմիսարն էր և Կարմիր Գվարդիայի շտաբի անդամը<sup>21</sup>: Հետաքրքրական է, որ այս հեղկոմի առաջին քայլերից էր կոմս Լորիս-Մելիքովի նախկին կալվածքում, ուր աշխատում էին հայ վարձակալներ, առաջին կոլտնտեսության կազմակերպումը:

Ռուսաստանում սկիզբ դրված հասարակական-քաղաքական գործընթացներին ներգրավվել են նաև տեղերում գործող հայ քաղաքական կուսակցությունների մասնաճյուղերը, որոնք մասնակցել են անգամ տեղական ընտրություններին (1917): Այսպես, Եկատերինոդարի քաղաքային դումայի պատգամավորների ընտրություններին մասնակցած «Ղաշնակցություն» կուսակցությունը, հավաքելով 424 ձայն, քաղաքային դումայում ստացել է մեկ պատգամավորական տեղ<sup>22</sup>: Կուբանի դաշնակցական կառույցներն ակտիվորեն մասնակցել են տեղական ինքնակառավարման մարմինների և նախապատրաստվել Սահմանադիր ժողովի ընտրություններին, ձևավորել

րել զինված ուժեր. «...Եկատերինոդարի քաղաքային դումայի ընտրություններում 1917 թ. ամռանը կուսակցությունը ստացաւ ձայների 1,3 %-ը, 1918 թ. գարնանը քաղաքային դումայի ժամանակաւոր կոմիտեն յենում էր հայկական կանոնաւոր զինուած 100 հոգանոց խմբի վրայ, որը ղեկավարում էին փորձառու դաշնակցական հրամանատարները»<sup>23</sup>:

Սոչիի Յեդկոմի անմիջական նախաձեռնությամբ խորհրդային իշխանություն է հռչակվում Գագրայում, իսկ. «1918 թ. ապրիլին Արմավիրում ձևավորվեց և Սուխումի ուղարկվեց հայկական մեծաթիվ զինված ջոկատ Աբխազիայի հեղափոխական ապստամբներին օգնելու համար»<sup>24</sup>: 1918 թ. հունիսին Կամավորական բանակը հյուսիսից, իսկ մենշևիկյան զորքերը հարավից հետ են մղել Սոչիի Յեդկոմի տրամադրության տակ գտնվող ուժերին և սպառնալիք ստեղծել խորհրդային իշխանության գոյության համար: Այս վճռական պահին Սոչիի Յեդկոմի նախագահի օգնական Գ. Սրապյանին է հանձնարարվում կարմիր ուժերի ռազմական պատրաստության գործը. «Վերջինս Սոչու, Տուապսեի և Ադլերի հայկական ազգային խորհուրդների օգնությամբ կարողացավ ձեռք բերել բավականաչափ զենք...»<sup>25</sup>:

Երկրամասի հայությունն ակտիվորեն ընդգրկված էր նաև տեղի երիտասարդական կազմակերպություններում. «1919 թ. օգոստոսին Լևայա Շչել բնակավայրում հիմնված ընդհատակյա կոմերիտական կազմակերպության ղեկավար կազմում էր ընտրվել Տեր-Օհանյանը»<sup>26</sup>:

Սոչիի հայ բնակչությունը մեծապես տուժել է ռազմական գործողությունների ժամանակ, ուստիև դեպի խորհրդային իշխանությունը կողմնորոշված շրջանի հայության այդ հատվածը նկատելի դեր է ունեցել հատուկ նշանակության զորամասերի կազմակերպման գործում: Այդօրինակ զորամասերից մեկի հրամանատար էր Լ. Տույանը Լոռ գյուղում: Հետագայում նա դարձավ 17 բնակավայր ընդգրկող նույն ենթաշրջանի Յեդկոմի նախագահը: Տեղի խորհրդային իշխանության համար վճռորոշ էր նաև 1919 թ., երբ նոր թափով ծավալվեց

<sup>23</sup> Կարապետյան Լ., Կուբանի դաշնակցական կուսակցության պատմությունից. կառուցվածքը, իրաւաքաղաքական գաղափարախօսութիւնը եւ տակտիկան (1904-1918 թթ.), Համշէն և համշէնահայութիւն (գիտաժողովի նիւթեր), Երևան-Պէյրուք, 2007, էջ 78-79:

<sup>24</sup> Минасян М., նշվ. աշխ., էջ 117:

<sup>25</sup> Սույն տեղում, էջ 117-118:

<sup>26</sup> Սույն տեղում, էջ 119; Борьба за Советскую власть на Кубани в 1917-1920 гг., նշվ. աշխ., էջ 26.

<sup>21</sup> Минасян М., Армяне Причерноморья, Е., 1990, с.116.

<sup>22</sup> Борьба за Советскую власть на Кубани в 1917-1920 гг., сб. Док. и мат. Краснодар, 1957, с. 76.

պայքարը Դենիկինի ուժերի դեմ: Այս շրջանում եկատերինոզարի ճակատում քաղաքացիական պատերազմին իր մասնակցությունն է բերել հայտնի հայ բոլշևիկ Գևորգ Աթարբեկյանը: Գ. Աթարբեկյանի և Ե. Էշբայի անմիջական կազմակերպման արդյունքում ձևավորվեց ՌԱԴԲԿ Սուխումի օկրուգային կոմիտեն: Աբխազիայի ՌԳԿ կազմում Գ. Աթարբեկյանից բացի ընդգրկված էր Ա. Չեյթունյանը, որն հետագայում դարձավ ֆինանսական հանձնաժողովի անդամ: Աբխազահայության համար քաղաքացիական պատերազմի փուլերում կարևոր շրջան էր թուրքական ներխուժման փորձը Կոդորի շրջան 1918 թ. մայիսին, այնուհետև՝ Սուխում: Դեռևս թարմ էին ապրիլին Բաթումի հայության կոտորածները թուրքերի կողմից, ուստիև Սուխումի և Սոչիի շրջանների հայությունը լավ էր հասկանում իրեն վիճակվելիք բախտը թուրքերի հաջողության պարագայում և կազմակերպված ուղքի ելավ. «...Սուխումի հայկական ազգային խորհրդի նախագահ Խ. Ավդալբեկյանը մեկնում է Պիլենկովո-Սոչի՝ կոորդինացնելու համատեղ գործողությունները Սոչիի Յեդկոմի և հայկական ազգային խորհրդի հետ՝ անհրաժեշտության դեպքում թուրքերի դեմ պայքարելու համար»<sup>27</sup>: Այսպիսով, թուրքական վտանգի առկայությունն ու հայության անվտանգության ապահովման խնդիրն ընդհանրապես, Սևծովյան շրջանի հայկական ազգային խորհուրդներին մղեց տեղական Յեդկոմների հետ համատեղ գործողությունների, որն հնարավորություն տվեց լուծել խնդիրը: Հաջողվեց ջախջախել թուրքական զորախումբը, սակայն վրաց մենշևիկների առաջխաղացման արդյունքում երկրամասում նոր բռնություններ սկսվեցին, այդ թվում՝ հայերի նկատմամբ:

Սոչիի շրջանի և Աբխազիայի հայ բնակչությունն աննպաստ վիճակում էր հայտնվել Դենիկինի և Վրաստանի միջև առկա տարածքային վեճերի պատճառով ևս, որի ժամանակ հայերի համակրանքն առաջինի կողմն էր, քանի որ վրացական զորքերը բռնություններ ու թալան էին իրականացնում տեղական հայ բնակչության նկատմամբ: 1919 թ. փետրվարին վերոհիշյալ շրջաններ մտած Կամավորական բանակի կազմում, Սոչիի ռազմաճակատը պաշտպանում էր նաև 1500 հայերից կազմված զորամասը<sup>28</sup>:

1919 թ. աշնանը Դենիկինի ուժերը՝ Կուբանում կրած պարտությունից հետո ներխուժեցին Չերնոմորիե և այստեղ սկսեցին անկանոն

գործողությունների դիմել. տեղ գտավ թալանի ու բռնությունների նոր ալիք: Փորձ կատարվեց զորահավաք իրականացնել տեղական բնակչության շրջանում, որի հետևանքով բնակչությունը խմբերով հեռացավ անտառներ՝ կազմակերպելով հայտնի «կարմիր-կանաչ բանակը»: Վերոհիշյալ բանակի կազմում բազմաթիվ հայեր էին ընդգրկված, որոնց շահերի պաշտպանությամբ հանդես եկավ Սոչիի հայկական ազգային խորհուրդը՝ նախագահ Հակոբյանի գլխավորությամբ՝ հասնելով զորահավաքի անցկացման հրամանագրի չեղյալ հայտարարմանը:

Աբխազիայի ամբողջ տարածքում ձևավորված հեղափոխական կոմիտեների, պարտիզանական ջոկատների կազմում հայերը ներգրավված էին և գործուն մասնակցություն ունեցան երկրամասում խորհրդային կարգերի վերջնական հաղթանակի գործում:

Բազմաթիվ հայեր կուսակցական-պետական պաշտոններ ստանձնեցին Աբխազիայում, որոնց թվում էր Օ. Մինասյանը՝ կուսակցության Աբխազիայի մարզկոմի քարտուղարի պաշտոնակատար, Մ. Պետրոսյանը՝ Աբխազիայի Կենտրոնականի նախագահի տեղակալ և այլք:

Քաղաքացիական պատերազմին Ռուսաստանում իրենց ընդհատակյա գործունեությամբ աչքի են ընկել նաև Արմավիրի հայ բոլշևիկները, որոնք մասնակցել են ոչ միայն խորհրդային իշխանության համար մղված պայքարին, այլ նաև արևմտյան ճակատում լեհերի դեմ մղվող կռիվներին. «...երբ 1920 թ. Գայը (Հ. Բժշկյան) ժամանեց խորհրդային Արմավիր և կազմակերպեց կավալերյան դիվիզիա պանական Լեհաստանի դեմ պայքարի համար, բազմաթիվ արմավիրցիներ, որոնք ռազմական մկրտություն էին ստացել Գայի կամավորական ջոկատի շարքերում, մտան նրա դիվիզիայի կազմի մեջ»<sup>29</sup>:

Հեղափոխությունից հետո Հյուսիսային Կովկասում լայն գործունեություն ծավալած հայկական ազգային կոմիտեները բոլշևիկների պահանջով փոխեցին իրենց անվանումները, սահմանափակվեց նրանց գործունեությունը, ինչի մասին Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդին ահազանգում էին տեղերից կատարվող գրագրությունները. «խորհրդային իշխանութան պահանջով Դոնի շրջանի և Հիւս. Կովկասի բոլոր քաղաքների Հայոց ազգային խորհուրդները պիտի կոչվեին «Հայ ժողովրդական յեղափոխական կոմիտեներ» և կազմված պիտի լինեին սոցիալիստական տարրերից գլխավորապես: Մարտի սկզբներին (1918 թ. - Ա. Հ) համարեա թե ամեն տեղ էլ նոր ընտ-

<sup>27</sup> Минасян М., էջ 124:

<sup>28</sup> Մայիլյան Բ., Վրաստանի կառավարությունը և Սոչիի շրջանի համաձայնագրի (1918-1920 թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ, № XXIV, էջ 170:

<sup>29</sup> Погосян А., Армянская колония Армавира, Е., 1981, с. 128.

րութիւններ եղան և ազգային խորհուրդները այդպէս կազմեցին»<sup>30</sup>։ Ավելի ուշ, Հյուսիսային Կովկասի բոլոր այդ կոմիտեները, միատեսակ գործունեություն իրականացնելու համար, համագումար հրավիրելով ձևավորեցին Արմավիրի Կենտրոնական Կոմիտեն, որը ամփոփապէս լայն գործունեություն ծավալեց։ Այսքանով, սակայն բոլշևիկները չբավարարվեցին, և մասնավորաբար, հայ բոլշևիկ Գ. Հայկունին, ամհարկի միջամտություն էր կատարում Կոմիտեի աշխատանքներին, նրա անդամներին հակաբոլշևիկ որակելով և պահանջում էր նոր կազմ ձևավորել։ Կոմիտեի ցրումը կարճ ժամանակով հետաձգվում է միայն այստեղ ժամանած Ասքանազ Մռավյանի միջամտության շնորհիվ, սակայն Հայկունին ի վերջո բացառապէս բոլշևիկներից բաղկացած նոր կազմ է ձևավորում։ Խնդրին լուծում տալու եկատերինոդարի (Կուբանի) խորհրդային կառավարության պահանջները նույնպէս Գ. Հայկունին առժամանակ անտեսել է։ Այսպիսի լարված իրավիճակում են հայտնվել նաև այլ վայրերի հայկական խորհուրդները, որը Հյուսիսային Կովկասում քաղաքացիական պատերազմի հետևանքով առաջ եկած անբարենպաստ իրականության վկայությունն էր։

1918 թ. հոկտեմբերի 17-ին եկատերինոդարում տեղի է ունեցել հայկական նախկին ռազմա-հեղափոխական կոմիտեների ներկայացուցիչների խորհրդակցություն։ Խորհրդակցությանը ներկա են գտնվել եկատերինոդարի, Արմավիրի, Դոնի Ռոստովի, Հյուսիս-Կովկասյան (այդ թվում բոլշևիկների կողմից ցրված Հանքային Ջրերի (Միներալնիե Վոդի, - Ա. Հ.) կոմետեներից), Թուրքահայաստանի Պաշտ պանության խորհրդի ներկայացուցիչները և Հյուսիսային Կովկասի ու Դոնի մարզի հայ զինվորականների ռազմական կոմիսար Ս. Գրիգորյանը։

Համագումարում, մինչ Անդրկովկասի Ռուսաստանից անջատումը և Բաքվի անկումն ընկած ժամանակահատվածը, Հայկական ժողովրդա-հեղափոխական կոմիտեների գործունեությունն արգասաբեր է գնահատվել, որից հետո իրավիճակը կտրուկ փոխվել էր. «Այդ կոմիտեների գործունեությունը դադարեցվեց անցյալ ամառվա վերջին հայ բոլշևիկների դավաճանության հետևանքով, որոնց ցուցումով էլ Հայկական Կոմիտեները փակվեցին, գույքը բռնագրավվեց և անդամները ձերբակալվեցին։ Մյուս կողմից կամավորական բանակի տարածքում ժողովրդա-հեղափոխական Կոմիտեները վերանվանվել են Գաղթականական Կոմիտեներ։ Այս շրջանում հայ բոլշևիկների

ծեռքն է ընկնում Հյուսիս-Կովկասյան Կենտրոնական և Արմավիրի Կոմիտեների ողջ գույքն ու 300 հզ. ռուբլի, որի հետևանքով փակվել են այդ շրջանների որբանոցները, հիվանդանոցներն ու փախստականական կազմակերպությունները»<sup>31</sup>։ Վերոհիշյալ թալանից խուսափել են Թերեքի և Հանքային Ջրերի կոմիտեները, որոնք իրենց գործունեությունը շարունակել են մինչև Վ. Տերյանի ժամանումը, ով իր հետ բերում էր այդ մարմինները փակելու Լենինի դեկրետը։ Այդ ընթացքում հայկական տեղական կոմիտեներին հաջողվել է իրենց գույքն ու ունեցվածքը (հիմնականում 5 մլն ռ. գումարը և մուրհակները, կտրոնները) բարեհաջող կերպով տեղափոխել Դոնի Ռոստով, և միայն Պյատիգորսկի կոմիտեին չի հաջողվել դուրս բերել իր գործերն ու զանձարկղում եղած 18 հզ. ռուբլին։

Հայերի մասնակցությունը քաղաքացիական պատերազմին և հասարակական իրադարձություններին ակտիվ է եղել նաև Կովկասյան Հանքային Ջրերի շրջանում, ուր նրանք մեծ թիվ էին կազմում։ Նրանց շարքերում իրենց ակտիվությամբ աչքի են ընկել հայ կանայք, որոնք ներգրավված էին ամենատարբեր օղակներում։ Այսպես, 1919 թ. հունվարի 7-ին Հյուսիսային Կովկասի կոմունիստների համագումարի ընթացքում Եսենտուկիի պատվիրակ Տեր-Ստեփանովան հանդես է եկել քաղաքում տիրող իրավիճակի մասին առանձին զեկուցումով<sup>32</sup>։

Հետաքրքրական է, որ Հյուսիսային Կովկասի հայության շրջանում բոլշևիկյան քարոզչությունը գործել է նպատակամղված, ինչի վառ վկայությունն է քաղաքական բնույթի թերթիկների և մամուլի տպագրումը հայերենով։ Այսպես, Սուրբ Խաչի գավառային կոմիտեի տվյալներից մեկում նշվում է հաշվետու ամսում քաղաքում տարածված 200 օրինակ հայալեզու թերթի մասին<sup>33</sup>։

Այս շրջանում Դոնի մեծաթիվ հայությունը ներգրավված էր հակաբոլշևիկյան ճամբարում, վարում էր ազգային-համայնքային համեմատաբար աշխույժ կյանք, տնօրինում երկրամասում կուտակված բազմահազար հայ գաղթականության հիմնախնդիրները և հասկանում էր, որ բոլշևիկների իշխանության հաստատումը կարող էր կասեցնել ազգային կյանքի առաջընթացը։ Միևնույն ժամանակ, Դոնի երկրամասը հանդիսանում էր «սպիտակ» շարժման օջախներից մեկը, այնուհանդերձ երկրամասում բոլշևիկյան շարժման հայ ակտիվ անդամներ կային, որոնց շարքում առանձնանում էր Ս. Լուկաշինը, ով

<sup>31</sup> Նույն տեղում, գ. 164, թ. 2։

<sup>32</sup> Борьба трудящихся масс за установления и упрочение Советской власти на Ставрополе (1917- апрель 1921 гг.), сб. Док. и мат., Ставрополь, 1968., с. 107.

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 174։

1918 թ. հունիսին ձևավորված Դոնի խորհրդային հանրապետության արդարադատության ժողովոմ էր<sup>34</sup>: Ս. Լուկաշինը ընտրվել է Ռոստով-Լախիջևանի քաղաքային խորհրդի պատգամավոր, միաժամանակ գլխավորելով Դոնգործկոմի՝ խորհրդային հաստատությունները բուրժուական տարրերից մաքրելու նպատակով կազմված հանձնա-ժողովը<sup>35</sup>:

Միջին Ասիայի հայությունը նույնպես ակտիվ մասնակցություն ունեցավ հեղափոխությունից հետո երկրամասում ծավալված քաղաքացիական կռիվներին և խորհրդային իշխանության հաստատմանը:

Ռուսական ինքնակալության դեմ պայքարի շրջանում ՍԴ Հնչակյան և ՀԳԿ կուսակցությունների փոխհարաբերությունները թուրքեստանում աչքի էին ընկնում բացահայտ թշնամանքով, տեղի բուլշևիկների հետ սերտ համագործակցում էին հնչակյանները, որն ուղղված էր «Դաշնակցության» դեմ: Այնուհանդերձ, ինքնակալության դեմ պայքարի շրջանում, ելնելով ընդհանուր պայքարի և տակտիկական նկատառումներից, քաղաքական այս կազմակերպություններում և այլ միավորումներում ընդգրկված հայկական ուժերն ակտիվորեն ներգրավվեցին հեղկոմների և խորհուրդների կազմում, մասնակցեցին քաղաքային դումաների ընտրություններին: Հայությունն իր ակտիվ մասնակցությունն էր հանդես բերում պարենային և այլ կոմիտեներում, 1917 թ. հոկտեմբերից հետո նաև խորհրդային իշխանության մարմիններում:

Միևնույն ժամանակ թուրքեստանի հայ բուրժուազիայի և մտավորականության այն մասը, որը հարում էր ժամանակավոր կառավարությանը, դաշինքի մեջ էր կադետների, օկտյաբրիստների հետ՝ լայնորեն ներկայացված լինելով և ազդեցիկ դիրքեր ունենալով քաղաքային, ինչպես նաև ժամանակավոր կառավարության իշխանական մարմիններում: Հայության այս հատվածը վճռականորեն հանդես էր գալիս ձախ արմատական հոսանքների, հայ հեղափոխական կազմակերպությունների դեմ: Վերոհիշյալ շրջանում թուրքեստանի և Անդրկասպիայի խոշոր քաղաքներում գործում էին հայկական խորհուրդներ, որոնք իրենց համագումարում ձևավորել են 7 հոգուց բաղկացած Ասխաբադի Հայկական Կենտրոնական խորհուրդը՝ ազգային խորհուրդների գործունեությունը համակարգելու համար. «Բոլոր քաղաքական գործերը հայերի վերաբերյալ կատարում է այդ

<sup>34</sup> Борьба за власть Советов на Дону 1917-1920 гг., сб. док., Ростов-на-Дону, 1957, с. 354.

<sup>35</sup> Люди земли Донской, Ростов-на-Дону, 1983, с. 99.

մարմինը և նա է տնօրինում բոլոր գործերը: Կառավարությունը ճանաչում է այդ մարմինը և դա նայում է Գերագույն Հայկական մարմին յիշեալ շրջանում»<sup>36</sup>: Երկրամասում բուլշևիկների ակտիվացմամբ և ռուսական զորամասերի կազմալուծումով, խաթարվում են հայերի և տեղաբնիկների բնականոն հարաբերությունները, իսկ մահմեդական կոմիտեները և թուրք գործակալները սկսում են հակահայ գործունեություն ծավալել:

Թուրքեստանում հեղափոխության և քաղաքացիական պատերազմի տարիներին, հայ ազգաբնակչության տարբեր խավերը ներքաշվեցին ծավալվող պայքարի մեջ՝ հանդես գալով ինչպես խորհրդային իշխանության կողմում, այնպես էլ նրա դեմ:

Հարկ է նշել, որ դեռևս 1917 թ. վերջին «Թուրքեստանի և Անդրկասպիայի հայկական կենտրոնական խորհրդի» գլխավորությամբ ձևավորվել էին մարտական ջոկատներ, որոնք ստեղծվել էին թուրքեստանյան հանրապետության արտակարգ կոմիսարներ Կորուլի և Կոլեսովի համաձայնությամբ՝ ուղարկվել Կովկաս թուրքերի դեմ կռվելու համար: Իրենցից զգալի ուժ ներկայացնելով՝ ՀԳԿ ազդեցության տակ գտնվող հայկական այդ ջոկատներն ակտիվ դեր ունեցան նաև թուրքեստանի քաղաքական իրականության մեջ:

Միջին Ասիայում բուլշևիկ-դաշնակցական դաշինքի շրջանում 1917 հոկտեմբեր-1918 հուլիսին, հայկական այդ ջոկատները լուրջ ներդրում ունեցան երկրամասում խորհրդային իշխանության հաստատման գործում: Միջին Ասիայում խորհրդային կարգերի հաստատման պատմության հարցերի ժամանակակից հետազոտող Ս. Ազգամխոջաևը նշանակալի է համարում բուլշևիկ-դաշնակցական դաշինքի դերը երկրամասում խորհրդային կարգեր հաստատելու և Կոկանդի Ինքնավարությունը (Թուրքեստանի Ինքնավարություն) բռնությամբ վերացնելու գործում: Ընդգծելով երկրամասի հայության ակտիվ մասնակցությունն ընթացող հասարակական-քաղաքական գործընթացներին՝ հեղինակն իրականում ուռճացնում է «Դաշնակցության» ենթակայության տակ գտնվող զորամիավորումների խաղացած վճռորոշ դերը Կոկանդի գրավման և Ինքնավարության վերացման առնչությամբ: Նախևառաջ, հեղինակի աշխատությունում թյուրըմբռնում կա ՀԳԿ մասին, որի իբրև թե «դաժանություններն ու թալանչի» գործունեությունը համաժողովրդական ցասում էին

<sup>36</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 530, ք. 2:



առաջացրել թուրքեստանի բնակչության շրջանում<sup>37</sup>: Հայկական ջոկատներին վերագրված բռնություններն անգամ խաղաղ բնակչության նկատմամբ «բացատրվում» էր նրանց վայրագությամբ: Իրականում, հեղինակի շարադրած տողերում, կարելի էր գտնել Կոկանդում հայկական ջոկատների հայտնվելու և գործողությունների իրական դրդապատճառներից, գուցե և գլխավորը. «Լուրերը, որ Կոկանդի մահմեդականները կազմակերպել են ռուսների ու հայերի կոտորածներ և ավերել են քաղաքի եվրոպական թաղամասը, առիթ դարձան բուլշևիկյան հորհուրդներին հավատարիմ զորամիավորումների շրջանում հակամահմեդական հիստերիայի բորբոքման»<sup>38</sup>: Մահմեդական մուլեռանդների վայրագությունները, որոնք անշուշտ, տեղ էին գտել երկրամասում և մինչև 1920-ական թթ. շարունակություն ստացել, կարող էին դառնալ հիմնական պատճառը նախընտրելու հորհուրդների իշխանությունը, որի հաստատումը կարող էր երկրամասի հայության ֆիզիկական անվտանգության երաշխիքը դառնալ:

Հետագայում հայկական առանձին ջոկատներ կազմալուծելու և դրանք ձևավորվող Կարմիր բանակի կազմ մտցնելու մասին մարգարին իշխանության որոշումից հետո հայկական ուժերի մի մասն անցավ հակաբուլշևիկյան ճամբար և նշանակալի դեր կատարեց 1918 թ. ամռանն Անդրկասպիայում բուլշևիկյան իշխանության տապալման գործում: Այսպես, Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական միսիայի ԱԳՆ-ին ուղղված գրություններից մեկում ընդգծվում էր որ. «...կամաւորական բանակի անտրկասպեան երկրի զորամասերում ծառայում էին մօտաւորապէս ութ հարիւր զանազան աստիճան հայ զինւորներ...»<sup>39</sup>, որոնք բազմաթիվ անգամ դիմումներ են կատարել, խնդրելով ՀՀ ղեկավարության միջնորդությունը Կամավորական բանակի հրամանատարության առաջ, հայրենիքում իրենց ծառայությունը իրականացնելու մասին: Վերոհիշյալ հայ զինվորականների դրությունը անհունալի է դառնում Անդրկասպիայում բուլշևիկների հետագա առաջխաղացման հետևանքով. «Անտրկասպեան երկրում «բուլշևիկների» առաջխաղացումով և Կրասնովոդսկ քաղաքի անկման հետևանքով կամաւորական բանակի զօրամասերը նահանջեցին Էնզելի և Պետրովսկ, որոնց թում նաև հայ զինւորականները, տալով զգալի զոհեր: Ի վերջոյ այդ զինւորները կենտրոնանալով

Պետրովսկ քաղաքում նորից խնդրում են ազատել ծառայությունից և հնարաւորութիւն տալ Հայաստան անցնելու...»<sup>40</sup>: Ակնհայտ է, որ հաղորդակցության ուղիների հետ կապված դժվարություններն իրենց հերթին արգելք էին հանդիսանում լուծելու նման խնդիրները:

Բայցևայնպես, նախկին ցարական բանակի մեծ թվով հայ սպաներ և զինվորներ, «ծախ դաշնակցականներ», հնչակյան, էսեռական և բուլշևիկյան տեղական կազմակերպությունների ակտիվիստներ մտան Կարմիր գվարդիայի և «Կարմիր պարտիզանների» ջոկատների մեջ և մարտնչեցին հանուն հորհրդային թուրքեստանի<sup>41</sup>: Կարմիր բանակի հայ հրամանատարներն ու զինվորականները մասնակցել են Բուխարայի և Խիվայի հակախորհրդային կառավարությունների տապալմանը, ապա նաև ընդհուպ մինչև 1920-ական թթ. վերջը, թուրքեստանի տարածքում ազգայնական և պանթուրքիստական խմբավորումների ճնշմանը:

Այսպես, թուրքեստանյան երկրամասի բուլշևիկյան կենտրոնի նշանավոր գործիչների թվում բազմաթիվ հայ անուններ կան: Ակտիվ գործիչների թվում էր արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի մարտիկ, Անդրկովկասի և Իրանի հեղափոխական շարժումների մասնակից Ահարոն Ահարոնյանը. «Անցնելով Միջին Ասիա, 1917 թվականի վերջերին Ահարոնյանը հայերից և այլ ազգությունների ներկայացուցիչներից հավաքում է 40 հոգուց կազմված մի ջոկատ՝ հակահեղափոխական ուժերի դեմ կռվելու համար: Հետագայում ջոկատի մարտիկների թիվը հասնում է մի քանի հարյուրի»<sup>42</sup>: Ահարոնյանը երկրամասում զբաղեցրել է մի շարք պատասխանատու պաշտոններ, այդ թվում Չարջուուի քաղկոմի քարտուղարի պաշտոնը:

Տաջքենդի ռազմահեղափոխական կոմիտեի հրամանատարության տակ է գործել Սարգիս Վելունցի 100 հոգուց բաղկացած հայկական ջոկատը: 1918 թ. հիմնականում հայ մարտիկներից կազմված մեկ այլ ջոկատ (մոտ 300 հոգի) գործել է Սամարղանդում, կազմակերպիչներն էին Ա. Ահարոնյանը և Հայկ Բժշկյանը (Գայ):

1920-1922 թթ. բասմաչների և էնվերի «Իսլամի բանակի» հրոսակների դեմ մղված կռիվներում իր գործուն մասնակցությունն է բերում Հակոբ Մելքունյանի թուրքմենական առանձին հեծյալ բրիգադը: Այս մարտերում աչքի են ընկել նաև բազմաթիվ հայ զինվորականներ և հրամանատարներ՝ թուրքեստանյան հեծյալ դիվիզիայի հատուկ

<sup>37</sup> Агзамходжаев С., История Туркестанской Автономии (Туркистон Мухторияти), Ташкент, 2006, с. 230.

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 223:

<sup>39</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 530, ք. 7:

<sup>40</sup> Նույն տեղում:

<sup>41</sup> Григорьянц В., Армяне Средней Азии. История, современное положение, перспективы, Е., 1994, с. 25.

<sup>42</sup> Григорьянц А., Армяне в Средней Азии, Е., 1984, с. 120.

բաժնի պետ Գ. Սարուխանյանը, ջոկատի հրամանատար Ա. Տոնիանը և այլք:

Քաղաքացիական պատերազմին իր ակտիվ մասնակցությունն է հանդես բերել ծնունդով գրիգորիուպոլցի Գ. Ոսկանյանը, ով 1919 թ. գլխավորում էր Արևմտյան Թուրքեստանը, Կասպից ծովի ափերը հակախորհրդային ուժերից ազատագրած 4-րդ բանակը, այնուհետև՝ սպիտակ լեհերից Ուկրաինայի որոշ շրջաններ ( մասն. Կովելը) ազատագրած 12-րդ բանակը:

Այսպիսով, 1917 թ. ռուսական հեղափոխություններից հետո, Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի տարիներին նախկին ցարական Ռուսաստանի տարածքում սփռված հայությունը ներքաշվեց հասարակական-քաղաքական իրադարձությունների մեջ: Հայահոծ Հյուսիսային Կովկասում, Դոնում, Դրիմում և այլ վայրերում վճռական գործողություններ ընթացան հակամարտ ճամբարների միջև, այստեղ կանխորոշվեց Ռուսաստանի քաղաքական հեռանկարը: Այս տարածաշրջանների հայությունը, այստեղ ապաստանած մեծաթիվ հայ գաղթականությունը հայտնվեց ժամ առ ժամ փոփոխվող ռազմաքաղաքական իրադարձությունների կիզակետում, ենթարկվեց հակամարտ ճամբարների կամայական վերաբերմունքին: Միևնույն ժամանակ այս տարածաշրջաններում առկա ավանդական հայկական համայնքներում ևս տեղ գտան Ռուսաստանին ներհատուկ հասարակական-քաղաքական խնդրումները, հայությունը տարբեր կերպ դրսևորեց իր քաղաքացիական դիրքորոշումը երկրի հեռանկարի հարցում:

Ռուսահայության մի մասը հարեց դեպի խորհրդային իշխանության հաստատմանը՝ լայնորեն մասնակցություն հանդես բերելով այդ թևի պայքարին, մյուս մասը, շարունակելով զգուշավոր գիծ վարել, հարեց հակաբոլշևիկյան ճամբարին, որը խոստանում էր ազգային-համայնքային և հասարակական կյանքի ավելի լայն հեռանկարի գոյություն:

Ռուսաստանի տարբեր երկրամասերում, նրանից ժամանակավորապես անջատված տարածաշրջաններում բնակվող հայության դիրքորոշումը մեծապես պայմանավորված էր տեղական իրողություններով: Այսպես, Դոնի և Կուբանի հայությունն ընդհուպ 1920 թ., երբ այստեղ վերջնականապես հաստատվեցին խորհրդային կարգեր, լավ հարաբերություններ էր պահպանում հակաբոլշևիկյան «Կամավորական բանակի» և նրա ռազմաքաղաքական ղեկավարության՝ «Հատուկ խորհրդակցության» հետ, որն ոչ պակաս չափով պայմանավորված էր վերջինիս և ՀՀ հարաբերություններով, ՀՀ-ին և հայ

գաղթականության նկատմամբ բարեկամական դիրքորոշումամբ ու վերաբերմունքով: Հայության հակվածությունը դեպի «սպիտակ» շարժումը, պայմանավորված էր նաև մի շարք այլ դրոպապատճառներով՝ ազգային հաստատությունների պահպանման և զարգացման, առկա սոցիալ-տնտեսական հարաբերությունների փոփոխման հեռանկարով ևն: Գաղտնիք չէ, որ վերոհիշյալ տարածաշրջաններում հայ բնակչությունը սոցիալ-տնտեսական ամուր դիրքեր էր զբաղեցնում, իսկ խորհրդային հասարակարգն անվիճելիորեն սպառնում էր մասնավոր սեփականության գոյությանը՝ բռնագրավելով այն, ուստիև հակադրությունն այդ քաղաքականությանն ակնհայտ էր: Հակառակ վերոհիշյալ տարածաշրջանների հայության, թուրքեստանահայերի գերակշիռ մասը ողջունեց խորհրդային կարգերի հաստատումը և մեծապես աջակցեց դրան: Այնուհանդերձ, նրանց մի մասը՝ գործարար հատվածը, ենթարկվեց սոցիալական բնույթի հալածանքների և ստիպված էր փախչել Իրան, Անդրկովկաս: Թուրքեստանի հայության մեծամասնությունը, այդ թվում տեղի հայկական կուսակցական կառույցները, տեղերում հաճախ դաշնակցում էին բոլշևիկների հետ՝ մահմեդական և պանթուրքական ուժերի կողմից հայությանը սպառնացող վտանգի առկայությամբ պայմանավորված:

Առաջին աշխարհամարտի, 1917 թ. հեղափոխական իրականության և քաղաքացիական պատերազմի տարիներին Ռուսաստանում ապաստանած բազմահազար հայ փախստականների խնդիրները մնացին չկարգավորված, հայությունը հայտնվեց սոցիալ-տնտեսական, ազգային-մշակութային և բազմաբնույթ այլ հիմնախնդիրների հանգույցում:

## 1.2 Հասարակական-համայնքային կառույցները

Նոր Նախիջևանի (Դոնի Նախիջևան) հայկական համայնքը: 1917 թվականից սկսած Ռուսաստանում տեղ գտած քաղաքական ճգնաժամն իր հորձանուտի մեջ առավ երկրի տարբեր անկյուններում ապրող հայությանը: Դոնի երկրամասը, մինչև 1920 թ. ապրիլը, երբ այստեղ վերջնականապես հաստատվեցին խորհրդային կարգեր, ակտիվորեն ներքաշված էր Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի մեջ՝ հանդիսանալով ռազմաքաղաքական իրադարձությունների կարևորագույն թատերաբեմը:

Նոր Նախիջևանի և Դոնի հայ ազգային-մշակութային կյանքն այս շրջանում տնօրինում էր 60 հոգուց բաղկացած Համայնական խոր-

հուրդը, որն ընտրվել էր 1917 թ. վերջին՝ գաղութի հայ հասարակությունը ներկայացնող կուսակցություններից (ՀՅԴ, ՍԴ Հնչակյան և այլն)։ «Համայնական խորհուրդը, փաստորեն, ոչ միայն Նոր Նախիջևանի ու հայկական գյուղերի, այլև հարավային Ռուսաստանի ցիրուցան հայության մշակութային կյանքի տնօրենը դարձավ»<sup>43</sup>։ ներկայացնելով ու պաշտպանելով հայ համայնքի շահերն ու դիրքորոշումը իշխանության տեղական մարմինների առաջ։ Համայնական խորհուրդն ուներ Նախագահություն և գործադիր մարմին՝ Ազգային Համայնական Վարչություն։ Համայնական խորհրդի գործադիր կառույցներն ու մշտական հանձնաժողովները հստակ տարանջատված էին. իրենց կազմով առավել մեծաթիվ էին ֆինանսատնտեսական և մշակութային հանձնաժողովները։

Համայնական խորհրդի Նախագահությունը բաղկացած էր 5 անդամներից. նախագահն էր Ռ. Բերբերյանը։<sup>44</sup> Ազգային Համայնական Վարչությունը գլխավորում էր Ե. Շահագիզը, ում խմբագրությամբ էլ լույս էր տեսնում համայնքային շաբաթաթերթը՝ «Հայ համայնք»-ը, որը մեծ դերակատարություն ունեցավ համայնքի ներքին կյանքի կազմակերպման գործում։ Խմբագրական կազմի անդամ էին նաև Ռ. Բերբերյանն ու Համայնական Վարչության անդամները։

Նոր Նախիջևանի Հայկական Համայնքի կանոնակարգը բաղկացած էր 24 կետից, որոնք վերաբերում էին Համայնքին, Համայնքային խորհրդին, գործադիր կառույցներին, հարցերի քննարկման կարգին և այլն։

«Համայնքային խորհուրդը խնամք և հոգատարություն էր տածելու՝

1. հայության լուսավորության, 2. պատսպարման, 3. տնտեսական զարգացման, 4. տեղի հայկական մշակութային-լուսավորական, բարեգործական հաստատությունների, 5. հայ մամուլի հանդեպ»<sup>45</sup>։

Համայնական Վարչությունն, ըստ կանոնակարգի, բաղկացած էր 25 տարեկանը լրացած 3 անդամից, որոնք ընտրվում էին երեք տարով։ Դրանի Նախիջևանի հայ համայնքը, հանձինս Վարչության, իրականացնում էր իր քաղաքացիական և գույքային իրավունքները, ձեռք էր բերում շարժական և անշարժ գույք, օտարում այն, մտնում պայմանագրային իրավահարաբերությունների մեջ, օգտվում իրավական պաշտպանությունից և այլն։

<sup>43</sup> Բարխուդարյան Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն 1861-1917 թթ., Ե., 1985, էջ 264։

<sup>44</sup> Армянский настольный календарь на 1919 год, Ростовь-на-Дону, 1918, с. 20.

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 17։

Դրանի Նախիջևանի հայկական համայնքի կանոնակարգը Ռոստովի օկրուգային դատարանի որոշմամբ գրանցվել է 1918 թ. օգոստոսի 11-ին և մտցվել է շահույթ չհետապնդող կազմակերպությունների ու միությունների ռեեստրի մեջ (N 72)։

«Հայկական համայնքի»-ի գործունեությունը շարունակվեց ընդհուպ 1920-ական թթ. Դոնում խորհրդային կարգերի ամրապնդումից հետո, երբ անհրաժեշտություն է առաջանում նոր կանոնադրություն հաստատելու, որը կհամապատասխաներ ՌԽՖՍՀ «Կազմակերպությունների և Միությունների մասին» ընդունած դեկրետին։ Այդ է վկայում այն հանգամանքը, որ Դոնի Գործադիր Կոմիտեին (ЦИКДОНО) կից Ազգային Փոքրամասնությունների խորհուրդը չի վերագրանցել Դոնի Նախիջևանի հայկական համայնքը և նրա կանոնադրությունը, որն հաստատվել էր 1918 թ. օգոստոսի 11-ին։ Այս մասին է փաստում Դոնի մարզի Ազգությունների խորհրդի տեղեկանքը, որն ուղղված էր Հայկական Համայնքային խորհրդի Նախագահության նախագահ բժիշկ Դ. Քրիստոսթուրյանին, ուր մասնավորապես, գրված էր. «...ինչպես երևում է Դոնի մարզի Ազգային Փոքրամասնությունների խորհրդի գործերից, 1922 թ. հուլիսի 17-ին Դոնի Գործկոմի անունով ստացվել է դիմում բժիշկ Քրիստոսթուրյանից, ուր ներկայացված էին նշված կազմակերպության (համայնքի) գլխավոր նպատակները, վերջինիս գրանցման առնչությամբ։ Ընկեր Քրիստոսթուրյանը, լրացնելով հաստատված հարցաթերթը (անկետան) և դիմումը, կանոնադրության մանրամասն չներկայացնելու հանգամանքով այն դեռևս չի քննարկվել»<sup>46</sup>։ Վերագրանցման հետ կապված խնդիրները կարգավորելու նպատակով՝ Համայնքային խորհրդի ընդհանուր ժողովը գործող կանոնադրության մեջ փոփոխություններ է կատարում կանոնադրության վերջնական տարբերակը ընդունելու համար։ Նախևառաջ, ամրագրվում է այն կետը, ըստ որի. «Համայնքը կազմակերպվում է միավորելու համար հայազգի քաղաքացիներին, որոնք բնակվում էին Նախիջևան, Դոնի Ռոստով քաղաքներում և Դոնի մարզի տարածքում...»<sup>47</sup>, այսպիսով համայնքի անդամ կարող էր դառնալ մարզի յուրաքանչյուր հայ բնակիչ։ Ամրագրված երկրորդ կարևոր դրույթն այն էր, որ կազմակերպությունը չէր զբաղվելու քաղաքական-կրոնական գործունեությամբ, այլ միայն մշակութային ձեռնարկներով։ Ինչ վերաբերում էր կրթամշակութային նոր կառույցների հիմնմանը, ապա համայնքը պետք է առաջնորդվեր

<sup>46</sup> Гос. архив Ростовской области (ГАРО), ф.1818, оп.1, ед. хр. 477, л. 22.

<sup>47</sup> Նույն տեղում, ք. 9։

գործող օրենսդրությամբ և ամեն անգամ ստանար Դոնի երկրամասային իշխանությունների հատուկ թույլտվությունը: Սահմանված էին Համայնքի գործերի կառավարման դրույթները, անդամների իրավունքներն ու պարտականությունները: Փաստորեն, հստակորեն սահմանվում էին Համայնքի գործունեության և իրավասությունների շրջանակները: Համայնքային Խորհրդի 1922 թ. օգոստոսի 3-ի նիստում կանոնադրության վերջնական տարբերակը մշակելու և ներկայացնելու համար քննարկումներ են կազմակերպվում, որին Ղևոնդ Քրիստոսբուրյանի նախագահությամբ մասնակցել են 31 հոգի: Ղ. Քրիստոսբուրյանի գեկույցից հետո նիստի մասնակիցները որոշել են. «...ընդունել Ազգային Փոքրամասնությունների Խորհրդի առաջարկն ու հանձնարարել Խորհրդի ներքոհիշյալ 10 անդամներից կազմված հանձնաժողովին... ղեկավարվելով հին կանոնադրությամբ մշակել նորը, համաձայն նոր օրենսդրության և այն ներկայացնել հաստատման»<sup>48</sup>: Ղ. Քրիստոսբուրյանի հանձնաժողովը, կարճ ժամկետում, փոփոխում և գործող օրենքներին համապատասխանեցնում է Դոնի Նախիջևանի հայկական համայնքի կանոնադրությունը, որն էլ 1922 թ. օգոստոսի 5-ին հաստատվում է Համայնքային Խորհրդի ընդհանուր ժողովում: Վերափոխված կանոնադրությունը բաղկացած էր 21 կետից: Հիմնական առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ ճշգրտվել էին ձևակերպումները, հաճախակի էին դարձել «գործող օրենքներին համաձայն» հավելումները:

Համայնքային Խորհրդի կազմը հասցվել էր 36 անդամի, որոնք հանդիսանում էին ինչպես տեղական հայկական մշակութային կառույցների, այնպես էլ երկրամասի այլ համայնքների ներկայացուցիչներ: Հետագա ընթացքը հնարավոր չէ հետևել անհրաժեշտ նյութի բացակայության պատճառով, սակայն ակնհայտ է, որ արհեստակա-նորեն հարուցած ձգձգումների արդյունքում կառույցը փակվել է:

Այսպիսով, Դոնի Նախիջևանի հայկական համայնքային կազմակերպության գործունեությունն ընդգրկել է հասարակական-քաղաքական իրադարձություններով լի մի շրջան, ունեցել մեծ դերակատարում ոչ միայն Դոնի, այլև Հյուսիսային Կովկասի և Ռուսաստանի հայաշատ այլ համայնքների կյանքում:

Դոնի Նախիջևանի և տարածաշրջանի հայությունը բազմաշերտ էր սոցիալական, խայտաբղետ՝ լեզվամշակութային առումներով, որի պատճառներից էր նաև այն հանգամանքը, որ այստեղ էին կենտրոնացել ոչ միայն Անդրկովկասից, այլև Թուրքիայից, Պարսկաս-

տանից և Բալկաններից փախստական դարձած հայ զանգվածներ: Ուստիև պատահական չէր, որ Դոնի հայության շրջանում աստիճանաբար սկսեցին երևան գալ հայրենակցական կազմակերպություններ՝ Պարսկահայերի և Աղբակահայերի հայրենակցական միությունները:

Պարսկահայերի հայրենակցական միությունը ձևավորվել է Դոնի Ռոստովում, ուր այդ կառույցի հիմնադիր անդամներ Մովսես Ավակովի, Պավել Ավակովի, Իսրայել Ամիրովի, Նիկոլայ Մուրադյանցի, Խոսրով Մկրտչյանի և Մովսես Խուրավերդյանի ստորագրությամբ միության կանոնադրությունը հաստատելու համար 1919 թ. ապրիլի 25-ին խնդրագիր է ներկայացվել Դոնի Ռոստովի օկրուգային դատարան: Պարսկահայերի հայրենակցական միության կանոնադրության դրույթները Դոնի Ռոստովի օկրուգային դատարանում քննարկվել են ապրիլի 29-ին և որոշվել է գրանցել այն՝ մտցնելով շահույթ չհետապնդող կազմակերպությունների ու միությունների ռեեստր (N 185): Պարսկահայերի հայրենակցական միության կանոնադրությունը բաղկացած էր 30 կետից, որոնք ներկայացնում էին միության նպատակներն ու կառույցի կառավարմանը վերաբերող դրույթները: Հաստատված կանոնադրությամբ Միության նպատակների առանցքն էր. «Դոնի Ռոստովում հիմնել կրթական օջախներ և հասարակական ժողով, որոնք պետք է ծառայեին ազգային, մշակութային-լուսավորչական գործին»<sup>49</sup>: Միությունն անհրաժեշտ էր համարում կազմակերպել դասախոսություններ, գրական-գեղարվեստական երեկոներ, ստանալ հայալեզու և օտարալեզու տպագիր հրատարակություններ ու թերթեր, ունենալ ընթերցասրահ և գրադարան: Նպատակահարմար էր դիտվում աջակցել նաև այլ քաղաքներում. «...հնարավորության սահմաններում բարոյապես և նյութապես աջակցել հայերին հայրենիքում վերաբնակվել, կազմակերպել քարոզ վերաբնակիչներին օգնելու նպատակով»<sup>50</sup>:

Դոնի Ռոստով քաղաքում է հիմնադրվել Աղբակահայերի հայրենակցական միությունը, որի խնդրագիրը Ռոստովի օկրուգային դատարանին իր կանոնադրությունը հաստատելու մասին ներկայացվել է 1919 թ. օգոստոսի 22-ին: Աղբակահայերի հայրենակցական միության և նրա կանոնադրության հիմնադիրների կազմը գլխավորում էր Խոսրով Մկրտիչը: Աղբակահայերի հայրենակցական միության

<sup>49</sup> ГАОУ, ф.181. оп. 3, ед. хр. 491, л. 2.

<sup>50</sup> Նույն տեղում:

<sup>48</sup> Նույն տեղում, ք. 60:

կանոնադրությունը, գրեթե նույնությամբ, կրկնում էր Պարսկահայերի հայրենակցական միության կանոնադրությունը, նրանում առաջադրված էին նույն խնդիրներն ու նպատակները: Միակ տարբերությունը կայանում էր ընտրովի վարչական մարմնին օժտած լիազորությունների իրականացման ժամկետների մեջ: Խոսքով Մկրտիչն, ում վստահված էր կանոնադրության գրանցման հետ կապված հարցերը, արդեն հաստատված կանոնադրության տարբերակը հետ է ստանում դեկտեմբերի 4-ին. «1919 թ. դեկտեմբերի 2-ին Դոնի Ռոստովի օկրուգային դատարանը, լսելով Աղբակահայերի հայրենակցական միության կանոնադրության հաստատման հարցը, որոշում է այն մտցնել շահույթ չհետապնդող կազմակերպությունների և միությունների ռեեստր (N 237)»<sup>51</sup>:

Համայնքային և հայրենակցական կազմակերպություններից բացի, որոնք հիմնվել ու գործում էին Նոր Նախիջևան և Դոնի Ռոստով քաղաքներում, մշակութային-լուսավորական կազմակերպություններ էին ծնունդ առել նաև Դոնի գյուղական հայության շրջանում: Այսպես, Նեսվիտայի մշակութային-լուսավորական միությունն առաջինն էր, որը 1918 թ. հոկտեմբերի 8-ին Դոնի Ռոստովի օկրուգային դատարանում գրանցվել է, որի նպատակն էր. «...սեփական անդամների շրջանում զարկ տալ մշակութային-լուսավորական և կոոպերատիվ պայմաններին, հնարավորություն ընձեռել ազատ ժամանակ ստանալ կրթական և մտավոր զբաղմունքներ»<sup>52</sup>: Այս նպատակների իրագործման համար անհրաժեշտ էր դիտվում հիմնել ժողովրդական Տուն, կազմակերպել դպրոցներ, գրադարան, գիտակրթական թանգարաններ և այլ հաստատություններ: Միության անդամ կարող էին դառնալ 17 տարին բոլորած Նեսվիտա գյուղի բնակիչները, որոնք ընդունում էին կանոնադրության կետերն ու պահանջները: Նեսվիտա գյուղի մշակութային-լուսավորական կյանքը տնօրինելու համար լայն լիազորություններ էին վերապահված միության կառավարող օղակներին՝ Ընդհանուր ժողովին և Վարչությանը:

Նմանօրինակ ծրագրեր և խնդիրներ էր հետապնդում նաև Դոնի մյուս հայաբնակ գյուղում՝ Մեծ Սալայում, կազմավորված մշակութային-լուսավորական միությունը: Կազմակերպությունը, որը կոչվում էր «Մեծ Սալայի և շրջակա գյուղերի մշակութային-լուսավորական միություն», հիմնադրել էին Լ. Նոր-Արևյանը, Մ. Դիրացունը, Կ. Պոպովը, Չեբանովա-Խաչխայանը, որոնք դեռևս 1918 թ. մարտի 16-ին

դիմել էին Ռոստովի օկրուգային դատարան միության կանոնադրությունը հաստատելու խնդրանքով: Այս դիմումը մերժվել է 1918 թ. մարտի 22-ին. «...Մեծ Սալայի և շրջակա գյուղերի մշակութային-լուսավորական միության Վարչության գտնվելու վայրը կանոնադրության մեջ չնշելու պատճառով»<sup>53</sup>: Ինչպես երևում է, միության կանոնադրության մեջ առկա անհամապատասխանությունները գործող օրենքներին, հետագա ամիսների ընթացքում ևս հնարավորություն չեն տալիս գրանցելու արդեն փաստացի գոյություն ունեցող միության կանոնադրությունը: 1918 թ. հոկտեմբերի 15-ին Ռոստովի օկրուգային դատարան է ուղղվում նոր խնդրագիր՝ կանոնադրությունը հաստատելու համար:

Ռոստովի օկրուգային դատարանը այս խնդրագիրը և կանոնադրության տարբերակը քննարկում և այն թողնում է անպատասխան պատճառաբանելով, որ նշված չեն Վերստուգիչ հանձնաժողովի ընտրման ժամկետները, Վարչության անդամների թվակազմն ու այլ հարցեր, որի մասին տեղյակ են պահվում հիմնադիր անդամները: Միության կանոնադրության գրանցումը ձգձգվել է ընդհուպ 1919 թ. հունվարը: Միության ծրագրերում առանցքային նպատակ էր դիտվում լուսավորության խնդիրներ լուծել. «Միությունը նպատակ ունի նպաստելու լուսավորության տարածմանը Մեծ Սալայում և նրան շրջակա հայկական գյուղերում»<sup>54</sup>: Իր առջև դրված խնդիրների լուծմանը հասնելու համար միությունը ծրագրել էր բացել տարրական դպրոցներ, գրադարան, բարձրագույն ուսումնարան, աղջիկների և տղաների համատեղ ուսուցմամբ գիմնազիա, որոնք գործելու էին Լուսավորության մինիստրության ծրագրերին համապատասխան ու համընթաց էին ժամանակի պահանջներին:

Դոնում հիմնված վերոհիշյալ կազմակերպություններից զատ, որոնք ունեին համայնքային, ազգային-հայրենակցական, մշակութային-լուսավորական ընդգծված ուղղվածություն, գործել են նաև աղքատախնամ և հասարակական-բարեգործական այլ միություններ, թեև նրանց մեծ մասի վերաբերյալ տվյալները սուղ են: Դրանց շարքում խիստ հետաքրքրական են հայ կանանց գլխավորած կազմակերպությունները, որոնք հիմնականում ուղղված էին փախստականների, աղքատների և հասարակական այլ խնդիրների լուծմանը: Այդպիսի կազմակերպություններ գործում էին թե՛ Դոնի Ռոստովում, թե՛ Նոր Նախիջևանում, բայց նրանց վերաբերյալ առկա տվյալները

<sup>51</sup> ГАРФ, ф.151. оп. 3, ед. хр. 539, л. 8.

<sup>52</sup> Նույն տեղում, ед. хр. 141, л. 2.

<sup>53</sup> Նույն տեղում, ед. хр. 42, л. 2.

<sup>54</sup> Նույն տեղում, ед. хр. 43, л. 2.

սուղ են. «Դոնի Ռոստովում էր գործում Ե. Անպետկովայի գլխավորած հայ կանանց բարեգործական միությունը»<sup>55</sup>. Նոր Նախիջևանում գործող «Աղքատներին սատարող հայ կանանց միության» գործունեության շրջանակների մասին հնարավոր է դառնում պատկերացում կազմել առկա փաստաթղթերի և միության կանոնադրության շնորհիվ: Միության ստեղծման ժամկետը, հավանաբար, համընկնում է 1917 թ. հեղափոխությանն անմիջապես հաջորդող շրջանի հետ, իսկ կազմակերպության կանոնադրության նախագիծը հաստատման է ներկայացվել 1922 թ. հոկտեմբերի 6-ին, որը կազմված էր Համառուսաստանյան Կենտրոնական 1922 թ. օգոստոսի 3-ի հրամանագրի դրույթներին համապատասխան: Դոնի Նախիջևանի «Աղքատներին սատարող հայ կանանց միության» հիմնադիր կազմն ուներ շատ հայտնի ազգանուններ՝ Վարդուշ Քրիստոսոբուրյան, Մարիա Ալյանակի, Ռոզալիա Պոպովա, Բ. Սագիրովա, Եկատերինա Բեչեկ և այլն: Առաջնային նշանակություն ունեին սոցիալական-առողջապահական և կրթական խնդիրները, որոնք նախատեսում էր լուծել միությունը:

Դոնում գործել է նաև հայկական ուսանողական կազմակերպություն, որի կանոնադրության օրինակը թվագրված է 1922 թ. նոյեմբերի 23-ով: Այդ կազմակերպությունը կոչվում էր «Դոնի Ռոստովի հայկական ուսանողական հայրենակցական միություն», որի հիմնադիր 10 անդամների թվում էին Գրիգորի Լոդչինկյանը, Գարեգին Մնացականյանը, Սաթենիկ Առաքելովան և այլք: Ուսանողական հայրենակցական միությունն իր առջև նպատակ էր դրել. «...օժանդակել իր անդամների զարգացմանը և, մասնավորաբար, նպաստել հայ ազգային մշակութային արժեքների (լեզու, պատմություն, գրականություն, արվեստ և այլն) հետ ծանոթանալուն, ցուցաբերել նյութական օգնություն կարիքավոր ընկերներին»<sup>56</sup>:

Դոնի Ռոստովում և Նոր Նախիջևանում վերոհիշյալ կազմակերպություններից բացի գործել են նաև հայության խնդիրներով զբաղվող այլ հասարակական և բարեգործական միություններ, կոմիտեներ, որոնց գործունեության վերաբերյալ արխիվային նյութի և անգամ այդ կառույցների կանոնադրությունների բացակայությունը հնարավորություն չեն տալիս նրանց մասին խոսել հանգամանորեն: Նման կազմակերպություններից են «Դոնի Նախիջևանի աղքատ հայերի եկեղացական հոգաբարձությունը» Ա. Սալտիկովի գլխավորությամբ,

«Ռոստով-Նախիջևանյան հայկական կոմիտեն» Ս. Ոսկանյանի գլխավորությամբ, «Դոնի Ռոստովի հայկական Իզմիրյան բարեգործական միությունը» Ս. Ջևեյեգովի գլխավորությամբ և այլն:

Դոնում գործող տեղական հայկական կազմակերպություններից բացի դեռևս 1917 թ. առաջ, և դրանից հետո, գործել են համառուսաստանյան հասարակական-բարեգործական կազմակերպությունների Դոնի կոմիտեներ, որոնք զգալի ներդրում են ունեցել կարիքավոր հայերին օժանդակելու հարցում: Առաջին աշխարհամարտի տարիներին փախստականներին օգնելու նպատակով ստեղծված համառուսաստանյան կազմակերպություններից էր Դոնում գործող «Համառուսաստանյան քաղաքների միության Դոնի Նախիջևանի կոմիտեն» Ա. Դերեժանովի գլխավորությամբ, որը հսկայածավալ աշխատանք կատարեց պատերազմից տուժած և անապաստան հայերին տեղավորելու, խնամելու և կերակրելու գործում: Դոնի Նախիջևանի կոմիտեն Ա. Դերեժանովի, Ե. Խանումյանի, Ու. Չուբարովի, Բժիշկ Ա. Բեչեկի և այլ սրտացավ հայ գործիչների ջանքերով կարողացավ իրականացնել սոցիալական-առողջապահական խոշոր ծրագրեր՝ փրկելով հազարավոր փախստական հայերի կյանքը: Պահպանված բազմաթիվ փաստաթղթերը խոսում են այն ծանր բարոյական և նյութական վիճակի մասին, որում հայտնվել էին հայ փախստականները, պատմում իրականում փոքր թվացող այն խնդիրների մասին, որոնք լուծում էին գտնում կոմիտեի մակարդակով:

Այսօրինակ ծրագրեր էին իրականացնում ոչ միայն Դոնի, այլ նաև ամբողջ Ռուսաստանի տարածքում գործող հայկական կազմակերպություններն ու միությունները, որոնց անգնահատելի ձեռնարկումները փոքրիշատե մեղմացրին ծանր պայմաններում հայտնված հայության այս հատվածի անթիվ խնդիրները:

Սիմֆերոպոլի Հայ Համայնական Խորհուրդն ու Վարչությունը: 1917 թ. ռուսական հեղափոխությունից հետո հասարակական-քաղաքական կյանքի տեղաշարժ նկատվեց նաև Ղրիմի հայության շրջանում: Ղրիմահայերը, բնակվելով հայկական կենտրոններից հեռու, այս շրջանում օտարացած էին՝ պատճառը խառնամուսնություններն էին, կրթությունը պետական դպրոցներում և այլն: Պետական ռուսական ուսումնական հաստատություններում սովորող հայ երիտասարդությունը արագորեն ռուսանում էր, խոսելով միայն ռուսերենով՝ բացարձակ մոռանալով մայրենին:

Վիճակագրական ճշգրիտ տվյալներ չկան այս շրջանի Ղրիմի հայության թվի վերաբերյալ, նրանց թիվը հասնում էր մոտ 15 հազարի. «Դրիմի թերակղզու հայության կեսից ավելին կազմում են թուր-

<sup>55</sup> Армянский..., с. 25.

<sup>56</sup> ГАРО, ф. 1818. оп. 1, ед. хр. 477, л. 75.

քահայաստանից եկածները, որոնք 1895-96 թվականների ջարդերից հետո վերաբնակվել էին նաև Տավրիդայում»<sup>57</sup>: Հայ կյանքի որոշակի ակտիվացում նկատվում է Տավրիկյան նահանգի կենտրոն Սիմֆերոպոլում: Տասնյակ տարիներ առանձին-առանձին բնակվող տեղի հայության երկու մասերը՝ կաթոլիկներն ու հայ լուսավորչականները մերձեցման փորձեր կատարեցին, և նույնիսկ, լուսավորական նպատակներով հիմնեցին միասնական կառույց՝ Հասարակական Տուն. «Ստեղծվեց միասնական կառույց դպրոցական, ազգային և մշակութային գործերը վարելու համար»<sup>58</sup>:

Այնուհանդերձ, այս թույլ փորձերը լուրջ արդյունքներ չտվեցին, անհրաժեշտ էին լուրջ ջանքեր ցանկալի նպատակին՝ Ղրիմում հայ կյանքի ինքնորոշմանը հասնելու համար «Մի կողմից ազգային ոգով դաստիարակված փոքրաթիվ մտավորական հայությունը, մյուս կողմից, շրջապատող օտար և շատ ուժեղ մշակույթը, արգելք են հանդիսանում Ղրիմի թերակղզու հայության ազգային վերածննդի գործում»<sup>59</sup>:

Հայրենասիրական զգացմունքների վերելքը, ազգային նվիրական ձգտումները, որն համակել էր կովկասահայությանը, իր արծազանքները գտավ նաև ղրիմահայության շրջանում, որտեղ որքան էլ զարմանալի է, սակայն շարժումը գլխավորեցին Ղրիմի «եկվոր» հայերը:

Այսպես, 1918 թ. հունվարին Սիմֆերոպոլում գումարված ղրիմահայերի համագումարը Հայրենիքի պաշտպանության համար կազմակերպեց դրամահավաքներ ղրիմահայերի շրջանում, որոնք անցան չափազանց վատ, տեղի հարուստ հայերը ականջալուր էին հայրենիքի կարիքներին և իրենց նվիրաբերած մանրադրամը որպես ողորմություն էին դիտում. «Գիտակցությունը, որ նվիրաբերությունը հայրենիքի պաշտպանության գործին յուրաքանչյուր հայի սուրբ պարտականությունն է, չկար տեղաբնակ ղրիմահայերի մոտ»<sup>60</sup>:

1918 թ. սկսված թուրքական արշավանքի և Արդվինի, Բաթումի ու Անդրկովկասի ուրիշ կենտրոնների անկման հետևանքով, Ղրիմի թերակղզի գաղթական հայության նոր հոսք սկսվեց. «19 15-1920 թթ. Ղրիմում ապաստան գտած հայ գաղթականների զգալի տեղաշարժ մտցրին ղրիմահայության քանակական կազմում, որը նկատելիորեն

մեծացավ»<sup>61</sup>: Ղրիմի հայկական կոմիտեները, և տիկին Յու. Ի. Սպենդիարյանի գլխավորած Սիմֆերոպոլի հայ կանանց կոմիտեն իրենց ջանքերն ուղղեցին հայ գաղթականությանը օժանդակելու գործին: Ցանկանալով օգնել գաղթականներին՝ Սիմֆերոպոլցի հայուհիները բացեցին «Մեկ գավաթ թեյ»-ը (Чашка чая), որով փորձում էին հոգալ հայրենակիցների խնդիրները: Այս շրջանում, երբ Ղրիմում ակտիվանում էր թաթարական ազդեցությունը, հայության շրջանում ևս նկատվեցին տեղաշարժեր՝ սկսեցին ակտիվ դեր վերցնել տեղաբնակ ղրիմահայերը:

1917-1918 թթ. Ղրիմի հայ հասարակության և ղրիմահայ կազմակերպությունների գործունեությունն ընթանում էր մի տեսակ անկազմակերպ, չկար համայնքային կենտրոնական կառույց: Այնուհանդերձ, նախորդ տարիների գործունեությունն ու կուտակված փորձը լավ նախադրյալներ ստեղծեցին Ղրիմում Հայ Համայնական Խորհուրդ և Վարչություն հիմնելու համար, որոնք համայնքին տվեցին կազմակերպական նոր որակ, իսկ ազգային խնդիրների լուծման համար իրական հնարավորություններ: 1919 թ. հունվարին գումարվում է Ղրիմի Համահայկական համագումար, որի ժամանակ մշակվում և ընդունվում են Համայնական Խորհրդի ընտրությունների կարգը, Խորհրդի կանոնադրությունը և այլ հարցեր. «...Սիմֆերոպոլի Հայ Համայնական Խորհուրդը ընտրւած է սոյն տարւայ փիտուար ամսին ընդհանուր ընտրողական իրաւունքի հիման վրայ քառիակ սիստեմով»<sup>62</sup>:

Ղրիմում, ինչպես ռուսահայ մյուս համայնքներում, հայ հասարակական-քաղաքական կյանքում իր լուրջ դերակատարմամբ աչքի ընկնող ՀՅԴ-ն ակտիվորեն մասնակցեց Սիմֆերոպոլի Հայ Համայնական Խորհրդի ընտրություններին. «Ընտրություններին մրցում էին երկու ցուցակ՝ N 1 անկուսակցականների ցուցակը և N 2 «Դաշնակցութեան» առաջարկած ցուցակը: Առաջին ցուցակից անցան 20 անդամ, 2-ից 16: Խորհրդի անդամների ընդհանուր թիւն է 36»<sup>63</sup>:

Ընտրությունների արդյունքում հաղթած անկուսակցականների թեկնածու Պետրոս Մալաֆյանն էլ ընտրվում է Սիմֆերոպոլի Հայ Համայնական Խորհրդի նախագահ, ավագ փոխնախագահ է դառնում Ամբատ Տեր-Ստեփանյանը, երկրորդ փոխնախագահն էր Դ. Միր-

<sup>57</sup> Армянский..., с. 34.

<sup>58</sup> Նույն տեղում:

<sup>59</sup> Նույն տեղում:

<sup>60</sup> Նույն տեղում:

<sup>61</sup> Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 1, Ե., 2003, էջ 223:

<sup>62</sup> ՀԱԱ, ֆ. 1265, ց. 1, գ. 40, թ. 25:

<sup>63</sup> Նույն տեղում:

գոյանը (անկուսակցական). «Խորհրդի քարտուղարն է՝ պ. ՈՆ. ՈՆոփեան»:<sup>64</sup>

Համայնական Խորհրդին կից գործել են մի շարք հանձնաժողովներ, այդ թվում՝ ֆինանսական-բյուջետային, ժողովրդական լուսավորության, խնամատարական, գաղթականական և վերստուգիչ:

Դրիմի Հայ Համայնական Խորհրդի ձևավորումից հետո կազմվում է նաև գործադիր մարմին՝ Համայնական Վարչություն, որն ուներ մի շարք բաժանմունքներ. «Համայնական վարչութեան նախագահն է պ. Երևանդ Քեֆչեան, անդամներ՝ Սիմ. Համալեան (քարտուղար, վարիչ ժողովրդական Լուսավորութեան և վիճակագրական բաժանմունքների), Ար. Արծրունի (վարիչ գաղթականական բաժանմունքի), Սիմ. Գրիկեան (վարիչ խնամատարական բաժանմունքի), Յար. Կարապետեան (գանձապահ) և Արշակ Բարխուդարեան (տնտեսական բաժանմունքի վարիչ)»<sup>65</sup>.

1919 թ. ընդունված Սիմֆերոպոլի Հայ Համայնքի կանոնադրությունը բաղկացած էր 27 կետից, որոնք վերաբերում էին Համայնական Խորհրդին ու Վարչությանը, նրանց իրավասություններին ու պարտականություններին, համայնքի անդամներին ևն: Կանոնադրության առաջին կետով սահմանվում էր. «Սիմֆերոպոլ քաղաքում բնակվող հայերը հիմնում են Սիմֆերոպոլի Հայկական համայնք՝ իրենց անդամների ազգային-մշակութային կյանքը կառավարելու նպատակով»<sup>66</sup>: Այս մասին առանձին խոսվում է նաև Կանոնադրության չորրորդ կետում, ուր համայնքի ազգային-մշակութային կյանքի տնօրեն դիտվում էր Սիմֆերոպոլի Հայկական համայնքը:

Համայնքի անդամ կարող էր դառնալ յուրաքանչյուր հայ, ով բնակվում էր Սիմֆերոպոլի շրջանում և չէր մերժում իր հայ ազգությունը (2-րդ կետ): Համայնքի յուրաքանչյուր անդամ 21 տարեկանից սկսած ձեռք էր բերում ակտիվ և պասիվ ընտրական իրավունք:

Ինչպես հայ լուսավորչականների, այնպես էլ հայ կաթոլիկների կրոնական, հոգևոր-դաստիարակչական և եկեղեցական գործերին Համայնքի իրավասությունը չէր տարածվում:

Համայնական Խորհրդի նախագահության՝ Խորհրդի նախագահի, նախագահի ընկերների (տեղակալ) և քարտուղարի լիազորությունների ժամկետը մեկ տարի էր:

Համայնական Խորհրդի գործադիր մարմինը հանդիսանում էր երկու տարի ժամկետով ընտրվող Համայնական Վարչությունը, որը բաղկացած էր երեք անդամից: Համայնական Վարչության իրավասությունն էր Համայնքի անդամների ցուցակագրումը, Խորհրդի որոշումների իրագործումը, զեկուցումների ներկայացումը համայնքի գործերի վերաբերյալ, Համայնքի դրամական միջոցների հավաքումն ու ծախսումները, անդամների գույքային և քաղաքացիական շահերի պաշտպանությունը՝ լիազորագրերի և երաշխավորագրերի տրամադրմամբ:

Կանոնադրության վերջին կետով սահմանվում էր, որ Համայնքի լուծարման դեպքում, Խորհրդի որոշումով, բոլոր միջոցները ուղղվելու են հայկական մշակութային խնդիրների լուծմանը և փոխանցվելու են այդպիսի խնդիրներով զբաղվող հաստատությանը:

Արդեն 1919 թ. սկզբին Սիմֆերոպոլում ամբողջական տեսք և ձևավորում ստացան համայնքային կառույցները, որոնք անմիջապես անցան համայնքին հուզող խնդիրների կարգավորմանը:

1919 թ. օգոստոսի 1-ին Սիմֆերոպոլի Հայ Համայնական Խորհուրդն իր նիստում հաստատում է 1919 թ. (մարտի 10-դեկտ. 31) մուտքերի և ծախսումների ցանկը, որը կազմել էր ֆինանսական հանձնաժողովը: Վերոհիշյալ ցանկով 1919 թ. ընթացքում Համայնքի անդամները վճարումներ էին կատարելու ըստ առանձնացված վճարման խմբերի: Համայնական Խորհրդի նիստում ընդունված այս փաստաթղթի նախատեսվող ծախսումային մասից ակնհայտ է դառնում համայնքային կառույցների գործունեության ամբողջ դաշտը, որն ընդգրկում էր ոչ միայն տեղի մշակութային-կրթական կյանքի ասպարեզը, այլ նաև հայ գաղթականությունն ու զինվորությունը:

Սիմֆերոպոլի Հայ Համայնական Խորհուրդն իր 1919 թ. օգոստոսի 1-ի նիստում հաստատում է նաև ֆինանսական հանձնաժողովի կողմից մշակած մեկ այլ փաստաթուղթ, որով սահմանվում էին համայնական տուրքերի չափերը, ըստ որի. բնակչության տարբեր խմբերից գանձվելու էին տուրքեր համապատասխան իրենց եկամտային և գույքային ունեցվածքի: Առանձնացվեցին 18 այդպիսի խմբեր:

Սիմֆերոպոլի Հայ Համայնական Խորհրդի կանոնադրության 12-րդ կետով սահմանված էր, որ Խորհուրդը նպատակադիր էր հարաբերությունների մեջ մտնել այլ հայկական համայնական կառույցների հետ, սակայն այստեղ ևս խնդիրներ կային:

Այսպես, Սիմֆերոպոլի Հայկական Համայնական Վարչության նամակից (1919 թ. օգոստոսի 16) ուղղված «Նոր Նախիջևանի և Ռուս-

<sup>64</sup> Նույն տեղում:

<sup>65</sup> Նույն տեղում:

<sup>66</sup> ՀԱԱ, ֆ. 1265, ց. 1, գ. 40, ք. 28-29:



տովի Հայ Համայնական Վարչությանը» պարզ է դառնում գոյություն ունեցող թույլ կապը երկու հարևան հայաբնակ երկրամասերի հայկական կառույցների միջև: Հետաքրքրական է, որ վերոհիշյալ նամակը պատասխան նամակ էր Ղոնի հայկական համայնքային կառույցի նույն թվականի մարտի 15-ի գրության, այսինքն, ուղիղ հինգ ամիս անց գրված նամակի: Սիմֆերոպոլի Համայնական Վարչությունն իր նամակում ներկայացնում էր համայնքային կառույցների վիճակը և գործունեության ուղղությունները՝ նշելով Խորհրդի նոր նախաձեռնություններից ընթացիկ ուստարում «Տավրիկյան Հայկական Գիմնազիայի» և մանկապարտեզի բացման մտադրությունը. «Վարչութիւնս ուրախութեամբ ապագայում և իրագել կը պահի Ձեզ իւր գործունեութեանը ու կեանքին: Յոյսով ենք, որ այսուհետև հնարաւոր կը լինի հաստատել մեր մինչև սերտ փոխ-յարաբերութիւններ, որոնց արդիւնքը, անշուշտ, շօշափելի կը լինի մեր նորակազմ Խորհրդի ու նրա գործադիր մարմնի համար»<sup>67</sup>:

Հայկական համայնքային կառույցների միջև առկա այդ թույլ կապի մասին է խոսում նաև վերոհիշյալ նամակի եզրափակիչ տողը, որից պարզ է դառնում, որ Ղրիմում գործել է նաև մեկ այլ հայկական կառույց. «Անխորդ չենք համարում յայտնել Ձեզ և այն, որ Համայնական Խորհուրդ ու Վարչութիւն գոյութիւն ունի նաև մեր հարևան Եւպատորիայում»: 1919 թ. օգոստոսի 16-ով թվագրված այս նամակի վերջում, որպես Խորհրդի Վարչության նախագահ, նշվում էր Սիմ. Համայնանի անունը:

Սիմֆերոպոլի Համայնական Վարչության 1920 թ. մարտի 31-ից ապրիլի 13-ը տեղի ունեցած նիստի արձանագրություններից տեսնում ենք, որ Վարչության նախագահն է Ե. Զեֆյանը, ով նիստի մասնակիցներին հաղորդել է ՀՀ ներկայացուցիչ Սաղաթեյանի պատվին ընդունելություն կազմակերպելու անհրաժեշտության մասին<sup>68</sup>:

ՀՀ ներկայացուցչի ընդունելությանը հրավիրվել են Համայնական Խորհուրդը, Վարչությունը, Ղրիմի հայերի կենտրոնական կոմիտեն, Հայ Լուսավորչական եկեղեցական Հոգաբարձությունը և Հայ Կաթոլիկ եկեղեցու, հայրենակցական միությունների և այլ հաստատությունների ներկայացուցիչներ, որոնք մասնակցության համար պետք է վճարեին 500 ռուբլի:

Հետաքրքրական է, որ Համայնական Վարչության արձանագրված վերջին նիստը (թվով 88) տեղի է ունեցել 1920 թ. օգոստոսի 27-ից

սեպտեմբերի 9-ը:

Բայցևայնպես, տարբեր հայկական կառույցների միջև գործակցության և ընդհանրապես, թույլ կապի կարևոր պատճառն էր հանդիսանում Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի հետևանքով առաջ եկած դժվարություններն ու հաղորդակցության հնարավորությունների բացակայությունը:

1919 թ. վերջից - 1920 թ. աշունը Ղրիմը դարձավ քաղաքացիական պատերազմի ակտիվ թատերաբեմ, ուր կենտրոնացել էին «սպիտակ շարժման» վերջին ուժերը, որոնք 1920 թ. աշնանը Ղրիմից արշավեցին Ուկրաինա՝ միաժամուր համար լեհական զորքերի հետ. «Նոյեմբերի 7-11-ը Խորհրդային զորքերը... ճեղքեցին Պերեկոպի ամրությունները... և նոյեմբերի 17-ին ամբողջությամբ տիրեցին թերակղզուն»<sup>69</sup>, Ղրիմում սկսվեց տենդագին տարիանում, քաղաքացիական պատերազմի ելքը, փաստացիորեն, վճռվեց:

Ղրիմում գործող հայկական համայնքային և ազգային մյուս կառույցների ճակատագիրը որոշակիանում է արխիվային մի փաստաթղթից, ուր ներկայացվում է Ղրիմիեղկոմի կողմից ձևավորված Արտակարգ Եռյակի գեկույցը՝ Ղրիմի տարածքում հայկական ազգային հիմնարկների լուծարման գործընթացի ու արդյունքների մասին: Արտակարգ Եռյակը, որի անդամ էր նաև Մ. Մանուկյանը, ձևավորվել էր 1920 թ. նոյեմբերի 30-ին, իր գործունեությունը շարունակել 1920 թ. նոյեմբերի 30-ից - 1921 թ. փետրվարի 1-ը և լուծարել է թերակղզու 7 քաղաքների բոլոր հայկական ազգային հաստատությունները<sup>70</sup>: Եռյակի հաշվետվությունից պարզորոշ երևան է գալիս Ղրիմում գործած և լուծարված հայկական կառույցների ամբողջական ցանկը, այսպես.

Սիմֆերոպոլ քաղաքում փակվել են Հայկական Համայնական Խորհուրդը, Հայկական Բարեգործական Ընկերությունը, Հայկական Կաթոլիկ Բարեգործական Ընկերությունը, «Մեկ գավաթ թեյ» Հայկական Բարեգործական Ընկերությունը, ինչպես նաև 2 հայկական հայրենակցական կազմակերպությունները՝ Թուրքահայերի և Տայքի<sup>71</sup>:

Եվպատորիայում և Յալթայում փակվել են տեղերի Հայկական Համայնական Խորհուրդներն ու Հայկական Բարեգործական Ընկերությունները, Սևաստոպոլում՝ եկեղեցական և դպրոցական Հոգաբարձությունը:

<sup>67</sup> Նույն տեղում, ք. 25:

<sup>68</sup> Гос. архив Автономной республики Крым (ГААРК), ф.4988, оп. 1, д. 4, л. 34.

<sup>69</sup> Орлов А., Георгиев В. и др., Основы курса истории России, М., 1997, с. 471.

<sup>70</sup> ГААРК, ф.1188, оп. 3, д. 31, л. 1.

<sup>71</sup> Նույն տեղում:

Ղարասուրբազարում լուծարվել են Հայկական Բարեգործական Ընկերությունը, Կաթուղի Բարեգործական Ընկերությունը, Հայկական Գաղթականական Կոմիտեն և Դպրոցական Հոգաբարձությունը:

Ստարի Կրիմում լուծարվել են Հայկական Բարեգործական Ընկերությունը, Որբախնամ Կենտրոնական Կոմիտեն, Հայկական Դպրոցական Հոգաբարձությունը:

Եվ վերջապես Թեոդոսիայում լուծարվել են Հայկական Բարեգործական Ընկերությունը և Հայկական Հեղափոխական Կոմիտեն:

Արտակարգ Եռյակը Ղրիմի հայկական բոլոր այս հաստատությունների լուծարումից հետո, նրանց շարժական ու անշարժ գույքը հաշվառել և փոխանցել է խորհրդային իշխանություններին: Բռնագրավվել և Պետբանկի բաժանմունքներին է փոխանցվել վրանգելյան 18.270.675 ռուբլի, խորհրդային 7750 ռուբլի և կերենսկյան կառավարության 120 ռուբլի: Բռնագրավված 3 ոսկյա ժամացույցները փոխանցվել են Ղրիմհեղկոմին<sup>72</sup>:

Վերոհիշյալ փաստաթղթի վերջում, Արտակարգ Եռյակն իր վրա դրված առաջադրանքն ավարտված համարելով, առաջարկ էր ներկայացրել Ղրիմհեղկոմին դեկրետ հրապարակել հանձնաժողովի լուծարման մասին:

Հետաքրքրական է, որ Ղրիմհեղկոմի նախագահ Պոլյակովի որոշումով թերակղզու հայկական հաստատություններին պատկանող բոլոր կնիքների ազգրավման մասին վկայող ակտից երևում է, որ այստեղ առկա են նաև Սիմֆերոպոլի «Դարբին»-ի խմբագրության (1917), Տավրիկյան արևմտահայերի հայրենակցական միության (1917), Աքսորյալների ազատման Սիմֆերոպոլի հյուսիսային ենթակոմիտեի (կնիքի մեջտեղում գրված՝ Խոտորջրոյ և Սոխրակոյտի) կնիքները<sup>73</sup>:

Այսպիսով, հեղափոխությունից մինչև 1920 թ. աշուն՝ քաղաքացիական պատերազմի ավարտն ու խորհրդայնացումը, Ղրիմի հայ համայնքն ունեցավ կարճատև, սակայն ազգային-համայնքային կյանքով ապրելու կարևոր մի շրջան, իսկ տարածաշրջանի խորհրդայնացումից հետո բոլոր ազգային-համայնքային կազմակերպությունները փակվեցին:

Օդեսայի Հայոց Ազգային Խորհուրդը: Օդեսան, ժամանակի ընթացքում, շատ արագ իր կողմն է ձգել իրենից մի փոքր վաղ հիմնադրված Գրիգորիոպոլի և հարակից շրջանների հայությանը՝

<sup>72</sup> Նույն տեղում:

<sup>73</sup> Նույն տեղում, ք. 6:

վերածվելով բավականին սովոր հայ համայնք ունեցող կենտրոնի: Առաջին աշխարհամարտի տարիներին քաղաքը հանգրվան է հանդիսացել Բալկաններից և արևմտյան ճակատից այստեղ տեղաշարժվող բազմահազար հայ փախստականների և նախկին ռազմագերիների համար: Օդեսայի հայ բնակչությունը մասնակից դառնալով միջազգային առևտրի այս կենտրոնի աշխույժ կյանքին ավելի արագ քան մյուս հայկական կենտրոնները Հարավային Ռուսաստանում (Ուկրաինայում) կանգնեց ազգային լեզվի և սովորույթների կորստյան առաջ, ապազգայնացման ճանապարհին:

Հայաստանի հետ շփումների դժվարությունը, քաղաքական անկայուն պայմանները, հայ հասարակական հիմնարկների բացակայությունն ու եղածների խղճուկ վիճակը պարարտ հող էին հայությանը իր արմատներից կտրելու համար:

Օդեսայի հայ համայնքի կյանքում բացառիկ իրողություն էր 1918-1920 թթ. հրատարակված «Հոսանք»-ը, որը ոչ միայն վերհանեց և արծարծեց համայնքի ներքին խնդիրները, այլև գործուն մասնակցություն ունեցավ ազգային կյանքին լիցքեր հաղորդելու և հայությանը միավորելու համար: Ընդգծելով Օդեսայի հայության հիմնահարցերը՝ «Հոսանք»-ն առանձնացնում էր նաև հույս ներշնչող հայ հաստատությունների առկայությունը՝ հայկական հյուպատոսարան, գաղթականական մարմիններ, Հայ տիկնանց ընկերություն, Ռուսնողական հայրենակցություն, որոնք կոչված էին գաղութի կյանքին հասարակական բովանդակություն հաղորդել. «Դժբախտաբար, նրանց կողքին կան մի շարք հին ու ուրիշ հաստատություններ ևս, որոնք սակայն և ոչ մի գործ, հետևաբար կենդանութեան նշաններ չեն ցոյց տալիս»<sup>74</sup>: Օդեսայում գործող հայկական վերոհիշյալ հաստատությունների միավորման և մեկ համայնքային մարմին ձևավորելու պատասխանատու գործին լծվեց տեղի հայկական հյուպատոսարանը՝ նկատի առնելով անցյալի անհաջող փորձերը: Այդ առնչությամբ 1919 հունվարի 31-ին Ուկրաինայում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Գ. Չամոյանի նախագահությամբ խորհրդակցություն է գումարվում, որին մասնակցում էին քաղաքի մի քանի անվանի հայ հասարակական գործիչներ: Խորհրդակցության արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել նոր ժողով հրավիրել քաղաքի հայ հասարակական հաստատությունների ամբողջ կազմերի մասնակցությամբ:

Օդեսայում ազգային-համայնքային հիմնարկության ստեղծման

<sup>74</sup> Հոսանք, Օդեսա, 1919, № 27, էջ 2-3:

ուղղությամբ գործնական քայլեր կատարվեցին 1919 թ. փետրվարին, երբ և դրվեցին կառույցի հիմքերը. «Ամսիս 5-ին Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ պ. Գ. Խ. Չամոյեանի նախագահությամբ կայացավ մի ժողով, որին ներկայ էին Օդեսայի բոլոր հասարակական հաստատությունների անդամները», իսկ ժողովի հիմնական հարցը Ազգային Խորհրդի հիմնումն էր՝ իր սեկցիաներով, հօգուտ գաղթականների և գերիների երեկույթի կազմակերպումը և այլն. «Ժողովը հարկ գտավ, որ Օդեսայի անգործունեայ հաստատությունները Ազգային Խորհրդի հաստատելովը լուծւին, իսկ գործ և արդիւնք ցոյց տւող հաստատութիւնները շարունակեն գոյութիւնը Ազգ. Խորհրդի ղեկավարութեամբ»<sup>75</sup>: Փետրվարի 23-ին կայացած ընդհանուր ժողովում (236 մասնակից) գաղտնի քվեարկությամբ ընտրվում են Ազգային Խորհրդի 16 անդամները, որից հետո ժողովականները «միաձայն որոշեցին յանձնարարել Ազգային Խորհրդին լսելի դարձնել նաև Օդեսայի հայության պահանջը, թէ Հայաստանը պիտի լինի անկախ և միացեալ, պարփակելով իւր մէջ Կովկասեան Հայաստանը, Թիւրքական Հայաստանի 6 վիլայէթները և Կիլիկիան ու Ջեյթունը»<sup>76</sup>: Փետրվարի 25-ին կայացած Ազգային Խորհրդի առաջին նիստում ընտրվում է նախագահությունը՝ նախագահությամբ Բարսեղ Գ. Թայիրյանի, Խորհրդի քարտուղար է ընտրվում Հովհ. ավ. ք. Չուբարյանը. «Փոխ-նախագահութեան պաշտօնի համար ընտրւեցան պպ. Յ. Բաղդասարեան և Յ. Սընտիկեան»<sup>77</sup>:

«Հոսանք»-ն իր 1919 թ. մարտի 22-ի համարում տեղեկացնում էր Օդեսայի Ազգային Խորհրդի ընդունած ազգային տուրքի որոշման մասին. «Ամեն չափահաս հայ և հայուհի, որ մշտապես կամ ժամանակաւորապէս ապրում է Օդեսայում կամ Խերսոնէզիայում և ունի որևէ գոյք կամ եկամուտ, պարտաւոր է ազգային տուրք վճարել»<sup>78</sup>: Ազգային Խորհրդի ֆինանսական լիազորի ներկայացրած ազգային տուրքի գանձման մեխանիզմը հստակորեն կյանքի կոչելու և կառույցը պատահական մուտքերից կախման մեջ չդնելու, այլ մշտական հոսքեր ապահովելու համար տեղի հայությունը բաժանվեց 4 կատեգորիաների:

Օդեսայի Հայոց Ազգային Խորհուրդն իր գործունեության առնցքում էր դիտում Հայաստանին նյութական և բարոյական աջակցությունը, անգամ փորձեց բժավոր տիֆի դեմ պայքարելու համար

<sup>75</sup> Նույն տեղում, № 28, էջ 4:

<sup>76</sup> Նույն տեղում, № 33, էջ 4:

<sup>77</sup> Նույն տեղում, № 34, էջ 3:

<sup>78</sup> Նույն տեղում, № 38, էջ 2:

Օդեսայի հայ բժիշկների մի խումբ գործուղել հայրենիք:

1919 թ. ապրիլին Օդեսայում իշխանությունն անցավ Ուկրաինայի Խորհրդային կառավարությանը, դժվարին ժամանակներ սկսվեցին համայնքային կառույցների համար:

Ազգային Խորհրդի գործունեությունը, ցավոք, կարճ տևեց, քանի որ «Հոսանք»-ի արդեն 1919 թ. ապրիլի 19-ի համարից հստակ երևում է, որ Օդեսայում հայ համայնքի գործերի տնօրինման համար սկսում է հանդես գալ Ազգությունների գործերի ժողովմատի հայկական բաժանմունքը:

Օդեսայի Հայոց Ազգային Խորհրդի հետագա ընթացքի մասին տեղեկությունները բացակայում են, սակայն միանշանակ է, որ Խորհրդային իշխանության հաստատումով այն դատապարտված էր, ինչպես դա տեղի ունեցավ Դրիմի և Դոնի հայկական համայնքային կառույցների պարագայում:

Այսպիսով, նախկին ռուսական կայսրության տարածքում քաղաքական անկայունության պայմաններում ծնունդ առած հայկական համայնքային, հասարակական, բարեգործական, մշակութային և այլ կազմակերպությունները զգալի ավանդ ունեցան հայ կյանքի կազմակերպման և ուղղորդման գործում: Հայկական այս կառույցներին էր վերապահված քառասյին պայմաններում հայտնված հայ համայնքների, հազարավոր հայ փախստականների ու անօթևանների, նախկին հայ ռազմագերիների պատսպարման, կերակրման բուժօգնության և մի մասին հայրենիք վերադարձնելու դժվարին գործը: Ռուսաստանում քաղաքական անիշխանության և առճակատման պայմաններում հայկական այս կազմակերպություններն էին ներկայացնում և պաշտպանում տեղի հայության շահերը: Նյութական և մարդկային սուղ ռեսուրսների պայմաններում հայկական այդ կազմակերպություններին հաջողվեց զգալիորեն թեթևացնել ինչպես գաղութահայ, այնպես էլ այստեղ կուտակված տարագիր հայության ծով կարիքների մի մասը: Ռուսահայ այս կազմակերպություններն, ոգևորությամբ ընդունելով Հայաստանի անկախությունը, պատրաստակամորեն նվիրվեցին հայրենիքին օժանդակելու գործին, ապրեցին Հայաստանի ապագայի տեսիլքով և տեղերում լայնորեն քարոզեցին ազգային վերածննդի ու միասնության գաղափարներ:

Հայաստանի նորաստեղծ հանրապետությունն իր հերթին քայլեր իրականացրեց կամուրջ դառնալու մայր հայրենիքի ու գաղութահայ զանգվածների միջև՝ վերջիններիս ներուժն օգտագործելով և ներգրավելով Հայաստանի կարիքների թեթևացման գործին: Պատահական չէ, որ նորաստեղծ ՀՀ-ն դիվանագիտական ներկայացուցչու-

թյուններ հիմնեց Յուսիսային Կովկասի, Դոնի, Ուկրաինայի և նախկին ռուսական կայսրության հայաշատ այլ կենտրոններում, տեղերում մեծապես նպաստելով հայկական կառույցների գործունեությանը, և անգամ դրանց ձևավորմանը: Հատկանշական է, որ Հարավային Ռուսաստանի մեծաթիվ հայությունը հանդիսանում էր այն կարևոր օղակը, որը կամրջի դեր էր տանում Հարավային Ռուսաստանի ոչ խորհրդային պետական միավորների և ՀՀ միջև:

1919 թ. հունիսին ՀՀ կառավարությունն այդ նպատակով Յուսիսային Կովկաս է գործուղում Մ. Հարությունյանին. «...Մարտիրոս Հարությունյանը գործուղվել էր Դոնի, Կուբանի ու Թերեքի երկրամասեր և Ուկրաինայի հայաշատ քաղաքներ՝ ուսումնասիրելու և պարզելու Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ու հյուպատոսական մարմինների, Ազգային խորհուրդների և ազգային այլ կազմակերպությունների գործունեությունը, նրանց ունեցած դժվարություններն ու տեղ գտած թերությունները: Իրողություն է, անշուշտ, որ Հայաստանի անվտանգության շահերից ելնելով (Հայաստանի Հանրապետությունը հայտնվել էր թշնամիների «երկաթե օղակում») Մ. Հարությունյանի առաքելության նպատակն էր եկատերինոդարում բանակցել Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության» ղեկավարների հետ»<sup>79</sup>: ՀՀ կառավարությունը մտադիր էր ապրանքափոխանակություն ծանապարհով եկատերինոդարից Հայաստան ներկրել հաց, զինամթերք և այլ անհրաժեշտ ապրանքներ: Դա հրատապ խնդիրներից մեկն էր, որը ծառայել էր երկրի ղեկավարության առաջ: Եկատերինոդարից Հայաստանի համար ապրանքների առաքումը կազմակերպելու համար Կիևի և Թիֆլիսի դիվանագիտական միսիաններից ու այլ վայրերից Կուբան էին գործուղվում հայկական պատվիրակություններ, որոնք եկատերինոդարի Հայոց ազգային խորհրդի նախագահ Նիկոլայ Սաթունյանի առաջարկով տեղում ստեղծեցին ժամանակավոր կոլեգիալ մարմին՝ Հայաստանին անհրաժեշտ մատակարարումներն ապահովելու համար:

ՀՀ-ում տիրող լարված սոցիալ-տնտեսական վիճակը մեղմելուն էր ուղղված երկրի կառավարության տարբեր գերատեսչությունների առաքելությունները ռուսահայ համայնքներում՝ ֆինանսական կարիքների կարգավորման նպատակով: Այսպես, Դոնի հայ համայնքին

<sup>79</sup> Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), Ե., 2006, էջ 26-27:

ուղղված գրությունով տարածաշրջան է գործուղվում Հայաստանի Սպառողական Կոոպերատիվների Միության ներկայացուցիչ Մ. Ռուշանյանցը, ուր ասվում էր. «Ն. Նախիջևանի Հայ համայնքը իր պատմական հայրենասիրութեամբ մեր անմխիթար իրականութեան մեջ իր ցայտուն ու ջինջ էջերն է գրաւել:...Քաղաքական խտոր հարածները կրելուց յետոյ, այժմ իւր ազատութեան նախօրեակին նոյն մեր ժողովուրդը տառապում է սովից:...Մենք դիմում ենք ունևոր դասին և արդիւնաբերողներին ընդառաջ գնալու մեզ և հնարաւորութեան սահմաններում վարկ բանան Հայկօօպին»<sup>80</sup>:

Անհետաձգելի և կարևոր խնդիր էր հայ գաղթականության և զինվորականության հարցը, հայ համայնքների մտավոր և նյութական ռեսուրսները ի նպաստ Հայաստանի օգտագործելը. «Հայաստանի Հանրապետության կառավարությունը մտահոգված էր Առաջին աշխարհամարտի տարիներին արևմտյան ռազմաճակատից, գերմանական ու ավստրո-հունգարական գերությունից տուն վերադարձող նախկին ցարական բանակի հազարավոր հայ սպաներին ու զինվորներին, որոնք կուտակվել էին Ռուսաստանի հարավում, հայրենիք տեղափոխելու ուղիներ որոնելու խնդրով»<sup>81</sup>: Այսպես, միայն Ռուսաստանի հարավում՝ Դոնի, Կուբանի, Թերեքի երկրամասերի և Յուսիսային Կովկասի մի շարք բնակավայրերում հանգրվանել էին հազարավոր հայ գաղթականներ ու նախկին ռազմագերիներ, որոնք գտնվում էին անտանելի պայմաններում և տեղական բնակչության անբարեհաճ վերաբերմունքի ներքո: Հայ գաղթականությունն ենթարկվում էր անհիմն հալածանքների, որակվում սադրիչ-ավտոնոմիստ և Կովկասում ռուսին թալանող, վնդող, իսկ տեղական հայ կոմիտեներն ի վիճակի չէին իրավիճակը կառավարել: Այսպիսին էր Թիֆլիսի Հայոց Ազգային (կենտրոնական) խորհրդին ուղղված Դոնի և Յուսիսային Կովկասի հայ զինվորականների կոմիսար Սիրաք Գրիգորյանի 1918 թ. հունիսի 28-ի նամակի բովանդակությունը: Նման բովանդակություն ունեցող նամակներով Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին ահագնգել են նաև Կիևում ՀՀ դեսպան Գ. Չամոյանը և տեղերի հայ ազգային կազմակերպությունները. «Մեր քաղաքացիների, գաղթականների և ռազմագերիների դրությունը իրապես ծանր է: Դոնում, Դրիմում և Ռուսաստանի հարավում կուտակվել են մինչև 100.000 գաղթականներ և 5.000 ռազմագերիներ առանց որևէ

<sup>80</sup> ՀԱԱ, ֆ. 1265, ց. 1, գ. 40, ք. 70:

<sup>81</sup> Պետրոսյան Գ., նշվ. աշխ., էջ 61:

կազմակերպված օգնության...»<sup>82</sup>.

ՀՀ ռազմական նախարարությունն իր պատվիրակին՝ փոխգնդապետ Վլասին, 1918 թ. հոկտեմբերին գործուղել է Եկատերինոդար՝ Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության (գեն. Ա. Դենիկին) «Հատուկ խորհրդակցությանը» կից հայկական բանակի ներկայացուցիչ, որի գործունեության առանցքում էին լինելու. Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության միջոցով հայտնաբերել Ռուսաստանի հարավում կուտակված նախկին ցարական բանակի այն հայ սպաներին ու զինվորներին, որոնք ազատվել էին գերմանա-ավստրո-հունգարական գերությունից, ապա նրանց հայրենիք տեղափոխել, երկրորդ՝ Հայաստանին հաց, զինամթերք և այլ ապրանքներ ուղարկելու խնդիրները: Կամավորական բանակը, որն Անդրկովկասում ՀՀ-ն դիտում էր իր միակ բարեկամն ու ապագա ռազմական դաշնակիցը, շահագրգռված էր Հայաստանին օժանդակելու խնդրով, ուստի պատահական չէ, որ. «1918 թ. նոյեմբերի 23-ին Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցության» նախագահ գեներալ Ա. Դրագոմիրովի հրամանով առաջին խումբ հայ գաղթականները հնարավորություն ստացան Նովորոսիյսկից, Անապայից մինչև Բաթում-Երևան մեկնել անվճար. ճանապարհի համար յուրաքանչյուր անձի տրամադրվեց 5 փուֆ ալյուր»<sup>83</sup>.

1918 թ. դեկտեմբերին՝ հայ-վրացական պատերազմի շրջանում, փոխգնդապետ Վլասն, առանց ՀՀ կառավարության սանկցիայի, սակայն տեղի հայ համայնքների աջակցությամբ Եկատերինոդարում և Ռոստովում կազմակերպել էր զորաջոկատներ՝ Հայաստան ուղարկելու նպատակով: ՀՀ կառավարությունը, հասկանալով, որ նման քայլը կարող էր լինել վտանգավոր և օգտագործվել Կամավորական բանակի կողմից սեփական խնդիրները լուծելու համար, կանխել էր այն: Կամավորական բանակում ծառայող հայ սպաներին ու զինվորներին թույլատրվում էր գեներով մեկնել Հայաստան և ծառայության անցնել վերջինիս բանակում:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը լայն քարոզչություն է ծավալել Հյուսիսային Կովկասի և Դոնի հայության շրջանում՝ չհարելու երկու քաղաքական ուժերից ոչ մեկին: ՀՀ կառավարությունը մտահոգված էր քաղաքացիական պատերազմի թոհու-թոհում հայտնված հայության վիճակի և վարքագծի վերաբերյալ:

Վրացական բանակի հարձակումը Սոչիի ուղղությամբ և հայ բնակչության նկատմամբ բռնությունները առիթ դարձան որպեսզի Գագրայի Հայոց ազգային խորհուրդը 1919 թ. փետրվարի 24-ին (մարտի 9) խնդրանքով հանդես գա Ա. Դենիկինի առաջ՝ պաշտպանելու Սուխումի շրջանի հայությանը վրացական բանակի վայրագություններից: Այդ մասին անգլիական հրամանատարությանն ուղղված իր գրության մեջ նշում է Ա. Դենիկինը՝ այն առիթ դարձնելով սևծովյան շրջանից վրացական ուժերին դուրս մղելու իր գործողությունները իրականացնելիս. «Սոչիի շրջանի Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչներն ինձ խնդրել են Սուխումի մարզի, մասնավորապես Գուդաուտի գյուղի հայերին պաշտպանել վրացական բանակի բռնություններից»<sup>84</sup>: ՀՀ կառավարության զգուշավոր և չեզոք քաղաքականությունը Կամավորական բանակի նկատմամբ իր հերթին հղի էր հարաբերությունների վատթարացման հեռանկարով, ինչի մասին ահագանգում էին նաև ՀՀ դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներն իրենց նամակ-զեկույցներում: Այսպես, Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլյանն արտգործնախարարին ուղղված զեկույցում զգուշացնում էր Ռուսաստանի հարավում շարունակվող հայ գաղթականների արտահոսքի և նրանց ճակատագրի մասին. «Այս դժբախտների դրութիւնը սոսկալի է Կամավորական բանակի նոյնիսկ սրտագին վերաբերմունքի օրով, իսկ մեր յարաբերութիւնների վատթարանալով այս գաղթականների դրութիւնը կմտնեայ վերջնական բնաջնջման: Անհրաժեշտ է բարեկամական յարաբերութիւններ պահպանել թէ Հայաստանում բնակւող և ծառայող ռուսների հետ և թէ նրանց միջոցով այն «Ռօսիա»-ների հետ, որոնք ներկայումս գոյութիւն ունին»<sup>85</sup>: Այնուհետև նշվում էր, որ ոչ ցանկալի զարգացումների պարագայում լուրջ վտանգի էին ենթակա Կամավորական բանակի վերահսկողության տակ գտնվող թերեքի և Կուբանի հայ գաղթականությունը:

Այսպիսի նրբանկատ և հավասարակշիռ մոտեցումն անհրաժեշտ էր՝ խուսափելու համար հնարավոր քաղաքական սխալ հաշվարկներից, հարևանների հետ առճակատումից, որը կարող էր վնասել նաև տասնյակ հազարավոր հայ գաղթականներին. «...Նովորոսիյսկում կամաւորական բանակը պահում է զինակոչի ենթակայ հայ երիտասարդներին եւ գերմանական գերութիւնից վերադարձող զերիներին, ցուցակագրելով նրանց զինւորական պետի մօտ:... Հայաստանում»

<sup>82</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, I մաս, ք. 129:

<sup>83</sup> Պետրոսյան Գ., էջ 86:

<sup>84</sup> Նույն տեղում, էջ 181:

<sup>85</sup> Նույն տեղում, էջ 192-193:

տանի դեպի ռուսները ունեցած վերաբերմունքի փոփոխման լուրերով կօզուեն մեր բազմաթիւ չկամեցողները եւ կստեղծեն մի տրամադրութիւն, որով մեր գաղթականների դրութիւնը կդառնայ կրիտիքական»<sup>86</sup>:

Բաթումում Գ. Գլխավոր հյուպատոս Գ. Եղիզարյանը Գ. Կառավարությանն անգամ առաջարկել է ժամանակավորապէս արգելել Գյուսիսային Կովկասից Բաթումով հայ փախստկաններին հայրենիք վերադարձնելու ծրագրերը, որի նախաձեռնողն էր Կամավորական բանակը: 1919 թ. մայիս-հունիսին Ա. Դենիկինի թույլտվությամբ Գյուսիսային Կովկասից շուրջ 50 հզ հայ գաղթականներ, ստանալով յուրաքանչյուրը 5 կգ ալյուր և անվճար տեղափոխվելու հնարավորություն, տեղավորվել էին Բաթումում՝ առաջացնելով վրաց շրջանակների բացահայտ դժգոհությունը:

1919 թ. Գ. Կառավարությունը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց նաև ծովակալ Ա. Կոլչակի գլխավորած Սիբիրի կառավարության հետ՝ Օմսկում (ապա Իրկուտսկ) Գայաստանի ներկայացուցիչ հաստատելով Ուկրաինայում Գ. Գլխակին ներկայացուցիչ Գ. Զամոյանին, որի գլխավոր խնդիրն էր պաշտպանել Գ. և Սիբիրի ու Գեռավոր Արևելքի հայության շահերը: Գ. ներկայացուցիչ ընդունելության ժամանակ Ա. Կոլչակը խոստացել է մեծապէս աջակցել Սիբիրի և Գեռավոր Արևելքի հայ բնակչության և գաղթականության իրավունքների պաշտպանությանը, լուծում տալ նրանց խնդիրներին: 1920 թ. նախօրեին Կոլչակի վերջնական պարտությունից հետո, Գ. Սիբիրի դիվանագիտական առաքելությունը մնաց և շարունակեց ևս որոշ ժամանակ գործել, որպէս Գ. ներկայացուցիչ Օմսկ-Իրկուտսկի, Վերին Ուզինսկի, Չիտայի և Վլադիվոստոկի խորհրդային կառավարությունների մոտ. «...այժմ այս կողմերում ցրված փոքրաթիվ հայերը վայելում են նույն իրավունքները, ինչ որ ունեն օտար պետությունների հպատակները»<sup>87</sup>:

Գ. Զամոյանը լայն գործունեություն է ծավալել Սիբիրի և Գեռավոր Արևելքի տարբեր անկյուններում ապրող հայ համայնքների կազմակերպման և աշխուժացման համար, այստեղ հսկա տարածության վրա՝ Օմսկից Վլադիվոստոկ ցրված էին հայ հնաբնակներն ու գաղթականները, ռուսական բանակից զորացրված հայ սպաներն ու զինվորները (հայտնվել էին 1918 թ. մարտից), թուրքական բանակի

ռազմագերի հայ զինվորները: Միմյանցից անկախ ստեղծվում էին հայ ազգային խորհուրդներ, կազմակերպություններ ու միություններ, որոնք սակայն միավորված չէին և գործում ոչ այնքան արդյունավետ. «Գայոց ազգային խորհուրդներ ստեղծվեցին Օմսկում (նախագահ՝ Ադամ Ալեքսանյան), Տոմսկում (նախագահ՝ բժ իշկ Սիրզախանյան), Իրկուտսկում (նախագահ՝ Վարդան Դարիբյան), Չիտայում (նախագահ՝ Վահրամ Ելբանդյան), Վլադիվոստոկում (նախագահ՝ ինժեներ Սաֆարյան) և այլուր»<sup>88</sup>:

Սիբիրի հայության շրջանում զինակոչիկներ հավաքագրելու և Գայաստան ուղարկելու քայլեր էր իրականացրել դեռևս 1917 թ. հոկտեմբերին Իրկուտսկում հիմնված հյուպատոսության ղեկավար Ա. Յաղուբովը (Յաղուբյան), իսկ 1919 թ. մայիս-հունիսին հարբինում տեղի և Վլադիվոստոկի Գայոց ազգային խորհուրդների նախաձեռնությամբ գումարվել է Սիբիրի և Գեռավոր Արևելքի հայ ներկայացուցիչների համագումար՝ նպատակ ունենալով ստեղծել ցարցրիվ գործող հայ ազգային խորհուրդների ու տարբեր կազմակերպությունների կենտրոնական խորհուրդ. «...Այժմ Սիբիրոյ եւ Ծայրագուն Արևելքի մէջ գտնուում են մօտ երեք հազար հայեր, որոնք բոլորն ալ գրեթէ հարուստ և բարեկեցիկ են և որոնց համար Գամագումարը մշակեց ծրագիր և ստեղծեց յաջող Կենտրոնական Վարչութիւն, որուն վրայ Գամագումարը սրբազան պարտք դրաւ ամեն կարելի միջոցներով զանոնք կապել Գայրենիքին հետ և նւիրող ու զոհաբերող հայեր պատրաստել...»<sup>89</sup>: Գամագումարի նախագահ Վասակ Տեր-Պողոսյանի՝ Գ. վարչապետին հասցեագրած նամակից (1919 թ. հունիսի 25) պարզ է դառնում մոտ մեկ ամիս տևած համագումարի օրակարգի հիմնական հարցերը. Սիբիրի և Գեռավոր Արևելքի Գայոց ազգային Կենտրոնական խորհրդի ստեղծում, նյութական օգնության կազմակերպում Գայաստանին, գաղթականության և հայության վերադարձը հայրենիք և ազգային զորագնդերի կազմակերպում: Գամագումարը որոշեց 1,5 մլն ռուբլու փոխառություն տրամադրել՝ Գայաստանին անհրաժեշտ ապրանքներ գնելու և ուղարկելու, 1 մլն ռուբլու հանգանակություն կատարել հօգուտ Գ. սովյալների, դիմել Սիբիրի և Գեռավոր Արևելքի ռուսական իշխանություններին զորակոչի ենթական հայերին ազատել Գ. ուղարկելու համար: Այդ նպատակով ստեղծվեց հատուկ հանձնախումբ, որը հանգանակությունների միջոցով հավաքեց 5 մլն ռուբլի՝

<sup>86</sup> ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 114, ք. 75:

<sup>87</sup> Պետրոսյան Գ., նշվ. աշխ., էջ 227:

<sup>88</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 618, ք. 175-178:

<sup>89</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 210, ք. 15:

հայկական բանակին անհրաժեշտ հանդերձանք գնելու համար. «Համագումարը Սիբիրի և Հեռավոր Արևելքի Հայոց ազգային կենտրոնական խորհրդի նախագահ ընտրեց Տարաս Սուրինովին: Նա խոշոր ձեռնարկատեր էր և նախապատրաստվում էր կազմակերպել Հայկական ազգային բանկ՝ Հայաստանի Հանրապետությանը օգնելու համար»<sup>90</sup>: Սիբիրի և Հեռավոր Արևելքի հայությունը պատրաստակամ էր Հայաստանին օժանդակելու խնդրում և նախաձեռնությունն այդ հարցում վերցրել էր իր ձեռքը:

Այսպիսով ավարտվում է ՀՀ և Ռուսաստանի տարբեր տարածաշրջանների հայ համայնքների միջև հիմք դրված աշխույժ կապերի փուլը, որն ընդհատվեց տեղերում խորհրդային իշխանության հաստատումով:

Հասարակական-պատմական և քաղաքական ցնցումներով լի այս ժամանակաշրջանում Դոնում, Ղրիմում, Ուկրաինայում և Ռուսաստանի մյուս տարածաշրջաններում ստեղծված հայկական կազմակերպություններն իրենց սուղ հնարավորությունների սահմաններում, այնուհանդերձ, կարողացան իրականացնել.

1. Առաջին աշխարհամարտի և ցեղասպանության արդյունքում փախստական դարձած հազարավոր հայերի տեղավորման և կերակրելու գործը: Դոնում կուտակվել էին ինչպես Արևմտյան Հայաստանից, այնպես էլ թուրքիայից, Անդրկովկասից, Պարսկաստանից և Բալկաններից փախստական դարձած հայեր, որոնց ապաստանելու, կացարաններում տեղավորելու և կերակրելու համար հսկայական նյութական միջոցներ ծախսվեցին: Խնդիրներն ամբողջովին լուծելը անհնարին էր:

2. Փախստական հայերին ցուցաբերվեց սոցիալական և առողջապահական օգնություն, որը դրսևորվեց թե՛ տնային պայմաններում, թե՛ հիվանդանոցային բուժմամբ և խնամքով: Ծերերին և հաշմանդամներին տեղավորեցին անկելանոցներում և այլ հիմնարկներում, որք երեխաներին՝ որբանոցներում, հոգ տարվեց նրանց դաստիարակության և կրթության կազմակերպման մասին:

3. Կարճ ժամանակում, որոշ չափով, հաջողվեց կազակերպել և համախմբել հայությանը, գործող կազակերպությունների և միությունների շուրջ, իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ: Արդյունքում ստեղծվեցին նաև հայրենակցական միություններ՝ առաջացած խնդիրներն առավել արդյունավետ լուծելու համար:

4. Թեև փոքր չափերով, այնուհանդերձ, հնրավավոր եղավ գաղ-

թական հայության մի մասին հայրենիք վերադարձնել, ինչին, անշուշտ, խոչընդոտում էին սուղ հնարավորություններն ու քաղաքական գործընթացներն, ուր թևակոխել էին Անդրկովկասն ու Ռուսաստանը:

5. Ստեղծված հայկական կազմակերպություններն ու միությունները, յուրօրինակ կերպով դարձան հայ ազգային-մշակութային կյանքի տնօրենը՝ հոգ տանելով մշակութային և կրթական խնդիրների լուծմանը:

6. Նպաստեցին օտար ափերում հայտնված հայ զանգվածների ինտեգրմանը նոր միջավայրին, ապահովեցին նրանց հետագա զարգացումը, քանի որ ստեղծված նոր պայմաններին դժվար էր հարմարվել լեզու, տեղական մշակույթ և օրենք չիմացող հայերին:

Այսպիսով, Առաջին աշխարհամարտից հետո Ռուսաստանում ստեղծված հայկական կազմակերպություններն իրենց արդյունավետ գործունեությունը շարունակեցին մինչև 1920-ական թթ. սկիզբը՝ անգնահատելի դեր ստանձնելով տեղի հայության կյանքում այդ սոցիալ-քաղաքական ծանր շրջանում:

<sup>90</sup> Պետրոսյան Գ., էջ 230:

## ՉԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ՀԱՅԵՐԻ ԹԻՎԸ ՈՒ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 1920 -1930 -ԱԿԱՆ ԹԹ.

#### 2.1. ՌուսՅՍՀ-ում, Ուկրաինական ԽՍՀ-ում, Բելոռուսական ԽՍՀ-ում

Առաջին աշխարհամարտն ու Արևմտյան Հայաստանում հայության ցեղասպանությունը, 1917 թ. փետրվարյան ռուսական հեղափոխությունն ու նրան հաջորդած քաղաքացիական պատերազմը, Ռուսաստանի տարբեր անկյուններում ապաստան գտած տասնյակ հազարավոր հայ փախստականների համար մղձավանջային տարիներ դարձան: Ռուսաստանի հայաշատ գաղթօջախները համալրվեցին հայերի նոր զանգվածներով, որոնք, անընդհատ տեղաշարժերի արդյունքում, աստիճանաբար ընդլայնեցին իրենց բնակության աշխարհագրությունը: Հյուսիսային Կովկասի, Դոնի, Պովոլժիեի, Դրինի, Թուրքեստանի, Ուկրաինայի և այլ հայաշատ համայնքների մինչ-խորհրդային շրջանի պատմությունը, հայության թիվն ու տեղաբաշխման շրջանները համակողմանիորեն ուսումնասիրվել է:

Խորհրդային հանրապետություններում բնակվող հայության թիվը, տեղաբաշխման շրջանները, լեզվական պատկանելիությունը, գրագիտության աստիճանն ու այլ գործընթացներ հնարավոր է դիտարկել Խորհրդային Ռուսաստանում, ապա ԽՍՀՄ-ում 1920-1930-ական թթ. անցկացված մարդահամարների արդյունքների շնորհիվ:

Այսպես, 1920-ական թթ. Խորհրդային Ռուսաստանում և ԽՍՀՄ-ում անցկացվել են 3 մարդահամարներ՝ 1920 թ. օգոստոսի 28-ի Համառուսաստանյան մարդահամարը, 1923 թ. մարտի 15-ի ԽՍՀՄ քաղաքային մարդահամարը և 1926 թ. դեկտեմբերի 17-ի Համամիութենական մարդահամարը:

1930-ական թթ. ԽՍՀՄ-ում անցկացվել են ևս երկու Համամիութենական մարդահամարներ՝ 1937 թ. հունվարի 6-ին և 1939 թ. հունվարի 17-ին: 1937 թ. մարդահամարն անցկացվեց բարդ պայմաններում և նույն թվականի սեպտեմբերի 25-ին նրա արդյունքները հայտարարվեցին թերի, մարդահամարի կազմակերպումն՝ անբավարար: Իրականում այս մարդահամարի նյութերը «ծերբակալվեցին» և տասնամյակներ շարունակ պահվեցին արխիվներում՝ հրապարակվե-

լով ավելի ուշ: Այս մարդահամարն անցկացվեց գիտական նորմերի բացահայտ խախտումներով, քանի որ մամուլում, հրատարակված բրոյշուրներում և հանդեսներում արդեն նախանշվում էին մարդահամարի արդյունքները, ըստ որի սպասվում էին «բացառիկ հաջողություններ և հսկայական տեղաշարժեր» բնակչության թվի աճի, կրթության մակարդակի և գրագիտության, աթեիստական տրամադրությունների կտրվածքով: ԽՍՀՄ քաղաքական ղեկավարության «պատվերով» մարդահամարը վեր էր հանելու երկրի ժողովրդագրական պատկերի բուռն զարգացումը, որն անհամեմատ մեծ էր կապիտալիստական աշխարհում առկա արդյունքներից<sup>91</sup>:

Հաջորդ մարդահամարն անցկացվեց երկու տարի անց՝ 1939 թ, որն ավելի կազմակերպված և նախապատրաստված էր, արդյունքում վեր հանվեց ԽՍՀՄ բնակչության և նրա էթնիկ կազմի վերաբերյալ 1930-ական թթ. պաշտոնական պատկերը: Թեև վիճակագրական տվյալները որոշ մարդահամարների ժամանակ ամբողջական և ամփոփ չէին, բայց և այնպես, դրանք հանդիսանում են պաշտոնական տվյալներ, որոնց արձանագրած արդյունքները, որոշակի վերապահումներով, ճշգրիտ են և վերջնական:

1920 թ. օգոստոսի 28-ի Համառուսաստանյան ժողովրդագրական մարդահամարի վիճակագրական արդյունքներ են ստացվել ռուսաստանյան 44 նահանգներից (ընդամենը 48-ն էին): Հայ ազգաբնակչությունն առկա էր մարդահամարի արդյունքներն ամփոփած 44 նահանգներից 41-ում: Մարդահամարի արդյունքում Ռուսաստանում (առանց ինքնավար միավորների) արձանագրվել է 137.119 հայ, որոնց մեջ գերակշռում էին քաղաքաբնակները:

Աղյուսակ № 1

Հայերը Խորհրդային Ռուսաստանում  
ըստ 1920 թ. օգոստոսի 28-ի մարդահամարի

	ամբողջը	քաղաքաբնակ	գյուղաբնակ
Ռուսաստան <sup>92</sup> (առանց ինքնավար միավորների) որից՝	137.119	85.664	51.455
1 Կուբան-Չերնոմորիե նահանգ	58.769	36.084	22.685
2 Դոն	42.562	19.868	22.694

<sup>91</sup> Всесоюзная перепись населения 1937 г.: Краткие итоги, М., 1991. с. 4-5.

<sup>92</sup> Жизнь Национальностей, книга I, (VI), М., 1924, с. 32.



3	Թերեք	24.736	19.481	5.255
4	Ստավրոպոլ	3.131	2.721	410
5	Մատրախան	2.709	2.631	78
6	Մոսկվա	2.162	2.113	49
7	մյուս 35 նահանգներում միասին	3.050	2.766	284

Ղրիմի ԻԽՍՀ հայ ազգաբնակչության թիվն առանձին ներկայացված չէ, հանդես է գալիս այլ էթնիկ խմբերի հետ՝ կազմելով Ղրիմի ԻԽՍՀ ամբողջ բնակչության 14,3%-ը (հույների, լատիշների և այլնի հետ միասին):

Հյուսիսկովկասյան երկրամասի՝ Կուբան-Չերնոմորիեի, Թերեքի, Ստավրոպոլի և Ղոնի հայ ազգաբնակչությունը միասին կազմում էր 129.126 մարդ: Ռուսաստանում հոծ գյուղական հայ բնակչություն ունեցող շրջանները ևս գտնվում էին Հյուսիսային Կովկասում, մասնավորաբար, Կուբան-Չերնոմորիեում և Ղոնում:

Հյուսիսային Կովկասի էթնիկ խնդիրներով զբաղվող Վ. Բելոզյորովը իրավամբ նշում է, որ արդեն 1920 թ. Կուբան և Չերնոմորիե նահանգների հայ բնակչության թիվը համապատասխանաբար կազմում էր 45.3 հզ և 13.0 հզ, որոնցից 65.1 %-ը և 41.8 %-ը քաղաքային բնակիչներ էին<sup>93</sup>: Վ. Բելոզյորովը, որպես առավել հոծ հայ համայնքներ նույն շրջանում, առանձնացնում էր նաև Մայկոպի և Եկատերինոդարի շրջանները (16.7 հզ մարդ), ինչպես նաև Սոչիի և Տուապսեի շրջանները (8.5 հզ մարդ): Հեղինակը ճիշտ է նկատում, որ տարածաշրջան հայության իսկական հոսք սկսվել է 1894-1895 թթ., ապա նաև Թուրքիայում 1915-1916 թթ. և Անդրկովկասում 1918 թ. տեղի ունեցած հայության ջարդերից հետո, որոնց արդյունքում արդեն 1917 թ., ներգաղթային գործընթացներից հետո, Հյուսիսային Կովկասում ձևավորվել էր բազմամարդ հայկական գաղութ՝ կազմելով երկրամասի բնակչության 1.3 %-ը<sup>94</sup>:

Հյուսիսային Կովկասի որոշ շրջաններում հայության թվի կտրուկ աճը պայմանավորված էր հայ գաղթականների այստեղ կոմպակտ հաստատվելով. «Հեղափոխությունն ու քաղաքացիական պատերազմը հանգեցրին դեպի Հյուսիսային Կովկաս զգալի ներգաղթային հոսքի: Գաղթականների հոսքը միայն Հյուսիսային Օսեթիա կազմեց ավելի քան 50 հզ մարդ, որոնցից մոտ 20 հզ հարավային օսեթ էին... փախստական հայերը նախկին Կարսի մարզից և Թուր-

քիայից (մոտ 3800 ընտանիք): Հայերի տեղավորման հիմնական արեալը դարձավ Տուապսե-խաղիժենսկը, ուր նրանք, ստանալով հող, սկսեցին աճեցնել ծխախոտ և եգիպտացորեն, սակայն մի մասն էլ հաստատվեց ավելի հյուսիս ընկած գյուղական վայրերում (Ղոնի, Սալսկի, Թերեքի և Ստավրոպոլի օկրուգներում) կամ էլ քաղաքներում (Վլադիկովկասում, Արմավիրում, Մոզդոկում և Պրիկուսկում)»<sup>95</sup>:

1920 թ. օգոստոսի 28-ին անցկացված մարդահամարն առաջինն էր 1920-ական թթ. և լուրջ տեղեկատվական հիմք դարձավ հաջորդ մարդահամարների անցկացման ժամանակ՝ հնարավորություն ընձեռելով հետևել ժողովրդագրական իրավիճակի փոփոխություններին Ռուսաստանում՝ չնայած իր որոշակի թերություններին:

1923 թ. մարտի 15-ին ԽՍՀՄ-ում անցկացվում է առաջին մարդահամարը, որն ընդգրկում էր միայն քաղաքային բնակավայրերը և պարունակում էր վիճակագրական տվյալներ ոչ միայն էթնիկ կազմի, սեռի, այլ նաև բնակչության զբաղվածության վերաբերյալ (ինքնագործ, ոչ ինքնագործ խմբեր): Վեր հանվեց միայն հայ քաղաքային ազգաբնակչության տվյալները, ակնհայտ աճով հանդերձ:

ՌԽՖՍՀ-ն ուներ 125.794 քաղաքային հայ բնակիչ<sup>96</sup>, որից Կուբան-Չերնոմորիե նահանգում՝ 34.811, Ղոնում՝ 17.208, Թերեքում՝ 17.762, Մոսկվայում՝ 4.634: Ղրիմի ԻԽՍՀ-ում և Լեռնային ԻԽՍՀ-ում համապատասխանաբար բնակվում էին 6.875 և 7.587 հայեր:

ՌԽՖՍՀ քաղաքային հայ բնակչությունը, ինչպես երևում էր նախորդ մարդահամարից, գլխավորապես կենտրոնացած էր Հյուսիսային Կովկասի վարչատարածքային միավորներում, ուր ավանդաբար եղել է հոծ հայ ազգաբնակչություն: 1920 թ. մարդահամարի արդյունքների հետ համեմատած, 1923 թ. քաղաքային մարդահամարը արձանագրել է քաղաքաբնակ հայության աճ, ինչն, անշուշտ, միայն բնական աճի արդյունք չէր, այլ հետևանք էր նաև տվյալ վայրերում տասնյակ հազարավոր հայ փախստականների վերջնական հաստատման: Նրանց մի մասն էլ տեղաշարժվեց ՌԽՖՍՀ այլ նահանգներ՝ կտրուկ մեծացնելով տեղի հայության թիվը: Այդպիսին էր Վորոնեժի նահանգը, ուր 1920 թ. ոչ մի հայազգի քաղաքացի չկար, իսկ 1923 թ. միայն քաղաքային բնակիչներ էին 236-ը, իսկ Մոսկվայի նահանգում հայերի թիվը կրկնապատկվել էր:

1923 թ. քաղաքային մարդահամարով առաջին անգամ վեր հանվեց բնակչության զբաղվածության պատկերը, ինչի արդյունքում

<sup>93</sup> Белозёров В., նշվ. աշխ., էջ 49:

<sup>94</sup> Նույն տեղում:

<sup>95</sup> Նույն տեղում, էջ 55:

<sup>96</sup> Итоги Всесоюзной городской переписи 1923, ч. IV, М., 1927, с. 33.

հնարավոր է դիտարկել աշխատանք, եկամուտ ունեցողների (ինքնագործ) և կերակրվողի կարգավիճակով մարդկանց թվային հարաբերակցությունը: ՌեսՖՍՀ քաղաքային հայ բնակչության 36,1%-ը ներկայացնում էր բնակչության ինքնագործ խումբը: Այս հարաբերակցությունն ավելի բարձր էր արական սեռի շրջանում կազմելով 56,4%:

1920-ական թթ. անցկացված վերջին մարդահամարով 1926 թ. դեկտեմբերի 17-ին, ավելի ընդգրկում ու համընդհանուր պատկեր է ներկայացվում բնակչության ոչ միայն էթնիկ կազմի, սեռի, տեղաբաշխման, այլ նաև մայրենի լեզվի, գրագիտության աստիճանի վերաբերյալ:

Մարդահամարով արձանագրված ՌեսՖՍՀ 195.410 հայազգի բնակիչները գլխավորապես կենտրոնացած էին Դոնի, Չերնոմորիեի, Թերեբի, Կուբանի, Արմավիրի, Մայկոպի և Ստավրոպոլի (2.237 մարդ) օկրուգներում:

*Աղյուսակ № 2*

Հայերը ՌեսՖՍՀ-ում ըստ 1926 թ. դեկտեմբերի 17-ի  
Համամիութենական մարդահամարի

		ամբողջը	արական	իգական	մայրենի լեզուն հայ. լուս. այլ			գրագետ	գրագետ ազգ. լեզվով
1	ՌեսՖՍՀ <sup>97</sup> որից	195.410	101.069	94.341	170428	22823	2159	98.193	53.172
2	մաղաքաբնակ	116.157	59.564	56.593	94.270	20.092	1795	67.510	28.272
3	գյուղաբնակ	79.253	41.505	37.748	76.158	2.731	364	30.683	24.900
4	Չերնոմորիե օկրուգ	27.729	14.781	12.948	27.079	551	99	9.738	8153
5	Դոն	44.504	22.366	22.138	38.806	5552	146	25.007	15.941
6	Թերեբ	21.423	10.733	10.690	20.056	1293	74	9.146	3739
7	Կուբան	21.023	10.953	10.070	18.438	2421	164	10.365	5488
8	Արմավիր	19.198	9.690	9.508	15.371	2850	886	9.401	3605
9	Մայկոպ	9.801	5.076	4.725	9.406	361	34	2.822	2067
10	Մոսկվա նահ.	6718	3662	3056	3927	2705	86	5907	2531
11	Դրիմի ԻԽՍՀ	10.713	5469	5244	8965	1730	18	6.431	3179
12	ք. Վլադիկովկաս	6529	3311	3218	5798	536	195	2935	1168
13	ք. Գրոզնի	5843	3066	2777	4793	965	85	2753	1538

1926 թ. դեկտեմբերի 17-ի Համամիութենական մարդահամարը ցույց տվեց ՌեսՖՍՀ-ում բնակվող հայության իրական թվաքանակն ու տեղաբաշխման շրջանները: Հյուսիսկովկասյան երկրամասի բոլոր օկրուգներն ու նահանգները, ինքնավար հանրապետություններն ու քաղաքները հայաբնակ էին Դաղստանի ԻԽՍՀ հայ բնակչության հետ միասին կազմելով 168.109 մարդ (որից՝ Դաղստանի ԻԽՍՀ-ում 5923 հայ): Հյուսիսկովկասյան երկրամասի և Դաղստանի ԻԽՍՀ հայ բնակչությունը միասին կազմում էր ՌեսՖՍՀ ամբողջ հայ բնակչության 86%-ը: ՌեսՖՍՀ ամբողջ քաղաքային և գյուղական հայությունը կազմում էր համապատասխանաբար 80,4% և 94,2%:

Հյուսիս-Կովկասյան ինքնավարություններում հայ բնակչությունը ներկայացված էր հետևյալ կերպ.

Աղդղեա-Չերքեզական - 738 հայ, Հյուսիս-Օսեթական - 392, Չերքեզական - 179, Կաբարդինա-Բալկարական- 255, Կարաչայական- 24, Չեչենական-101, Ինգուշական- 19:

ՌեսՖՍՀ հայ ազգաբնակչության մոտ 87 %-ի համար հայերենը հանդիսանում էր իր մայրենի լեզուն, իսկ 11,6%-ի համար դա ռուսերենն էր (մնացյալը նշել են մեկ այլ լեզու): Գրագետ էր ՌեսՖՍՀ հայության մոտ 50%-ը, իսկ վերջիններիս կեսից ավելին գրագետ էր նաև իր ազգային լեզվով: Հայերենն իր մայրենի լեզուն էր համարում Չերնոմորիեի օկրուգի հայ ազգաբնակչության 97,6%-ը, որն ամենաբարձր ցուցանիշն էր ՌեսՖՍՀ-ում: Արդեն 1920-ական թթ. ՌեսՖՍՀ-ում կային հոծ հայ բնակչություն ունեցող քաղաքներ, որոնց գերակշիռ մասը գտնվում էր Հյուսիսային Կովկասում և Դոնում: ՌեսՖՍՀ քաղաքային հայ բնակչության թիվը 116.157 էր, գյուղականը՝ 79.253:

Այսպես, ամենամեծ թվով քաղաքային հայ բնակչություն ուներ Ռոստով-Նախիջևանը՝ 17.592, ապա Արմավիրը՝ 13.768, Կրասնոդարը՝ 13.469, Մոսկվան՝ 6.369 մարդ: Սովոր քաղաքային հայ բնակչություն ունեին Նովոռոսիյսկը՝ 4.122 մարդ, Պյատիգորսկը՝ 4.294, Պրիկումսկը՝ 4.924 և Դզլարը՝ 3.156: Մեծաթիվ հայություն էր ապրում նաև ինքնավար քաղաքներ Վլադիկովկասում և Գրոզնիում:

Քաղաքաբնակ հայերը մեծ թիվ էին կազմում նաև Հյուսիսային Կովկասի մի շարք այլ վայրերում՝ Կիսլովոդսկում, Կրոպոտկինում, Մոզդոկում և այլն. «Հյուսիսային Կովկասի խոշոր քաղաքներում, Կուբանում և Ստավրոպոլում հայերը երրորդն էին ռուսներից և ուկրաինացիներից հետո»<sup>98</sup>: Քաղաքային հայ բնակչությունն իր թվաքա-

<sup>97</sup> Всесоюзная перепись населения 1926 года, Российская Социалистическая Федеративная Советская Республика, М., 1929, с. 38.

<sup>98</sup> Терещенко А., նշվ. աշխ., էջ 5:

նակով երրորդն էր Արմավիրում (կազմում էր քաղաքի ամբողջ բնակչության 19 %-ը), Կրասնոդարում (8.6%-ը), Նովոռոսիյսկում (6.3 %-ը) և Պյատիգորսկում (7.9 %-ը): Թերեքի օկրուգի Պրիկումսկ և Դադստանի Ղզլար քաղաքներում հայերն իրենց թվաքանակով երկրորդն էին՝ կազմելով բնակչության համապատասխանաբար 31 %-ը և 33 %-ը: Հյուսիսկովկասյան երկրամասի ամենահայաշատ քաղաք Ռոստով-Նախիջևանում հայերն իրենց թվաքանակով երկրորդն էին՝ կազմելով քաղաքի բնակչության մոտ 5.7 %-ը:

ՌեսՖՍՀ գյուղական հայ բնակչությունը ևս, գլխավորապես Հյուսիսային Կովկասում էր բնակվում և տեղաբաշխված էր երկրամասի, առանց բացառության, բոլոր վարչական միավորներում և օկրուգներում, բայց առանձնանում էին հոծ բնակչության մի քանի շրջաններ: Ամենահայաշատ գյուղական շրջանը Դոնի օկրուգի Սյասնիկյանի շրջանն էր, ուր բնակվում էր ամբողջ ՌեսՖՍՀ գյուղաբնակ հայության 30,3%-ը (24.059 մարդ): 1926 թ. Սյասնիկյանի շրջանն ուներ 6 գյուղխորհուրդ, 15 բնակավայր՝ 4434 տնտեսությունով: Դոնի օկրուգի բոլոր 11 գյուղական շրջաններում էլ առկա էր հայ բնակչություն. Դոնի գյուղաբնակ հայության թվաքանակի կտրվածքով երկրորդը Մեչետինսկի շրջանն էր, ուր բնակվում էին 1.064 գյուղաբնակ հայեր:

ՌեսՖՍՀ-ում հայ գյուղական բնակչության թվաքանակով երկրորդը Չերնոմորիեի օկրուգի Սոչիի շրջանն էր, ուր բնակվում էր 17.237 մարդ կամ օկրուգի գյուղական հայության 80%-ը, ստվար հայ բնակչություն ունեին Տուապսեի (2.081 մարդ) և Անապայի (1.337 մարդ) գյուղական շրջանները:

Մայկոպի օկրուգի Արմյանսկի շրջանն ուներ 6218 գյուղական հայ բնակիչ, Բելորեչենսկի շրջանը՝ 1.109:

Կուբանի և Արմավիրի օկրուգներում գյուղական հայ բնակչությունը, գրեթե հավասարաչափ, տեղաբաշխված էր օկրուգների գյուղական շրջաններում: Կուբանի օկրուգի գյուղական հայ բնակչությունը տեղաբաշխված էր հետևյալ շրջաններում՝ Ուստ-Լաբինսկում 1.224 հայ, Գորյաչի-Կյուչում՝ 1.022, Սլավյանսկում՝ 891: Արմավիրի օկրուգում գյուղական հայությունը թվով ամենամեծն էր Կրասնոտսկինի շրջանում՝ 703 մարդ: Թերեքի օկրուգում առանձնանում էր Ստեպնովսկի շրջանը, ուր բնակվում էին 3.717 գյուղաբնակ հայեր:

Դադստանի ԻսՄՀ-ում բնակվող գյուղական հայությունը (1.036 մարդ) հիմնականում Կյուրինսկի շրջանի Ղարաբաղի գյուղն էր ներկայացնում: Ղարաբաղի 135 տնտեսությունից 134-ը հայկական էր,

633 բնակչից 629-ը՝ հայ<sup>99</sup>:

Ուրբանիզացման մակարդակը բարձր էր նաև Դրիմի հայության շրջանում՝ հասնելով 2/3-ի: Դրիմի ամենամեծ թվով հայ բնակչություն ունեցող քաղաքը Սիմֆերոպոլն էր, ուր բնակվում էր 2.364 հայ կամ Դրիմի հայության 22 %-ը: Դրիմի մյուս հայաբնակ քաղաքներն էին Սևաստոպոլը՝ 875, Կերչը՝ 862, Յալթան՝ 789, Թեոդոսիան՝ 670, Ղարասուբազարը՝ 401 հայ բնակիչներով ևն: Մի քանի տասնյակից մինչև մի քանի հարյուր հայ բնակչություն ունեին նաև Եվպատորիա, Ջանկոյ, Հին Դրիմ, Սուդակ, Արմյանսկ, Գուրգուֆ, Բալակլավա, Ալուպկա, Ալուշտա, Սակի, Բախչիսարայ քաղաքները:

Դրիմի գյուղական հայ բնակչությունը գլխավորապես կենտրոնացած էր Թեոդոսիայի (1.092 հայ), Ջանկոյի (919), Ղարասուբազարի (788) և Սիմֆերոպոլի (433) գյուղական շրջաններում:

Դրիմի հայությունը սփռված էր թերակղզու բոլոր 10 շրջաններում անխտիր, իր թվաքանակով երկրորդն էին խմբերի մեջ զբաղեցնում էր 8-րդ տեղը՝ կազմելով Դրիմի ԻսՄՀ բնակչության 1.5 %-ը<sup>100</sup>: Դրիմի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ վերևում բերված տվյալների հավաստիությունն ամրապնդվում է Սիմֆերոպոլի արխիվային փաստաթղթերից<sup>101</sup>, ընդ որում, հայության թվի և տեղաբաշխման առումով տվյալներ են առկա նաև 1930 թ. հունվարի 1-ի հաշվառման արդյունքում: 1930 թ. հունվարի 1-ի դրությամբ Դրիմի հայության թիվը կազմել է 12. 110 մարդ, որից քաղաքաբնակ՝ 8020, գյուղաբնակ 4090 մարդ<sup>102</sup>:

1926 թ. Համամիութենական մարդահամարով ճշգրտվել են նաև ՌեսՖՍՀ ոչ այնքան հայաշատ եվրոպական մասի հայ բնակչության թիվն ու տեղաբաշխումը: Այսպես, ՌեսՖՍՀ Հյուսիսային շրջանի (Արխանգելսկ, Վոլոգդա, Սևերո-Դվինսկ նահանգներ և Կոմի ինքնավար մարզ) և Լենինգրադ-Կարելյան շրջանի (Լենինգրադի, Սուրմանսկի, Նովոգորոդի, Պսկովի, Չերեպովեցի նահանգներ և Կարելյան ԻսՄՀ) հայ բնակչության բացարձակ մեծամասնությունը բնակվում էր Լենինգրադի նահանգում (1756 հայ, որից Լենինգրադ քաղաքում՝ 1664): Հյուսիսային շրջանի մեջ մտնող մարզերում միասին բնակվում էին ընդամենը 25 հայ, իսկ Լենինգրադ-Կարելյան շրջանում՝ 1786:

Հատկանշական է, որ 1923 թ. քաղաքային մարդահամարով

<sup>99</sup> Материалы Всесоюзной переписи населения 1926 года по Дагестанской АССР, выпуск 1, Махач-Кала, 1927, с. 89.

<sup>100</sup> Итоги десятилетия Советской власти в цифрах 1917-1927 гг., М., 1927, с. 58.

<sup>101</sup> ГААРК, Р- 663, оп. 2, д. 457, лл. 92-93.

<sup>102</sup> Նույն տեղում:

Լենինգրադի նահանգում արձանագրվել էր 1022 հայ, իսկ արդեն 1926 թ. մարդահամարով գրանցվել է հայության թվի աճ 72 %-ով: Հայերն այստեղ հիմնականում քաղաքաբնակ էին, գյուղական հայ բնակչության թիվը Լենինգրադ-Կարելական շրջանում կազմում էր 27 մարդ<sup>103</sup>: Լենինգրադ-Կարելական շրջանում քաղաքաբնակ հայության տոկոսային կշիռը կազմում էր 98.5 %, որն ամենաբարձր ցուցանիշն էր ամբողջ ԽՍՀՄ հայության կտրվածքով: Ամենաբարձր մյուս ցուցանիշերից մեկը, որ նկատվում էր Լենինգրադ-Կարելական շրջանի հայության մոտ, դա ռուսերենը, որպես մայրենի լեզու համարելն էր: Այս ցուցանիշը շրջանի հայերի մոտ կազմել է 48.3 %, իսկ գրագիտության մակարդակով հայությունը նույնպես առանձնանում էր: Գրագետ էր շրջանի հայության 90.6%-ը, որոնց 41%-ը գրագետ էր նաև իր ազգային լեզվով:

ՌԽՖՍՀ Արևմտյան շրջանում (Բրյանսկի և Սմոլենսկի նահանգներ) հայ ազգաբնակչությունը փոքրաթիվ էր, ընդամենը 93 մարդ, որոնց 3/4-ից ավելիի համար մայրենի էր հայերենը:

ՌԽՖՍՀ Կենտրոնական-Արդյունաբերական շրջանն ընդգրկում էր 10 նահանգներ, որոնք բոլորն էլ հայաբնակ էին: Այս շրջանի դերն ու նշանակությունը կարևորվում էր նրանով, որ նրա մեջ էր գտնվում մայրաքաղաք Մոսկվան: Մոսկվայի, որպես միութենական մայրաքաղաքի, վարչատնտեսական դերի մեծացումը նպաստեց այստեղ հայ համայնքի թվի և դերի աճին, որը չնայած ռուսահայ մյուս համայնքների ազգային կյանքի անկմանը, նրանց շարքում բացառություն կազմեց: Մոսկվայի նահանգում էր բնակվում Կենտրոնական-Արդյունաբերական շրջանի հայության թվի մոտ 95%-ը (6.718 մարդ), որից Մոսկվայում՝ 6.369 հայ<sup>104</sup>: Հայերենը մայրենի լեզու էր Կենտրոնական-Արդյունաբերական շրջանի հայության ավելի քան 58 %-ի համար, ռուսերենը՝ 40.6 %-ի: Շրջանի հայության 87.8 %-ը գրագետ էր, ընդ որում, 42.3%-ը նաև հայերենով: Հայաբնակ էին նաև Մոսկվայի նահանգի այլ քաղաքներ՝ Օրեխովո-Չուևո, Սերպուխով և այլն, ուր ընդհանուր հաշվով բնակվում էին 226 հայեր: Նահանգի գյուղական վայրերում բնակվում էին 123 հայեր: Կենտրոնական-Արդյունաբերական շրջանի մյուս 9 նահանգներում միասին բնակվում էին 370 հայեր, որոնց մեջ իր 93 հայ բնակիչների թվով շրջանում երկրորդն էր Նիժեգորոդյան նահանգը:

ՌԽՖՍՀ Կենտրոնական-Սևահողային շրջանում (Վորոնեժի, Կուրսկի, Տամբովի և Օրյոլի նահանգներ) բնակվում էին 797 հայեր, որոնց 50.9 %-ը՝ Վորոնեժի նահանգում (406 մարդ): Վորոնեժ քաղաքի հայության թիվը 299 մարդ էր: Կուրսկի և Տամբովի նահանգներից յուրաքանչյուրում ապրում էր շրջանի հայության 21 %-ից մի փոքր ավելին: Կենտրոնական-Սևահողային շրջանի հայության ավելի քան 66 %-ի համար մայրենի էր հայերենը, սակայն ազգային լեզվին տիրապետում էին նշվածից ավելի մեծ թվով հայեր՝ 404 արական և 266 իգական սեռի ներկայացուցիչ<sup>105</sup>: Գրագիտության աստիճանով Կենտրոնական-Սևահողային շրջանի հայությունն ուներ միջին ռուսաստանյան ցուցանիշ, որը կազմում էր մոտ 68 %:

ՌԽՖՍՀ Միջին-Վոլգյան շրջանը, Պովոլժիեն ընդհանրապես, գաղութահայ բնակության հնագույն կենտրոններից էր, ուր գոյություն է ունեցել կազմակերպված և տնտեսապես ամուր դիրքեր զբաղեցնող հայ համայնք: Միջին-Վոլգյան շրջանում (Սամարայի, Պենզայի, Ուլյանովսկի, Օրենբուրգի նահանգներ, Թաթարստանի և Չուվաշական ԻԽՍՀ-ներ) 1926 թ. մարդահամարի տվյալներով բնակվող հայության (498 մարդ) մոտ 48 %-ը կենտրոնացած էր Սամարայի նահանգում (239 մարդ), իսկ բուն Սամարա քաղաքում հայերի թիվը 222 մարդ էր: Հայ բնակչության թվաքանակով երկրորդը Թաթարստանի ԻԽՍՀ կենտրոնն էր՝ Կազանը: Հայ ազգաբնակչությունը ցրված էր նաև շրջանի մյուս վարչական միավորներում՝ բացառությամբ Չուվաշական ԻԽՍՀ-ի: Այստեղ գյուղաբնակ հայության թիվն աննշան էր՝ ընդամենը 18 մարդ: Շրջանի հայության 66 %-ից ավելիի համար հայերենը մայրենի լեզու էր, գրագետ էր հայության մոտ 68 %-ը:

Ստորին-Վոլգյան շրջանում լավ ավանդույթներ ունեցող հայկական գաղութները, մասնավորապես, Աստրախանի հայ համայնքը, խորհրդային շրջանում նույնպես բավականին բազմամարդ էր: Այսպես, 1926 թ. մարդահամարի տվյալներով Աստրախանի հայության թիվը 3.001 մարդ էր, որը կազմում էր քաղաքի ամբողջ բնակչության 1.7 %-ը: Ստորին-Վոլգյան շրջանի ամբողջ հայության թիվը 4.334 մարդ էր, որից գյուղաբնակ էր ընդամենը 204 մարդ (4.7%-ը): Աստրախանը հանդիսացել է այն կենտրոններից մեկը, ուր բազմաազար հայ փախստականներ էին կենտրոնացել, ուստիև այլ տվյալներով հայության թիվն այստեղ անհամեմատ մեծ է եղել. «Առաջին

<sup>103</sup> Всесоюзная перепись населения 1926 года, том 1. Северный район. Ленинградско-Карельский район., М., 1928, с. 113.

<sup>104</sup> Всесоюзная перепись населения 1926 года, том 2, Западный район. Центрально-Промышленный район., М., 1928, с. 135.

<sup>105</sup> Всесоюзная перепись населения 1926 года, том 3, Центрально-Черноземный район. Средне-Волжский район. Нижне-Волжский район, М., 1928, с. 34.

համաշխարհային և քաղաքացիական պատերազմների տարիներին ուժեղացել է Արևմտյան Հայաստանից և Անդրկովկասից հայ փախստականների հոսքը Աստրախան, քաղաքի հայ բնակչությունն աճել է՝ հասնելով 10-11 հազարի»<sup>106</sup>։ Քաղաքի հայության վերոհիշյալ թվական տվյալներն ամրապնդված չեն փաստաթղթային, պաշտոնական կամ վիճակագրական նյութերով, ինչն էլ կարելի է ընդունել միայն վերապահումով, թեև այս ժամանակաշրջանում տեղ են գտել հայության անընդհատ տեղաշարժեր։

Ստորին-Վոլգյան շրջանում հայ բնակչության թվաքանակով երկրորդը Ստալինգրադի նահանգն էր, ուր բնակվում էին 703 հայեր։ Ստալինգրադի նահանգի հայությունը կազմում էր ամբողջ շրջանի հայ բնակչության ավելի քան 16 %-ը, իսկ Սարատովի նահանգի հայությունը՝ ավելի քան 11 %-ը։ Ընդամենը մեկ-երկու տասնյակ հայ բնակչություն ունեին Կալմիկական ԻՄ-ն և Պոլովոժեի Գերմանական ԻՄ-ն։ Հայերենը մայրենի էր շրջանի հայության մոտ 87 %-ի համար, իսկ Աստրախանի կտրվածքով այն կազմում էր մոտ 90 %։ Գրագետ էր Ստորին-Վոլգյան շրջանի հայության մոտ 73 %-ը, որոնց ընդամենը 30.8 %-ն էր գրագետ իր ազգային լեզվով։

1920-ական թթ. Ուրալի, Սիբիրի, Հեռավոր Արևելքի տարածաշրջաններում հայ բնակչությունը փոքրաթիվ էր ու ցրված տարբեր վարչատարածքային միավորներում։ 1926 թ. մարդահամարով Ուրալում բնակվում էին ընդամենը 121 հայ<sup>107</sup>, Սիբիրում՝ 575<sup>108</sup>, Հեռավոր Արևելքում՝ 256<sup>109</sup>։

<sup>106</sup> Հայ Սփյուռք հանրագիտարան, Ե., 2003, էջ 477։

<sup>107</sup> Всесоюзная перепись населения 1926 года, том 4, Вятский район. Уральская область. Башкирская АССР, М., 1928, с. 104.

<sup>108</sup> Всесоюзная перепись населения 1926 года, том 6, Сибирский край. Бурятия-Монгольская АССР, М., 1928, с. 12.

<sup>109</sup> Всесоюзная перепись населения 1926 года, том 7, Дальне-Восточный край. Якутская АССР, М., 1928, с. 8.

\* Հարկ է նշել, որ հետհեղափոխական Ռուսաստանի Հեռավորարևելյան տարածաշրջանի սահմանների փոփոխությունների արդյունքում և խորհրդային իշխանության հաստատումից հետո տեղերում բնակվող հայության զգալի մասը տեղափոխվել է Հյուսիսային Չինաստան։ Հայաշատ էին Խարբինի, Չանչունի, Մանջուրիայի և արևելաչինական երկաթգծի քաղաքները, որոնք ստվարացել են Մեծ Եղեռնից հետո։ Հայության թվաքանակն այնքան է աճել, որ 1923 թ. Խարբինում, հանգանակությունների շնորհիվ, կառուցվել է հայկական եկեղեցի, իսկ հայության ներքին կյանքի կառավարումը ստանձնել է Հայկական համայնքների Ընկերությունը, որը ղեկավարվել է 43 կետից կազմված Կանոնադրությամբ։ 1926 թ. Մուկդենից ուղարկված հաշվետվությունից երևում է Չինաստանում բնակվող հայության թվաքանակի հետևյալ պատկերը. Խարբինում՝ 560 Մանջուրիայում՝ 160, Չանչունում՝ 78, Մուկդենում՝ 45, Շանհայում՝ 600, Տեանցզինում՝ 70, Հոնկ Քոնկում 20 հայ։ Հայաբնակ էին նաև Ցիցիկարը, Խայլարը,

Ուրալում, Սիբիրում և Հեռավոր Արևելքում\* միասին բնակվում էին 985 հայ, որոնց մոտ 74 %-ը գրագետ էր, իսկ 2/3-ի համար մայրենին հայերենն էր։

1926 թ. մարդահամարը վեր է հանել նաև հետաքրքիր տվյալներ Դոնի և Չերնոմորիեի հայության տարիքային կազմի վերաբերյալ, ինչպես նաև գրագիտության աստիճանը յուրաքանչյուր տարիքային կազմի համար։ Այսպես, Դոնի օկրուգի հայության շրջանում արձանագրվել էր հետևյալ պատկերը.

- մինչև 4 տարեկան - 2.888 արական և 2.731 իգական սեռի բնակիչ, ընդ. 5.619 մարդ,
- 5-14 տարեկան - 4.895 ար. (2.849-ը գրագետ) և 4.726 իգ. (2.454-ը գրագետ), ընդ. 9.621, 15-24 տարեկան - 4.542 ար. (3.968 գրագետ) և 4.584 իգ. (3.213 գրագետ), ընդ. 9.126,
- 25-34 տարեկան - 3.486 ար. (3.132 գրագետ) և 3.435 իգ. (2.284 գրագետ), ընդ. 6.921։ Դոնի հայության տարիքային կազմի մյուս խմբերի տվյալների ամբողջությամբ հնարավոր է դառնում առանձնացնել հետևյալը. արական սեռի շրջանում գրագետ էր հայության ավելի քան 65 %-ը, իգական սեռի շրջանում՝ 47 %-ը։ Վերոհիշյալ ցուցանիշը Ռոստով-Նախիջևանի հայության շրջանում ավելի բարձր էր, գրագետ էր արական սեռի հայերի 74 %-ը, իգական՝ ավելի քան 65 %-ը։

Չերնոմորիեի օկրուգի հայության տարիքային կազմն ու գրագիտության աստիճանն ըստ 1926 թ. մարդահամարի ներկայացնում էր հետևյալ պատկերը.

- մինչև 4 տարեկան - 2.617 արական և 2.430 իգական սեռի բնակիչ, ընդ. 5.047 մարդ,
- 5-14 տարեկան - 4.147 ար. (2.110-ը գրագետ) և 3.707 իգ. (1.360-ը գրագետ), ընդ. 7.854,

Դայրեն, Սինչանը և Ցինադառը, որոնց վերաբերյալ թվային տվյալները բացակայում են։ 1930-ական թթ. կեսերին տեղի հայկական համայնքները աշխուժության շրջան են ապրել, ազգային կյանքը ղեկավարել են Խարբինի Հայ Ազգային Կոմիտեն և Ազգային Հոգաբարձությունը։ Եռանդուն գործունեություն են ծավալել նաև Հայ Կանանց Սիոնությունն ու 1937 թ. հիմնված երիտասարդական Հայ Մարզանքի Սիոնությունը։ Երկրորդ աշխարհամարտի տարիներին, Տալոնիայի (Սինգապուր, Բիրմա, Ինդոնեզիա), այնպես էլ Չինաստանի հայությունը դիտվել է կայսրության հակառակորդ, քչվել համակենտրոնացման ճամբարներ։ Խարբինի հայ գաղութի Հոգաբարձությունն ու եկեղեցին շարունակել են գործել մինչև 1950 թ.։ Ավելի ուշ, Չինաստանում տարվող «կուլտուրական հեղափոխության» տարիներին, հայությունը մեծապես տուժել է՝ շատերը հեռացել են երկրից կամ զոհ գնացել, ավերվել են հայկական եկեղեցին ու գերեզմանատունը։ Տես «Ասպարեզ», Գլենդեյլ, Յունուար 18, 1992։

- 15-24 տարեկան - 2.358 ար. (1.790 գրագետ) և 2.192 իգ. (811 գրագետ), ընդ. 4.550,
- 25-34 տարեկան - 1.763 ար. (1.201 գրագետ) և 1.737 իգ. (387 գրագետ), ընդ. 3.500:

Նմանօրինակ տվյալներ են վեր հանվել Դրիմի ամենաստվար գյուղական հայ բնակչություն ունեցող Թեոդոսիայի շրջանի կտրվածքով, ուր բնակվող 1.092 հայերից գրագետ էր 525-ը (48 %-ը), իսկ տարիքային կազմը բավականին երիտասարդ էր՝ մինչև 30 տարեկանները կազմում էին 714 մարդ կամ շրջանի հայության 66 %-ը:

Ակնհայտ է, որ Դոնի օկրուգում, ուր հայ կրթական-մշակութային կյանքի ավանդույթներն ավելի խորն էին դրված, հայ բնակչությունն իր գրագիտության աստիճանով առանձնանում էր: Ավագ տարիքային կազմերի շրջանում գրագիտության մակարդակն ուներ ավելի ցածր ցուցանիշներ:

Ուկրաինական ԽՍՀ հայ ազգաբնակչության թիվը 1923 թ. ԽՍՀՄ քաղաքային մարդահամարի տվյալներով կազմում էր 9.678 մարդ<sup>110</sup>: Սովար հայ բնակչություն ունեին Խարկովի (2.921), Դոնեցկի (2.801), Օդեսայի (2.509) նահանգները, որոնց հայ ազգաբնակչության թիվը միասին վերցրած կազմում էր Ուկրաինական ԽՍՀ-ում բնակվող ամբողջ հայության 85 %-ը: Ուկրաինական ԽՍՀ մյուս հայաբնակ նահանգներն էին Կիևը (550 հայ), Եկատերինոսլավը (535 հայ), Պոլտավան (256 հայ), Պոդոլսկը, Չեռնիգովն ու Վոլինը: Ի տարբերություն ՌեսՖՍՀ հայ ազգաբնակչության, ավելի բարձր էր Ուկրաինական ԽՍՀ քաղաքային հայ բնակչության ինքնագործ խմբի տոկոսային կշիռը, որը հասնում էր 43 %-ի:

Ըստ 1923 թ. ԽՍՀՄ քաղաքային մարդահամարի վիճակագրական տվյալների Բելոռուսական ԽՍՀ-ն ամենափոքր հայ ազգաբնակչություն ունեցող միութենական հանրապետությունն էր՝ ընդամենը 13 հայ քաղաքաբնակներ<sup>111</sup>: Այստեղ ավելի ուշ միայն սկսվեց հայության հոսք մյուս հանրապետություններից:

Ուկրաինական ԽՍՀ հայ ազգաբնակչության վերաբերյալ 1926 թ. մարդահամարի արդյունքներն ունեին ավելի ընդգրկուն տեսք: Այդ մարդահամարով ճշգրտվեց Ուկրաինական ԽՍՀ և քաղաքային, և գյուղաբնակ հայության թիվը, որը կազմում էր 10.631 մարդ: Հանրապետության գյուղաբնակ հայության թիվը 1.052 էր կամ հայության 9,8 %-ը: Ուկրաինական ԽՍՀ գյուղաբնակ հայության զգալի մասը բնակվում էր Հարթավայրային ենթաշրջանի մեջ մտնող Մոլդովական ԽՍՀ-ում (287 հայ):

<sup>110</sup> Итоги Всесоюзной городской переписи 1923 г., ч. IV, с. 45.

<sup>111</sup> Նույն տեղում, էջ 45:

Ուկրաինական ԽՍՀ Խարկովի օկրուգում բնակվում էր հանրապետության հայազգի քաղաքացիների 30%-ը, Օդեսայի օկրուգում՝ 18 %-ը, Ստալինսկի (Դոնեցկի) օկրուգում՝ 10,5%-ը: Հայությունն առավել համաչափ էր տեղաբաշխված Լեոնարդյունաբերական ենթաշրջանի օկրուգներում՝ Լուգանսկում, Արտյոմովսկում, ուր նրանց թիվը հասնում էր մի քանի հարյուր մարդու: Ուկրաինական ԽՍՀ հայ ազգաբնակչության 70, 7 %-ն իր մայրենի լեզու համարում էր հայերենը, իսկ մոտ 26%-ը՝ ռուսերենը, շուրջ 1%-ը՝ ուկրաիներենը: Գրագետ էր հանրապետությունում բնակվող հայության 62,8 %-ը, վերջիններիս 56,5 %-ը գրագետ էր նաև իր ազգային լեզվով: Այս ցուցանիշով Ուկրաինական ԽՍՀ հայ ազգաբնակչությունը գերազանցում էր ՌեսՖՍՀ հայության համապատասխան ցուցանիշը: Ուկրաինական ԽՍՀ հայաշատ քաղաքներն էին Խարկովը՝ 2.994, Օդեսան՝ 1.843. Կիևը՝ 638 հայ բնակիչներով:

Աղյուսակ № 3

Ուկրաինական ԽՍՀ և Բելոռուսական ԽՍՀ հայ ազգաբնակչությունն ըստ 1926 թ. մարդահամարի:

	ամբողջ	արական	իգական	մայրենի լեզու				գրագետ	զրագ. լեզվ.
				հայ	ուկր.	ռուս.	այլ		
Ուկրաինական ԽՍՀ <sup>112</sup>	10.631	6112	4519	7518	102	2790	221	6697	3786
1 Աջախմյա ենթաշրջան որից՝	811	516	295	514	37	243	17	611	390
Կիևի օկրուգ	655	409	246	429	14	201	11	484	327
2 Չախալմյա ենթ. որից՝	3419	1962	1457	2644	30	656	89	2081	1448
Խարկովի օկրուգ	3178	1818	1360	2495	8	589	86	1931	1367
3.Դոնեպրոպետրովսկի ենթ. որից՝	410	244	166	269	11	127	3	274	142
Դոնեպրոպետրովսկի օկր.	230	132	98	171	-	58	1	148	69
4.Լեոնարդյունաբերական ենթ. որից՝	2682	1517	1165	2083	4	559	36	1533	801
Ստալինսկ (Դոնեցկ) օկր.	1117	652	465	943	1	156	17	593	325
5. Հարթավայրային ենթ. որից՝	3264	1844	1420	1988	20	1180	76	2158	981
Օդեսայի օկր.	1916	1114	802	1233	3	664	16	1291	607

<sup>112</sup> Всесоюзная перепись населения 1926 года, том XI, Украинская Социалистическая Советская Республика. Итоги по республике. Полесский подрайон, М., 1929, с. 10.

Մուղղվական ԻԽՍՀ	287	136	151	80	3	160	44	205	71
6.Անտառային ենթ.	45	29	16	20	-	25	-	40	24
Բելոռուսական ԽՍՀ <sup>113</sup>	99	54	45	65	-	34	-	58	37
որից՝									
Գոմելի օկր.	56	26	30	43	-	13	-	26	9

1926 թ. դեկտեմբերի 17-ի ԽՍՀՄ Համամիութենական մարդահամարի տվյալներով Բելոռուսական ԽՍՀ-ում նկատվում էր հայերի թվի աստիճանական աճ, ովքեր հիմնականում բնակվում էին Գոմելի օկրուգում:

1930-ական թթ. ԽՍՀՄ-ում անցկացված մարդահամարների արդյունքում արձանագրվել են ՌեսՖՍՀ և Ուկրաինական ԽՍՀ մինչպատերազմյան շրջանի թվաքանակը: 1937 թ. հունվարի 6-ի Համամիութենական մարդահամարի արդյունքները ՌեսՖՍՀ և Ուկրաինական ԽՍՀ հայ ազգաբնակչության կտրվածքով ունեն հետևյալ տեսքը. (Բելոռուսական ԽՍՀ-ում հայ ազգաբնակչության վերաբերյալ տվյալները բացակայում են պայմանավորված լինելով էթնիկ խմբերի մեջ նրանց փոքրաթվությամբ): Հայերի թիվն ըստ 1937 թ. մարդահամարի. ՌեսՖՍՀ- 163.277 մարդ<sup>114</sup>, Ուկրաինական ԽՍՀ - 4.242 մարդ<sup>115</sup>:

1926 թ. մարդահամարի արդյունքների հետ համեմատած (ՌեսՖՍՀ հայ բնակչությունը կազմում էր 195.410 մարդ) 1937 թ. մարդահամարն արձանագրել էր ՌեսՖՍՀ հայ ազգաբնակչության թվաքանակի անկում 32.132 մարդով, ուստիև ակնհայտ է, որ թվային այս մեծ տարբերությունն անիրական է: 1937 թ. մարդահամարի նյութերի «ծերբակալումը» և արխիվացումը, նրանց մասնակի կորուստն, ավելի հանգամանակի անդրադարձ կատարելու հնարավորություն չեն տալիս: Այստեղ հետաքրքրական է այն փաստը, որ Մոսկվայի հայ ազգաբնակչությունը արձանագրել էր կրկնակի աճ նախորդ մարդահամարի համեմատ:

Ուկրաինական ԽՍՀ հայ ազգաբնակչության առումով 1937 թ. մարդահամարն արձանագրել է հայության թվաքանակի անկում, գրեթե 60%-ով (6.344 մարդով) 1926 թ. մարդահամարի արդյունքների

համեմատ: 1937 թ. գիտական հիմունքների խախտումով (1 օրում) անցկացված, ապա չեղյալ հայտարարված մարդահամարը թողեց միայն վիճակագրական սուղ և ոչ այնքան ճշգրիտ ու ամփոփ տվյալներ, որոնք, սակայն, հետաքրքրական էին յուրովի:

1939 թ. Համամիութենական երրորդ մարդահամարը նույնպես անցկացվեց խիստ վերահսկողության ներքո, բայց նրա կազմակերպական խնդիրներն ավելի մտածված էին ու նախապատրաստված: 1939 թ. մարդահամարը վեր հանեց բնակչության թվաքանակի ավելի իրական պատկեր, որն արտացոլում է 1930-ական թթ. ԽՍՀՄ բնակչության էթնիկ կազմը, թիվն ու տեղաբաշխումը: Այն միութենական հանրապետություններում, որտեղ հայերի թիվը փոքր էր առավել մեծաթիվ էթնիկ խմբերի մեջ, այնտեղ նրանք արձանագրված չեն, սակայն արտացոլված են ամբողջ ԽՍՀՄ հայության ընդհանուր տվյալներում: 1939 թ. մարդահամարը ներկայացնող հրատարակություններում նշված չէ հայ ազգաբնակչության թիվն Ուկրաինական և Բելոռուսական ԽՍՀ-ներում:

ՌեսՖՍՀ հայ ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ 1939 թ. մարդահամարը տվել է բավականին ամփոփ տվյալներ, որոնք արտացոլում են հայության ընդհանուր թիվը, տեղաբաշխումը վարչական միավորներում, դրանցում հայերի տեսակարար կշիռը, քաղաքային և գյուղական բնակչությունը:

ՌեսՖՍՀ ամբողջ հայ ազգաբնակչության թիվը հանրապետության բնակչության մեջ կազմում էր 0,2 % և առավել մեծաթիվ էթնիկ խմբերի մեջ գրավում էր 19-րդ տեղը:

Աղյուսակ № 4

Հայերը ՌեսՖՍՀ-ում ըստ 1939 թ. մարդահամարի

	ամբողջը	բնակչության մեջ %-ով	քաղաքաբնակ	գյուղաբնակ
ՌեսՖՍՀ <sup>116</sup> որից՝	218.156	0,2	135.850	82.306
1. Կրասնոդարի երկ.	60.501	1,9	27.451	33.050
2. Օրջոնոկիձեի երկ.	29.633	1,5	19.639	9994
3. Ռոստովի մարզ	49.339	1,7	28.980	20.359
4. ք. Մոսկվա	13.682	0,3	13.682	-
5. Ղրիմի ԻԽՍՀ	12.923	1,1	7857	5066
6. Հյուսիս - Օսական ԻԽՍՀ	8932	2,7	8628	304
7. Չեչենա - Ինգուշական ԻԽՍՀ	8441	1,2	8141	300

<sup>113</sup> Всесоюзная перепись населения 1926 года, том X, Белорусская Социалистическая Советская Республика, М., 1928, с.10.

<sup>114</sup> Всесоюзная перепись населения 1937 г.: Краткие итоги, М., 1991, с. 85.

<sup>115</sup> Նույն տեղում, էջ 94:

<sup>116</sup> Всесоюзная перепись населения 1939 года. Основные итоги., М., 1992, с. 59.

Հյուսիսկովկասյան տարածաշրջանի վարչական միավորների հայ ազգաբնակչությունը շարունակում էր կազմել ՌԽՖՍՀ-ի հայ ազգաբնակչության հիմնական մասը, իսկ նրանցից Հյուսիս-Օսական ԻԽՍՀ-ում հայերն ունեին ամենաբարձր տոկոսային կշիռը բնակչության մեջ: Քաղաքաբնակ էր ՌԽՖՍՀ հայության 62,2 %-ը, իսկ Մոսկվայի հայ ազգաբնակչության թիվը շարունակաբար աճում էր՝ կազմելով ՌԽՖՍՀ ամբողջ հայության 6,2%-ը: ՌԽՖՍՀ Հյուսիսկովկասյան տարածաշրջանում 1920–30-ական թթ. անընդհատ տեղի ունեցող տարածքային վերածակվորումները հանգեցնում էին այս կամ այն վարչական միավորում հայության թվի պատկերի տատանումների, որը սակայն տարածաշրջանի հայ ազգաբնակչության ընդհանուր թվի վրա ազդել չէր կարող: Այսպիսին էին ՌԽՖՍՀ հայ ազգաբնակչության թիվն ու նրա տեղաբաշխման հիմնական շրջանները 1920-30-ական թթ. և Մեծ Հայրենականի նախօրյակին, որից հետո թե՛ ՌԽՖՍՀ-ում, և թե՛ Ուկրաինական և Բելոռուսական ԽՍՀ-ներում, նրանց առանձին տարածաշրջաններում տեղի ունեցան ժողովրդագրական պատկերի լուրջ փոփոխություններ:

## **2.2. Միջին Ասիայի միութենական հանրապետություններում (Ուզբեկական, Թուրքմենական, Ղազախական, Տաջիկական, Կիրգիզական ԽՍՀ-ներ)**

Միջին Ասիան այն տարածաշրջաններից է, ուր հայկական տարրը դեռևս դարեր առաջ է ունեցել իր ներկայությունն ու մասնակցությունը տեղի հատկապես տնտեսական կյանքին: Միջին Ասիայի տարբեր շրջաններում գոյություն ունեցող հայկական փոքրաթիվ համայնքները ստվարանում են տարածաշրջանը Ռուսաստանին միացնելուց հետո, մասնավորաբար, 19-րդ դարի վերջին - 20-րդ դարի սկզբին:

Միջին Ասիայում խորհրդային կարգերի հաստատումից հետո տարածաշրջանում ձևավորված Թուրքեստանի և Կիրգիզական ԻԽՍՀ-ները մտնում էին ՌԽՖՍՀ կազմի մեջ:

Միջին Ասիայում ազգային-պետական կազմավորման գործընթացի սկիզբը դրվում է 1924 թ. հոկտեմբերի 27-ին, երբ որոշում է ընդունվում տարածաշրջանում կազմավորել ազգային սահմաններով ձևավորված խորհրդային հանրապետություններ: Արդյունքում 1924 թ. վերացվում է Թուրքեստանի ԻԽՍՀ-ն: 1920-ական թթ. Միջին Ասիայի հայ ազգաբնակչության թվի, նրանց տեղաբաշխման վերաբերյալ առաջին պաշտոնական տվյալները վերաբերում են 1923 թ., ըստ որի

Թուրքեստանի ԻԽՍՀ հայության թիվը կազմում էր 20.063 մարդ կամ Թուրքեստանի ԻԽՍՀ ամբողջ բնակչության 0,38%-ը՝ իր թվաքանակով էթնիկ խմբերի մեջ գրավելով 13-րդ տեղը:

1923 թ. անցկացված ԽՍՀՄ քաղաքային մարդահամարով ավելի ամփոփ վիճակագրություն է առկա Միջին Ասիայի երկու ինքնավար հանրապետությունների՝ Թուրքեստանի ԻԽՍՀ և Կիրգիզական ԻԽՍՀ հայ ազգաբնակչության վերաբերյալ:

Կիրգիզական ԻԽՍՀ կազմում գտնվող 7 նահանգներում (Ակմոլա, Ակտյուբինսկ, Բուկեսկ, Կուստանայ, Օրենբուրգ, Սեմիպալատինսկ, Ուրալ) բնակվում էին ընդամենը 59 քաղաքաբնակ հայեր: Հակառակ պատկերն էր Թուրքեստանի ԻԽՍՀ-ում, ուր քաղաքային հայ բնակչության թիվը կազմում էր 22.139 մարդ<sup>117</sup>, որոնք կենտրոնացած էին հետևյալ նահանգներում.

- |                          |                     |
|--------------------------|---------------------|
| 1. Թուրքմենական - 12.430 | 4. Ֆերգանա - 2.845  |
| 2. Սիր-Դարյա - 3.875     | 5. Ջետիսույսկ - 62  |
| 3. Սամարղանդ - 2.884     | 6. Ամու-Դարյա - 43: |

Թուրքմենական նահանգում կենտրոնացած էր Թուրքեստանի ԻԽՍՀ քաղաքային հայ բնակչության ավելի քան 56 %-ը:

1926 թ. դեկտեմբերի 17-ի Համամիութենական մարդահամարի արդյունքում վիճակագրական տվյալներ են առկա Միջին Ասիայի նորակազմ, առավել հայաբնակ երկու միութենական հանրապետությունների՝ Ուզբեկական ԽՍՀ և Թուրքմենական ԽՍՀ հայ ազգաբնակչության կտրվածքով: Առաջին անգամ հայ ազգաբնակչության վերաբերյալ տվյալներ են առկա Տաջիկական ԽՍՀ թե՛ քաղաքային, թե՛ գյուղական հայության կտրվածքով:

Այսպես, Ուզբեկական ԽՍՀ հայ բնակչության թիվը 15.300 էր<sup>118</sup> (որից՝ 14.542-ը քաղաքաբնակ, 658-ը՝ գյուղաբնակ), Թուրքմենական ԽՍՀ՝ 13.859 (որից՝ 13.418-ը՝ քաղաքաբնակ, 441-ը՝ գյուղաբնակ), Տաջիկական ԽՍՀ՝ 171 (որից՝ 156-ը՝ քաղաքաբնակ, 15-ը՝ գյուղաբնակ):

Միջին Ասիայի միութենական հանրապետությունների հայ ազգաբնակչությունն ուներ ուրբանիզացման բարձր աստիճան (ավելի քան 95 %), ընդ որում, այստեղ քաղաքաբնակ հայերի տոկոսը համեմատաբար կայուն էր: Հայ ազգաբնակչությունը զգալի տոկոս էր կազմում հատկապես Թուրքմենական ԽՍՀ ամբողջ քաղաքային

<sup>117</sup> Итоги Всесоюзной городской переписи 1923 г., ч. IV, с. 45.

<sup>118</sup> Քեչիշյան Պ., Հայերի միջհանրապետական տեղաշարժերը ՍՄՀՄ-ում, Լրաբեր հասարակական գիտությունների, հ. 12 (432), Ե., 1978, էջ 78:



բնակչության մեջ՝ կազմելով 11,2 %: Սա խոսում է վայրայությունն է այն բանի, որ թուրքմենական ԽՍՀ քաղաքային բնակչության ձևավորման մեջ հանրապետության հայ ազգաբնակչությունն ունեցել է ամենագործուն մասնակցությունը:

1926 թ. Համամիութենական մարդահամարով տվյալներ են առկա դեռևս ՌԽՖՍՀ կազմում գտնվող Կիրգիզական ԻԽՍՀ և Կազակական (Ղազախական) ԻԽՍՀ հայ ազգաբնակչության կտրվածքով: Այս շրջանում տեղի ունեցած վարչատարածքային ձևավորումների արդյունքում Կիրգիզական ԻԽՍՀ կազմում գտնվող որոշ նահանգներ և նախկին թուրքեստանի ԻԽՍՀ որոշ շրջաններ անցնում են Կազակական ԻԽՍՀ-ին: Այնուհանդերձ, միջինասիական այս ինքնավար խորհրդային հանրապետությունները դեռևս շարունակում էին մնալ սակավ հայաբնակ: Այսպես, 1926 թ. դեկտեմբերի 17-ի մարդահամարով Կազակական ԻԽՍՀ հայ ազգաբնակչության թիվը 636 մարդ էր<sup>119</sup>, որից 500-ը քաղաքաբնակ էր, 136-ը՝ գյուղաբնակ: Կազակական ԻԽՍՀ փոքրաթիվ հայ ազգաբնակչության գերակշիռ մասը կենտրոնացած էր Սիր-Դարյա նահանգում (495 մարդ), իսկ Կարա-Կալպակական ԻԽ-ում՝ 57 հայ: Կազակական ԻԽՍՀ բոլոր 9 վարչական միավորներում առկա էր հայ ազգաբնակչություն:

Կիրգիզական ԻԽՍՀ հայ ազգաբնակչության թիվը 1926 թ. մարդահամարով կազմում էր 278 մարդ:

Այսպիսով, 1926 թ. դրությամբ ամբողջ Միջին Ասիայի հայ ազգաբնակչության թիվը կազմում էր 30.244 մարդ, որից գյուղաբնակ էին ընդամենը 1.303 -ը (4,3 %):

1930-ական թթ. ԽՍՀՄ-ում անցկացված մարդահամարները Միջին Ասիայի խորհրդային հանրապետությունների հայ ազգաբնակչության վերաբերյալ արձանագրել են վիճակագրական տվյալներ ոչ բոլոր հանրապետություններում, և ոչ ամբողջական ծավալով: Այսպես, 1937 թ. «չեղյալ» համարված Համամիութենական մարդահամարը վեր էր հանել միայն թուրքմենական ԽՍՀ հայ ազգաբնակչության թիվը, որը կազմում էր 15.393 մարդ<sup>120</sup>: Ինքնին հետաքրքրական լինելով հանդերձ, այս սուղ տվյալի ներքո որևէ այլ վիճակագրական նյութ առկա չէ:

1930-ական թթ. անցկացված վերջին մարդահամարով՝ 1939 թ. մարդահամարով, անհրաժեշտ վիճակագրական նյութի առկայու-

<sup>119</sup> Всесоюзная перепись населения 1926 года, том VIII, Казакская АССР: Киргизская АССР, М., 1928, с.16.

<sup>120</sup> Всесоюзная перепись населения 1937 г.: Краткие итоги, с. 95.

թյունը հնարավորություն է տալիս ամփոփ տվյալների հիման վրա ներկայացնել միջինասիական հանրապետություններում հայության թվի, տեղաբաշխման մասին վերջնական արդյունքներ:

Ուզբեկական ԽՍՀ 20.394 հայ բնակչությունը կենտրոնացած էր գլխավորապես մայրաքաղաքային շրջանում: Այսպես, Տաշքենդի մարզում բնակվում էին 8.772 և Սամարղանդի մարզում՝ 5.638 մարդ: Հանրապետության 5.984 հայազգի բնակիչ տեղաբաշխված էր Բուխարայի, Խորեզմի, Ֆերգանայի մարզերում և Կարա-Կալպակական ԻԽՍՀ-ում:

Արդեն 1930-ական թթ. Միջին Ասիայի հայության գերակշիռ մասը բնակվում էր Ուզբեկական ԽՍՀ-ում, կազմելով հանրապետության բնակչության 0,3 %-ը, իսկ մայրաքաղաք Տաշքենդում բնակվում էր հանրապետության հայության շուրջ 40%-ը: Ուզբեկական ԽՍՀ գյուղական շրջաններում էր բնակվում հանրապետության հայ բնակչության ուղիղ 10%-ը: Ուզբեկական ԽՍՀ բոլոր վարչատարածքային միավորներում էլ հայ ազգաբնակչություն առկա էր, իսկ հայ բնակչությամբ թվով երկրորդը Սամարղանդի մարզն էր:

Թուրքմենական ԽՍՀ 15.996 հայ բնակչությունը տեղաբաշխված էր գլխավորապես Աշխաբադի մարզում՝ 9.647 և Մառիի մարզում՝ 4.081 մարդ: Կրասնովոդսկի, Տաշաուզի և Չարջոուի մարզերում միասին բնակվում էին 2.268 հայեր:

Թուրքմենական ԽՍՀ հայ ազգաբնակչության 98 %-ը կենտրոնացած էր քաղաքային բնակավայրերում, որն ամենաբարձր ցուցանիշն էր ոչ միայն Միջին Ասիայի հանրապետություններում, այլ ամբողջ ԽՍՀՄ քաղաքաբնակ հայության շրջանում: Աշխաբադի մարզում էր կենտրոնացած հանրապետությունում բնակվող հայության 60,3%-ը, իսկ Մառիի մարզում՝ 25,5%-ը: Թուրքմենական ԽՍՀ-ում բնակվող հայությունը կրթության մակարդակով գերազանցում էր հանրապետության մյուս եթնիկ խմբերի մույն ցուցանիշը: Այսպես, 1939 թ. դրությամբ, 1000 մարդու հաշվով, բարձրագույն կամ միջնակարգ կրթություն (այդ թվում ոչ լրիվ միջնակարգ) ունեցողների թիվը հայության շրջանում կազմում էր 162 մարդ<sup>121</sup>: Հատկանշական է, որ հանրապետությունում բնակվող փոքրաթիվ գյուղական հայության շրջանում այս ցուցանիշն ավելի բարձր էր, քան քաղաքաբնակների մոտ:

Ղազախական ԽՍՀ Հարավ-Ղազախական մարզում բնակվում էր

<sup>121</sup> Итоги Всесоюзной переписи населения 1959 года. Туркменская ССР, М., 1963, с.140.

հանրապետության հայության ստվար մասը (2.195 մարդ), որը հիմնականում գյուղաբնակ էր, իսկ մարզը ամենահոծ գյուղական հայ բնակչությունն ունեցող վարչական միավորն էր ամբողջ Միջին Ասիայում:

Մինչպատերազմյան շրջանում Միջին Ասիայի հայ բնկաչության թիվը շարունակաբար աճ արձանագրեց: 1939 թ. Համամիութենական մարդահամարն արտացոլում էր Միջին Ասիայի հայ ազգաբնակչության բնակչության հիմնական շրջանները, թեև Կիրգիզական ԽՍՀ, Ղազախական ԽՍՀ և Տաջիկական ԽՍՀ հայության կտրվածքով այդ տվյալները ամբողջական չէին կամ բացակայում էին: Միջին Ասիայի միութենական հանրապետություններում միասին, մինչպատերազմյան շրջանում, բնակվում էին մոտ 40 հազար հայեր, որոնք ինտեգրվել էին տեղի միջավայրին և նկատելի դերակատարում ստանձնել այս հանրապետությունների պետական, տնտեսական, մշակութային-գիտական և այլ ոլորտներում:

### 2.3. Անդրկովկասի միութենական հանրապետություններում. Ադրբեջանական ԽՍՀ, Վրացական ԽՍՀ

Հայաստանին հարևան ԱխՖՍՀ մյուս երկու հանրապետությունների տարածքը դեռևս հազարամյակներ առաջ էր հայաբնակ, իսկ այդ տարածքների մի զգալի մասը ժամանակին կազմում էին հայկական պետության տարածքային առանձին միավորներ: Վրացական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ մի շարք գավառների (Ջավախք, Լեռնային Ղարաբաղ, Նախիջևան) բնակչությունը հայկական էր: Հայկական այս երկրամասերը, դառնալով բոլշևիկների քաղաքական, կուսակցական-պետական հաշվարկների զոհ, բռնակցվել էին հարևան հանրապետություններին (1921 թ.): Դեռևս Ցարական Ռուսաստանի կազմում գտնված ժամանակ Անդրկովկասի խոշոր տնտեսական և քաղաքական կենտրոններում հայ ազգաբնակչությունը գերակշռում էր ոչ միայն իր թվաքանակով, այլև զբաղեցնում էր ամուր դիրքեր քաղաքական, տնտեսական, առևտրական, կրթական-գիտական և այլ ոլորտներում: Պատահական չէ, որ անգամ 1918 թ. մուսավաթականների Բաքվում իրականացրած հայկական ահավոր սպանդից հետո տեղի հայ բնակչությունը դեռևս 1920-ական թթ. իր թվաքանակով գերազանցում էր Երևանի հայությանը, իսկ Թիֆլիսն իր 100 հզ.-ից ավելի հայությամբ հանդիսանում էր ոչ միայն Անդրկովկասի, այլև ամբողջ ԽՍՀՄ-ում ամենամեծաթիվ հայ բնակչություն

ունեցող քաղաքը: Ուստիև խիստ կարևոր և առանձնակի հետաքրքիր են Ադրբեջանական ԽՍՀ և Վրացական ԽՍՀ հայ ազգաբնակչության թվաքանակի, նրա շարժընթացի, տեղաբաշխման, գրագիտության լեզվական պատկանելիության, այլ գործընթացների ուսումնասիրությունը:

Ադրբեջանական ԽՍՀ: 1920-ական թթ. Ադրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակչության վերաբերյալ թվական և այլ տվյալներ արձանագրվել են նախ 1923 թ. ԽՍՀՄ քաղաքային մարդահամարով (ի դեպ Վրացական ԽՍՀ-ում այն չի անցկացվել):

Այսպես, 1923 թվականի քաղաքային մարդահամարով Ադրբեջանական ԽՍՀ քաղաքաբնակ հայության թիվ կազմում էր 77.002 մարդ, այդ թվում 39.478-ը արական, 37.524-ը՝ իգական սեռի: Անշուշտ, Ադրբեջանական ԽՍՀ քաղաքային հայ բնակչության գերակշիռ մասը բնակվում էր հենց Բաքվում, որի վերաբերյալ վիճակագրական տվյալներն ավելի ամփոփ են հաջորդ մարդահամարների ժամանակ: Վերոհիշյալ մարդահամարով վեր հանված Ադրբեջանական ԽՍՀ քաղաքային հայ բնակչության 36,7 %-ը (28.265 մարդ) ներկայացնում էր բնակչության ինքնագործ խումբը: Ավելի համընդհանուր վիճակագրական արդյունքներ է վեր հանվել 1926 թ. դեկտեմբերի 17-ի ԽՍՀՄ Համամիութենական մարդահամարը: Այս մարդահամարով վերջնականապես ճշգրտվում է 1920-ական թթ. Ադրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակչության թիվը, տեղաբաշխումն ու այլ գործընթացներ, թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակչության ընդգրկումով:

Աղյուսակ № 5

Հայերն Ադրբեջանական ԽՍՀ-ում ըստ 1926 թ. դեկտեմբերի 17-ի մարդահամարի

	ամբողջ	արական	իգական	մայրենի լեզու հայ., ռուս., քուրդ. այլ			զրագետ	զրագետ ազգ. լեզվ.	
Ադրբեջանական ԽՍՀ <sup>122</sup> , որից՝	282.004	144.877	137.127	276.223	4039	239	1503	93.739	84.312
1. ԼՂԻՄ	111.694	56.225	55.469	111.624	55	8	7	25.792	25.703
2. Նախիջևանի ԽՍՀ	11.276	5643	5633	11223	16	15	22	3757	3705
3. ք. Բաքու (Արդյուն-գործ. շրջանի հետ)	76.656	39.904	36.752	72.569	3806	37	244	40.408	32.318
4. ք. Գանձակ	16.148	8.218	7.930	15.930	83	11	124	7067	6721

<sup>122</sup> Всесоюзная перепись населения 1926 года, том XIV, Закавказская Социалистическая Федеративная Советская Республика, Азербайджанская ССР, М., 1929, с. 12.

Աղրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակչությունը 1926 թ. մարդահամարով կազմում էր հանրապետության ամբողջ բնակչության 12,4 %-ը: Աղրբեջանական ԽՍՀ քաղաքային հայ բնակչությունը կազմում էր 103.280 մարդ կամ հանրապետությունում բնակվող հայության 36,6 %-ը: Բաքվում (Արդյունաբերական-գործարանային շրջանի հետ) կենտրոնացած էր աղրբեջանահայության 27,1 %-ը, իսկ Գանձակում՝ 5,7 %:

Բաքու քաղաքում բնակվող հայությունը տեղաբաշխված էր քաղաքի 10 շրջաններում, որոնցից առավել հոծ հայ բնակչություն ունեին Բաքվի ութերորդ շրջանը՝ 24.584, իններորդը՝ 13.247 և յոթերորդը՝ 13.199 մարդ: Բարձր էր աղրբեջանահայության մեջ հայերենին տիրապետողների թիվը, որոնք այն համարում էին իրենց մայրենի լեզուն, նրանց տեսակարար կշիռը կազմում էր 97,9%, իսկ 1,4%-ի համար այն հանդիսանում էր ռուսերենը: Գրագետ էր հանրապետությունում բնակվող հայության 33,2 %-ը, իսկ վերջիններիս 89,9 %-ը գրագետ էր նաև իր ազգային լեզվով: Ի տարբերություն միութենական մյուս հանրապետություններում բնակվող հայության, Աղրբեջանական ԽՍՀ հայերի գերակշիռ մասը՝ 63,4 %-ը գյուղաբնակ էր, և ցրված հանրապետության բոլոր գավառներում անխտիր, ուստիև նպատակահարմար է դրանք դիտարկել առանձին-առանձին: Այսպես.

1. Գանձակի (առանց քաղաքի) գավառի հայ ազգաբնակչությունն իր թվաքանակով ամենամեծն էր Աղրբեջանական ԽՍՀ գավառների մեջ, ուր բնակվում էր 41.861 հայ, որից 40.895-ը գյուղաբնակներ էին: Գավառի մյուս 2 քաղաքները՝ Ելենենդորֆն ու Շամխորը նույնպես հայաբնակ էին, ընդ որում, նրանց հայ բնակչությունը մի քանի անգամ գերազանցում էր տեղի թուրք<sup>123</sup> (աղրբեջանցի) ազգաբնակչության թիվը: Գավառի գյուղական շրջաններից (դայրա) Աղջաբենդիում (8.975 հայ կամ 91,8%), Բանանցում (Բայանում՝ 12.409 հայ կամ 99,7%), Սլավյանովկայում (8.396 հայ կամ 75,5%), Չայբենդում (6.413 հայ կամ 76,5%) հայ ազգաբնակչությունը գերակշռում էր թվաքանակով, զգալի թիվ էր կազմում Ելենենդորֆում՝ 3.017 մարդ կամ շրջանի բնակչության 43,4%: Գանձակի գավառի մյուս գյուղական շրջաններում ևս առկա էր հայ ազգաբնակչություն, որոնց թիվը մի քանի տասնյակից հասնում էր մի

քանի հարյուրի:

2. Բաքվի գավառում (առանց Բաքու քաղաքի) կար մեծաթիվ հայ ազգաբնակչություն՝ 7.541 մարդ, որից գյուղական շրջաններում՝ 429 մարդ: Գավառի հայ ազգաբնակչությունը հիմնականում կենտրոնացած էր արդյունագործական-գործարանային շրջանում (7.112 մարդ): Արդյունագործական-գործարանային շրջանում բնակվող հայությունը կենտրոնացած էր Լենին-Սուրխաթական շրջանում՝ 4.792 մարդ, Բիբի Էյբաթում՝ 1.928 մարդ, Բինիգադում՝ 392 մարդ<sup>124</sup>:

3. Շամախի գավառում հայության թիվը կազմում էր 6.485 մարդ, այդ թվում 6.293-ը բնակվում էին գյուղական շրջաններում, մասնավորաբար, Բասխալում՝ 1.789, Մատրասիում՝ 4.447 մարդ:

4. Նուխի գավառի 4.007 հայ բնակիչներից Նուխի քաղաքում էր բնակվում 1.565-ը, իսկ մյուս մասը ցրված էր գավառի գյուղական շրջաններում՝ Վարդաշենում՝ 1.336, Նիջում՝ 571, Կուտկաշենում՝ 133 ևն:

5. Ղազախի գավառի հայ ազգաբնակչության թիվը 3.632 մարդ էր, որից 2.020-ը բնակվում էր Ձևգամի գյուղական շրջանում: Հայաբնակ էին նաև գավառի քաղաքային բնակավայրերը՝ Ղազախում՝ 414, Թովուզում՝ 404, Աղստևում (Աղստաֆա)՝ 171 հայ:

6. Գեոքչայի գավառի հայ բնակչության թիվն էր 3.154, այդ թվում 2.907-ը գյուղական շրջաններում՝ Կարամարյանում՝ 1.553, Սուրախանում՝ 776: Հայաբնակ էին գավառի քաղաքներն ու մյուս գյուղական շրջանները ևս:

7. Աղդամի գավառում բնակվող 2.525 հայից 1.917-ը բնակվում էր Թարթառ (Տերտեր) քաղաքում և համանուն շրջանի գյուղական վայրերում: Հայաբնակ էին նաև Եվլախ, Աղդամ քաղաքներն ու Բարդայի գյուղական շրջանը (250 հայ):

8. Ջաքաթալայի գավառի հայության թիվն էր 1.399, որոնց գերակշիռ մասը բնակվում էր Ջաքաթալա քաղաքում: Ջաքաթալայի հայությունը կազմում էր 1.181 մարդ կամ քաղաքի բնակչության 35,7 %-ը: Գավառի հայության փոքր մասը ցրված էր գյուղական շրջաններում:

9. Ղուբա գավառի 894 հայազգի բնակիչներից 591-ը բնակվում էր Դիվիչի գյուղական շրջանում, իսկ մնացյալը ցրված էր գավառի՝ թե՛ քաղաքային, թե՛ գյուղական վայրերում:

<sup>123</sup> Հատկանշական է, որ դեռևս 1926 թ. մարդահամարով Աղրբեջանական ԽՍՀ երկնի մեծամասնությունը կրում էր թուրք երանվանումը և միայն հաջորդ մարդահամարներում է հայտնվում աղրբեջանցի երանվանումը:

<sup>124</sup> Итоги Всесоюзной переписи населения 1926 года по г. Баку и Промышленно-Заводскому району, том 1. Издание Баксовета, 1929, с. 42.

10. Ջերբայիլի գավառի 625 հայ բնակիչների կեսից ավելին՝ 383 մարդ, բնակվում էր Կարյազիմո (Սարդար) քաղաքում և նրա համանուն գյուղական շրջանում: Հայաբնակ էին նաև գավառի Հորադիզ, Ջերբայիլ, Չանգելան և Խանլըխ գյուղական շրջանները:

11. Քուրդիստան գավառի 373 հայ բնակիչների հիմնական մասը բնակվում էր Մուրադխանլիի և Ղուբաթլուի գյուղական շրջաններում, իսկ Լաչինում հայերի թիվը 66 էր (քաղաքի բնակչությունը 435 մարդ էր):

12. Լենքորանի գավառի 511 հայ բնակիչներից 216-ը բնակվում էր Լենքորան քաղաքում: Հայերը գլխավորապես կենտրոնացած էին գավառի գյուղական շրջաններից Պրիշիբում (202 մարդ):

13. Սալյանի գավառում բնակվում էր 335 հայ, որն ամենափոքրն էր հայ բնակիչների թվաքանակով: Գավառի հայությունը, ոչ հոծ, բնակվում էր թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակավայրերում:

**Նախիջևանի ԻԽՍՀ:** Նախիջևանի ԻԽՍՀ-ում բնակվում էր 11.276 հայ: 1926 թ. դրությամբ Նախիջևանի ԻԽՍՀ-ն ուներ 3 քաղաք, բաժանված էր 8 գյուղական շրջանների, որոնցում ամխտիր հայ ազգաբնակչությունն առկա էր: Նախիջևան քաղաքում բնակվում էր 1.065 հայ, որը կազմում էր քաղաքի բնակչության 10,3 %-ը, իսկ Օրդուբադում՝ 77 հայ: Ջուղա (Ջուլֆա) քաղաքի հայ ազգաբնակչությունն (293 մարդ) իր թվաքանակով գերազանցում էր տեղի թուրք բնակչությանը: Նախիջևանի ԻԽՍՀ Փարազ գյուղական շրջանում հայ ազգաբնակչության թիվը հասնում էր 2.789 մարդու և կազմում էր ամբողջ շրջանի բնակչության 60,8 %-ը: Հայ բնակչության թվաքանակով երկրորդը Նարիմանովկայի շրջանն էր, ուր բնակվում էին 2.004 հայեր, ապա Տումբուլի շրջանը՝ 1.529 հայերով: Կիվրախի գյուղական շրջանում բնակվում էին 1.079, Աբրակունիսում՝ 876, Ջուղայում՝ 848, Բաշ-Նորաշենում՝ 455 և Օրդուբադում 261 հայեր: Նախիջևանի ԻԽՍՀ գյուղական շրջանների հայության ընդհանուր թիվը 9.841 էր, իսկ քաղաքային բնակչության թիվը՝ 1.435: Նախիջևանի ԻԽՍՀ հայ բնակչության 99,5%-ի համար հայերենը հանդիսանում էր մայրենի լեզու: Գրագետ էր Նախիջևանի ԻԽՍՀ հայության 33,3%-ը, որոնց ճնշող մեծամասնությունը գրագետ էր նաև իր ազգային լեզվով:

**Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ (ԼՂԻՄ):** 1923 թ. կազմավորված ԼՂԻՄ-ն ուներ 2 քաղաք և 5 գյուղական շրջան, ընդամենը 125.159 բնակիչներով, որոնց 89,2%-ը (111.694 մարդ) հայեր էին, 10%-ը թուրքեր (12.592 մարդ): ԼՂԻՄ քաղաքներում բնակվում էին 2.817 հայեր, որից Ստեփանակերտում՝ 2.724, իսկ Շուշիում՝ 93: Ղա-

րաբաղի և Անդրկովկասի խոշոր հայկական կենտրոն Շուշիում Ադրբեջանի մուսավաթական կառավարության իրականացրած ջարդերի և հայաթափության արդյունքում վերացվել էր քաղաքի գերակշիռ մասը կազմող հայ բնակչությունը: Շուշիի շրջանի գյուղերում ևս իրավիճակը նույնն էր՝ ամբողջ շրջանում բնակվում էին ընդամենը 8 հայ: Շուշի քաղաքն ու համանուն շրջանը դարձել էին գրեթե հայաթափ, ինչը Բաքվի իշխանությունների հակահայ քաղաքականության արտահայտությունն էր: Հետաքրքրական է, որ դեռևս 1921 թ. Խորհրդային Ադրբեջանում անցկացված գյուղատնտեսական մարդահամարով ԼՂԻՄ բնակչության 94,73 %-ը կազմում էին հայերը<sup>125</sup>, իսկ ադրբեջանցիները կազմում էին ընդամենը 5,07 %: Վերջիններիս կշիռն ավելի քան կրկնակի անգամ աճել էր 1926 թ. մարդահամարով, որը մեկ անգամ ևս ցույց է տալիս երկրամասում տարվող հայաթափության քաղաքականությունը:

1926 թ. մարդահամարի տվյալներով Շուշի քաղաքը և համանուն շրջանը բնակեցված էր 9.220 թուրքերով (ԼՂԻՄ թուրք բնակչության 73,2%), որոնք արիեստականորեն ձևավորված ադրբեջանական Քուրդիստանի հետ մեկտեղ նպատակ էին հետապնդում թուլացնելու Ղարաբաղի կապը Հայկական ԽՍՀ հետ: Լեռնային Ղարաբաղի ԻՄ գյուղական շրջաններում բնակվում էր 108.877 հայ և ընդամենը 7.349 թուրք: Այսպես.

- |  |  |
|--|--|
| 1. Վարանդայի շրջ.՝ 28.190 հայ, 650 թուրք:  | 4. Դիզակի շրջ.՝ 24.685 հայ, 443 թուրք: |
| 2. Ջրաբերդի շրջ.՝ 29.292 հայ, 1.914 թուրք: | 5. Շուշիի շրջ.՝ 8 հայ, 4.320 թուրք:    |
| 3. Խաչենի շրջ.՝ 26.702 հայ, 22 թուրք:      |  |

Լեռնային Ղարաբաղի ԻՄ հայ ազգաբնակչության 99,9 %-ի համար մայրենի լեզու էր հանդիսանում իր ազգային լեզուն՝ հայերենը: Գրագետ էր ԼՂԻՄ հայ բնակչության 23%-ը, որոնք, գրեթե ամբողջությամբ, գրագետ էին նաև իրենց ազգային լեզվով:

1926 թ. մարդահամարը վեր է հանել նաև Ադրբեջանական ԽՍՀ-ում բնակվող, սակայն օտարախաչատակ հայ ազգաբնակչության թիվը, որը կազմում էր 2.387 մարդ, գլխավորապես կենտրոնացած Բաքու քաղաքում (2.107 մարդ):

1930-ական թթ. Ադրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակչության թիվը շարունակական աճ է դրսևորել, ինչն ակնհայտ երևում է

1930-ական թթ. ԽՍՀՄ-ում անցկացված մարդահամարների վիճակագրական տվյալներից: Այսպես, թեև 1937 թ. մարդահամարի

<sup>125</sup> Карапетян М. Этническая структура населения Нагорного Карабаха в 1921 г. (По сельско-хозяйственной переписи Азербайджана 1921 г.), Е., 1991, с. 10.

արդյունքների չեղյալ հայտարարմանը, այնուհանդերձ արձանագրվեց Ադրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակչության ընդհանուր թիվը բացահայտելով հայության թվի անցած ավելի քան 10 տարիների աճի դինամիկան: Ըստ 1937 թ. մարդահամարի, Ադրբեջանական ԽՍՀ հայության թիվն էր 370.164 մարդ, որը, 1926 թ. մարդահամարի տվյալների հետ համեմատած, արձանագրել է հայության թվի աճ 88.160 մարդով:

Ավելի ընդհանուր, սակայն, ճշգրտված ու վերջնական տվյալներ Ադրբեջանական ԽՍՀ հայության թվի վերաբերյալ արձանագրել է 1939 թ. Համամիութենական մարդահամարը:

Հայերն Ադրբեջանական ԽՍՀ-ում, ըստ 1939 թ. մարդահամարի տվյալների կազմում էին 388.025, որից ԼՂԻՄ-ում՝ 132.800 հայ (մարզի բնակչության 88%-ը): Քաղաքաբնակ էր ԼՂԻՄ-ի 10.555 հայ բնակիչ, գյուղաբնակ՝ 122.245-ը:

Նախիջևանի ԻԽՍՀ-ում բնակվում էին 13.350 հայեր (10.5%), որոնցից քաղաքաբնակ էին 3.016-ը, գյուղաբնակ՝ 10.344-ը:

Արդեն 1939 թ. մարդահամարով Ադրբեջանական ԽՍՀ քաղաքաբնակ հայության տեսակարար կշիռն աճել էր և կազմում էր 44%: Բաքու քաղաքում էր բնակվում ադրբեջանահայության 30,5 %-ը: Բաքվի հայ ազգաբնակչության թվի կտրուկ աճը մեծ մասով պայմանավորված էր գյուղական շրջաններից հայության արտահոսքով: Այսպիսով, 1920-30-ական թթ. Ադրբեջանական ԽՍՀ-ն հանդիսանում էր ԽՍՀՄ-ում հայության բնակության խոշորագույն և կարևոր կենտրոններից մեկը:

Վրացական ԽՍՀ: Վրացական ԽՍՀ-ն միութենական հանրապետություններից (ՀԽՍՀ-ից հետո) ամենահայաբնակն էր, ուր կենտրոնացած էր ուժեղ, կազմակերպված հայություն և առկա էր ավանդական հայկական միջավայր: Վիրահայությունը մշտապես ազդեցիկ էր ոչ միայն իր մեծաթիվ լինելով, այլ նաև իր ունեցած կշռով թե՛ վրաց հասարակության, թե՛ վրացական պետականության պատմության մեջ: Վրաստանի հայության կշիռն ու դերակատարումը մեծ էր նաև XIX-XX դդ. սկզբին, երբ թիֆլիսը հանդիսանում էր Կովկասյան փոխարքայության կենտրոնը: Վրաստանի խորհրդայնացումից հետո (1921 թ.), թիֆլիսը կրկին ստանձնում է Անդրկովկասի կենտրոնի դերակատարումն, այս անգամ, որպես ԱԽՖՍՀ մայրաքաղաքի:

1920-ական թթ. Վրացական ԽՍՀ հայ ազգաբնակչության թվի, տեղաբաշխման, լեզվական պատկանելիության և մյուս գործընթացների վերաբերյալ վիճակագրական տվյալներ են առկա միայն 1926 թ. դեկտեմբերի 17-ի մարդահամարով:

Թիֆլիսում կենտրոնացած էր Վրացական ԽՍՀ հայության 32,6%-ը: Թիֆլիսում բնակվում էին նաև օտարախապատակ 918 հայազգի քաղաքացիներ:

Աղյուսակ № 6

Հայերը Վրացական ԽՍՀ-ում ըստ 1926 թ. մարդահամարի

	ամբողջը	արական	իգական	մայրենի լեզու			գրագետ	գրագետ ազգ. լեզվ	
				հայ.	վրաց.	ռուս.			
Վրացական ԽՍՀ <sup>126</sup> որից	307.018	155.628	151.390	224.552	73.917	5298	3251	118.406	80.727
1. ք. Թիֆլիս	100.148	48.983	51.165	80.321	14.949	4690	188	55.451	40.896
2. Արխազական ԻԽՍՀ որից	25.677	13.477	12.200	25.519	15	115	28	8649	8173
քաղաքաբնակ	2673	1394	1279	2541	14	110	8	1557	1193
գյուղաբնակ	23.004	12.083	10.921	22.978	1	5	20	7092	6980
3. Աջարտանի ԻԽՍՀ որից	10.476	5343	5133	10.145	140	165	26	4241	3354
քաղաքաբնակ	10.253	5213	5040	9931	138	160	24	4169	3297
գյուղաբնակ	223	130	93	214	2	5	2	72	57
4. Հարավ - Օսա- կան ԻՄ որից	1374	660	714	126	1231	7	10	839	132
քաղաքաբնակ	827	394	433	101	719	6	1	533	92
գյուղաբնակ	547	266	281	25	512	1	9	306	40

Վրացական ԽՍՀ-ում բնակվող հայության 48,7 %-ը քաղաքաբնակներ էին: Թիֆլիսի հայության ավելի քան 80 %-ի համար մայրենի լեզու էր հայերենը, գրագետ էր՝ 55,3%-ը, իսկ վերջիններիս 73,7 %-ը գրագետ էր նաև հայերենով: Գրագիտության մակարդակով Թիֆլիսի հայությունը մշտապես առանձնանում էր և բոլորովին չէր զիջում նույն ժամանակաշրջանի Երևանի քաղաքային հայ բնակչությանը: Վրացական ԽՍՀ գյուղաբնակ հայության 70 %-ից ավելիի համար մայրենի լեզու էր հանդիսանում հայերենը, 27,6 %-ի համար՝ վրացերենը: Հետաքրքրական է, որ, հետևելով ազգային լեզուների տարածմանը, նկատում ենք, որ վրացերեն լեզուն յուրացրածների հիմնական մասը հայերն էին՝ 74.061 մարդ<sup>127</sup>:

<sup>126</sup> Всесоюзная перепись населения 1926 года. том XIV. Закавказская Социалистическая Федеративная Советская Республика, ССР Грузия, М., 1929, с. 16.

<sup>127</sup> ЗЦСУ. Население Закавказья. Всесоюзная перепись населения 1926 года. Краткие итоги. Издание Зак. ЦСУ, Тифлис, 1928, с. 8.

Վրացական ԽՍՀ գյուղաբնակ հայության շրջանում անհամեմատ ցածր էր ոչ միայն մայրենի լեզվին տիրապետելու աստիճանը, այլ նաև գրագիտության մակարդակը, որը կազմում էր 23,9 %: Վրացական ԽՍՀ տարբեր վարչատարածքային միավորներում հայ ազգաբնակչության թիվն ու այլ ցուցանիշներ տարբեր էին, խիստ կարևոր է դրանց դիտարկումն առանձին- առանձին: Այսպես.

1. Թիֆլիսի գավառում (առանց Թիֆլիս քաղաքի) բնակվում էր 28.597 հայ, որը կազմում էր Վրացական ԽՍՀ ամբողջ հայության 9,3%-ը: Գավառի հայության գերակշիռ մասը՝ 27.949 մարդ, բնակվում էր գյուղական շրջաններում (թեմի), որից Աղբուլաղի շրջանում՝ 4.916, Ասուրեթում՝ 2.515, Ջեմո-Ծալկայում՝ 4.435, Աշկալայում՝ 3.291, Թելեթիում՝ 2.538, Ծղնեթիում՝ 1.318 մարդ: Այս բոլոր գյուղական շրջաններում տեղի հայ ազգաբնակչությունը թվային մեծամասնություն էր կազմում, իսկ մյուս շրջաններում ևս բավականին ներկայանալի էր: Թիֆլիսի գավառի ամբողջ հայության 58,8%-ի համար հայերենը հանդիսանում էր նրա մայրենի լեզուն, որը ցածր ցուցանիշ էր, այսպես, գավառի Մցխեթ քաղաքի 330 հայ բնակիչներից ոչ մեկի համար հայերենը մայրենի լեզու չէր: Հայերը կազմում էին Թիֆլիսի գավառի ողջ բնակչության 17,9 %-ը:

2. Ախալքալաքի գավառի (պատմական Ջավախք գավառ) հայ ազգաբնակչությունը 57.791 մարդ էր, որը կազմում էր Վրացական ԽՍՀ ամբողջ հայության 18,8%-ը: Գավառի գյուղական վայրերում բնակվում էր 54.633 հայ: Ախալքալաքի գավառի բոլոր 12 գյուղական շրջաններում առկա էր հայ ազգաբնակչություն: Ստվար հայ ազգաբնակչություն ունեցող գյուղական շրջաններն էին Ախալքալաքը՝ 13.672, Բարալետին՝ 9.025 հայ բնակիչներով ևն: Հայերենը մայրենի լեզու էր գավառի հայ ազգաբնակչության 95,1%-ի համար (55.016 մարդ): Հայ ազգաբնակչությունը կազմում էր Ախալքալաքի գավառի բնակչության 73,2 %-ը:

3. Ախալցխայի գավառում բնակվող հայ ազգաբնակչությունը կազմում էր 15.565 մարդ կամ հանրապետությունում բնակվող հայության 5%-ը: Ախալցխա քաղաքում բնակվում էր 6.516 հայ, որը կազմում էր քաղաքի բնակչության 52,8%-ը, Աբասթումանում՝ 506 հայեր կամ քաղաքի բնակչության 40,6%-ը: Այս քաղաքներում հայ ազգաբնակչությունն իր թվաքանակով էթնիկ խմբերի մեջ առաջինն էր: Գյուղաբնակ էր գավառի 8.543 հայ բնակիչ, որոնք մեծամասնություն էին կազմում Վալեի գյուղական շրջանում՝ 5.858, որը կազմում էր շրջանի բնակչության 55,5%-ը: Ստվար հայ ազգաբնակչություն ունեին նաև Ախալցխայի շրջանը՝ 1.253 և Ասպինձայի

շրջանը՝ 1.166 հայ: Հայերենը մայրենի լեզու էր հանդիսանում գավառի հայ ազգաբնակչության 99,6%-ի համար: Հայերը կազմում էին Ախալցխայի գավառի ամբողջ բնակչության 16%-ը:

4. Գորիի գավառն ուներ 25.341 հայ բնակիչ, որը կազմում էր Վրացական ԽՍՀ հայության 8,2%-ը: Հայաբնակ էին գավառի բոլոր քաղաքներն անխտիր. Գորի՝ 2.395 կամ քաղաքի բնակչության 22,7%-ը, Բորժոմի՝ 1.057, Սուրամի՝ 1.135, Խաշուրի՝ 522 և այլն: Գյուղաբնակ էր գավառի հայության ճնշող մեծամասնությունը՝ 20.144 մարդ, որից Գորիի շրջանում՝ 5.550, Ծիթելի-Քալաքիում՝ 3.827, Կավտիսխևիում՝ 1.451, Տղվիավիում՝ 1.097, Մեջվրիսխևիում՝ 1.106, Բակուրիանիում՝ 927 հայ (վերջինում հայերը ամենամեծն էին իրենց թվով): Գավառում ցածր էր հայերենին, որպես մայրենի լեզու, տիրապետողների տեսակարար կշիռը, որը կազմում էր ընդամենը 12,7%: Հայերը կազմում էին Գորիի գավառի ամբողջ բնակչության 12,2%-ը:

5. Բորչալուի գավառում բնակվում էր 14.969 հայ, որը կազմում էր Վրացական ԽՍՀ-ում բնակվող հայության 4,8%-ը: Գավառի Շահումյան քաղաքի բնակիչ էր 5.474 հայ կամ քաղաքի բնակչության 97,9%-ը, իսկ Լյուքսեմբուրգում՝ 826-ը: Գյուղական շրջաններում բնակվում էր 8.669 հայ: Գյուղական հայ բնակչությունն իր թվով ամենամեծն էր Բոլնիս-Խաչենի շրջանում՝ 1.731 և Օպրետի շրջանում՝ 1.466 հայ: Ստվարաթիվ էին Դումանիսի՝ 1.431 և Սադախլոյի՝ 1.846 հայ, գյուղական շրջանները: Սադախլոյի շրջանում հայ ազգաբնակչությունը կազմում էր 39,5%: Հայերենը մայրենի լեզու էր համարում գավառի հայության 90%-ը: Հայերը կազմում էին Բորչալուի գավառի ամբողջ բնակչության 17,2%-ը:

6. Սղնախի գավառն ուներ 12.181 հայ բնակիչ, որը կազմում էր Վրացական ԽՍՀ-ում բնակվող հայության 3,9%-ը: Հայ ազգաբնակչությունն ամենամեծն էր իր թվով Սղնախում, ուր բնակվում էին 2.400 հայեր (քաղաքի բնակչության 49,4%-ը) և Վելիսցիխում՝ 3.559 հայ (քաղաքի բնակչության 59,9 %): Լագոդեխի քաղաքում բնակվում էր 666 հայ կամ քաղաքի բնակչության 42,5%-ը: Գավառի գյուղաբնակ հայերի թիվը 5.556 մարդ էր, որոնք կենտրոնացած էին Կանդաուրա (675), Գուրջաանի (622), Կակաբեթի (885), Ծիթելի-Շղարո (344), Ախալշենի (310) և գավառի մյուս բոլոր գյուղական շրջաններում: Հայերն իրենց թվով գերազանցում էին Ալազանի ջրանցքի հողային տարածքներում, ուր նրանց թիվը կազմում էր 541 մարդ: Հայերենը մայրենի լեզու էր հանդիսանում գավառի հայության 25,6%-ի համար: Հայերը կազմում էին Սղնախի գավառի ամբողջ բնակչության 7,7%-ը:

7. Թելավի գավառն ուներ 9.135 հայ բնակիչ, որը կազմում էր Վրացական ԽՍՀ-ում բնակվող հայության 2,9%-ը: Հայ ազգաբնակչությունը զգալի թիվ էր կազմում Թելավ քաղաքում՝ 3.606 մարդ կամ ամբողջ քաղաքի բնակչության 37,1%-ը: Գյուղական շրջաններում բնակվում էր 5.529 հայ, այդ թվում Շուշիանիում՝ 1.131, Սատանիում՝ 861, Իկալտոյում՝ 857, Նապարեուլիում՝ 605 և Ձենո-խողաշենիում՝ 587 հայ: Հայաբնակ էին գավառի մյուս բոլոր շրջանները նույնպես: Հայերենը մայրենի լեզու էր գավառի հայության 11,5%-ի համար: Հայերը կազմում էին Թելավի գավառի ամբողջ բնակչության 8,6 %-ը:

8. Դուշեթի գավառն ուներ 2.577 հայ բնակիչ, այդ թվում 377-ը բնակվում էր Դուշեթում, որը քաղաքի բնակչության 17,9% էր: Դուշեթի գավառի հայ ազգաբնակչությունը հիմնականում կենտրոնացած էր Սուխրանի գյուղական շրջանում, ուր բնակվում էին 1.699 հայեր: Հայերենը մայրենի լեզու էր գավառում բնակվող հայության 5,5%-ի համար, որը խիստ ցածր ցուցանիշ էր:

9. Շորապանի գավառում բնակվում էր 1.215 հայ, որոնք գլխավորապես կենտրոնացած էին գավառի քաղաքներում՝ Չխարիում՝ 535, Սաճխերեում՝ 447 և այլ բնակավայրերում: Հայերենը մայրենի լեզու էր գավառում բնակվող հայության 12,8%-ի համար:

10. Քութայիսի գավառում բնակվում էր 1.022 հայ, որոնք նույնպես կենտրոնացած էին քաղաքներում՝ Քութայիսում՝ 830, Սամտրեդիում՝ 112, իսկ մյուսները ցրված էին գավառի այլ բնակավայրերում: Հայերենը մայրենի լեզու էր գավառի հայության 43,8%-ի համար, որը բավական բարձր ցուցանիշ էր Արևմտյան Վրաստանի հայաբնակ մյուս գավառների հետ համեմատած:

11. Ռաճայի գավառում բնակվում էր 231 հայ, գլխավորապես կենտրոնացած վարչական կենտրոն Օնիում, ուր նրանց թիվը 229 մարդ էր:

12. Օզուրգեթի գավառի 110 հայ բնակիչների կեսը բնակվում էր Օզուրգեթ քաղաքում, իսկ մնացածը ցրված էր տարբեր բնակավայրերում:

13. Լեչխումի գավառի 143 հայ բնակիչների մեծ մասը՝ 114 մարդ, բնակվում էր Լախլաշի գյուղական շրջանում:

14. Սենակի գավառի 119 հայ բնակիչների մոտ կեսը բնակվում էր Սենակիում:

15. Փոթիի շրջանում բնակվող 280 հայերից 279-ը կենտրոնացած էր վարչական կենտրոն Փոթիում:

Վրացական ԽՍՀ ինքնավար վարչատարածքային միավորներում ստվար հայ ազգաբնակչության առկայությունն անհրաժեշտ է

դարձնում դրանց դիտարկումն առանձին-առանձին:

Արխագական ԻԽՍՀ: Արխագական ԻԽՍՀ-ում բնակվող 25.677 հայերը կազմում էին Վրացական ԽՍՀ-ում բնակվող հայության 8,3%-ը և սիռված էին բոլոր 5 վարչատարածքային միավորներում՝ Սուխումի, Գագրայի, Գուդաութայի, Կոդորի և Գալիի գավառներում: Արխագական ԽՍՀ-ում բնակվող հայության 89,5%-ը գյուղաբնակ էր, իսկ առանձին գյուղական բնակավայրեր, զրեթե ամբողջությամբ, հայաբնակ էին: Այստեղ բնակվող հայության 99,3%-ի համար հայերենը հանդիսանում էր մայրենի լեզու, որը բացառիկ բարձր ցուցանիշ էր: Գրագիտության մակարդակով Արխագական ԻԽՍՀ հայ ազգաբնակչությունն ուներ միջին ցուցանիշ, որը կազմում էր 33,6%, իսկ վերջիններիս 94,4%-ը գրագետ էր նաև իր ազգային լեզվով:

1. Սուխումի գավառում բնակվում էր Արխագական ԻԽՍՀ հայության գերակշիռ մասը՝ 14.388 մարդ, իսկ Սուխում քաղաքում 2.023 մարդ կամ քաղաքի բնակչության 9,3%-ը: Գավառի հայության հիմնական մասը՝ 12.365 մարդ, տեղաբաշխված էր գյուղական համայնքներում: Սուխումի գավառի հայ ազգաբնակչությունը կազմում էր գավառի ամբողջ բնակչության 18,6%-ը և իր թվով էթնիկ խմբերի մեջ երկրորդն էր՝ զիջելով միայն մեգրելներին (ընդամենը 351 մարդով): Սուխումի գավառի 20 գյուղխորհուրդներից միայն երեքում առկա չէր հայ ազգաբնակչություն, իսկ մյուսներում հայերի թիվը մի քանի տասնյակից հասնում էր մի քանի հազարի: Այսպես, հայ ազգաբնակչությունն ամենամեծն էր իր թվով Ցեբելդայում՝ 2.932, Գումիստայում՝ 1.821, Գուլրիպչում՝ 1.828, Էշերիում՝ 1.606, Ազանտիում՝ 349 և Լաթայում՝ 682 մարդ: Ստվար հայ ազգաբնակչություն կար Դրանդիում՝ 691, Մերխետլիում՝ 604, Բեշկարդաշում՝ 417, և այլ գյուղխորհուրդներում: Հետաքրքրական է, որ Սուխումի գավառի ամբողջ գյուղական բնակչության մեջ հայերն ամենաշատն էին իրենց թվաքանակով, իսկ հայերենը մայրենի լեզու էր գավառի 15.553 բնակչի համար, այսինքն, բացի հայերից նաև այլ էթնիկ խմբերի ներկայացուցիչների համար ևս:

2. Գուդաութայի գավառի հայ ազգաբնակչության թիվը 5.784 էր, այդ թվում 259-ը բնակվում էր Գուդաութա քաղաքում, իսկ մյուսները՝ գյուղական վայրերում: Գուդաութայի գավառի 21 գյուղխորհուրդներից չորսում հայ ազգաբնակչությունն ամենաշատն էր իր թվով: Դրանք էին Հայկական Անուխվան՝ 1.127, Կավակլուկը՝ 1.834, Մցարան՝ 1.128, Փսիրցխան՝ 947 հայ բնակիչներով: Արխագական Անուխվայում բնակվում էին 326 հայ բնակիչներ: Հայերենը մայրենի լեզու էր գավառի 5.982 բնակիչների համար, այդ թվում՝ այլ էթնիկ խմբերի

ներկայացուցիչների համար: Հայերը կազմում էին Գուդաուբայի գավառի բնակչության 18,7%-ը:

3. Գագրայի գավառում բնակվում էր 2.559 հայ կամ գավառի ամբողջ բնակչության 25,7%-ը, որն ամենամեծ ցուցանիշն էր էթնիկ խմբերի մեջ: Գագրան ուներ 337 հայ բնակիչ, մնացյալը սփռված էր գավառի բոլոր 5 գյուղխորհուրդներում: Հայերն իրենց թվով ամենամեծն էին նաև գավառի գյուղական բնակչության շրջանում: Այսպես, հայերը մեծամասնություն էին կազմում Ալախածե գյուղխորհրդում՝ 734 մարդ և Խոլոդնայա Ռեչկա գյուղխորհրդում՝ 499 մարդ: Ստվար հայ բնակչություն կար Կալդախվարայում՝ 521, Կոլխիդայում՝ 404 և Լոր Գագրայում՝ 64 հայ: Հայերենը մայրենի լեզու էր գավառի 2.677 բնակչի համար, այդ թվում այլ էթնիկ խմբերի ներկայացուցիչների համար:

4. Կոդորի գավառում բնակվում էր 2.920 հայ, որը կազմում էր գավառի ամբողջ բնակչության 8,8%-ը: Կոդորի գավառի հայությունը գլխավորապես կենտրոնացած էր 5 գյուղխորհուրդներում, որոնցից Հայկական Աթարայում՝ 1.338 մարդ և Լաբրայում՝ 793 մարդ, ուր և մեծամասնություն էին կազմում: Գյուղական հայ ազգաբնակչություն կար նաև Աբխազական Աթարայում՝ 508 մարդ, Ամվիբջայում՝ 113 մարդ և Տամիշիում՝ 111 մարդ: Հայերենը մայրենի լեզու էր գավառի 2.921 բնակչի համար:

5. Գալիի գավառն ամենափոքրաթիվ հայ բնակչություն ունեցող տարածքային միավորն էր Աբխազական ԽՍՀ-ում: Այստեղ հայերի թիվն ընդամենը 26 մարդ էր, որոնք ցաքուցրիվ բնակվում էին գավառի տարբեր գյուղխորհուրդներում:

Այսպիսով, Աբխազական ԻԽՍՀ հայ ազգաբնակչությունն ոչ միայն մեծաթիվ էր, այլ նաև որոշ գավառներում էթնիկ խմբերի մեջ առաջինն էր իր թվով, բնակվում էր հոծ զանգվածով և ամբողջությամբ տիրապետում իր ազգային լեզվին:

1926 թ. մարդահամարը տալիս է նաև Վրացական ԽՍՀ-ում բնակվող, սակայն օտարախապտակ հայության (հիմնականում թուրքա-խապտակ) քանակի և տեղաբաշխման վերաբերյալ հետաքրքիր տվյալներ:

Վրացական ԽՍՀ-ում բնակվող 3.872 օտարախապտակ հայ քաղաքացիների գերակշիռ մասը՝ 2.323 մարդ, բնակվում էր Աբխազական ԽՍՀ-ում:

Աջարստանի ԻԽՍՀ: Աջարստանի ԻԽՍՀ-ում բնակվող 10.476 հայերը կազմում էին Վրացական ԽՍՀ ամբողջ հայության 3,4%-ը: Ի տարբերություն Աբխազական ԻԽՍՀ հայ ազգաբնակչության, այստեղ

հայության 97,8 %-ը քաղաքաբնակ էր, և, հիմնականում, կենտրոնացած Բաթում քաղաքում կազմելով քաղաքի բնակչության 21,1%-ը (10.233 հայ): Հայերենը մայրենի լեզու էր Աջարստանի ԻԽՍՀ հայ ազգաբնակչության 96,8 %-ի համար: Գրագետ էր հայության 40,4 %-ը, իսկ վերջիններիս 79 %-ը գրագետ էր նաև իր ազգային լեզվով: Փոքրաթիվ գյուղական հայությունը հիմնականում բնակվում էր Օրթա-Բաթումի գյուղական շրջանում, ուր նրանց թիվը 138 մարդ էր: Քոբուլեթ, Խուլո, Աջարիս-Ցխալսկի, Կեդի գավառներում միասին բնակվում էին 96 հայեր: 1926 թ. մարդահամարը գրանցել է նաև Աջարստանի ԻԽՍՀ-ում բնակվող 625 հեմշինների (համշենահայեր), որոնց հիմնական մասը՝ 540 մարդ, բնակվում էր Բաթումի գավառի Յոնիո (Գոնիո) գյուղական շրջանում:

1926 թ. մարդահամարի տվյալներով Աջարստանի ԻԽՍՀ-ում բնակվում էին օտարախապտակ 343 հայ քաղաքացիներ:

Հարավ-Օսական ԻՍ: Հարավ-Օսական ԻՍ-ում բնակվող 1.374 հայերը կենտրոնացած էին Ցխինվալի քաղաքում և Ախալգորիի գյուղական շրջանում: Ցխինվալիում բնակվող 877 հայերը կազմում էին քաղաքի ամբողջ բնակչության 15%-ը, բայց հայերենը մայրենի լեզու էր նրանցից ընդամենը 101-ի համար: Ախալգորիի շրջանում բնակվող 504 հայ գյուղաբնակները կազմում էին շրջանի բնակչության 6,4%-ը, իսկ նրանցից հայերենը մայրենի լեզու էր համարում միայն 1-ը: Հարավ-Օսական ԻՍ-ում հայերենին, որպես մայրենի լեզվի, տիրապետում էր հայության ընդամենը 9,1%-ը, որը ամենացածր ցուցանիշներից մեկն էր ամբողջ Վրացական ԽՍՀ-ում: Հայ ազգաբնակչության ճնշող մեծամասնության 89,5%-ի համար, մայրենի լեզու էր հանդիսանում վրացերենը: Գրագետ էր ինքնավար մարզի հայության 61 %-ը, որոնց միայն 15,7 %-ն էր գրագետ իր ազգային լեզվով:

Այսպիսով, 1920-ական թթ. Վրացական ԽՍՀ-ում բնակվող հայությունն ամենամեծն էր իր թվով (ՀԽՍՀ-ից հետո) միութենական հանրապետությունների մեջ և այդ ցուցանիշով իր դիրքերը պահպանեց նաև 1930-ական թթ.:

1937 թվականի մարդահամարն արձանագրեց Վրացական ԽՍՀ-ում հայ ազգաբնակչության թվի աճ: Վրացական ԽՍՀ հայության թիվն այս մարդահամարով կազմում էր 395.796 մարդ: 1930-ական թթ. Վրացական ԽՍՀ հայ ազգաբնակչության քանակի և տեղաբաշխման վերաբերյալ ընդգրկուն և ամփոփ տվյալներ են գրանցվել 1939 թ. մարդահամարով:

Վրացական ԽՍՀ 415.013 հայերից ինքնավար միավորներում Աբ-



Հայերը միութենական հանրապետություններում ըստ 1939 թ. մարդահամարի տվյալների<sup>128</sup>

	ամբողջը	բնակչության մեջ %-ով	քաղաքա-բնակ	գյուղա-բնակ
1. Ռուսիայի որից՝	218.156	0,2	135.850	82.306
բ. Մոսկվա	13.682	0,3	13.682	-
2. Թուրքմենական խՍՀ որից՝	15.996	1,3	15.663	333
բ. Աշխաբադ	8336	6,6	8.336	-
3. Ուզբեկական խՍՀ որից՝	20.394	0,3	18.337	2057
բ. Տաշքենդ	8213	1,4	8.213	-
4. Վրացական խՍՀ որից՝	415.013	11,7	196.784	218.229
բ. Թբիլիսի	137.331	26,4	137.331	-
5. Ադրբեջանական խՍՀ որից՝	388.025	12,1	171.101	216.924
բ. Բաքու	118.703	14,7	118.703	-
6. Ղազախստանի խՍՀ, Հարավ-Ղազախստանի մարզ	2.195	0,3	737	1458
7. Տաջիկական խՍՀ և Ստալինաբադ (Դուշանբե)	627	0,8	627	-

Հայկական խՍՀ-ից բացի, ստվար հայ բնակչություն ունեցող հանրապետություններ էին Վրացական խՍՀ-ն, Ադրբեջանական խՍՀ-ն, Ռուսիայի, Ուզբեկական խՍՀ-ն և Թուրքմենական խՍՀ-ն: 1939 թ. մարդահամարը վերջինն էր 1930-ական թթ. ու նախապատերազմական շրջանում, որի ավարտից հետո ամբողջ խՍՀ-ում, նրա առանձին հանրապետությունների էթնիկ ու ազգային խմբերի մեջ տեղ գտան ժողովրդագրական լուրջ փոփոխություններ:

Հայրենական պատերազմում հայության վիթխարի ներդրումը, հարյուր հազարավոր մարդկային կորուստները, սուլը և համաճարակները, Հյուսիսային Կովկասից և Դրիմից հազարավոր հայերի աքսորը Ղազախստան, Ալթայ և Սիբիր, լուրջ փոփոխություններ մտցրեցին միութենական հանրապետությունների հայության թվաքանակի և տեղաբաշխման մեջ: Միութենական հանրապետությունների հայ ազգաբնակչությունն աճեց նաև հետպատերազմյան շրջանում և գործում մասնակցություն ունեցավ այդ հանրապետությունների պետական, տնտեսական, գիտական-մշակութային և կյանքի մյուս ոլորտներում:

խազական ԻԽՍՀ-ում, բնակվում էին 49.705 հայեր (15.9 %), որոնցից քաղաքաբնակ էին 6.607-ը, գյուղաբնակ՝ 43.098-ը, Աջարական ԻԽՍՀ-ում 14.085 հայ (7,0 %), որից քաղաքաբնակ էին 12.159-ը, գյուղաբնակ 1.926-ը:

1939 թ. մարդահամարով Վրացական խՍՀ հայ ազգաբնակչության 47.4%-ը բնակվում էր քաղաքներում, իսկ միայն Թբիլիսիում Վրացական խՍՀ ամբողջ հայության 33 %-ը: Այսպիսով, 1920-30-ական թթ., ՀԽՍՀ-ից հետո, Վրացական խՍՀ-ն շարունակում էր մնալ ամենախայարնակ միութենական հանրապետությունը խՍՀ-ում:

1920-30-ական թթ. խՍՀ-ում անցկացված մարդահամարներով ճշգրտվեց երկու աշխարհամարտերի միջև ընկած ժամանակահատվածում հայության արևելյան հատվածի իրական թվակազմը, տեղաբաշխման շրջաններն ու այլ գործընթացներ:

Առաջին աշխարհամարտի տարիներին հայության ցեղասպանությունն ու տեղահանումը, հարյուր հազարավոր հայ գաղթականության դեգերումները Անդրկովկասի և Ռուսաստանի տարբեր անկյուններում, քաղաքացիական պատերազմը, բռնաճնշումները, սովն ու աքսորը խՍՀ-ում լրջորեն անդրադարձան հայ էթնիկ զանգվածի թվակազմի և տեղաբաշխման, այլ գործընթացների վրա: 1920-1930-ական թթ. խՍՀ-ում անցկացված մարդահամարները, դրանց արդյունքների որոշակի վերապահումով, հնարավորություն են ընձեռել վեր հանելու հայության արևելյան հատվածի թիվն, սեռը, տարիքային կազմը, տեղաբաշխումը, գրագիտության աստիճանն ու այլ գործընթացներ, որը խիստ կարևորություն է ներկայացնում:

Արդեն, 1939 թ. մարդահամարով, ամբողջ խՍՀ-ում բնակվում էին 2.152.860 հայեր, որոնք խՍՀ էթնիկ խմբերի մեջ իրենց թվով գրավում էին 10-րդ տեղը: Այս մարդահամարով, միայն Հայկական խՍՀ-ում բնակվում էր 1.061.997 հայ, այսինքն, խՍՀ ամբողջ հայ ազգաբնակչության ընդամենը 49.33 %-ը, իսկ մյուս միութենական հանրապետություններում միասին 1.090.863 հայ կամ 50.67 %-ը:

Այսպիսով, դեռևս 1939 թ. խՍՀ հայության կեսից ավելին բնակվում էր Հայկական խՍՀ սահմաններից դուրս: խՍՀ հայ ազգաբնակչությունը 1939 թ. կազմում էր Միության ամբողջ բնակչության 1.26 %-ը և, առանց բացառության, բնակվում էր միութենական բոլոր հանրապետություններում:

<sup>128</sup> Всесоюзная перепись населения 1939 года. Основные итоги. М. 1992, с. 59, 71-73, 75, 78.

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ԽՈՐՀՐԴԱՅԱՅ ՀԱՍԱՅՆՔՆԵՐՈՒՄ

#### 3.1. Հասարակական կյանքը

Խորհրդային հասարակարգի պայմաններում, երբ ազգային կյանքի ցանկացած դրսևորում բացառվում էր, ԽՍՀՄ տարբեր անկյուններում բնակվող հայության ազգային կյանքը մարեց, սակայն հայ հասարակական կյանքի ակտիվությունը 1920-ական թթ. դեռևս նկատելի էր:

Հասարակական կյանքը խորհրդահայ համայնքներում 1920-1930-ական թթ. որոշակիորեն պայմանավորված էր 1921 թ. հիմնված Հայաստանի Օգոստոսյան Կոմիտեի գործունեությամբ, որը լայնորեն ներկայացված էր խորհրդային տարբեր հանրապետություններում: ՀՕԿ-ի գործունեությունը նպատակաուղղված էր կազմակերպելու Միության տարածքում գոյություն ունեցող բազմաթիվ հայ համայնքների աջակցությունը Խորհրդային Հայաստանի վերաշինության գործին: ՀՕԿ-ի տասնյակ մասնաճյուղեր սփռված էին ինչպես Ռես ՍՅ-ում, Ուկրաինայում, այնպես էլ Անդրկովկասի և Միջին Ասիայի հայաշատ կենտրոններում:

ՀՕԿ-ի մասնաճյուղերը հիմնադրվել են ոչ միաժամանակ և գործել ոչ միևնույն արդյունավետությամբ: Այսպես, ՀՕԿ-ի Մոսկվայի կոմիտեն հիմնվել է 1922 թ., իսկ 1925 թ. հոկտեմբերի դրությամբ բազմամարդ կառույցներից մեկն էր իր 567 անդամներով<sup>129</sup>:

ԽՍՀՄ տարբեր հանրապետություններում գործող ՀՕԿ-ի կառույցները լուրջ նպաստ բերեցին Հայաստանում նախ սովի հաղթահարմանը, ապա՝ երկրի տնտեսության վերականգնմանը՝ կառուցվեցին ջրանցքներ, ձեռնարկություններ, իր ականացվեցին ճահիճների չորացման աշխատանքներ, առողջապահական ձեռնարկներ ևն: ՀՕԿ-ի գործունեության առաջին շրջանում, խորհրդահայ տարբեր համայնքներում, Հայաստանի օգտին կատարվող դրամահավաքներն ու այլ միջոցառումներ, չէին տալիս ցանկալի արդյունք: Խորհրդահայ համայնքների ազգակիցներին առավել ոգևորելու համար նկարահանվեց «Խորհրդային Հայաստան» ֆիլմը, ուր ներկայացվում էին Հայաստանի ձեռքբերումները, երկրի կոաակցական-պետական դե-

կավարությունը ևն, սակայն ֆիլմը անհաջողություն ունեցավ. «Յերեք հայաշատ գաղութները՝ Մոսկվան, Նախիջևան-Ռոստովը և Արմավիրը ապացուցեցին, վոր Կ. Վարչության հույսերը ապարդյուն են յեղել: Չնայած ռեկլամի բոլոր միջոցները գործադրելուն, հատուկ հրավիրված ընդհանուր ժողովներում ագիտացիա անելուն, տեղական ՀՕԿ-երի աջակցության ու յեռանդուն աշխատանքին, պատկերը մինչև այժմս վոչ մի տեղ լայն հաջողություն չի գտնում»<sup>130</sup>: Մոսկվայում ֆիլմի ցուցադրության արդյունքը բերել էր ընդամենը 134 ռ. օգուտ, իսկ Ռոստով-Նախիջևանում, իրենց շրջակա 5 հայկական գյուղերով էլ ավելի քիչ:

Հարկ է նշել, որ Խորհրդային Հայաստանից ՀՕԿ-ի մասնաճյուղերին առաքվում էին Հայաստանի քարտեզներ, պետնիշեր և այլն, որոնց վաճառքից ստացվող արդյունքը նույնպես ուղղվում էր ՀՕԿ-ի ծրագրերին Հայաստանում<sup>131</sup>:

ՀՕԿ-ի մասնաճյուղերի հիմնադրումից որոշ ժամանակ անց, դրանք սկսեցին առավել արդյունավետ գործել՝ մեծ նպաստ բերելով հայրենիքի վերաշինությանը. «...Խորիք. Հայ. Օգն. Կոկանդի Կոմիտեն հանդիսավորությամբ 1925 թ. ապրիլի 1-ին բացեց խանութ, «Հօկտորգ» անունով... ներկա պահին Կոմիտեն ձեռք է բերել 35.000 ռուբլու ապրանքներ...»<sup>132</sup>: Կոկանդի Կոմիտեն Կենտրոնական Վարչությանը ուղղված գրություններում շեշտում էր տեղի հայության պատրաստակամությունը հայրենիքին ձեռք մեկնելու գործում:

Հետաքրքրական է, որ ՀՕԿ-ի տարբեր մասնաճյուղերում տեղական կառույցները իրավասու էին կրթամշակութային և այլ ձեռնարկների վրա ծախսել իրենց հավաքած գումարների 25 %-ը: Այս գումարների հիմնական մասն ուղղվում էր համայնքներում դպրոցների, մամուլի օրգանների, ակումբների, ընթերցարանների պահպանմանը:

Հատկանշական է, որ 1926 թ. ՀՕԿ-ի մասնաճյուղերի զգալի մասը փակվեց. «1926 թվականի սկզբներին, երբ արդեն ՀՕԿ-ը լայնորեն իր կազմակերպություններն էր տարածել արտասահմանյան հայ գաղութներում, երբ արդեն երկրի բնակչությունը բնավ կարիք չուներ ՍՍՀՄ-ում գոյություն ունեցող մասնաճյուղերից ստացվող աննշան օժանդակությունների, կենտրոնական վարչությունը որոշեց դադարեցնել նրանց գործունեությունը»<sup>133</sup>: ՀՕԿ-ի մասնաճյուղերից մի

<sup>129</sup> Նույն տեղում, գ. 361, թ. 19:

<sup>131</sup> Նույն տեղում, գ. 347, թ. 40:

<sup>132</sup> Նույն տեղում, թ. 51:

<sup>133</sup> Մելիքսեթյան Հ., Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915-1940 թթ.), Ե., 1975, էջ 249:

քանիսն ուղղակիորեն դիմեցին Կենտրոնական Վարչությանը լուծարման որոշումը ժամանակավորապես չեղյալ համարելու համար, քանի որ դրանով վտանգվում էին իրենց համայնքներում իրականացվող կրթամշակութային ծրագրերը: Այդպիսիներից էր Լուզանսկի մասնաճյուղը, որն իր հերթին ենթակա էր խարկովի գրասենյակին. «Որպեսզի այդ սկսված գործը (կրթամշակութային-Ա. Գ.) շարունակվի նպատակ կար դրված ԳՕԿ-ի կազմակերպությունը փոխարինել տեղականով, ինչպիսին է խարկովի Դայակական գաղութի վարչությունը: Իրականությունից պարզվեց վոր գաղութային կազմակերպությունը հաստատել տալու համար մի առժամանակի պետք կա...»<sup>134</sup>:

ԳՕԿ-ի գործունեությունը խորհրդահայ համայնքներում առանձին ուսումնասիրության թեմա է, ուստի չանդարդառնալով կառույցի գործունեության շատ կողմերի, հարկ է ընդգծել նրա խաղացած ուրույն դերն ինչպես Դայաստանի վերաշինության գործին համայնքների մասնակցությանը, այնպես էլ համայնքներ-Դայաստան հարաբերությունները կամրջելու գործում:

Խորհրդահայ համայնքների հասարակական կյանքի իրողությունները տարբեր կենտրոններում տարբեր դրսևորումներ ունեցան:

Ղրիմի հայության շրջանում 1920-ական թթ. հանդես բերված հասարակական ակտիվությունն, անկուսակցական շրջանակների համագումար-քննարկումները վերաբերում էին երկրամասի հայության կյանքի ամենատարբեր ոլորտներին: Այսպես, առաջին համադրիմյան հայկական անկուսակցական համագումարը տեղի ունեցավ 1926 թ. հունվարի 23-26-ը, որի ավարտին ընդունվեցին համագումարի բանաձևերը: Գամագումարի ընդունած «ԽՍՀՄ միջազգային դրության, կոմկուսի և խորհրդային իշխանության խնդիրների մասին գյուղում» բանաձևում գոհունակությամբ նշվել է արտադրողական ուժերի լիակատար զարգացման փաստը ԽՍՀՄ-ում, որի շնորհիվ ներքին և արտաքին հակահեղափոխություն դեմ պայքարում, երկրի տնտեսության և քաղաքական դաշտերում արձանագրվել էին հաղթանակներ:

Գաջորդ բանաձևը «Կոմունիստական կուսակցության և խորհրդային իշխանության խնդիրների մասին ազգային փոքրամասնությունների մեջ տարվող աշխատանքների վերաբերմամբ» առանձնահատուկ կերպով ընդգծում էր խորհրդային իշխանության քաղաքականությունն ազգային հարցի և ազգային փոքրամասնու-

թյունների խնդիրների լուծման ուղղությամբ, որը զարգացման լայն հնարավորություններ էր ընձեռել փոքր ազգերին. «Խորհրդային քաղաքականությունը ազգային փոքրամասնությունների վերաբերմամբ հիմնվում է այն ձգտումի վրա, վոր վոչնչացնում է մեծ ազգերի ճնշումն ու տիրակալությունը... փոխում է ազգային փոխհարաբերությունները...»: Բանաձևում նշվում էր երկրի տնտեսության համար կարևորություն ունեցող «երեսներս դեպի գյուղ» նոր նշանաբանի մասին և գյուղատնտեսության մեջ հատուկ մշակույթներով զբաղված հայ գյուղացիության դերի աստիճանական բարձրացման մասին, որի համար անհրաժեշտ էր դիտվում. «Գրավել հայ ազգաբնակչությանը դեպի խորհրդային գործոն շինարարության, վերընտրական պայքարի մեջ ուշադրության առնել գյուղխորհուրդների մեջ գրավելու այն վայրերում, ուր նրանք կազմում են փոքրամասնություն, հեշտացնելով գյուղխորհրդի մեջ նրանց ներկայացուցչությունը: Գամագումարը շեշտում է հայ գեղջուկ-կնոջ մասնակցության բացակայությունը հասարակական և պետական կյանքում և ամբողջ ազգաբնակչության ուշադրությունն է հրավիրում այդ պակասության վերացման անհրաժեշտության վրա, նրանց հասարակական կյանքի մեջ լայն չափերով գրավելու ճանապարհով»<sup>135</sup>: Այսպիսով, համագումարի այս բանաձևում հստակորեն մատնանշվում էին Ղրիմի գյուղաբնակ հայությանը հասարակական ակտիվության մղելու, այդ դաշտում հայ կնոջ դերի բարձրացման անհրաժեշտությունը: Բանաձևի հաջորդ կետերում ողջունվում էր ազգային գյուղխորհուրդների կազմակերպումը, քանի որ այն ապահովում էր ոչ միայն մայրենի լեզվով ուսուցումը դպրոցներում ազգային փոքրամասնությունների համար, այլև մայրենի լեզվով գործավարություն, հասարակական-քաղաքական և մշակութային աշխատանքների կազմակերպում և նույնիսկ դատավարություն: Լուրջ հնարավորություններ էին բացվում ոչ միայն գյուղական, այլ նաև քաղաքաբնակ ղրիմահայերի համար տարբեր հասարակական և պետական հաստատություններում ներգրավվելու ուղղությամբ:

Գամագումարի ընդունած 3-րդ բանաձևը «Գողաշինարարությունը և գյուղատնտեսական հարկը Ղրիմում», հիմնականում շոշափում էր Ղրիմի հայ գյուղացիական տնտեսությունների հիմնախնդիրները, բարեկեցության և լուսավորության հարցեր: Գատկանշական է, որ վերոհիշյալ ժամանակահատվածում Ղրիմի հայ գյուղացիությունը

<sup>134</sup> ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 366, ք. 34:

<sup>135</sup> Резолюции первой Всекрымской армянской беспартийной конференции (23-26 янв. 1926 г.), Симферополь, 1926, с. 23.

կազմում էր երկրամասի ամբողջ գյուղացիական տնտեսությունների մի աննշան թիվը՝ ընդամենը 1,25 %-ը: Համագումարը փաստեց նաև Ղրիմի հայ գյուղացիական տնտեսությունների ոչ այնքան բարվոք իրավիճակը և խոչընդոտները հաղթահարելուն միտված անհրաժեշտ գործողությունները: Ղրիմի հայ գյուղը այս խնդիրներով հանդերձ, տնտեսական աճ ունեցել էր, մասնավորապես իր ավանդը ներդնելով գյուղխորհուրդների և համագործակցությունների (կոոպերացիաների) մեջ: Առաջին Համադրիմյան հայկական անկուսակցական համագումարը հայ գյուղի գյուղատնտեսության զարգացման տեմպերի արագացման համար անհրաժեշտ էր գտնում. «...միջոցություն հարուցանել Ղրիմի պետական մարմինների առաջ պետական ֆոնդից հող հատկացնելու և նրա վրա վերաբնակեցնելու Ղրիմի զանազան գյուղերից հայ գյուղացիներին, վորոնք ներկայումս աշխատում են միմյանցից անջատ, վոր հայ գյուղին հնարավորություն կտա անցնելու տնտեսությունը վարելու լավագույն ձևերին»<sup>136</sup>: Հատուկ ընդգծվում էր Ղրիմում 1925 թ. կիրառություն մեջ մտցված միասնական գյուղատնտեսական հարկի շահավետությունը, որն արտադրողականության բարձրացման գրավականն էր:

Բանաձևում առաջարկվեց նաև կարգավորել քաղաքամերձ հողերի վարձակալության պայմանները, որը լայն հնարավորություններ էր բացում Ղրիմի քաղաքաբնակ հայության համար. «Ղրիմի մի շարք քաղաքներում հայ ազգաբնակչությունը, որը թողել է գյուղը մի շարք պատճառներով և որոնք ցանկանում են ներկայումս վերադառնալ յերկրագործության... Համագումարը անհրաժեշտ է համարում բավարարելու այդ ազգաբնակչության աշխատավոր մասի խնդիրը և խնդրել Ղրիմի կառավարման մարմիններին աշխատավոր բնակչության այդ մասի համար հատկացնել հողեր պետական ազատ ֆոնդից...»<sup>137</sup>:

Համագումարի մյուս բանաձևը վերաբերում էր կոոպերացիաների կազմակերպման հարցերին, որի առնչությամբ հայ գյուղացիության շրջանում անելիքների մեծ դաշտ էր առկա. «...համագումարը գտնում է, որ համագործակցական կազմակերպությունները միջոցներ պետք է ձեռք առնեն հայ գյուղացիության աշխատավոր լայն զանգվածները մասնակից անելու համագործակցություններին և հատուկ ուշադրություն դարձնել աշխատավորական կոլլեկտիվների կազմակերպման

վրա»<sup>138</sup>:

Հայ միայնակ տնայնագործ արտադրողներին, առաջընթացի ապահովման համար, առաջարկվեց միավորվել. «Տնայնագործական արդյունաբերությունը զարգացնելու և ամրապնդելու նպատակով, համագումարը անհրաժեշտ է համարում առաջարկել բոլոր հայ տնայնագործներին միանալ արհեստավորական արտելների մեջ»<sup>139</sup>:

Այսպիսի ծրագրերի իրականացումը կարող էր բերել գյուղատնտեսության և արտադրության մեջ ներգրավված հայ արտադրողների բարգավաճմանը:

Համագումարի աշխատանքները և ընդունված բանաձևերը ամբողջական պատկերացում են տալիս Ղրիմի հայության տնտեսական և հասարակական-մշակութային կյանքի խնդիրներին, նախանշում էին առաջընթացի ուղիները:

Համադրիմյան հայկական անկուսակցական առաջին համագումարը լուրջ իրադարձություն էր Ղրիմի հայության կյանքում, առավել ևս, որ համագումարն անդրադարձ է կատարել այնպիսի մի կարևոր հարցի, ինչպիսին էր նախկին թուրքահպատակ հայերի խնդիրը: Համագումարին, նախկին թուրքահպատակ հայերին, ԽՍՀՄ քաղաքացիություն ստանալու մասին զեկուցումով հանդես է եկել Կենտրոնական Ադմինիստրատիվ Վարչության (ԱԿՎ) ներկայացուցիչը: Առաջին աշխարհամարտի և Հայոց ցեղասպանության հետևանքով Ղրիմի տարածքում հանգրվանած բազմահազար հայ փախստականների ճակատագիրն առկախված էր, որի լուծման ուղղությամբ էլ համագումարն ունեցավ կարևոր նշանակություն. «Առաջին Համադրիմյան Հայկական անկուսակցական համագումարը, ուշադրության առնելով Ղրիմի հայ բնակչության մեջ խոշոր թվով թրքահպատակների և նույնպես Թյուրքիայից յեկած փախստականների ներկայությունը, վորոնք չունին ազգային անձնագրեր և վորոնք զուրկ են այդպիսիները ստանալու հնարավորությունից, վորի հետևանքով արգելքի յե հանդիպում նրանց Խորհրդային Սոցիալիստական հանրապետությունների քաղաքացի գրվելը, վորոշում է կայացնում խնդրել Ղրիմի Կենտրոնական գործադիր կոմիտեյին միջոցներ ձեռք առնել, վորպեսզի հայ աշխատավորների ԽՍՀՄ քաղաքացի գրվելը դյուրացվի, գործադրելով այդ միջոցը ըստ կարելիվոյն ամենակարճ ժամանակամիջոցում»<sup>140</sup>: Դժվար է, թերագնահատել այս որոշման

<sup>136</sup> Նույն տեղում, էջ 26:

<sup>137</sup> Նույն տեղում, էջ 26-27:

<sup>138</sup> Նույն տեղում, էջ 28-29:

<sup>139</sup> Նույն տեղում, էջ 29:

<sup>140</sup> Նույն տեղում, էջ 36:

կարևորությունը, առավել ևս, որ Միության տարբեր շրջաններում նման խնդիրներ ունեցող բազմահազար հայության կար, որոնց նույն խնդիրների վերաբերյալ տվյալներն ուղղակի բացակայում են:

Միության հայաբնակ մյուս տարածաշրջաններում հայ հասարակական կյանքը ևս որոշակի աշխուժացումից հետո սկսեց մարել:

Այսպես, առավել դժվարին հասարակական-համայնքային կյանքի պայմաններ ունեցող տարածաշրջաններից էր Միջին Ասիան: Խորհրդային իշխանության առաջին տարիներին, այստեղ ևս մյուս տարածաշրջանների նման տեղական կուսակցական կազմակերպությունների կազմում գործել են հայկական սեկցիաներ, որոնց խնդիրն էր հայ բնակչության շրջանում ազգային-մշակութային աշխատանք տանելը, սակայն ազգային փոքրամասնությունների սովետիզացման շրջանակներում<sup>141</sup>: Այս քաղաքականությունն ընդհանրական կերպով տարվում էր ԽՍՀՄ բոլոր տարածաշրջաններում և բոլոր ազգային փոքրամասնությունների նկատմամբ:

Ազգային փոքրամասնությունների թույլ փորձերը, համախմբվելու և ազգային կյանքին զարկ տալու, դատապարտված էին ձախողման, քանի որ անհամատեղելի էին լեռնյան ազգային քաղաքականության սկզբունքների հետ:

Միջին Ասիայի հայության շրջանում 1920-ական թթ. սկզբին, հասարակական կյանքն աստիճանաբար մարեց. «Թուրքեստանում բացահայտ խտրականության են ենթարկվել, նախևառաջ, ոչ ռուս եվրոպական ազգային փոքրամասնությունը»<sup>142</sup>:

Թուրքեստանի ազգային փոքրամասնությունների միակ համագումարում 1926 թ., փոքրաթիվ հայ պատվիրակներն անօգուտ փորձեր ձեռնարկեցին համագումարի ուշադրությունը հրավիրել իրենց համայնքի կարիքներին, սակայն այն առավելաբար նվիրվեց մահմեդական փոքրամասնությունների (հիմն. իրանցի) խնդիրներին: Համագումարին անգամ չէին հրավիրվել եվրոպական մյուս ազգային փոքրամասնությունները՝ լեհերը, գերմանացիները, վրացիները և այլն: Պետական ապարատում ակնհայտորեն ընդգրկվում էին ռուս և բնիկ ազգությունների ներկայացուցիչներ, որը ևս խտրական քաղաքականության դրսևորում էր: Այսպիսով, ազգային կազմակերպությունների ու հիմնարկների վերացման, հայ եկեղեցու և դպրոցների փակման, համայնքների անվանի ներկայացուցիչների նկատմամբ բռնաճնշումների հետևանքով Միջին Ասիայի հայ համայնքների

ազգային կյանքը ընդհատվեց՝ կորցնելով իր դեմքը:

ԽՍՀՄ ազգային շրջաններում փոքրամասնությունների խնդիրները վեր հանող համապատասխան կուսակցիաների աշխատանքների արդյունավետությունը ցածր էր, թեև նրանք ընդգրկված էին տվյալ տարածաշրջանային հասարակական քաղաքական գործընթացների մեջ:

ԽՍՀՄ ամենաստվար հայ բնակչությունն ունեցող երկրամասերից Հյուսիս-Կովկասյան տարածաշրջանային կուսակազմակերպության կազմում գործել է նաև հայկական սեկցիա: Ազգային փոքրամասնությունների Հյուսիս-Կովկասյան երկրային հրատարակչությունում կազմակերպվել է հայկական բաժանմունք, որտեղ հայերենով տպագրվել են համագումարներին և ազգային սեկցիաներին վերաբերող նյութերը:

Այսպես, հրատարակչությունը 1930 թ. լույս է ընծայում Հյուսիս-Կովկասյան երկրային կուսակազմակերպության 6-րդ համագումարի որոշումներն ու բանաձևերը, որոնք արժարժում էին նաև երկրամասի ազգային փոքրամասնությունների շրջանում անհրաժեշտ աշխատանքները: «Կոնֆերենցիան պարտավորեցնում է Յերկրկումին հատուկ մշակել կուլտուրական շինարարության հարցը ազգային մարզերում...»<sup>143</sup>: Ազգային փոքրամասնությունների շրջանում ազգայնականության և թեքումների դեմ պայքարի նպատակով առաջնային խնդիր համագումարը դիտում էր մամուլի դերի մեծացումը՝ ազգային կադրեր պատրաստելու և բանօլյուղթթակցական շարժմանը զարկ տալու միջոցով: Ազգային հասարակական կյանքի մասին խոսելն ավելորդ էր, առավել ևս, որ հստակորեն նշվում էր նույնիսկ ազգային կուսակցիաների բուլշևիկացման, այլ կերպ ասած՝ ամբողջական ծուլման մասին:

Ռուսական հեղափոխությունը, վերացնելով ինքնակալությունը, իրականում ձևավորեց նոր կայսրություն և կուսակցական-պետական բյուրոկրատիայի դիկտատուրա: Ինտերնացիոնալիզմի գաղափարների ներքո բացառվեց ազգային կյանքի դրսևորումը, ռուսիֆիկացման գործընթացի նոր փուլ սկսվեց: Արդեն 1920-1930-ական թթ. վերջնական ձևավորում ստացած պետական պատժիչ մեքենան անօրինակ բռնությունների անցավ նույնիսկ կրոնական և ազգային փոքրիկ դրսևորումների նկատմամբ: Այսպիսի պայմաններում ազգային դիմագծի պահպանումը դառնում էր անհնարին, ազգային կյանքով և

<sup>141</sup> Григорьянц А., ցվ. աշխ., էջ 28:

<sup>142</sup> Նույն տեղում:

<sup>143</sup> Հանկոմկուսի (ք) Հյուսիսային Կովկասի Յերկրային կազմակերպության 6-րդ կոնֆերենցիայի բանաձևվերն ու վորոշումները, Ռոստով Դ-Վ., 1930, էջ 13:

համախումբ ապրելու ձգտումը՝ ազգայնականության դրսևորում:

Կուսակցության Կուբան-Չերնոմորյան մարզկոմի կազմում ազգային փոքրամասնությունների ենթաբաժինը ձևավորվել է 1920 թ. ապրիլին. «Ի սկզբանե այն բաղկացած էր չորս սեկցիաներից- հայկական, հունական, թյուրքական և Արևմուտքի ժողովուրդների... Հայկական կոմունիստական սեկցիաներ կազմակերպվեցին նաև Նովոռոսիյսկի, Եկատերինոդարի (Կրասնոդար) և Արմավիրի կուսակցական կոմիտեներին կից»<sup>144</sup>: Նույն 1920 թ. ապրիլին Մարզկոմի ժողովրդական լուսավորության բաժնի ազգային փոքրամասնությունների ենթաբաժնի կազմում կազմակերպվում է հայկական սեկցիա: Ազգային սեկցիաների հիմնական խնդիրն էր նկատի առնել տվյալ ազգային փոքրամասնության կուլտուր-կենցաղային առանձնահատկությունները և բարձրացնել աշխատավոր զանգվածների ինքնագիտակցությունը, նպաստել խորհրդային իշխանության աջակցման գործին, ազգային լեզվով ներկայացնել, տեղեկացնել կուսակցության քաղաքականությունը անենատարբեր ոլորտներում: Կուսակցության Չերնոմորիեի հայկական սեկցիան իր գոյության առաջին իսկ ամսում մի շարք հանդիպումներ և դասախոսություններ է իրականացրել հայության շրջանում՝ ծանոթացնելով նրանց խորհրդային պետության հասարակական-քաղաքական կյանքին<sup>145</sup>: Կուսակցության մարզկոմի հաշվետվություններում ընդգծվում էր երկրամասի հայության դրական տրամադրվածության մասին խորհրդային իշխանության և նրա կիրառած քաղաքականության հանդեպ. «1921 թ. նոյեմբերին կուսակցության կուբան-չերնոմորյան մարզկոմը հայտնում էր, որ հայկական զանգվածները բարեհաջող են տրամադրված նոր տնտեսական քաղաքականության միջոցառումների նկատմամբ...»<sup>146</sup>: Հայկական սեկցիայի գործունեությունը հայության շրջանում տնտեսական և մշակութային ձեռնարկներ իրականացնելիս և քարոզելու առումով բավական մեծ էր: Կուբան-Չերնոմորիեի հայության հասարակական կյանքում կարևոր նշանակություն ուներ 1921 թ. մայիսին այստեղ անցկացված մարզի ազգային փոքրամասնությունների երկրորդ կուսակցական կոնֆերանսը, որը մատնանշեց ազգային սեկցիաների մշակութային-տնտեսական հիմնական խնդիրները:

Այսպիսով, խորհրդային իշխանությունը կուսակցության ազգային

սեկցիաների միջոցով խթանում էր երկրում ՆԵՊ-ի քաղաքականության սկզբունքների ժողովրդականությանը և կիրառմանը: Խորհրդային պետության առաջ ծառայած տնտեսական ծանր կացության հաղթահարումը կարևոր և օրապահանջ խնդիր էր, որի շուտափույթ կարգավորման համար մեծ ջանքեր էին թափվում: Ազգային քաղաքականության ասպարեզում խորհրդային իշխանության նոր մտտեցումներն ազգային փոքրամասնությունների շրջանում քարոզելու, լայն զանգվածների՝ այդ նոր գծի նկատմամբ անվստահությունը հաղթահարելու և կողմնորոշելու, խորհուրդների մեջ լայնորեն ներգրավելու, քաղաքացիական ինքնագիտակցության բարձրացման համար ՀամԿԲ/Կ) XII-րդ համագումարի այս որոշումներն ակտիվորեն կյանքի էին կոչվում ազգային փոքրամասնությունների կուսակցիաների միջոցով:

Կուսակցության Սոչիի հայկական սեկցիան լայն աշխատանք ծավալեց օկրուգի մեծաթիվ հայ գյուղացիությանը կոոպերատիվների և արտելների մեջ ներգրավելու ուղղությամբ. «Չերնոմորյան օկրուգում առաջին հայկական հողագործական արտելները կազմակերպվեցին 1920 թ. վերջին: Օկրուգի հայ բնակչության շրջանում կոոպերացիաների կազմակերպման հիմնական ձևը ծխախոտի համատեղ աճեցման, մշակման և հավաքելու ընկերակցություններ էին: Այն շրջաններում, որտեղ բանջարանոցապահությունն ու այգեգործությունը առաջնակարգ տեղ էին զբաղեցնում հայերի տնտեսության մեջ, կազմակերպվեցին հողագործական-բանջարանոցային, այգեգործական-ծխախոտագործական և ուրիշ միավորումներ»<sup>147</sup>: Այսպես, Չերնոմորիեի օկրուգում հայկական ծխախոտագործական առաջին ընկերակցությունները հիմնվել են 1921 թ., նախ՝ «Վարդաշեն»-ը, ապա «Լույս», «Արշալույս», «Կարմիր մաճկալ» և այլն, որոնք սոցիալական կազմով աղքատ և միջակ գյուղացի հողօգտագործողներ էին: 1925 թ. Չերնոմորիեի օկրուգում հիմնված ծխախոտագործների միության ազգային կազմում հայերը մեծամասնություն ունեին՝ 3.105 մարդ (ընդամենը՝ 5.757 անդամ): Հարկ է ընդգծել, որ Չերնոմորիեի օկրուգում հայերը հանդիսանում էին կոոպերացիոն ծրագրի առավել ակտիվ մասնակիցը, հատկապես առանձնանում էր Սոչիի շրջանը, որի առանձին հայկական գյուղխորհուրդներում տնտեսավարման այդ եղանակը տիրապետող էր՝ ընդհուպ 60-70 %, մինչդեռ ամբողջ շրջանի համար այդ կշիռը կազմում էր մոտ 33 %: Ծխախոտագործ հայության շրջանում տարվող կոոպերացիոն աշխա-

<sup>144</sup> Адобашьян В., Армяне Черноморского округа в 1920-1928 гг., Ереван հասարակական գիտությունների, Ե., 1975, հ. 6 (390), էջ 27:

<sup>145</sup> Նույն տեղում, էջ 28:

<sup>146</sup> Նույն տեղում:

<sup>147</sup> Նույն տեղում, էջ 30:

տանքները գտնվում էին Յուսիս-Կովկասյան երկրկոմի ուշադրության կենտրոնում և առանձնահատուկ կարևորվում էր, ուստիև պատահական չէ, որ 1926 թ. երկրկոմը Սոչիի շրջկոմի ապարատում հաստիք առանձնացրեց՝ հայության շրջանում աշխատանքների ուժեղացման համար<sup>148</sup>։ Կոոպերացիոն գործընթացին երկրամասի հայության ներգրավման հետագա աշխատանքներն ընդգրկեցին հողօգտագործման կազմակերպման ասպարեզում, ուր իշխող սկզբունք էր հատկացվող հողի աշխատանքային օգտագործման եղանակը, այլ ոչ՝ տնօրինման։ Հայկական գյուղխորհուրդների կտրվածքով 1927-1928 թթ. հողաբաժանման գործընթացն ավարտվել էր և օկրուգում ձևավորվել էին մի քանի խոշոր կոլեկտիվ միավորումներ՝ Միկոյանի անվ. «Պայքար», «Նորաստեղծ» և այլն։

1928 թ. տվյալներով Չերնոմորիեի օկրուգի հայությունն հիմնական մասն ապահովված էր հողակտորներով և իր տնտեսությունների թվով (3.417) ու անձին ընկնող եկամուտներով առաջնակարգ դիրքեր էր զբաղեցնում, իսկ հետագայում ակտիվորեն ներգրավվեց կոլտնտեսությունների մեջ։

1930-ական թթ. կուսակցական-պետական ապարատի «գտումների» շրջանում բռնություններ տեղ գտան նաև Յուսիսային Կովկասի և Դոնի հայկական շրջաններում։

ԽՍՀՄ-ում 1920-1930-ական թթ. լայնորեն տեղ գտած բռնությունների, մերկացումների քաղաքականությունը, որը տեղ գտավ երկրի բազմաթիվ շրջաններում, իր հորձանուտի մեջ առավ ոչ միայն Հայկական ԽՍՀ-ն, այլ նաև խորհրդահայ համայնքները։ Տնտեսության և քաղաքականության մեջ Միության ղեկավարության սխալներն ու բացթողումները քողարկելու, սվաղելու համար, ընդդիմությունը վերացնելու և «թշնամիներին» մերկացնելու խնդրով պայմանավորված, ամբողջ երկրում ծայր առավ ռեպրեսիվ մեթոդների կիրառումը։ Հայկական ԽՍՀ-ից դուրս բռնաճնշումների քաղաքականությանը զոհ գնացած հայկական շրջանակների մասին գրեթե ոչինչ չկա գրականության մեջ։ Այս առումով կարևոր է վեր հանել խորհրդահայ մի շարք համայնքներում, մասնավորապես, Դոնում և Յուսիսային Կովկասում, 1930-ական թթ տեղ գտած բռնություններն ու մերկացումները, որին ենթարկվել է տեղի հայ կուսակցական-պետական ղեկավարությունը։ Տեղերում հրատարակվող ժամանակի բոլշևիկյան հայ մամուլը, իր կողմնակալ դիրքորոշումներով հանդերձ, 1937-1938 թթ. տպագրած համարներում հետաքրքրական տեղե-

կատվություն է պարունակում խնդրո առարկա հարցի շուրջ։ Վերոհիշյալ համայնքներում այդ խնդրի լուսաբանման գործում կարևոր տեղ է վերապահված «Բոլշևիկ»-ին՝ Յուսիսկովկասյան երկրկոմի հայկական բոլշևիկյան մամուլի առաջամարտիկին։

Այսպես, Մյասնիկյանի շրջանի կուսակցական աշխատանքներում թերացումների առնչությամբ Դոնի Ռոստովում հրատարակվող «Բոլշևիկ»-ն անդրադարձ է կատարում 1937 թ. մայիսի 6-7-ին կուսակցական հաշվետու ժողովը լուսաբանելիս։ Մյասնիկյանի շրջկոմի առաջին քարտուղար Եղիազարյանի ելույթն այստեղ որակվում է նեղ գործամուլական, միակողմանի, թույլ տրված սխալներից ընդգծվում է կադրերի անբավարար աճեցումն ու սխալ ընտրությունը. «Չալթրի գրեթե բոլոր կոլխոզների նախագահներն ուրիշ գյուղերից են, մի՞թե Չալթրում չէր կարելի բրիգադիրներից և ստորին ակտիվից աճեցնել և առաջ քաշել նախագահներ։ Կադրերի ընտրությունը համաչափ չի կատարվում...»<sup>149</sup>։ Մայիսի 18-ի համարում «Բոլշևիկ»-ը «Չավաղել սխալները» հողվածում ներկայացնում է Աղլերի շրջկուսկոմի և սկզբնական կուսկազմակերպությունների աշխատանքներում բացահայտված սխալները, որոնց թվում հայ ղեկավարների (շրջգործկոմի նախկին նախագահ Յովհաննիսյան, Ռ. Թոփչյանի և ուրիշներ)։

Այս հրապարակումներից հետո, «Բոլշևիկ»-ն իր 1937 թ. տարբեր համարներում բազմիցս անդրադառնում է նոր «մերկացումների» տալով իր գնահատականը։ Թերթի հուլիսյան համարներում նորից անդրադարձ է կատարվում Մյասնիկյանի և Աղլերի կուսկազմակերպություններում իրականացվող մերկացումներին, կուսժողովներին և նրանց որոշումներին։ Այսպես, հուլիսի 12-ի համարում թերթը անդրադարձել է Մյասնիկյանի շրջանի կուսակցական ժողովին, կուս-շրջկոմի կայացած նոր ընտրություններին և «դիմակազերծ» արված նախկին ղեկավարության գործունեությանը՝ շրջկոմի նախկին քարտուղար Մ. Եղիազարյանի գլխավորությամբ. «Յեղիազարյանը յեղել է տրոցկիստական-բուխարինյան ավազակախմբի անդամ և սերտ կապ է ունեցել Հայաստանի հակահեղափոխական-դաշնակցական տարրերի հետ։ Խորամանկության և խաբեբայության ճանապարհներով անցնելով կուսակցության ռայկոմի ղեկավարության գլուխը, տրոցկիստական անարգ գործակալ Մ. Յեղիազարյանը իր մարդկանց դասավորել է այնպես, վորպեսզի քողարկված և անպատիժ կերպով քայքայի ռայոնի կուսակցական-կոմերիտական

<sup>148</sup> Նույն տեղում, էջ 32։

<sup>149</sup> Բոլշևիկ, Դոնի Ռոստով, 1937, № 48, էջ 3։

կազմակերպությունների աշխատանքը»<sup>150</sup>։ Ակնհայտ է, որ կուս-  
շրջկոմի նախկին ժողովի համեմատ, ուր խոսվում էր բացթողումների  
և թերացումների մասին, այս ժողովում Մյասնիկյանի շրջկոմի  
ղեկավարությունը հստակ կերպով մեղադրվում էր հակապետական  
գործունեության մեջ։ Առանձնահատուկ կերպով նշվում են Մ. Եղիա-  
զարյանի կողմից «առաջ քաշված և գաղափարակից» արբանյակների  
վնասարար գործունեության հետևանքները, որոնք հատկապես  
նկատելի էին տնտեսության ոլորտում։ Մատնանշվում էին քայքայիչ  
աշխատանքները Չալթրի և «2-րդ հնգամյակ», «Աշխատանք»,  
«Կոմսոմոլեց» կոլտնտեսություններում, շրջպրոֆխորհրդում, ՍՏ  
կայաններում ևն։ Քայքայիչ գործողություններ իրականացնողների  
շրջանակն ըստ «Բոլշևիկ»-ի միանգամայն պարզ էր, երբ նկատի է  
առնվում նրանց ով լինելը, ինչին լայն անդրադարձ է կատարված.  
«Ովքեր են Յեղիազարյանի արբանյակները։ Մի քանի անգամ  
կուսակցությունից վտարված, կամավոր կերպով դաշնակցական  
ավազակախմբում ծառայած քահանայի վորդի Մ. Ղազարյանը,  
կաշառակերության միջոցով Կարմիր բանակում ծառայելուց խու-  
սափած Վ. Լուսպիքայանը, Խայիշբաշյան Մինասը, վորն ակտիվ  
կերպով ծառայել է սպիտակ բանակում ու կռվել Կարմիր բանակի  
դեմ, Պետրոսյան Լիզան, Գրիգորյան Նահապետը, Ղազարյան Փայլա-  
կը, վաղուց մերկացված կուլակ, մի քանի անգամ կուսակցությունից  
վտարված Գ. Քաջյանը, հակահեղափոխական Գովհաննիսյան  
Եփրեմը, խաբեբայությամբ կուսակցության մեջ մտած կուլակի վորդի  
Դերեմյան Ղուկասը և ուրիշներ»<sup>151</sup>։ «Բոլշևիկ»-ի հաջորդ համար-  
ներում վերստին ներկայացվում են Մյասնիկյանի շրջկոմում տեղի  
ունեցած բացահյտումները, մեջտեղ են բերվում նոր մանրամասներ,  
որից ակնհայտ է դառնում, որ մինչ հունիսի 29-ը, երբ Չալթրում  
կազմակերպվել է Մարքսիզմ-Լենինիզմի հեռակա ինստիտուտի  
պարապմունքները Մ. Եղիազարյանը շարունակել է պաշտոնավարել։  
Ահա այստեղ է, որ դասախոսող Մ. Եղիազարյանն, իբր թե, փորձել է  
աղավաղել ազգային հարցի լենինյան-ստալինյան հարցադրումը և  
հրամցրել այն «հակահեղափոխական տրոցկիզմի տեսանկյունից»։  
Շրջկոմում առկա անառողջ, հաշտվողական, շողոքորթ և երկերեսանի  
մթնոլորտն էր դիտվում պատճառներից գլխավորը, որ երկար  
ժամանակ Եղիազարյանը շարունակել է պաշտոնավարել, մինչև որ  
կենթարկվեր ձերբակալության. «...Յեղիազարյանը, այստեղ՝ Մյաս-

<sup>150</sup> Բոլշևիկ, Դոնի Ռոստով, 1937, № 68, էջ 6:

<sup>151</sup> Նույն տեղում:

նիկյան ռայոնում իր քայքայիչ-դիվերսիոն աշխատանքը տարել է  
բավականին ակտիվորեն իր շուրջը համախմբելով բոլոր հակա-  
խորհրդային տարրերին։ Յեղիազարյանի հենարանը սպիտակզվար-  
դիականները, դաշնակցականները, կուլակներն են յեղել»<sup>152</sup>։ Հակա-  
խորհրդային խմբի գործունեության հիմնական ձեռագիր ներկա-  
յացվում էր այն, որ որևէ հիմնարկ քայքայելու համար այնտեղ էր  
ուղարկվում կամ վնասարար կամ էլ անընդունակ մեկը. «Այս բոլոր  
վնասարարական գործերի մեջ պակաս դեր չի խաղացել նաև  
ռայգործկոմի ներկայիս նախագահ Պոպով Խաչերեսը։...Ձեռքի տակ  
եղած փաստերից դժվար չէ անմիջապես յենթադրել, վոր Պոպովի  
քաղաքական կերպարանքը նույնպես կասկածելի չէ»<sup>153</sup>։ Պոպովի  
քաղաքական հայացքները նույնպես կասկածի տակ էին և դրա  
համար բավարարար հանգամանք էր նրա մտերմությունն ու համա-  
տեղ աշխատանքը Եղիազարյանի հետ Մյասնիկյանի շրջանում։  
Վերոշարադրյալ տողերի հեղինակ Խ. Գալստյանը բացահայտում է  
«Ազատություն» և «Աշխատանք» կոլտնտեսությունների կուսկոմի-  
տեների քարտուղարներ Տգխյան Ասվատուրի և Ատամանյան Արամի  
հակախորհրդային անցյալը, ակտիվ մասնակցությունը Բարանովյան  
սպիտակզվարդիական բանակի կազմում քաղաքացիական  
պատերազմի տարիներին և վնասարարությունը. «...Բարանովյան  
սպիտակզվարդիական բանակի ակտիվ սպա յե յեղել նաև «Մոլոտ»  
կոլխոզի այժմյան նախագահ Թորոսյան Միքայելը, սակայն այդ  
չխանգարեց, վորպեսզի ռայկոմում և ռայգործկոմում նստած  
թշնամիները նրան առաջ քաշեն...»<sup>154</sup>։

«Մերկացումների» ալիքը չշրջանցեց նաև Հայկական շրջանի  
(Մայկոպ) կուսակցական կոմիտեի շարքերը։ «Բոլշևիկ»-ի հուլիսի  
27-ի համարում Հայկական շրջանից Գ. Հակոբյանի թղթակցությունը՝  
«Մինչեվ վերջ հայտնաբերել ու ջախջախել ժողովրդի թշնամիներին»,  
ներկայացնում էր տեղի կուսկազմակերպությունում ուշացած  
զտումների անհրաժեշտությունը. «Հայկական ռայոնի կուսակցական  
կոմիտեի տրամադրության տակ կային բոլոր տվյալները ժամա-  
նակին մերկացնելու ռայկոմի նախկին քարտուղար, ժողովրդի  
թշնամի Պետրոսյանին։ Սակայն նախկին բյուրոյի անդամներ Հակոբ  
Թորոսյան, Լեվոն Լոբյանը...ոչ միայն լսել էին Պետրոսյանի հակա-  
հեղափոխական, վնասարարական գործերի մասին, այլ թագցում էին

<sup>152</sup> Բոլշևիկ, Դոնի Ռոստով, 1937, № 69, էջ 3:

<sup>153</sup> Նույն տեղում:

<sup>154</sup> Նույն տեղում:



այն կուսակցական մասսայից և շաղակրատում ու շողոքորթում նրա շուրջ: Վերջերս, յերբ Պետրոսյանը Յերկրկուսկոմի կողմից մերկացվեց ու դիմակազերծ արվեց վորպես կուսակցության և ժողովրդի վոխերիմ թշնամի...»<sup>155</sup>, նրանք մեղավոր էին դիտում ողջ կուսակցությունը: Շրջկոմի նախկին քարտուղարին ներկայացվող մեղադրանքներից էին ինքնակամ որոշումները, հովանավորչությունը, վնասարարությունը, շորթումները, հակահեղափոխական տրոցկիստական գաղափարաբանությունը և այլն. «Կուսակցական աշխատանքների կազմակերպված այս ինքնահոսը ճապոնա-գերմանական ֆաշիզմի գործակալ Պետրոսյանի գլխավոր պրիոմներից է: Դրանով նա բթացրել էր ռայկուսակտիվի և առաջին հերթին ռայկոմի բյուրոյի անդամների մեջ բուլշեվիկյան զգոնությունը և անարգել կերպով իր արբանյակներին կազմակերպել վնասարարություններ անտառարդյունաբերության և գյուղատնտեսության մեջ»<sup>156</sup>:

«Բուլշևիկ»-ի հոկտեմբերի 3-ի համարում մատնանշվում է Աղլերի շրջգործկոմի նախկին նախագահ Դովհաննիսյանի և նրա համախոհների քայքայիչ գործունեության արդյունքները. «Ռայգործկոմի նախկին նախագահը նպատակ էր դրել քայքայել խորհուրդների աշխատանքները, քայքայել անասնապահության զարգացման գործը ռայոնում»<sup>157</sup>: Ընդգծվում էր, որ, մասնավորապես, քայքայման էր հասցվել կաթնաապրանքային 6 ֆերմաներ: Անգամ այս աղմկոտ բացահայտումներից և ձերբակալություններից հետո, երկրամասի հայ մամուլի առաջնել «Բուլշևիկ»-ը գրում էր. «...Հայկական, Աղլերի և Սյասնիկյանի ռայոններից բազմաթիվ ազդանշաններ են ստացվում այն մասին, վոր կոլխոզներում ժողովրդի թշնամիների մնացորդները, ոգտվելով կոլխոզների և ռայոնների ղեկավարների քաղաքական անհոգությունից, դեռ շարունակում են վնասել կոլխոզներին»<sup>158</sup>: Ընդգծվում էր, որ հատկապես մեծ վնաս էր հասցվել ծխախոտագործությանն, արգելակվել էր ստախանովյան շարժումը:

Այնուհանդերձ, պետք է նկատել, որ «Բուլշևիկ»-ի խմբագրակազմն հանդես է եկել նաև հերքումներով և լուրջ հետաքննության անցկացնելու պահանջ-առաջարկներով, ինչը ժամանակի համար խիզախում էր, որի համար էլ մեղադրվել է «ինքնաքննադատության» բացակայության մեջ և 1938 թ. բռնությունների նոր ալիքի շրջանում պարբերականն ինքը դադարեց աշխատելուց:

<sup>155</sup> Բուլշևիկ, Դոմի Ռոստով, 1937, № 73, էջ 2:

<sup>156</sup> Նույն տեղում:

<sup>157</sup> Նույն տեղում, № 95, էջ 4:

<sup>158</sup> Նույն տեղում, № 88, էջ 1:

1930-ական թթ. ողջ ԽՍՀՄ-ում տեղ գտած բռնաճնշումների ալիքն իր հորձանուտի մեջ է առել Միության հայկական շրջանները և, ցավոք, սակայն բացակայում են հստակ տվյալներ բռնությունների ենթարկվածների վերաբերյալ: Ակնհայտ է, որ բռնությունների ենթարկված կուսակցական և պետական ապարատի աշխատողների զգալի մասին վերագրվող մեղադրանքները մտացածին էին, իսկ անհարկի դատավարությունները նպատակ էին հետապնդում ահաբեկել հասարակական լայն շերտերին, սերմանել վախի մթնոլորտ, ձևավորել հյու-կամակատարների ինստիտուտ: Հյուսիս-Կովկասյան երկրամասի (հետագայում Ազով-Սևծովյան երկրամաս) հայաբնակ շրջանների կուսակցական-պետական ապարատի նկատմամբ կիրառած բռնությունները հանդիսանում էին ամբողջ երկրում ընթացող բռնությունների քաղաքականության բաղկացուցիչ մասը: Միևնույն ժամանակ, որոշակիորեն փորձ է արվել հայկական այդ շրջանակների քաղաքական-գաղափարական «շեղումները», «քայքայիչ-դիվերսիոն» գործողությունները կապել Խորհրդային Հայաստանում «բացահայտված» լրտեսների ցանցի հետ: Այսպես, Սյասնիկյանի շրջանում իրականացրած «բացահայտումներից» հետո տեղի կուսակցական ժողովն անվտանգություն է հայտնում նաև շրջանային «Կոմունար» թերթի խմբագրությանը, որի ղեկավարության գործակցությունն Եղիազարյանի խմբի հետ «հաստատվեց» նաև հետևյալ բացթողման հանգամանքով. «Ուշադրության արժանի յե նաև այն հանգամանքը, որ Ռիանյանը (խմբագիրը- Ա. Հ.) դաշնակցության մասին թերթում վոչինչ չի տպել նույնիսկ դաշնակցական-նացիոնալիստ Խանջյանի պրովոկացիոն ինքնասպանության կապակցությամբ տեղի ունեցած դեպքերից հետո»<sup>159</sup>: Սյասնիկյանի, Հայկական և Աղլերի շրջանների կուսակցական-պետական ապարատի հայկական ղեկավարությանը ներկայացվող մեղադրականների շարքը բավական լայն էր՝ գործակցությունը հակահեղափոխական-դաշնակցական շրջանակների, տրոցկիստա-բուխարինյան, և անգամ ճապոնա-գերմանական ուժերի հետ, նպատակը՝ խափանարար-վնասարար գործողություններով հասնել խորհրդային տնտեսության և հասարակական հարաբերությունների կազմալուծմանը: Իրականում, ԽՍՀՄ ներքին գործերի ժողկոմատի ահաբեկումների քաղաքականությունը հետապնդում էր հստակ նպատակ՝ սարսափի մեջ պահել երկրի առողջ և քննադատության ունակ ուժերը, թաքցնել իշխանության սխալները տնտեսության և այլ ոլորտներում, սվաղել բացթողումներն ու

<sup>159</sup> Բուլշևիկ, Դոմի Ռոստով, 1937, № 70, էջ 4:

ամենաթողություն ապահովել միաժամանակ իշխանության համար:

ԽՍՀՄ-ում 1930-ական թթ. իրականացված բռնությունների քաղաքականությանը զոհ դարձան նաև լայնածավալ կայսրության տարբեր մասերում պետական-կուսակցական բարձր պաշտոններ զբաղեցնող հայազգի գործիչներ, որոնց շարքում հատկապես առանձնանում է 1933-1938 թթ. Ղազախական երկրկոմի, ապա Ղազախական ԽՍՀ Կոմկուսի ԿԿ առաջին քարտուղար Լևոն Միրզոյանը, ով աշխատանքային մեծ ճանապարհ էր անցել նախ Ադրբեջանում, ապա Ուրալում<sup>160</sup>:

Ակնհայտ է, որ Լ. Միրզոյանը դարձավ բռնության զոհ, իսկ նրա ճակատագիրը կիսեց նաև կինը՝ Ղազախստանի Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի տնօրեն (1933-1938 թթ.) Յուլյա Թևոսյանը, ով ԽՍՀՄ Ծանր արդյունաբերության ժողկոմ, հետագայում ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի նախագահի տեղակալ և ճապոնիայում ԽՍՀՄ առաջին դեսպան Իվան Թևոսյանի քույրն էր:

Ստալինյան պատժիչ մեքանայի բռնություններին ենթարկվեց նաև Ղազախստանի Կոմկուսի ապարատում բարձր պաշտոններ գրաված (քարոզչության, կադրերի և կուսակցական ղեկավար մարմինների բաժանմունքների ղեկավար) և Ղազախստանի Կենտգործկոմի անդամ Գրիգորի Ասրիկը<sup>161</sup>:

ԽՍՀՄ և, մասնավորապես, հայաբնակ մի շարք տարածաշրջանների համար (Ղյուսիսային Կովկաս, Դոն), 1920-1930-ական թթ. դարձան ինդուստրիալիզացիայի և գյուղատնտեսության վերակառուցման ժամանակաշրջան: Մեկ այլ առումով ժամանակաշրջանը դարձավ էթնոժողովրդագրական գործընթացների քայքայմանը նպաստող սոցիալական գործոնների ներգործության փուլ՝ ոչ պակաս սուր քան հեղափոխությունն ու քաղաքական պատերազմը: Ավելին, բնակչության որոշ շերտերի, ավելի ուշ՝ ժողովուրդների նկատմամբ կիրառվեցին անլուր բռնություններ, որոնք տեղ գտան Խորհրդային Միության ամբողջ տարածքում:

Ժողովրդագրական գործընթացները ԽՍՀՄ-ում 1920-1930-ական թթ. ոչ պակաս չափով պայմանավորվեցին մեկ այլ ծանր իրողությամբ՝ երկրում ծայր առած համատարած սովի հանգամանքով:

Այսպես, 1920-ական թթ. առաջին տարիներն ուղեկցվեցին սոցիալ-տնտեսական հարաբերությունների քայքայումով, բնակչության

<sup>160</sup> Левон Мирзоян в Казахстане: Сборник документов и материалов (1933-1938 гг.), отв. ред. Дегитаева Л. Д., Архив Президента Республики Казахстан, Алматы, 2001, с. 3-4.

<sup>161</sup> Երկրի տեղում, էջ 314:

տեղաշարժերով՝ արտահոսքով և ներգաղթով, թվի անկմամբ, որն արդյունք էր հեղափոխության և քաղաքացիական պատերազմի, ինչպես նաև 1921-1922 թթ. տեղ գտած սովի: 1932-1933 թթ. սովն իր մասշտաբներով ժողովրդագրական փոփոխությունների հիմք դարձավ, որը պայմանավորված էր չիմնավորված հացամթերումներով: Հատկանշական է, որ սովն ընդգրկեց, մասնավորապես երկրի հացաշատ տարածքներն, այդ թվում՝ Ղյուսիսային Կովկասը. «Ղյուսիսային Կովկասի 75 շրջաններից սովն ընդգրկեց 44-ը: Ղյուսիս-Կովկասյան իշխանությունները պաշտոնապես ընդունեցին, որ ոչ բարեհաջող իրավիճակ էր ստեղծվել 20 շրջաններում...»<sup>162</sup>: Խիստ ծանր իրավիճակ էր արձանագրված մեծաթիվ հայություն ունեցող Կուբանի 10 շրջաններում՝ Արմավիրում, Եյսկում, Կրասնոդարում և այլն: Արևմտյան հետազոտողների տվյալներով (Ռ. Կոնկվեստ), 1932-1933 թթ. սովին միայն Ղյուսիս-Կովկասյան երկրամասում զոհ է գնացել 1 մլն մարդ:

ԽՍՀՄ Պետպլանի ԺՏՀԿԿ (ԼՄԿԿ) վիճակագրական և հաշվետու տվյալները մոտավոր պատկերացում են տալիս 1932-1933 թթ. ԽՍՀՄ-ում սովի հետևանքով առաջացած ժողովրդագրական պատկերի վերաբերյալ, ըստ որի Ղյուսիսային Կովկասն իր բնակչության թվի անկումով զգալիորեն առաջ էր նույնիսկ Ռուսաստանի ամենաողբերգական համարվող տարածաշրջանի՝ Ստորին Պովոլժիե համեմատ. «1930-ական թթ. ժողովրդագրական վիճակագրությունն արժանիորեն կասկածանք է հարուցում...»<sup>163</sup>:

Ղյուսիսային Կովկասն իրավամբ հանդիսանում է այն տարածաշրջաններից մեկը, որն առանձնանում է ԽՍՀՄ-ում տեղ գտած աքսորի և բռնաճնշումների քաղաքականության բոլոր ասպեկտներով. սկսած այդ քաղաքականության կիրառման սկզբնավորումից, ընդգրկումից և մասշտաբներից: 1920-1930-ական թթ. տեղ գտած բռնի աքսորի և տեղահանումների հետ մեկտեղ, ԽՍՀՄ-ում լայնորեն կիրառվում էր նաև, այսպես կոչված, պլանային-կամավոր տեղահանումներն ու վերաբնակումները՝ ելնելով տնտեսական նկատառումներից: Ղյուսիսային Կովկասից կատարվող աքսորի «ծաղկման» տարիներ համարվում է Հայրենական պատերազմի շրջանը. «Ղյուսիսային Կովկասի տարածքից մասամբ աքսորվել են հույները, հայերը»<sup>164</sup>: Ղյուսիս-Կովկասյան երկրամասում, և մասնավորապես, տեղի հայու-

<sup>162</sup> Белозёров В., Этническая карта Северного Кавказа, М., 2005, с. 68.

<sup>163</sup> Երկրի տեղում, էջ 69:

<sup>164</sup> Երկրի տեղում, էջ 93:

թյան շրջանում վերոհիշյալ գործոնների ներգործության իրական պատկերն ամբողջովին վեր հանել անհնարին է: Հարկ է նշել, որ ԽՍՀՄ ՆԳՆ կողմից ստեղծված հատուկ բնակավայրերում (спец-поселение), ուր կենտրոնացվել էին աքսորյալները, մահացությունը մեծ տոկոս էր կազմում, հատկապես աքսորի առաջին տարում: Այսպես, 1944 թ. աքսորվածների շրջանում, ըստ ՆԳՆ 1945 թ. ապրիլի 10-ի տեղեկանքի, մինչ այդ ժամանակահատվածը մահացել էին թաթարների (Ղրիմի), բուլղարների, հույների, հայերի 19,6 %-ը: Միայն 1956 թ. մարտի 27-ին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության հրամանագրով վերացվեցին այն սահմանափակումները, որ դրված էին մինչ աքսորը Հյուսիսային Կովկասում բնակվող հույների և հայերի նկատմամբ՝ առանց իրավունքի վերադառնալու բնակության նախկին վայրեր:

1944 թ. հունիս-հուլիս ամիսներին Ղրիմից աքսորված ազգությունների շարքում (թաթար, բուլղար, հույն ևն) էին նաև տեղաբնիկ հայերը՝ ընդամենը 9.621 մարդ<sup>165</sup>, որոնք հիմնականում տեղափոխվեցին Ռեսևսի և միջինասիական հանրապետություններ:

Հետաքրքրական է, որ 1953 թ. հունվարի 1-ի դրությամբ վերոհիշյալ աքսորյալների տեղաբաշխման հիմնական շրջաններ էին Ռեսևսի-ն: 7492, Ղազախական ԽՍՀ-ն՝ 575, Ուզբեկական ԽՍՀ-ն՝ 381, Տաջիկական ԽՍՀ-ն՝ 121 մարդ, և այլն<sup>166</sup>:

1920-1940-ական թթ. ԽՍՀՄ-ում տեղ գտած հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կատակիզմներն ուղղակիորեն իրենց ազդեցությունն ու հետևանքները թողեցին Խորհրդային Միության ժողովուրդների, այդ թվում, երկրի տարբեր տարածաշրջաններում բնակվող հայության վրա, փոխեցին և խնդրահարույց դարձրեցին ԽՍՀՄ-ում ժողովրդագրական իրական պատկերի վեր հանումը:

### 3.2. Հոգևոր-եկեղեցական կյանքը

Հայ առաքելական եկեղեցին ունեցել է վերելքի և անկման, հաջողությունների և փորձությունների ժամանակաշրջան, ազգային պետականության բացակայության պայմաններում ստանձնել է քաղաքական իշխանության գործառույթներ: Հազարամյա ճանապարհ

անցած հայոց եկեղեցին XX-րդ դարի սկզբին դիմագրավեց ցարիզմի ոտնձգությունները, Արևմտյան Հայաստանում կրեց հսկայական կորուստներ: Խորհրդային կարգերի հաստատումով եկեղեցին և կրոնը ենթարկվեցին նոր հասարակարգի թելադրած օրենքներին՝ եկեղեցին և հոգևոր արժեքները թևակոխեցին իրավազրկման, նվաստացման և գոյապահպանման ժամանակաշրջան: Պետք է նշել, որ մինչև 1920-ական թթ. պատմաքաղաքական, հոգևոր-աշխարհայացքային և սոցիալ-տնտեսական նոր իրողությունները, ռուսահայ եկեղեցին ունեցավ կարճատև՝ 1917-1920 թթ., բայց բեկումնային և կարևոր ժամանակաշրջան՝ վերարժևորելու ու նորոգելու հոգևոր կյանքի հրատապ խնդիրները:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությանը հաջորդած տարիները հայ իրականության մեջ հասարակական-քաղաքական կյանքի մի շրջան դարձան, որն ինչ-որ տեղ ստվերեց եկեղեցու ունեցած հասարակական-քաղաքական կշիռը՝ չլուծված հիմնախնդիրների լույսի ներքո: Ողջունելով ցարիզմի անկումը՝ հայ հոգևորականությունը գիտակցում էր ռուսահայ իրականության մեջ եկեղեցու դիրքերի թուլացման վտանգը. «Քառս մտքեր կան ինչպես հոգևորական դասի, նույնպես և աշխարհականների մեջ»<sup>167</sup>:

Էջմիածնի «Արարատ» ամսագրում իր մտահոգությունն արտահայտող Գյուտ վարդապետը, մատնանշում է, որ օրեցօր աճող քառսը հայ եկեղեցու համար օգտակար չէ, ինչն ակնհայտ ցույց է տալիս, որ հայ հոգևորականության շրջանում ևս գիտակցվում, բարձրաձայնվում էր նոր իրողությունների փաստը: Ժամանակավոր կառավարությունը, հռչակելով դեմոկրատական ազատություններ, լայն հնարավորություն էր բացել եկեղեցու առջև ազգային կյանքի առաջադիմության, հոգևոր-եկեղեցական և բարոյական խնդիրների լուծման, կանոնավորման համար. «...մինչ 1917 թ. եկեղեցու առջև արդեն հասունացած խնդիրները նոր քաղաքական, ազգամիջեան յարաբերությունների պայմաններում, թելադրում են եկեղեցու բարեկարգման խնդիրը»<sup>168</sup>:

1917 թ. քաղաքական բարդ պայմաններում հասունացել էր եկեղեցական համագումարի հրավիրման հարցը, ուր քննարկման առարկա խնդիրներն ոչ միայն զուտ եկեղեցական էին, այլ նաև համազգային: 1917 թ. ապրիլի 7-ին Ամենայն Հայոց կաթողիկոս

<sup>165</sup> Зарубин В., Депортация из Крыма армян, болгар, греков и граждан других национальностей (1944 г.), Историческое наследие Крыма, Симферополь, 2004, № 5, с. 25.

<sup>166</sup> Նույն տեղում, էջ 26:

<sup>167</sup> Արարատ, էջմիածին, 1917, Յունիս-Յուլիս, էջ 487:

<sup>168</sup> Մելիքեան Վ., էջմիածնի եկեղեցական համագումարը, Բազմավեպ, թիւ 1-4, Կենտրոն-Ս. Ղազար, 2003, էջ 267:

Գևորգ Ե-ն առաջին անգամ իր թիվ 678 կոնդակում հիշատակում է եկեղեցական ազգային ժողովի մասին: Էջմիածնի եկեղեցական համագումարը տեղի ունեցավ 1917 թ. հունիսի 12-23-ը: Այս համագումարին ներկա էին 29 կուսակրոն և 38 աշխարհիկ հոգևորականներ, ընդամենը 67 հոգի, «...որոնցից երեսուներկուսը Էջմիածնի միաբանության անդամներ էին, իսկ մնացած երեսունհինգը՝ ռուսահայոց վեց թեմերը ներկայացնող ամուսնացած քահանաներ»<sup>169</sup>: Համագումարի վճիռների իրավական նշանակության առումով հարկ է նշել, որ այն ուներ նախապատրաստական կարգավիճակ, քանի որ համագումար իրավիճակը կոնդակը նրան «նախապատրաստական» էր համարում. «...ի նկատի առնելով, որ այս ժողովում բացի նրանից որ Ռուսահայ որոշ հատուածներից իսկ չկան հոգևորական ներկայացուցիչներ, այլ և բացակայում են Տաճկահայոց, Պարսկահայոց, Եւրոպայի, Ամերիկայի և այլ հոգևոր ներկայացուցիչները: Այս ժողովը օրենսդիր լինել չի կարող...»<sup>170</sup>:

Հաջորդ տարիներին ազգային եկեղեցական նոր ժողով անցկացնել չհաջողվեց տեղ գտած քաղաքական իրադարձությունների պատճառով: 1917 թ. հունիսի եկեղեցական ժողովի առաջարկ-բարեփոխումների մի մասը (Գրիգորյան տոմարի ներմուծումը, այրի հոգևորականների ամուսնությունը, երգոհոնի գործածությունը) կաթողիկոսի 1922-1923 թթ. կոնդակներով օրինականացվեցին<sup>171</sup>: 1917 թ. հունիսի եկեղեցական ժողովում մշակված մյուս բարենորոգչական միջոցառումներն ու նախագծերը հնարավոր չէր կարգավորել կոնդակների միջոցով, քանի որ անհնար էր դա անել առանց մյուս եկեղեցական կենտրոնների մասնակցության և քննարկման:

1924 թ. հունվարի 1-ին, թիվ 1 կոնդակով հաստատվեց Գերագույն Հոգևոր Խորհուրդ և վերացվեցին Սինոդն ու Հայրապետական Դիվանը:

1923 թ. վերջին Էջմիածնում ստեղծված Հայ եկեղեցու բարեփոխումների կենտրոնական հանձնաժողովը, որը զբաղվելու էր 1917 թ. հունիսի բարեփոխումների նախագծերի վերամշակմամբ, իր աշխատանքներն ավարտեց միայն 1937 թ. և բարեփոխումների իր մշակած

ժրագիրն առաքեց եկեղեցական բոլոր կենտրոններին:

Ռուսահայ հոգևորականության համագումարը ձևավորեց աշխատանքային բաժանմունքներ, ուր քննարկվեցին եկեղեցու բարենորոգման, վարչատնտեսական, դպրոցական-կալվածական և ռուսահայ եկեղեցական կյանքի տարբեր խնդիրներ: Համագումարը որոշում կայացրեց մասնակցել Ռուսաստանի ապագա Սահմանադիր ժողովին՝ պաշտպանելու համար հայության շահերն ու տեսակետը: Սահմանադիր ժողովից մեծ էին սպասելիքները, հատկապես կրթական ոլորտում բարեփոխումներ անցկացնելու համար:

Հայ հոգևորականության այս համագումարն ունեցավ պատմական ու գործնական մեծ նշանակություն հայ եկեղեցու համար՝ հասարակական-քաղաքական բարդ գործընթացներում արծարծելով համահայկական խնդիրներ:

Արդեն Առաջին Հանրապետության գոյության շրջանում (1918-1920 թթ.) հայ եկեղեցին ներգրավվեց երկրի առջև ծառայած խնդիրների լուծմանը, թեև. «ՀՀ տարածքում գտնվող կրոնական կառույցների դրությունը չէր կարող արմատապես տարբերվել ընդհանուր առմամբ պետության ներսում տիրող սոցիալ-տնտեսական եւ քաղաքական անկայուն պայմաններից...»<sup>172</sup>: «Էջմիածին» ամսագիրը ևս բազմիցս անդրադարձել է հայ եկեղեցու խնդիրներին, տիրող ընդհանուր անտարբերությանը: Մայր Աթոռում և թեմերում առկա խնդիրներով հանդերձ, հայ եկեղեցին որոշակի դերակատարություն ստանձնեց քաղաքական այս բարդ պայմաններում:

Խորհրդային կարգերի հաստատումով եկեղեցին թևակոխեց պատմության նոր շրջափուլ՝ լի անցյալից ժառանգած հիմնախնդիրներով և ապագայի ծանր պայմաններով: Նախևառաջ, Խորհրդային Ռուսաստանում, ապա նաև Խորհրդային դարձած մյուս հանրապետություններում ուժեղ պայքար ծավալվեց եկեղեցու դեմ:

Խորհրդային Ռուսաստանում ռուս ուղղափառ եկեղեցու նկատմամբ կիրառված պայքարի և բռնությունների մեթոդները դարձան էտալոնային մյուս հանրապետություններում: Եկեղեցու և կրոնի դեմ պայքարը սկսվեց բոլշևիկների իշխանության գալուց անմիջապես հետո, որի նույնական դրսևորումներն, իրար հետ շաղկապված, տեղ գտան 1922 թ. կազմավորված Խորհրդային Միության մյուս հանրապետություններում, այդ թվում՝ Խորհրդային Հայաստանում:

Խորհրդային իշխանության՝ ժողկոմխորհի, առաջին օրենսդրա-

<sup>172</sup> Հարությունյան Ա., Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հասարակական եվ դիվանագիտական գործունեությունը 1918-1920 թվականներին, Ե., 2004, էջ 4:

<sup>169</sup> Ղազարյան Խ. Ռ., Բարենորոգչական նախաձեռնությունները Հայ Առաքելական եկեղեցում 19-րդ դարի վերջին քառորդին և 20 -րդ դարի առաջին կեսին, Ս. Էջմիածին, 1999, էջ 178:

<sup>170</sup> Ռուսահայ հոգևորականութան համագումարի (1917թ. Յունիս) բանաձեւեր, Ս. Էջմիածին, 1917, էջ 7-8:

<sup>171</sup> Գիւտ եպս., Հայ եկեղեցու բարենորոգութեան խնդիրը եւ ազգային եկեղեցական ժողովը, Փարիզ, 1926, էջ 34:

կան որոշումներից էր 1918 թ. հունվարի 20-ի «խղճի ազատության, եկեղեցական և կրոնական ընկերությունների մասին» ղեկրետը, ուր ասվում էր «Կրոնական պաշտամունքների կատարման ազատությունը և հակակրոնական պրոպագանդի ազատությունը ճանաչվում է բոլոր քաղաքացիների համար»<sup>173</sup>: 1920 թ. ղեկտեմբերի 17-ին ընդունվում է «Դեկրետ հոգևոր հաստատություններին պատկանող կուլտուրական հիմնարկությունների պետականացման մասին», որով հորհրդային Հայաստանում գտնվող հոգևոր հաստատություններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկները (դպրոց, հնագիտական-ազգագրական թանգարանները, մատենադարանները, տպարանները) իրենց շարժական և անշարժ գույքով համարվում էին պետական սեփականություն և փոխանցվում լուսժողկոմատին: Այնուհետև, ղեկտեմբերի 31-ին հորհրդային Հայաստանի լուսժողկոմի հրամանով դպրոցներում արգելվում էր. «որևէ կրոնական առարկա դասավանդել և կրոնական դավանանքի ծես կատարել», միաժամանակ հոգևոր դասին պատկանող անձանց արգելվում էր որևէ պաշտոն վարել դպրոցներում և կուլտուր-կրթական հիմնարկներում: 1920 թ. ղեկտեմբերին հոգևոր իշխանության իրավասությունից խլվում է քաղաքացիական ակտերի վավերացման գործը՝ պարտադրելով չափաբերական մատյաններն ու հարակից բոլոր տվյալներն անմիջապես հանձնել հեղկոմներին:

1922 թ. ինչպես ռուս ուղղափառ եկեղեցու, այնպես էլ Հայ առաքելական եկեղեցու համար դարձավ նոր փորձությունների շրջան, քանի որ Համառուսաստանյան Կենտգործկոմը գաղտնի ղեկրետ ընդունեց եկեղեցական արժեքների առգրավման մասին՝ սովի դեմ պայքարի, միաժամանակ սեփական գանձարանը լցնելու ու եկեղեցուն վճռական հարված հասցնելու նպատակով:

Նախ, ռուս ուղղափառ եկեղեցին, չդիմանալով աճող ճնշմանը, 1922-1923 թթ.-ին տրոհվեց մի քանի հոսանքների, որոնցից նորոգչողական կամ «կենդանի» կարմիր եկեղեցական հոսանքը խրախուսվում էր պետության կողմից՝ ուղղորդվելով պաշտոնական պարիարքության դեմ: Նորոգչողական հոսանքը կամ «ազատ եկեղեցականների» շարժումը Կովկաս և Հայաստան թափանցեց կարճ ժամանակ անց՝ հանդես գալով որպես «ըմբոստացում» պաշտոնական եկեղեցու դեմ. «Ազատ եկեղեցու հիմնադրմանը 1925 թ. մայիսին հաջորդեց նաև միաբանության՝ «Ազատ եկեղեցական եղբայրության»

ստեղծումը»<sup>174</sup>, իսկ մինչ այդ՝ 1924 թ. նոյեմբերի 27-ից, սկսել էր լույս տեսնել «Ազատ եկեղեցի» շաբաթաթերթը:

«Ազատ եկեղեցի» շաբաթաթերթի առաջին համարում «Մեր նպատակն ու ծրագիրը» վերնագրի ներքո ներկայացված էր եղբայրության երկու հիմնական մասերից բաղկացած ծրագիրն, որը վերաբերում էր եկեղեցական կյանքի բոլոր ոլորտներին, ուր մատնանշվում էր, որ. «...այն հանգամանքը, որ Ռուսաստանից դուրս գտնված մեր եկեղեցական կյանքը իր վարչական և մասամբ ել՝ ծխական խնդիրներում բոլորովին նման չէր ռուսահայ եկեղեցական կյանքին»<sup>175</sup>: Եկեղեցական եղբայրությունը գրություն է կազմել Վրաստանի հոգևոր թեմի առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Չորեքյանի անունով, ուր ներկայացված էր եկեղեցական բարեփոխումներ անցկացնելու առաջարկ-պահանջներ. «...Մեր հոգևորականությունը Վրաստանում, ուր դուք պաշտոն ունիք իբրև թեմական առաջնորդ միանգամայն իրեն անհամապատասխան դերումն է գտնվում և շնորհիվ այդ բանի, ժողովրդի սառնությունը դեպի եկեղեցին և հոգևոր դասը, օր ավուր սուր կերպարանք է ստանում:»<sup>176</sup>:

Թիֆլիսի «Ազատ եկեղեցական եղբայրություն»-ը հաստատվել է եղբայրության 1926 թ. ապրիլի 27-ի ընդհանուր ժողովում և գրանցվել Թիֆլիսի քաղաքացիական 1926 թ. մայիսի 11-ին 1405 համարով: Եղբայրության կանոնադրությունն ազդարարում էր. «Ազատ եկեղեցական եղբայրությունը հիմնվում է Թիֆլիս քաղաքում և նպատակ ունի ընդհանրացնելու՝ Վրաստանի հանրապետության մեջ գտնվող հավատացյալներին, նրանց կրոնական պահանջները բավարարելու համար և Հայ առաքելական եկեղեցուն մտցնելու՝ հետևյալ բարեփոխական ծրագիրը.

ա) Հայ եկեղեցին դնել իր կոչման բարձրության վրա, վերականգնելով այնտեղ առաքելական պարզությունը և քրիստոնեական ոգին»<sup>177</sup>: «Ազատ եկեղեցու» կանոնադրությունը բաղկացած էր 8 մասից, ուր ձևակերպված էին միաբանության գործունեության կազմակերպման սկզբունքները: «Ազատ եկեղեցու» որդեգրած սկզբունքները տպավորություն էին ստեղծում, թե մշակվել և առաջադրվել է մի իդեալական ծրագիր, որի նպատակն էր իրականացնել հայ եկեղեցու բարեկարգման գործը, սակայն եղբայրությունն ոչ մի

<sup>173</sup> Կոմունիստական պարտիան և սովետական կառավարությունը կրոնի և եկեղեցու մասին, Ե., 1960, էջ 55-56:

<sup>174</sup> Ղազարյան Խ. Ռ., նշվ. աշխ., էջ 218:

<sup>175</sup> Տեր-Հարությունյան Հ., Մեր Նպատակը. Հայոց եկեղեցական բարեփոխությունը յեվ նրան հասնելու միջոցները, Թիֆլիս, 1926, էջ 6:

<sup>176</sup> Նույն տեղում, էջ 13:

<sup>177</sup> Նույն տեղում, էջ 28-29:

անգամ փորձ չի կատարել բարեփոխումների իր ծրագիրը հիմնավորել, մասնավորաբար, 1923 թ. հիմնադրված Բարենորոգության կենտրոնական հանձնաժողովում, ինչն էլ կամրապնդեր նրանց պնդումները հայ եկեղեցու բարեփոխման առնչությամբ: Ուստիև, ակնհայտ էր, որ «Ազատ եկեղեցական»-ների շարժումն իրականում մայր եկեղեցին ապակայունացնելու նպատակ էր հետապնդում և զործում էր, ելնելով պետական համակարգի շահերից, այլ ոչ թե՛ եկեղեցու: «Ազատ եկեղեցու» սոսկ կանոնադրությունից իսկ, արդեն երևում է, որ այն վայելում էր իշխանությունների օժանդակությունն ու աջակցությունը: Այսպես, կանոնադրության մեջ «եղբայրության փակումը» բաժնում ուղղակիորեն ասվում էր. «Յեղբայրության փակման դեպքում կառավարությունից օգտագործության պայմանով ստացած գույքը լիովին վերադարձվում է պետական համապատասխան մարմնին ընդունելության ցուցակով...»<sup>178</sup>: Միևնույն ժամանակ պետական մարմինները Հայ առաքելական եկեղեցուց խլում էին նրա գույքը, ունեցվածքը, շինություններն ու կալվածքները:

«Ազատ եկեղեցական եղբայրության» գործունեությունը Վրաստանում և Հայաստանում աշխուժացավ 1920-ական թթ. երկրորդ կեսին: Երևանում հաստատված «Ազատ եկեղեցական եղբայրության» խորհուրդը ձգտում էր տարիների ընթացքում իրենով փոխարինել Էջմիածնի Մայր Աթոռը: 1926 թ. հունիսի 14-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն իր կոնդակով հայ եկեղեցուց անջատված հայտարարեց «Ազատ եկեղեցական եղբայրության»-ը և նզովեց այն: Այնուհանդերձ, խորհրդային իշխանությունների խրախուսանքը վայելող «Ազատ եկեղեցական եղբայրության»-ը հանձնվեց նախ Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, ապա նաև Թիֆլիսի Քամոյան Ս. Գևորգ եկեղեցին, որը նոր թափ հաղորդեց հայ առաքելական եկեղեցու դեմ ուղղված շարժումներին:

«Ազատ եկեղեցականներ»-ը, նպատակ ունենալով պառակտել հայ եկեղեցին, մերժում էին հայ հոգևորականությանը և Գերագույն Հոգևոր խորհուրդը՝ իբրև միակ օրինական իշխանություն ընդունելով կաթողիկոսին:

1929 թ. հոկտեմբերի 22-ին Գևորգ արք. Չորեքյանին ուղղված նամակում գրված էր. «Աբխազիան իր հազարավոր հայ համայնքներով միասին ուխտել է պաշտպանելու սովետական իրավակարգը և չի ճանաչի ձեզ նման սևագլուխ ճահճի գորտերին և մինչև իսկ Ձեր

մարդկանց: Ովքեր Աբխազիա կգան, կվռնդվեն...»<sup>179</sup>: Նույն բովանդակությամբ նամակներ Գևորգ արք. Չորեքյանի և ԳՀԽ-ի անդամների անունով ստացվում էին նաև այլ բնակավայրերից, ինչը կազմակերպված բնույթ էր կրում: Վրաստանի հայոց հոգևոր թեմի առաջնորդ Գևորգ արք. Չորեքյանին Էջմիածին կանչելուց հետո 1927 թ., փաստորեն, դարձավ Վրաստանի հայոց հոգևոր թեմի գոյության վերջին տարին: Վրաստանի ՆԳԺ-ն թույլ չտվեց թեմական պատգամավորական ժողով անցկացնել, փոխարենը նման թույլտվություն ստացավ «Ազատ եկեղեցական եղբայրությունը»:

1927 թ. մարտի 20-ին տեղի ունեցած «Ազատ եկեղեցական եղբայրության» ժողովն ընտրեց Վիրահայոց թեմական խորհուրդ Լևոն Շգնավորյանի և Հակոբ Տեր-Հարությունյանի գլխավորությամբ, որն էլ անմիջապես ճանաչվեց վրաց իշխանությունների կողմից: Շատ չանցած, Թիֆլիսի վանքի տարածքում գտնվող թեմական խորհրդի շենքը կնքվեց. «Մնալով առանց հոգևոր առաջնորդի հայ քահանաները ստեղծեցին Էջմիածնին ենթակա, վիրահայության ժամանակավոր թեմական խորհուրդ, ավագ քահանա Արշակ Մինասյանի գլխավորությամբ»<sup>180</sup>: Վիրահայության ժամանակավոր թեմական խորհրդի անդամները շուտով հայտնվեցին բարդ իրավիճակում, նրանցից պահանջվեց հանձնել թեմական ունեցվածքը: Մերժելով ապօրինի պահանջը՝ վիրահայոց թեմի ժամանակավոր ղեկավար, ավագ քահանա Ա. Մինասյանն ու մյուս անդամները ձերբակալվեցին, իսկ քահանա Տեր-Վարդանյանը վտարվեց Վրաստանի սահմաններից:

«Ազատ եկեղեցական եղբայրության» և նրանց «Ազատ եկեղեցի» շարաքաթերթի գործունեության իրական կողմը բացահայտելու և պառակտիչ քայլերի վերաբերյալ ԳՀԽ-ը բազմաթիվ շրջաբերականներ էր ուղարկում թեմական խորհուրդներին:

«Ազատ եկեղեցական եղբայրություն»-ը գործունեություն էր ծավալել ոչ միայն Անդրկովկասի հայ հավատացյալների շրջանում, այլ նաև հայահոծ տարբեր վայրերում. «Թե Հայաստանի շրջաններում, թե խորհրդային գաղթավայրերում ստեղծվում էին «Ազատ եկեղեցական եղբայրություն»-ներ, դրանց սադրիչ գործունեությանը սատար էին կանգնում որոշ հոգևորականներ՝ ահաբեկված սպառնալիքներից կամ կաշառված ինչ-ինչ խոստումներով: «Հայ եկեղեցու դեմ

<sup>179</sup> Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.), կազմ: Ս. Բեհրույանը, Ե., 1994, էջ 201:

<sup>180</sup> Ստեփանյան Ս., Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Ե., 1994, էջ 55:

ուղղված քայքայիչ գործողությունների ուղորտն ընդգրկում էր նաև Յեռավոր Արևելքը»<sup>181</sup>:

1924 թ. (նշվում է նաև 1925թ.) ԽՍՀՄ-ում հիմնադրվում է Անաստվածների Միությունը, որը հավակնում էր դառնալ զանգվածային շարժում ուղղված հավատքի և եկեղեցու դեմ: Անաստվածների միությունը 1929 թ. վերանվանվեց «Մարտնչող Անաստվածների Միության» (ՄԱՄ) և պաշտոնական տվյալներով ուներ մի քանի միլիոն անդամ: Արդյունքում, վերոհիշյալ միության և նմանօրինակ կազմակերպությունների համագործակցության «շնորհիվ» 1937 թ. ԽՍՀՄ-ը հռչակվեց «համատարած աթեիզմի երկիր» և ավարտվեց, այսպես կոչված, աթեիստական պայքարի առաջին փուլը: Առաջ չանցնելով, նշենք, որ ԽՍՀՄ անաստվածների 2-րդ համագումարը, որը տեղի ունեցավ 1929 թ., խիստ ներկայացուցչական էր: Համագումարի 956 պատգամավորների թվում էին բազմաթիվ կուսակցական, պետական գործիչներ, «կարմիր» մտավորականության ներկայացուցիչներ Բուխարինը, Կալինինը, Մ. Գորկին, Մայակովսկին: Ընդունվեց «Հակակրոնական հերթական խնդիրների մասին» բանաձև, ուր նշվում էր, որ. «Իր ազիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքում «Անաստվածների միությունը» պետք է առաջին հերթին մերկացնի կրոնի քաղաքական դասակարգային դերը, բացահայտի բոլոր և ամեն տեսակի կրոնական կազմակերպությունների հակահեղափոխական գործունեությունը, որոնք ձգտում են պրոլետարիատի դիկտատուրայի թշնամի տարրերին ծառայել, ամեն կերպ արգելակել սոցիալիստական շինարարությանը»<sup>182</sup>: Եկեղեցու և կրոնի դեմ ուղղված արշավի արտառոց ձևեր ու մեթոդներ մշակելու անհրաժեշտություն չկար, ձևակերպումն առավել քան պարզ էր ու հստակ: Եկեղեցին խեղդելու համար ավելացվեցին քահանաների եկամտահարկը, իսկ եկեղեցու պահանջը՝ հարկադրումները կատարել ընդհանուր հիմունքներով, այն է՝ առանց քահանայական կոչումը նկատի առնելու, մնաց անհետևանք:

«Հայրենիք»-ն իր էջերում քննարկում էր Մայր Աթոռ Սիրիա փոխադրելու հարցը, անհանգստությունը. «...այն բացառիկ ծանր պայմաններն էին, որոնց մեջ այսօր գտնվում է հայոց եկեղեցին, այն անօրինական հալածանքները, որոնց ենթակա է տարիներ ի վեր Էջմիածնի և հայ հոգևորականությունը Խորհրդային Ռուսիո մեկ

ծայրից մյուսը...»<sup>183</sup>:

«Էջմիածնի դասերը» հողվածում, որը տպագրվել էր «Հայրենիք»-ի էջերում, ներկայացնում էր Էջմիածնի գավառովումի նկատմամբ տարվող քննությունը, որի պատճառներից էր. «...Թոյլ հակակրոնական պրոպագանդան»<sup>184</sup>: Ամսագրի 1929 թ. նոյեմբերի համարում տպագրված «Էջմիածինը եւ արտասահմանը» հողվածում ընդգծվում էր Էջմիածնի միաբանության ծայրահեղ ծանր սոցիալ-տնտեսական վիճակը. «Էջմիածնի Գերագույն Խորհուրդը մի դիմում է ուղարկել արտասահմանի թերթերին (գաղութահայ- Ա. Հ), որի մեջ մատնացոյց անելով Ս. Աթոռի տնտեսական ծանր կացութան վրայ...»<sup>185</sup>:

1930 թ. մայիսի 8-ին վախճանվում է Գևորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսն, ում բաժին ընկավ հայոց եկեղեցին կառավարելու բռնաճնշումների և ահաբեկումների ծանր ժամանակաշրջանում: Կաթողիկոսի հուղարկավորությունից հետո՝ 1930 թ. մայիսի 28-ին, կաթողիկոսի տեղակալ Խորեն սրբազանը դիմեց Հայաստանի Կենտրոնական և Ժողովուրդին՝ թույլատրելու գումարել Ազգային եկեղեցական ժողով և իշխանությունները զիջեցին, հակառակ այն պարագային, որ ռուս ուղղափառ եկեղեցին չուներ հոգևոր առաջնորդ և սկսած 1925 թ. բազմիցս բարձրացնում էր այդ հարցը: Կաթողիկոսական ընտրությունների անհրաժեշտության մասին «Անաստված» երկշաբաթաթերթում տպագրվել է նաև Ա. Խանջյանի «Կաթողիկոսական ընտրությունների առթիվ» հողվածն, ուր գրված էր. «...կաթողիկոսության արտասահման տեղափոխելու միտքը բխում է հայ բուրժուական կուսակցությունների ձգտումից: Այդ միտքը սկսեցել ավելի ուժգին արծարծվել, յերբ վախճանվեց վերջին կաթողիկոսը-Գևորգ 5-ը: Սակայն հայ բուրժուազիան չկարողացավ իրականացնել իր այդ ձգտումը:»<sup>186</sup>: Կաթողիկոսի առաջիկա ընտրություններին մասնակցելու համար հոգևոր թեմերում անհրաժեշտ էր անցկացնել պատգամավորների ընտրություններ. «Սակայն ԽՍՀՄ-ում գտնվող թեմերի մեծ մասում բացակայում էին առաջնորդները, որոնք պիտի կազմակերպեին ընտրությունները: Այդ նպատակով էլ Ս. Էջմիածնից տեղեր ուղարկվեցին Մայր Աթոռի ներկայացուցիչներ: Միևնույն ժամանակ, ԳՀԽ-ը որոշում է. «...առաջադրել Խորհրդային Միության սահմաններում եղած թեմերի առաջնորդներին ընտրությունների

<sup>183</sup> Նույն տեղում, էջ 70:

<sup>184</sup> Հայրենիք, Նոյեմբեր, 1928, էջ 164:

<sup>185</sup> Հայրենիք, Նոյեմբեր, 1929, էջ 172-173:

<sup>186</sup> Անաստված, հոկտեմբեր, 1932, էջ 4-5:

<sup>181</sup> Բեհբուդյան Ա., նշվ. աշխ., էջ 4:

<sup>182</sup> Ստեփանյան Ա., նշվ. աշխ., էջ 71:

գործը ղեկավարելիս առաջնորդվել նախապես տրված հրահանգներով, միաժամանակ հարմարվելով պայմաններին՝ արագացնել և թեթևացնել պատգամավորների ընտրության գործը»<sup>187</sup>:

Հայ առաքելական եկեղեցու ղեկավարի բացակայությունը ազդանշան հանդիսացավ Վրաստանի հայկական եկեղեցիների ազդարարման և փակման նոր ալիք սկսելու համար: 1930-1931 թթ. իրար հետևից փակվեցին Թիֆլիսի Ս. Սարգիս, Բետհեմյան և Խոջիվանքի եկեղեցիները՝ Վիրահայ թեմը գտնվում էր կաթվածահար վիճակում:

1931 թ. դրությամբ անմխիթար վիճակում էին նաև խորհրդահայ մյուս թեմերը.

Հյուսիսային Կովկասի և Աստրախանի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Վարդազարյանը ծանր հիվանդ էր և խնդրում էր Մայր Աթոռին հարգել հրաժարականի իր դիմումը:

Նոր Նախիջևանի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը, վկայակոչելով իր գիտական աշխատանքներն, որոնք հանձնարարված էին Ն. Սառի կողմից, խնդրում էր իրեն փոխադրել Էջմիածին:

Բաքվի և Թուրքեստանի առաջնորդ Մաթևոս արքեպիսկոպոս Մաթևոսյանը բողոքում էր իր բնակության պայմաններից և հիվանդությունից: Իրականում թեմակալ առաջնորդը լարված հարաբերությունների մեջ էր Ադրբեջանի իշխանությունների հետ:

Արցախի թեմը Վրթանես եպիսկոպոս Հակոբյանի գլխավորությամբ նույնպես դժվարին օրեր էր ապրում: Արդեն 1932 թ. սկիզբ առավ ճնշումների նոր ալիք, որն ավարտվեց Արցախի հայ հոգևորականության արտաքսումով և բոլոր հայ եկեղեցիների փակումով:

Ծանր էին հայ եկեղեցու և հոգևորականների նկատմամբ կատարվող բռնություններն Ադրբեջանական ԽՍՀ-ում: 1924 թ. մարտի 17-ին Գևորգ Ե-ն Ադրբեջանի ԽՍՀ ժողկոմխորհին ուղղված դիմումով բողոքում էր Բաքվի և Թուրքեստանի թեմակալ առաջնորդ Մատթեոս եպիսկոպոսի նկատմամբ կատարված բռնության և առաջնորդարանի գրավման դեմ: Գերագույն Հոգևոր Խորհրդին ուղղված Գանձակի Հայոց առաջնորդ Լևոն եպիսկոպոսի նամակից, թվագրված 1924 թ. փետրվարի 7-ով, պարզ է դառնում տեղում կատարված բռնությունների և ազդարարման մեծ չափերը: Այստեղ բռնությամբ խլվել էին Ղարաչինար, Հավարիկ գյուղերի եկեղեցիները, չափաբերական մատյաններն ու գույքը, բանտարկվել Ղարաչինարի և Սուլուքի քահանաները: Գանձակի առաջնորդի նամակը վերջանում էր հետևյալ

խոսուն տողերով. «Տեղական հոգևոր իշխանության դիմումները, ինչպես տարիների փորձերը ցույց տվին, որ մնում են առանց հետևանքների կամ վախճան են ստանում սպառնալիքներով՝ դիմողների հասցեին»<sup>188</sup>: 1925 թ. փակվեց Շամախու հայոց եկեղեցին. «...տեղի քահանա Վարդգես Գրիգորյանին, գավառից վտարելու սպառնալիքի ներքո, արգելվեց ծիսակատարությունների անցկացումը»<sup>189</sup>: Արցախի թեմում քայքայված և կազմալուծված իրավիճակ էր տիրում:

Խորհրդային Ռուսաստանի հայկական թեմերում ևս 1920-ական թթ. տիրում էր անմխիթար վիճակ, այսպես, հայ եկեղեցու ծանր կացությունը Հյուսիսային Կովկասում մանրամասն բնորոշված է կաթողիկոսին ուղղված Նովոռոսիյսկի ծխատեր Գևորգ քահանա Օրդուխանյանի դիմումներում, որը ճաշակեց նաև աքսորի դառնությունը. «Մեր եկեղեցին վտանգի մեջ է, մեր սուրբ հավատը ոտնակոխ է լինում, մանավանդ վտանգի մեջ է մեր խեղճ ու կրակ ազգի ամբողջությունը...մեր կենտրոնը՝ Արմավիրը լուռ է Ջաքարիայի նման. ոչ մի միջոց, ոչ մի խորհրդակցություն...Երևանից եկած մի քանի երիտասարդների քարոզությունները հասարակության խավարագույն մասերում հաջողություն են գտնում... Իրավապես սա մեր՝ ռուսահայերիս եկեղեցու ճգնաժամն է. իրավապես սա Ռուսաստանում ցրված անթիվ հայերի դամբանականն է»<sup>190</sup>: Գևորգ քահանա Օրդուխանյանը 1925 թ հունվարի 3-ին կաթողիկոսին ուղարկած իր նամակում գրում է, որ իրեն ձերբակալել են նախորդ տարվա օգոստոսի 9-ին: Ապա ներկայացնելով Նարիմում (Տոմսկի նահանգ) իր անհուսալի դրությունը, հազուստի և սննդի պակասությունը, օգնություն էր հայցում:

Նովոռոսիյսկի հայոց եկեղեցու և Մայկոպի հայաբնակ գյուղերի (Հայկական շրջան) աղոթատների փակման կապակցությամբ Հյուսիսային Կովկասի և Աստրախանի թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոսը դիմել է ԳԳԽ-ին իր 1929 թ ապրիլի 25-ի և մայիսի 22-ի նամակներով, ուր գրված էր. «Անցյալ 1928 թվի վերջին ամիսներին Հայկական ռայոնի գյուղական իշխանության ներկայացուցիչներն ու գյուղական մի քանի կոմսոմոլներ սկսել են հայ հավատացյալներին նեղել և սպառնալիքներով պահանջել, որ աղոթատները հանձնեն: Հայկական ռայոնի հայ գյուղերից գլխավորն ու ազդեցիկը Խոյթա

<sup>188</sup> Նույն տեղում, էջ 49:

<sup>189</sup> Ստեփանյանց Ս., նշվ. աշխ., էջ 42:

<sup>190</sup> Բեհրոտյան Ս., էջ 49-50:

<sup>187</sup> Բեհրոտյան Ս., նշվ. աշխ., էջ 244:



գյուղն է եղել, որը ուներ Ս. Խաչ աղոթատուն 1883 թվից: 1928 թվի նոյեմբերի վերջերին տեղական իշխանությունը սպառնալիքներով զրավել է այդ աղոթատունը: Այնուհետև նույնպիսի միջոցներով վերցրել են նաև Գունայկա, Պերեվալնայա, Սաղովայա, Մարաթուկ գյուղերի հայոց աղոթատները»<sup>191</sup>:

Ստավրոպոլի հայկական եկեղեցու ունեցվածքի բռնագրավումը գլխավորում էր Մալյանը 1922 թ.: Ստավրոպոլի հայ լուսավորչական միությունը 1923 թ. հունիսի 29-ին դիմել է Ստավրոպոլի Մարզգործկոմին, գրանցելու միությունը համապատասխան գործող կարգի, ըստ այդմ, որպես միության հիմնադիրներ, հանդես են եկել թվով 178 հավատացյալ հայեր, որոնք ստորագրել են վերոհիշյալ դիմումի տակ: Արդեն 1924 թ. փետրվարին պայմանագիր է կնքվում Ստավրոպոլ քաղաքի Բանվորների և Կարմիրբանակայինների Պատգամավորների Խորհրդի հետ, ըստ որի Ստավրոպոլի հայկական եկեղեցին անժամկետ և անվճար օգտագործման էր վերցվում իր եկեղեցական-ծխական առարկաներով՝ դրանք պահպանելու պարտավորություններով: Հարկ է նշել որ, այս պայմանագրի տակ ստորագրել են 48 անձինք<sup>192</sup> և, որ հստակորեն մատնանշված էին կրոնական համայնքի գործունեության պայմանները՝ հակախորհրդային ուղղվածության քաղաքական հավաքների անթույլատրելիություն, գրքերի, թերթիկների բաժանում-վաճառքի բացառում: Արգելվում էր ելույթների և քարոզի անցկացումն ուղղված խորհրդային իշխանության կամ նրա ներկայացուցչի դեմ և այլն:

Ստավրոպոլի հայկական եկեղեցու գործունեությունն իրականացվում էր խիստ ծանր պայմաններում և հակակրոնական քարոզարշավի մթնոլորտում: Արդեն 1929 թ. վերջին Ստավրոպոլի հայկական եկեղեցին և նրա հետ միասին նաև ծխական դպրոցը փակվեցին, գույքն առգրավվեց, իսկ կից գտնվող գերեզմանները թալանվեցին:

Եկեղեցու դեմ ուղղված պայքարն, ինչպես նաև հակակրոնական քարոզարշավն ենթադրում էր ոչ միայն եկեղեցիների փակում, նրա սպասավորների նկատմամբ բռնությունների և աքսորի կիրառում, այլ նաև ֆինանսական հարկադրում: 1930 թ. ապրիլի 9-ին Հյուսիսային Կովկասի և Աստրախանի թեմի առաջնորդ Բագրատ արք. Վարդազարյանի նամակից՝ ուղղված կաթողիկոսին, պարզվում է, որ Արմավիրի ֆինտեսչությունը ծանր հարկեր է դրել առաջնորդի վրա՝

պահանջելով դրա անհապաղ մուծումը: Գրեթե նույն բովանդակությամբ, ԳՀԽ-ի անունով հայտարարություն է արել Նոր Նախիջևանի թեմական խորհուրդը 1930 թ. փետրվարի 26-ին: Այստեղ խոսվում էր ծանր հարկումների պատճառով քահայանագործումից հրաժարված Մեծ Սալա և Նիսվիթա գյուղերի քահանաների մասին, ինչպես նաև փակված եկեղեցիների մասին. «Ներկայիս փակված են թեմիս եկեղեցիներից- 1 (Լենինգրադի Ս. Կատարինե եկեղեցին՝ պետական հարկը վճարելու անկարողության պատճառով, 2 (Նիսվիթա գյուղի Ս. Հովհաննու Կարապետի եկեղեցին՝ քահանայի հրաժարվելուն և պահանջված նորոգությունը կատարելու նյութական միջոց չլինելուն պատճառով և 3 (Սիմֆերոպոլի Ս. Աստվածածին եկեղեցին...»<sup>193</sup>:

1929 թ. օգոստոսին Երևանում դատավարություն էր սկսվել Էջմիածնի վանքի միաբան, Բաթումի և Խարկովի հայերի հոգևոր առաջնորդ Սրապիոն եպիսկոպոս Սամվելյանի նկատմամբ:

Օդեսայի հայկական եկեղեցին (Սր.Գրիգոր Լուսավորիչ) նույնպես, 1920-ական թթ. խորհրդային իշխանության պայմաններում, դժվարին շրջան ապրեց: 1926 թ. դրությամբ քաղաքի հայկական եկեղեցական համայնքի ակտիվը կազմում էր 110 մարդ<sup>194</sup>: Հարկ է նշել, որ Օդեսայի հայկական եկեղեցին շարունակել է գործել նաև 1930-ականներին, թեև քաղաքում բազմաթիվ եկեղեցիներ էին փակվել:

1924-1925 թթ. դրությամբ Անդրկասպիայում հայկական եկեղեցիներ և աղոթատներ էին գործում Պոլտորացկում, Մերվում, Կզըլ-Արվատում, Կրասնովոդսկում, Լենինսկում և Քերքիում. «Պոլտորացկի հայկական համայնքը միավորում էր 900 հավատացյալ հայերի, Մերվը- 342, Կզըլ-Արվատը- 177, Կրասնովոդսկը- 123, Լենինսկը- 148: Դեռևս 1923 թ. Մերվում փակվել էր հայկական ավետարանչական համայնքը»<sup>195</sup>: 1929-1930 թթ. վերոհիշյալ եկեղեցիները վարչական մեթոդներով փակվել են:

Այսպիսի պայմաններում, 1932 թ. նոյեմբերի 10-ին գումարվեց Ազգային եկեղեցական ժողով, որին մասնակցեցին ԽՍՀՄ և արտասահմանի հայկական թեմերի պատգամավորները: Նոյեմբերի 12-ին Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց Խորեն արքեպիսկոպոս Մու-

<sup>193</sup> Բեիրոսյան Ս., նշվ. աշխ., էջ 213:

<sup>194</sup> Давтян А., История храма Св. Григория Просветителя армянской апостольской церкви в Одессе, Одесса, 2004, с.80-81.

<sup>195</sup> Григорянц В., К истории армянской церкви в Туркмении (конец XIX - середина XX вв.), Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 1991, հ.6 (582), էջ 14:

<sup>191</sup> Նույն տեղում, էջ 185-186:

<sup>192</sup> Аванесов Б., Духовная жизнь армянской общины города Ставрополь, Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 2006, № 2 (108), էջ 95:

րադբեկյանը, իսկ Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահ՝ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը: 1934 թ. մայիսին կաթողիկոս Խորեն Ա-ն իր կոնդակով Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին նշանակեց Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների կառավարությունների ներկայացուցիչների հետ տարվող բանակցություններում հայ եկեղեցու ներկայացուցիչ և միանգամից հանձնարարեց մեկնել Թիֆլիս: Վիրահայոց թեմի եկեղեցիների վիճակի մասին կաթողիկոսը ծավալուն նամակ ուղարկեց Վրաստանի Կենտրոնական նախագահ Ֆ. Մախարաձեին, ուր գրված էր. «Տեղական իշխանությունների ապօրինի արարքների պատճառով հայ եկեղեցին ընդհանրապես ծանր օրեր է ապրում: Խորհրդային Վրաստանում փակվել է հայ եկեղեցիների 90 տոկոսը: Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիս քաղաքում 26 հայ եկեղեցիներից փակվել է 11-ը, քանդվել է չորսը, երեքը վարչական միջոցներով խլվել են... Այսպիսով, թեմական հոգևոր խորհրդի ենթակայության տակ է մնացել ընդամենը յոթ եկեղեցի...»<sup>196</sup>: Իր ուղերձում կաթողիկոսը նշում էր ընթացիկ տարում Թիֆլիսում փակված երեք եկեղեցիների մասին, պահանջում՝ հարկերից ազատել հայ եկեղեցին, ազատել Վելիցիխեի եկեղեցին: 1933 թ. Վիրահայոց թեմի եկեղեցիների վրա ֆինբաժնից հարկեր են դրվում, չմուծելու դեպքում առաջ էր քաշվում Թիֆլիսի 11 հայկական եկեղեցիները կնքելու հարցը:

1934 թ. արտասահման ուղարկվեց ԳՀԽ-ի նախագահ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը՝ որպես նվիրակ և լիազոր ներկայացուցիչ սփյուռքի եկեղեցական գործերում:

Փարիզի «Վեմ» հանդեսը, փաստում էր էջմիածնի իրավագուրկ վիճակը Խորհրդային Միությունում, ակտիվության կոչ էր անում սփյուռքի կենտրոններին. «... Խորհրդային սահմաններում եկեղեցին, ազգային հաւաքական կեանքի տեսակետից, իրաւագուրկ եւ այլեւս անարժէք հաստատութիւն է...»<sup>197</sup>: «Վեմ»-ն իր էջերում լուրջ քննարկման առարկա էր դարձրել էջմիածնում մշակվող հայ եկեղեցու Սահմանադրության նախագիծն, այդ խնդրի վրա էր հրավիրում ամբողջ սփյուռքի, մանավանդ, նրա ղեկավար շրջանների ուշադրությունը, գտնելով, որ այդ եկեղեցական ժողովը պետք է գումարել սփյուռքում և այն ավելի շուտ շոշափելու է իրենց շահերը:

Խորհրդային իշխանությունը շարունակեց հետամուտ լինել հայ եկեղեցու նկատմամբ հալածանքին: Լենինգրադի մարզից վտարվում

է հայ եկեղեցու միակ քահանա Նիկոլայ Քուրոյանը, իսկ 1937 թ. մարտի 2-ին կնքվում է Աստրախանի միակ հայկական եկեղեցին: 1938 թ. սկզբին բանտարկվում է Մոսկվայի հայոց եկեղեցու միակ քահանա Արշակ Ճանճիկյանը՝ դատապարտվելով տասը տարվա ազատազրկման, իսկ հունիսի 22-ին Մոսխորի որոշմամբ փակվում է Լազարյանների միջոցներով կառուցված տեղի հայկական եկեղեցին: Շուտով փակվում է Լազարյանների միջոցներով կառուցված Լենինգրադի հայոց եկեղեցին ևս: Վերսկսվում են Վրացական և Ադրբեջանական ԽՍՀ-ներում հայ եկեղեցու և հավատացյալների նկատմամբ հարուցվող արգելքները: 1930-ական թթ. Ուզբեկական ԽՍՀ-ում դեռևս չփակված միակ հայկական եկեղեցին Սամարղանդում էր, որի փակման մասին որոշումը կայացնում է Սամարղանդի քաղխորհուրդը 1939 թ. օգոստոսի 1-ին: Որոշման մեջ հստակ նշվում էր, որ շուրջ յոթ ամիս եկեղեցում ծիսակարգ չի կատարվել այն պահից, երբ ընդամենը տաս հավատացյալ ունեցող եկեղեցու (եկեղեցական-համայնքային) առաջնորդը ձերբակալվեց, ուստիև որպես կատարված իրողություն պետք է դիտել եկեղեցական համայնքի լուծարումը: Քաղխորհուրդը միջնորդություն էր հարուցում Ուզբեկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի առաջ՝ հաստատելու իր որոշումը, որի համաձայն եկեղեցու սրահներից մեկը տրվելու էր գյուղատնտեսական ինստիտուտին որպես հանրակացարան<sup>198</sup>:

Խորեն Ա կաթողիկոսի 1937 թ. մայիսի 9-ի՝ ՀԽՍՀ ներքին գործերի ժողկոմ Խ. Սուղդուսուն ուղղված նամակից պարզ է դառնում հայ եկեղեցու և նրա սպասավորների նկատմամբ բռնությունների իրական ու ահասարսուռ պատկերը. «Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որ այսօր Խորհրդային Միության մեջ ունի միայն 19 միաբան, նրանցից 4-ի՝ նկատմամբ մեր Հայրենիքի և հարազատ կառավարության մեղադրանքը համազոր է անվստահության՝ հանդեպ Ս. Էջմիածինը...»<sup>199</sup>, իսկ արդեն 1937 թ. դեկտեմբերի 4-ին Խորեն Ա-ն, դիմելով ներքին գործերի ժողկոմ Վ. Խվորոստյանին, գրում էր. «...վերջերս Թիֆլիսում ևս վեց հայ քահանաներ կալանքի տակ առնվեցին...»<sup>200</sup>, ապա նաև փաստում, որ Հայաստանում 4 եկեղեցի է մնացել, իսկ 800-ից ավելին փակվել են վարչական եղանակով: Հասել էր հայ եկեղեցու ղեկավարի հետ դատաստան տեսնելու ժամանակը,

<sup>196</sup> Ստեփանյանց Ա., էջ 101:

<sup>197</sup> Վեմ, Փարիզ, Սեպտեմբեր-Հոկտեմբեր, 1934, էջ 121:

<sup>198</sup> Назарьян Р., Из истории армян Средней Азии, Убурдаվոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIII, Երևան, 2004, էջ 551:

<sup>199</sup> Մանուկյան Ա., Հայ առաքելական եկեղեցու բռնադատված հոգևորականները 1930-1938 թթ. (ըստ ՊԱԿ-ի փաստաթղթերի), Ե., 1997, էջ 17:

<sup>200</sup> Բեիրության Ա., էջ 321:

կաթողիկոսի կողքին Մայր Աթոռում հաշված թվով սպասավորներ էին մնացել:

1938 թ. ապրիլի 5-ի լույս 6-ի գիշերը Խորեն Ա Մուրադբեկյանը վախճանվեց: Գուցե թե, կանխագգալով մոտալուտ դժբախտությունը, Խորեն Ա-ն փորձառու գործչին հատուկ հեռատեսությամբ, իրեն տեղակալ էր նշանակել՝ աչքի առաջ ունենալով Պարզ Ե կաթողիկոսի մահվանից հետո հայ եկեղեցու խառնակ վիճակը 1930-1932 թթ.: Հայ եկեղեցու շուրջ ստեղծված տագնապը խորհրդահայ համայնքներից զատ փոխանցվել էր նաև արտասահմանի հայաշատ կենտրոններ, ուր բազմաթիվ հրապարակումներ եղան այդ առթիվ: Այդ հրապարակումներից էր Բոստոնում լույս տեսած Ա. Պարտիզեանի «Հայ եկեղեցույ տագնապը և անոր պատասխանատուները» աշխատությունն, ուր հեղինակը տարբեր կողմերով քննարկել է հայ եկեղեցու ներքին կյանքն ու դրա արտաքին ազդեցությունը. «...երկրի մեջ բուլշեփեկեան քաղաքականութիւնը վերացնում է եկեղեցական իշխանութեան ամեն մի հետք... նոյն ժամանակ բուլշեփեկներն արտասահմանում պաշտպան են հանդիսանում եկեղեցականների «իշխանութեան», հրահրում են կիրքերը եւ պայքար ստեղծում հայ համայնքների մէջ»<sup>201</sup>:

1938 թ. սահմանագիծ հանդիսացավ Խորհրդային Միությունում Հայ առաքելական եկեղեցու դեմ վճռական քայլերի անցնելու համար, հայ եկեղեցու գլխին կախվել էր փորձությունների նոր վտանգ:

1938-1939 թթ. փոխվեց միջազգային ռազմաքաղաքական իրավիճակը, սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը և արդեն. «1940 թվականի սկզբներին իշխանությունների վերաբերմունքը եկեղեցու հանդեպ սկսեց փոխվել»<sup>202</sup>: Խորհրդային իշխանությունների ճնշումը թուլացավ, ինչը սակայն, չէր նշանակում եկեղեցու հետ հաշտություն: Միջազգային իրադրությամբ պայմանավորված՝ ավելի «մեղմ» քաղաքականությունն եկեղեցու նկատմամբ դարձավ նրա փրկության միակ օղակը: Հայ առաքելական եկեղեցու ղեկի մոտ կանգնած էր Պարզ արքեպիսկոպոս Չորեքչյանը:

Խորհրդային իշխանությունն արտասահմանի հայության աչքում իր հեղինակությունը բարձրացնելու և ֆաշիզմի դեմ պայքարում եկեղեցու ունեցած կշիռը օգտագործելու համար երկրի ներսում, թույլատրեց Ազգային եկեղեցական ժողովի անցկացում: 1941 թ. ապրիլի 10-13-ը տեղի ունեցած Ազգային եկեղեցական ժողովը ցան-

կալի արդյունք չբերեց, կաթողիկոս չընտրվեց. «Թեև արտասահմանյան թեմերից մի քանի պատվիրակներ էին ժամանել, և ժողովի աշխատանքներին մասնակցեցին Խորհրդային Միության առկա թեմերի ներկայացուցիչները, սակայն ներկաների թիվը չէր բավարարում կաթողիկոսի ընտրություններ անցկանելու համար»<sup>203</sup>: Արտասահմանի հայ եկեղեցական թեմերը մի քանի պատվիրակ էին ուղարկել ժողովին, ինչն ակնհայտ անվստահության էր նշանակում հանդեպ Խորհրդային վարչակարգը և նրա եկեղեցական քաղաքականությունը: Այնուհանդերձ, ժողովը որոշեց ԳՀԽ-ի նախագահ Պարզ արքեպիսկոպոս Չորեքչյանին թողնել ղեկավարելու Հայ առաքելական եկեղեցին՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի Ազգընտիր տեղապահի կոչումով, իսկ ԳՀԽ-ն լիազորվեց. «...պարբերաբար ուղարկել լիազոր ներկայացուցիչներ միութենական հանրապետության և արտասահմանյան թեմերը ծանոթանալու նրանց իրական վիճակին, հոգևոր իշխանության գործունեության, վերահսկողության և ըստ հարկի ցուցումներ տալու նպատակով»<sup>204</sup>: Ազգային եկեղեցական ժողովի այս որոշումը հնարավորին օպտիմալն էր ստեղծված իրավիճակում և «համապատասխանում էր ինչպես Էջմիածնի կաթողիկոսության, այնպես էլ ԽՍՀՄ-ում գտնվող հայոց թեմերի հավատացյալների ձգտումներին, որոնց նպատակն էր վերականգնել և վերաբացել բուլշեփեկների կողմից փակված վանքերն ու եկեղեցիները»<sup>205</sup>:

Այս խնդիրներին հետամուտ լինելուն խանգարեց ռազմաքաղաքական իրավիճակի սրումը՝ 1941 թ. հունիսի 22-ին սկսվեց Հայրենական Մեծ պատերազմը: Ինչպես ռուս ուղղափառ եկեղեցին, այնպես էլ Հայ առաքելական եկեղեցին չէր կարող հեռու մնալ տեղի ունեցող իրադարձություններից, ժողովրդին պայքարի ոգեկոչելուց: Արդեն, 1941 թ. հուլիսի 5-ին հայ եկեղեցու Գերագույն Հոգևոր Խորհուրդը թշնամու դեմ պայքարի կոչով դիմեց աշխարհի հայ հավատացյալներին:

1941 թ. հուլիսի 30-ին ԳՀԽ-ը ժողովրդին ուղղված երկրորդ կոչում նշում էր. «Հայը, բացի Խորհրդային Հայաստանից՝ չունի այլ հայրենիք: Հայը՝ Հայաստանից դուրս՝ չունի այլ հաստատուն կռվան, բացի հայ եկեղեցին և նրան գլխավորող Ամենայն Հայոց հայրապետությունը Ա. Էջմիածնի Հայրապետական Աթոռով... Ամեն հայ

<sup>203</sup> Ստեփանյանց Ա., նշվ. աշխ., էջ 135:

<sup>204</sup> Նույն տեղում, էջ 135-136:

<sup>205</sup> Նույն տեղում, էջ 136:

<sup>201</sup> «Վեմ», Յունիար-Մայիս, 1938, էջ 116:

<sup>202</sup> Ստեփանյանց Ա., նշվ. աշխ., էջ 134:

մարդ, որ նախանձախնդիր է իր հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի բարգավաճման՝ նա կաջակցի, անշուշտ, և կպաշտպանե Խորհրդային Միությունը»։ Հայ առաքելական եկեղեցուն պարտադրված վիճակից դուրս բերելու և նրա դիրքերը ամրապնդելու համար միակ ճանապարհը Պևրոզ արքեպիսկոպոս Չորեքչյանն, իրավացիորեն, տեսնում էր ակտիվ քաղաքական գործունեության ու բարեգործության մեջ։

Հայ եկեղեցու ձեռնարկների գնահատականն էր Ստալինի 1943 թ. հունվարի 26-ի հեռագիրն ուղղված Պևրոզ արք. Չորեքչյանին, ուր ասվում էր. «Խնդրում եմ իմ ողջույնը և կարմիր բանակի շնորհակալությունը հայտնել հավատացյալ հայերին ու էջմիածնի կաթողիկոսարանի հոգևորականությանը...»<sup>206</sup>։ Այս արձագանքին սպասող հայ եկեղեցու համար ակտիվ գործելու և պաշտոնապես ճանաչվելու իրավունք էր տրվում։ Ավելին, ընդգծելու համար պետություն-եկեղեցի «շտկված» հարաբերությունները, Ստալինի ցուցումով 1943 թ. նոյեմբերի 28-ին ժողկոմխորհն որոշում կայացրեց հայտերի ներկայացման դեպքում եկեղեցիների վերաբացման կարգի մասին, որը սակայն, իրականացվեց մասամբ։

1945 թ. ապրիլի 19-ը շրջադարձային էր հայ եկեղեցու պատմության մեջ՝ Պևրոզ արք. Չորեքչյանին Կրեմլում ընդունեց Ի. Ստալինը։ Այս համդիպմանն Ազգընտիր տեղապահը ներկայացրեց էջմիածնի հետագա գործունեության համար անհրաժեշտ պահանջ-խնդիրներ, սակայն դրանցից ամենագլխավոր ձեռքբերումն Ազգային եկեղեցական ժողովի գումարման և կաթողիկոսի ընտրություններ անցկացնելու թույլտվությունն էր։

Ազգային եկեղեցական ժողովի բացումը տեղի ունեցավ 1945 թ. հունիսի 16-ին, ուր ներկա էին. «Արտասահմանի թեմերից՝ Եգիպտոսի, Ամերիկայի, Արևելյան, Բուլղարիայի, Իրան-Յնդկական և Թեհրանի, Ռումինիայի և Աստրախանի թեմական ներկայացուցիչն իրենց թեմերի պատգամավորներով։ ՍՍՌ Միության թեմերից՝ Արարատյան, Շիրակի, Վրաստանի, Բաքու-Թուրքեստանի, Յուսիսային Կովկասի և Նոր Նախիջևանի, Բեսարաբիայի թեմական առաջնորդներն իրենց պատգամավորներով. ընդամենը 102 պատգամավոր, որոնցից 28 հոգևորական և 74 աշխարհական»<sup>207</sup>։

Հունիսի 22-ին՝ վեցերորդ նիստում, Ամենայն Հայոց կաթողիկոս

ընտրվեց Պևրոզ արք. Չորեքչյանը (Պևրոզ Զ)։ Հայ Առաքելական եկեղեցու գահին յոթ տարվա բացակայությունից հետո բարձրացավ ամենաարժանավորն, ով նույնիսկ անելանելի թվացող վիճակներից կարողացավ դուրս բերել եկեղեցին։ Ազգային եկեղեցական ժողովն ընդունեց Հայ առաքելական եկեղեցու նոր սահմահարություն, իսկ շատ չանցած վերականգնվեց ճեմարանի գործունեությունը, տպարանը, վանքի գրադարանը, «էջմիածին» ամսագրի հրատարակությունը։

1945 թ. Ազգային եկեղեցական ժողովը շրջադարձային հաջողություն ունեցավ. «եկեղեցու կառուցվածքում հայտնվեցին նոր թեմեր ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ արտասահմանում»<sup>208</sup>։ Հետևում մնացին 1920-1930-ական թթ. կրած հալածանքներն ու խորը ճգնաժամը, եկեղեցին վերագտավ իրեն, ամրապնդեց խարխված հիմքերը, վերականգնվեց էջմիածնի հեղինակությունն ու դերը, նրա համագային նշանակությունը։ Ուստիս պատահական չէին այն ձեռնարկներն, որոնցով հանդես էր գալիս Ամենայն Հայոց Հայրապետը՝ կազմակերպել արևմտահայերի ներգաղթ, բռնադատված և աքսորված հոգևորականների խնդրի լուծում, Ղրիմից տեղահանված հայերի վերադարձ ևն։ 1945 թ. Ազգային եկեղեցական ժողովն իր որոշումներով, Ամենայն Հայոց Հայրապետի ընտրությամբ, հայ եկեղեցուն վերակազմվելու և գործելու հնարավորություն ընձեռեց՝ իր պատմական դերը կատարելու հայության հոգևոր-մշակութային կյանքում։

Այսպիսով, 1920-1930-ական թթ. Հայ առաքելական եկեղեցին հայտնվեց օրհասական վիճակում՝ հաղթահարելով ամբողջատիրական համակարգի ստեղծած անասելի դժվարությունները։ Ազգային պետականության բացակայության և խորհրդային իշխանության հակակրոնական, աթեիստական գաղափարախոսության պայմաններում հայ եկեղեցին կանգնել էր կործանման եզրին։ Ընդամենը քառորդ դարի ընթացքում Հայ առաքելական եկեղեցին իր գոյությանն ուղղված այնպիսի հարվածներ կրեց, ինչպիսին գուցեև իր հազարամյա պատմության ընթացքում չէր ունեցել։ XX-րդ դարում՝ երկու աշխարհամարտի միջև ընկած շրջանում, հայ Առաքելական եկեղեցին կործանարար հարված կրեց նախ Արևմտյան Հայաստանում, ապա նաև մեծ ճիգերի գնով հաղթահարեց խորհրդային հակակրոնական քաղաքականությունն, որի ծանր հետևանքները զգալի էին նաև հետագա տասնամյակներում ևս։ Խորհրդային իշխանության

<sup>206</sup> Տերչանյան Ա., Հայ առաքելական եկեղեցին երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945 թթ.), Ե., 2001, էջ 47։

<sup>207</sup> Նույն տեղում, էջ 97; Ա. Ստեփանյանց, նշվ. աշխ., էջ 170։

<sup>208</sup> Ստեփանյանց Ա., նշվ. աշխ., էջ 174։

եկեղեցու և կրոնի դեմ պայքարի սկզբունքների ու եղանակների ամրագրումից հետո՝ 1918-1922 թթ., դրանք կիրառության գտան նախ Ռուսաստանում, ապա արագորեն «ներդրվեցին» և էտալոնային դարձան նաև մյուս խորհրդային հանրապետություններում:

Հայ առաքելական եկեղեցին, ինչպես Հայկական ԽՍՀ-ում, այնպես էլ խորհրդահայ թեմերում ենթարկվեց բռնությունների ու նվաստացման. փակվեցին եկեղեցիներ, բռնազավթվեց նրա գույքն ու ունեցվածքը, հարկադրվեց հոգևոր դասը: Վերջիններիս մի մասը պարտադրանքի տակ հրաժարվեց հոգևոր կոչումից և ծառայությունից, մի մասն էլ աքսորվեց և դատապարտվեց տաժանակրության:

Հայ առաքելական եկեղեցու խորհրդահայ թեմերից առաջինը ռոտնձգության ենթարկվեց Վիրահայ թեմը: Հայ առաքելական եկեղեցու և նրա սպասավորների նկատմամբ ռոտնձգություններ տեղ գտան նաև Հյուսիսային Կովկասի և Աստրախանի, Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմերում ևս, ուր հայկական եկեղեցիները փակվեցին ոչ միայն վարչական մեթոդներով, այլ նաև արհեստականորեն ստեղծված պայմանների բերումով՝ հարկադրմամբ:

Խորհրդահայ թեմերում՝ Հյուսիսային Կովկասից մինչև Հեռավոր Արևելք, հայ եկեղեցին և նրա սպասավորներն ենթարկվեցին բռնությունների, դատավարության, աքսորի և պառակտման:

Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ բռնությունների ալիքն իր գագաթնակետին հասավ 1938 թ., երբ էջմիածնում, խորհրդավոր պայմաններում, ամբողջատիրական համակարգի զոհը դարձավ Խորեն Ա կաթողիկոսը. հայ եկեղեցու գլխին կախվեց գոյության վտանգը:

Միայն միջազգային ռազմաքաղաքական իրավիճակի սրումը և վերահաս երկրորդ աշխարհամարտը ստիպեցին խորհրդային իշխանություններին հեռատես գտնվել և երկրում դադարեցնել բռնություններն եկեղեցու և կրոնի նկատմամբ:

Խորհրդային բռնաճնշիչ համակարգի՝ հայ եկեղեցուն և նրա սպասավորներին, հավատացյալներին հասցրած վնասները հսկայական էին, դժվար է անգամ ստույգ նշել հոգևոր դասի կրած մարդկային կորուստների իրական պատկերը: Հետպատերազմյան տարիներին Հայ առաքելական եկեղեցին դանդաղորեն, սակայն կարողացավ վերագտնել իրեն և կրկին ստանձնել իր հոգևոր-ազգային դերակատարությունը:

### 3.3. Կրթամշակութային կյանքը

Ռուսական կայսրության սահմաններում հայկական ուսումնական հաստատությունների առաջացումը, նախևառաջ, պայմանավորված էր այստեղ սովոր հայ բնակչության հաստատումով և համայնքների կազմակերպմամբ. «Կյանքի բարեկեցիկ պայմանները հնարավորություն էին ընձեռում ուշադրության կենտրոնում պահել և ամեն կերպ խթանել ուսումնակրթական գործը»<sup>209</sup>: Ռուս իրականության հայազգի առաջադեմ գործիչներն ազգային կրթության և ազգային ոգով դաստիարակության մեջ էին տեսնում հայ ժողովրդի գոյատևման ու առաջընթացի միակ ուղին: Դպրոցն ու հայեցի կրթությունը կարող էին ազգի մեջ ձևավորել միասնական գաղափարախոսություն, պահպանել ազգային ինքնագիտակցությունը:

Պատահական չէ, որ հայ գաղթօջախների և համայնքների պատմության ուսումնասիրողների զգալի մասն առանձնացնում է հետևյալ իրողությունը. «Գաղթող հայ զանգվածը նոր բնակավայրում մտահոգվում և առաջին հերթին հիմնում է եկեղեցի և ուսումնարան, սեփական հավատն ու լեզուն, ազգային ինքնության հիմնական գործոնները պահպանելու համար»<sup>210</sup>, հետևաբար, ռուսահայ գաղթների առաջացումից շատ չանցած, այստեղ սկզբնավորվել է նաև ուսումնակրթական գործը:

Ռուսաստանի հայկական ուսումնարանների շարքում առանձնահատուկ տեղ էր վերապահված Մոսկվայի Լազարյան ճեմարանին, որն ավելի քան մեկ դար հանդիսացավ հայ իրականության ամենակարևոր ու բեղմնավոր գիտակրթական հաստատությունը՝ խոշոր հետք թողնելով հայ մշակույթի պատմության մեջ:

Ընդհանրապես ուսումնական ծրագրի, մանկավարժական նշանավոր կադրերի (Հ. Ալամդարյան, Մ. Նալբանդյան, Ս. Նազարյան, Մ. Էմին, Մ. Մսերյանց և ուրիշներ) Լազարյան ինստիտուտը հայագիտության, հայկական լուսավորության ու ազգային մտավորականության, գրա-հրատարակչության կարևոր օջախ դարձավ: Գիտակրթական գործունեությամբ, իր բազում հրատարակություններով ճեմարանը դարձավ արևելագիտության, հայագիտության անփոխարինելի կենտրոն. «Լազարյան ճեմարանը եղել է նաև ռուսաստանյան արևելագիտության հիմնական կենտրոններից մեկը»<sup>211</sup>:

<sup>209</sup> Բարխուդարյան Վ., Համառոտ ուրվագիծ ռուսական կայսրության հայկական դպրոցների պատմության, Ե., 2006, էջ 4:

<sup>210</sup> Մույն տեղում, էջ 8:

<sup>211</sup> Հայ գաղթաշխարհի..., Նշվ. աշխ., էջ 311:

Լազարյան ճեմարանին առընթեր հիմնված տպարանի շնորհիվ լայն թափ առավ հայերեն գրքերի հրատարակությունը. «Հայերեն և ռուսերեն տպատառերից բացի, Լազարյան ճեմարանի տպարանում կային 20-ից ավելի եվրոպական և ասիական լեզուներով տպագրության համար տպատառեր»<sup>212</sup>: Այստեղ հրատարակվեցին հայոց պատմության, գրականության վերաբերյալ արժեքավոր աշխատություններ (այդ թվում՝ եռահատոր «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа» ժողովածուն), դասագրքեր, ձեռնարկներ, բառարաններ: Իր ավելի քան մեկդարյա գործունեության ընթացքում Լազարյան ճեմարանը տվեց 2000-ից ավելի շրջանավարտներ, որոնք դարձան մանկավարժներ, զինվորականներ, պետական ծառայողներ, դիվանագետներ և հոգևոր գործիչներ: Ճեմարանը ծանրակշիռ դեր կատարեց հայ և ռուս ժողովուրդների մշակութային մերձեցման և բարեկամության գործում: Լազարյան ճեմարանն, ինչպես Ռուսաստանի մյուս հայկական ուսումնական հաստատությունները, նոր շրջան թևակոխեց ռուսական հեղափոխությունից հետո, վերակազմվելով ստեղծված պայմաններին համապատասխան, ապա նաև ծառայելով որպես Խորհրդային Հայաստանի Մշակույթի Տուն Մոսկվայում:

Նախ 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունն, ապա նաև հոկտեմբերյան հեղաշրջումը ռուսահայ ազգային կյանքի ակեղծում առաջացրին: Հայության շրջանում հույսեր արթնացան ազգային-համայնքային կյանքի զարթոնքի առումով, այդ թվում հայ համայնքների ազգային կրթության վերածննդի և զարգացման ծրագրերի առնչությամբ, այսպես. «1917 թ. մայիսի 20-ին Աստրախանի հայերի հոգաբարձական խորհուրդը որոշեց Աղաբաբյան ուսումնարանը (որը շարունակաբար էր մնալ քաղաքի հայկական կրթության հիմնական օջախը) վերափոխել Աստրախանի Աղաբաբյան հայկական գիմնազիայի: Երեք ամիս անց գիմնազիայի կանոնադրությունը հաստատվեց ժամանակավոր կառավարության կողմից»<sup>213</sup>: Հետաքրքրական է, որ այս գիմնազիայի ծրագիրը համապատասխանում էր դասական գիմնազիայի ծրագրին՝ հայոց լեզվի և գրականության, հայոց պատմության, մշակույթի և կրոնի դասավանդման ավելացմամբ:

Բոլշևիկյան մենիշխանության հաստատումով, Ռուսաստանը ներքաշվեց քաղաքացիական պատերազմի մեջ, իսկ հայկական հա-

մայնքներն իրենց վրա կրեցին քաղաքական ցնցումները: Եթե Հյուսիսային Կովկասում և Դոնում, ուր բնակվում էր Ռուսաստանի հայության հիմնական զանգվածը, խորհրդային կարգերն ամրապնդվեցին 1920 թ., ապա Մոսկվայում, Պետրոգրադում և այլն, խորհրդային իշխանությունը հաստատվել էր ավելի վաղ՝ արդյունքում տարբեր տարածաշրջաններում գտնվող հայ համայնքներին դնելով տարբեր սոցիալ-քաղաքական պայմանների մեջ: Քաղաքացիական պատերազմի տարիներին տարբեր կերպ դրսևորվեցին նաև հայ համայնքների ոչ միայն սոցիալ-քաղաքական, այլ նաև մշակութային-կրթական կյանքը: Խորհրդային իշխանության պատվար Պետրոգրադում, Մոսկվայում և այլ վայրերում տեղ գտան կրթական քաղաքականության նոր մոտեցումներ, հիմք էր դրվում խորհրդային դպրոցին, իսկ մասնավորաբար, Դոնում, Հյուսիսային Կովկասում և դեռևս չխորհրդայնացած մյուս տարածաշրջաններում նախկին դպրոցական համակարգը շարունակեց գոյատևել ևս մի որոշ ժամանակ:

Խորհրդային իշխանության քաղաքականությունը լուսավորության ոլորտում խորությամբ ըմբռնելու համար անհրաժեշտ է խորամուխ լինել այս ոլորտում նոր քաղաքականության ձևավորմանը: Այսպես, 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո՝ նոյեմբերի 8-ին, Համառուսաստանյան Կենտգործկոմ է ներկայացվում դեկրետ լուսավորության պետական հանձնաժողով ձևավորելու մասին: Այս դեկրետով լուսավորության կազմակերպման ընդհանուր գործը դրվում էր լուսավորության պետական հանձնաժողովի իրավասության տակ, որի փաստացի ներկայացուցիչն ու գործադիրը հանդիսանում էր լուսավորության ժողովրդական կոմիտարը: Միևնույն ժամանակ ընդգծվում էր, որ. «...ամբողջ դպրոցական գործը պետք է փոխանցվի տեղական ինքնակառավարման մարմիններին»<sup>214</sup>, իսկ այդ հիմնարկները պետք է ունենային լիիրավ ինքնավար կարգավիճակ ինչպես կենտրոնի, այնպես էլ մունիցիպալ մարմինների նկատմամբ: Այսուհանդերձ, նշվում էր, որ այս որոշումը կրում է ժամանակավոր բնույթ, քաղաքականությունը ճշգրտվելու էր ավելի ուշ. «Միայն Սահմանադիր ժողովն է սահմանելու մեր երկրում պետական և հասարակական կյանքի մանրագին կարգը, այդ թվում ժողովրդական լուսավորության կազմակերպման ընդհանուր բնույթը»<sup>215</sup>:

<sup>212</sup> Базиянц А., Лазаревский институт в истории отечественного востоковедения., М., 1983, с.38.

<sup>213</sup> Հայ գաղթաշխարհի..., էջ 288:

<sup>214</sup> Декреты Советской Власти, том 1, М., 1957, с. 61.

<sup>215</sup> Նույն տեղում:

Գետաքրքրական է, որ լուսավորության պետական հանձնաժողովին զուգահեռ որոշ ժամանակ իր գործունեությունն է շարունակել նաև ժամանակավոր կառավարությանը կից ստեղծված ժողովրդական լուսավորության Պետական Կոմիտեն: Վ. Լենինի ստորագրությամբ հրապարակված 1917 թ. նոյեմբերի 20-ի դեկրետով, «բուրժուական» ոգու ծնունդ լուսավորության Պետական Կոմիտեն լուծարվեց. «Այդ Կոմիտեի և ոչ մի օրենսդրական նախագիծ լույս չտեսավ, և անգամ ինքը կոմիտեն մինչ այժմ չէր լիազորված պետական իշխանությամբ, որպես պետական հիմնարկություն»<sup>216</sup>:

Վ. Լենինի և Լուսավորության ժողկոմ Ա. Լուևաչարսկու ստորագրությամբ 1917 թ. դեկտեմբերի 11-ին նոր դեկրետ է հրապարակվում, որով ժողովրդական լուսավորության կոմիսարիատին են փոխանցվում հոգևոր գերատեսչության ենթակայության տակ գտնվող եկեղեցական-ժխական կրթական հիմնարկները: Լուսավորության ժողկոմ Լուևաչարսկու ներկայացրած դեկրետով խորհրդային իշխանությունը հոգևոր հաստատություններին անվերադարձ զրկեց կրթության և դաստիարակության գործում ունեցած դերից. «Փոխանցման են ենթակա բոլոր եկեղեցական-ժխական (տարրական միամյա, երկամյա) դպրոցները, ուսուցչական սեմինարիաները, հոգևոր ուսումնարաններն ու սեմինարիաները, իգական թեմական ուսումնարանները, միսիոներական դպրոցները, ակադեմիաները, բոլոր մյուսները, որոնք կրում են տարբեր անվանումներ, հոգևոր գերատեսչության տարրական, միջնակարգ և բարձրագույն դպրոցներն ու հաստատությունները իրենց հաստիքներով, ունեցվածքով, շարժական և անշարժ գույքով, այսինքն՝ շինություններով... գրադարաններով և բոլոր տիպի ձեռնարկներով, արժեքներով, կապիտալով, և արժեթղթերով, և դրանց տոկոսներով...»<sup>217</sup>:

1917 թ. դեկտեմբերի 29-ին հրապարակված «Պետական հրատարակչության մասին» դեկրետով պետական այս հիմնարկությանն է վերապահվում ուսումնական ձեռնարկների մասսայական հրատարակման գործը: Անհրաժեշտ էր դիտվում փոփոխել Լուսժողկոմատին փոխանցված ուսումնական ձեռնարկները. «Հին ուսումնական ձեռնարկների ստուգումն ու ճշտումը և նորերի ստեղծումը պետք է իրականացվի հատուկ հանձնաժողովի միջոցով՝ կազմված մանկավարժական, գիտական և դեմոկրատական կազմակերպությունների

պատվիրակներից և հատուկ հրավիրված փորձագետներից»<sup>218</sup>:

Հոգևոր հաստատություններից ուսումնակրթական ոլորտի ամբողջական օտարումը տեղի ունեցավ 1918 թ. հունվարի 20-ի «Խղճի ազատության, եկեղեցական և կրոնական կազմակերպությունների մասին» դեկրետով, ուր գրված էր. «Դպրոցն անջատվում է եկեղեցուց: Կրոնական ուսմունքների դասավանդումը բոլոր պետական և հասարակական, ինչպես նաև մասնավոր ուսումնական հաստատություններում, ուր դասավանդվում են հանրակրթական առարկաներ, չի թույլատրվում»<sup>219</sup>:

1918 թ. հունիսի 18-ին ժողկոմխորհի ընդունած դեկրետով հաստատվեց Խորհրդային Ռուսաստանում ժողովրդական կրթության կազմակերպման մասին կանոնադրություն՝ բաղկացած 30 կետից: Կանոնադրության 10-րդ կետով սահմանվում էր, որ ժողովրդական կրթության ղեկավարման գործը տեղեղում, ինչպես նախադպրոցական, այնպես էլ դպրոցական և արտադպրոցական, իրականացնելու են համապատասխանաբար վոլոստային, գավառային, նահանգային և մարզային գործկոմների ժողկրթության բաժինները:

Խորհրդային իշխանությանը ներքո գտնվող տարածաշրջաններում կիրառության մեջ մտցվեց նոր դպրոցական կանոնադրությունը: Նոր կանոնադրության 2-րդ հոդվածով սահմանվում էր, որ. «Միասնական դպրոցը բաժանվում է 2 աստիճանի.

1-ինը՝ 8-13 տարեկան երեխաների համար (5-ամյա ծրագիր)

2-ը՝ 13-17 տարեկանների համար (4-ամյա ծրագիր)»<sup>220</sup>:

Դպրոցական կյանքի հիմք պետք է ծառայեր արտադրական աշխատանքը, ոչ որպես վճարման միջոց և ոչ էլ որպես դասավանդման մեթոդ, այլ հատկապես հասարակական անհրաժեշտ արտադրական աշխատանք: Այն պետք է օրգանապես կապված լիներ ուսուցման հետ, իսկ արտադրական աշխատանքը պետք է ծանոթացներ երեխային տարբեր արտադրական ձևերի հետ. «Աշխատանքային հիմքը կդառնա հզոր մանկավարժական միջոց այն դեպքում, եթե աշխատանքը դպրոցում լինի ստեղծագործաբար ուրախ, ազատ սովորողի անձի նկատմամբ բռնության ձևերից, սրա հետ միասին, պլանային և սոցիալապես կազմակերպված: Այս վերջին իմաստով դպրոցը հանդիսանում է դպրոցական կոմունա...»<sup>221</sup>:

Ինչ վերաբերում էր ուսումնական ծրագրերին, ապա, ինչպես 1-ին

<sup>218</sup> Նույն տեղում, էջ 297:

<sup>219</sup> Նույն տեղում, էջ 372:

<sup>220</sup> Декреты Советской Власти, том 3, М., 1964, с. 374.

<sup>221</sup> Նույն տեղում, էջ 377:

<sup>216</sup> Նույն տեղում, էջ 111:

<sup>217</sup> Նույն տեղում, էջ 210-211:

աստիճանի, այնպես էլ 2-րդ աստիճանի դպրոցներում դրանք որոշակիորեն պետք է հարմարեցվեին տեղական պայմաններին. «Ուսուցումը աշխատանքային դպրոցում երկու աստիճաններում էլ կրում էր ընդհանուր կրթական պոլիտեխնիկական բնույթ»<sup>222</sup>:

1918 թ. դեկտեմբերի 23-ին Համառուսաստանյան Կենտրոնական գործառնական լուծարվեց Համառուսաստանյան Ուսուցչական Միությունը, նրա տեղական կառույցները: Դեկրետը ստորագրել էին Կենտրոնական գործառնական Սվերդլովը և Կենտրոնական քարտուղար Վ. Ավանեսովը: Ուսուցչական Միությունը և նրա ղեկավար օղակները մեղադրվում էին հոկտեմբերյան հեղաշրջումից հետո հակահեղափոխական «Չեղափոխության և հայրենիքի փրկության Կոմիտե»-ի հետ գործակցելու մեջ:

1919 թ. մարտի 4-ին հրապարակվում է «Պետական գիտական խորհուրդ» հիմնելու մասին դեկրետ, որին էլ վերապահված էր կյանքի կոչելու բարեփոխումներն ուսումնական հիմնարկներում, դասավանդման որակի բարձրացումը և ծրագրերի մշակումը:<sup>223</sup>

Այսպիսով, 1917-1919 թթ. հիմնականում նախանշվեցին և օրենքով ամրագրվեցին խորհրդային իշխանության նոր մոտեցումներն ու քաղաքականությունը կրթական ասպարեզում: Իրականում խորհրդային իշխանության քաղաքականությունը գիտակրթական համակարգում իրենից ներկայացնում էր ոչ թե բարեփոխում, այլ նպատակ էր հետապնդում սկզբունքորեն նոր կրթական համակարգի հիմք դնել: Այդ խնդրի իրականացման ճանապարհին տեղի ունեցավ հրաժարում կրթական համակարգի նախկին մոդելից, ինստիտուտներից: Խորհրդային իշխանության դեկրետներն ու որոշումները հստակորեն բացահայտում են նոր խորհրդային դպրոց, հիմնելու ծրագիրը: Այս ճանապարհին դուրս մղվեց կրթական համակարգի ակունքներում կանգնած այնպիսի կառույց, ինչպիսին եկեղեցին էր:

Խորհրդային դպրոցական համակարգը հրաժարվեց ազգային կրթության և դաստիարակության սկզբունքից: Խորհրդային դպրոցը պետք է լիներ միայն պետական, մշակվելու էր ուսուցման նոր ծրագիր:

Փոփոխությունները, որոնք տեղ գտան խորհրդային Ռուսաստանի կրթական համակարգում չէին կարող համընդհանուր և միաժամանակ կիրառություն ունենալ, քանի որ երկիրը ներքաշված էր քաղաքացիական պատերազմի մեջ, ենթարկվել էր օտարերկյա ներ-

խուժման, արդյունքում չէր վերահսկվում տարածքի զգալի մասը:

Ռուսաստանի այն տարածաշրջաններն, ուր ավանդաբար սովոր հայ համայնքներ էին առկա Դոնը, Հյուսիսային Կովկասը, Դրիմը, նաև Միջին Ասիայի մի շարք շրջաններ, խորհրդային կարգերն ամրապնդվեցին ավելի ուշ՝ ի տարբերություն համեմատաբար փոքրաթիվ հայ բնակչություն ունեցող կենտրոնական շրջանների: Ուստի, այս տարածաշրջանների հայկական համայնքները, մինչ խորհրդային իշխանության տակ անցնելը, կարճ ժամանակով՝ 1917-1920 թթ. ունեցան ազգային-մշակութային, համայնքային կյանքի նպաստավոր պայմաններ: Այստեղ գործող հայկական համայնքային կառույցներն ու կրթամշակութային հաստատությունները, թեև նյութական ղեկավարություններին, մեծ մասամբ, շարունակեցին գործել:

Այսպես, վերոհիշյալ ժամանակահատվածում Դոնում և Դրիմում ստեղծվել և գործում էին «Հայ Ուսուցչական Միություն»-ները: Խորհրդային իշխանությունների ձեռնարկած ռեֆորմները և անցումը խորհրդային դպրոցին այստեղ տեղ գտան ավելի ուշ: Դոնի Նախիջևանի և օկրուգի «Հայ Ուսուցչական Միություն»-ը հիմնվել էր 1917 թ., իր շարքերում ուներ 120 անդամ<sup>224</sup>: Միության նախագահն էր Ավետիս Տեր-Հարությունյանը:

Դրիմի «Հայ Ուսուցչության Միություն»-ը ստեղծվել էր 1918 թ. և բաղկացած էր 20 անդամներից: Այստեղ կառավարման խորհրդի անդամները 3-ն էին՝ Ե. Գրիկյան, Ա. Արծրունի և Ս. Տեր-Ստեփանյանը<sup>225</sup>:

Վերոհիշյալ շրջանում Դոնում գործել են հայկական բազմաթիվ ուսումնական հաստատություններ, այդ թվում՝

1. Դոնի Նախիջևանի հայկական Հոգևոր Սեմինարիան (մանկավարժական-կազմը 13 հոգի էր):
2. Առևտրական ուսումնարանը, որը գործում էր Դոնի Ռոստով քաղաքում 8-ամյա էր և պատկանում էր Պարսկահայերի հայրենակցական միությանը<sup>226</sup>/գրանցվել էր 1919 թ. ապրիլին):
3. Արհեստավորական ուսումնարանը, որը գործում էր սբ. Համբարձման եկեղեցուն կից; Տնօրենն էր Դոնի Նախիջևանի Համայնական խորհրդի Նախագահության քարտուղար Զ. Խոշաֆյանը:
4. 1-ամյա արական «Թորոսյան» ուսումնարանը, որը գործում էր սբ. Թեոդորոս եկեղեցուն կից:

<sup>224</sup> Армянский..., т. 24.

<sup>225</sup> Նույն տեղում:

<sup>226</sup> Նույն տեղում, էջ 25; ՀԱԱ, ֆ. 1265, ց. 1, գ. 40, ք. 49:

<sup>222</sup> Նույն տեղում:

<sup>223</sup> Декреты Советской Власти, том 4, М., 1968, с. 639.



5. 1-ամյա արական «Համբարձում» ուսումնարանը, որը գործում էր սբ. Համբարձման եկեղեցուն կից (տնօրենն էր Միքայել Չուբարյանը):

Դոնի իգական ուսումնական հաստատություններից իրենց գործունեությունն էին շարունակում Դոնի Նախիջևանի 7-ամյա «Գոգոյան» գիմնազիան, Դոնի Նախիջևանի 1-ամյա «Սանդուխտյան» (սբ. Նիկողայոս եկեղեցուն կից), 2-ամյա «Հոփսիսիմյան» ուսումնարանները<sup>227</sup>: Վերջինը նույնպես գործում էր հայկական եկեղեցուն կից, որի հոգաբարձուների խորհրդի նախագահն էր Ե. Շահագիզը:

1919 թ. հոկտեմբերի 11-ով թվագրված փաստաթղթից, որը կազմված էր Դոնի Ռոստովի հայկական հյուպատոս Գր. Չալխուշյանին ներկայացնելու համար, տեղեկանում ենք Հայկական Համայնքի կողմից խնամակալվող ուսումնական հաստատությունների վերաբերյալ. «Հայկական Համայնքը խնամակալում է Նախիջևան և Դոնի Ռոստով քաղաքների բոլոր ուսումնական հրաստատությունները՝ լրացնելով նրանց բյուջեների դեֆիցիտը և ամեն կերպ հոգ տանելով նրանց առաջադիմությանը»<sup>228</sup>: Այնուհետև նշվում էր Ռոստով-Նախիջևանի հայկական կրթական հաստատությունների թիվը. «Երկու քաղաքներում հայկական ուսումնական հաստատությունները յոթն են. Հոգևոր սեմինարիան, Գոգոյան իգական գիմնազիան Պարսկահայերի 8-ամյա առևտրական ուսումնարանը, երկամյա եկեղեցական-ծխական իգական սբ. Հոփսիսիմյան ուսումնարանը, և երեք եկեղեցական-ծխական դպրոցներ եկեղեցիներին կից»<sup>229</sup>:

Վերոհիշյալ հայկական 7 ուսումնական հաստատությունների ուսուցչական և աշակերտական կազմն ուներ հետևյալ պատկերը. երկու սեռի սովորողների թիվը հասնում էր մինչև 2.000-ի, «սովորեցնողների թիվը-100»<sup>230</sup>:

Դոնում գործող հայկական ուսումնական հաստատությունների աշակերտական կազմի և պայմանների մասին առավել հավաստի, միաժամանակ վերոնշյալին համապատասխանող, տվյալներ է ներկայացնում Դոնի Նախիջևանի Համայնական խորհրդի նախագահ և տարագիր դարձած Ռ. Բերբերյանն իր ընդարձակ հոդվածում՝ տպագրված 1934 թ. Փարիզի «Վեմ» հանդեսում (խմբ. Ս. Վրացյան): Ռ. Բերբերյանը իր «Նոր-Նախիջևանի անցեալն ու ներկան» հոդվածում

գրել է. «...ցոյց տալու համար, թե ինչ չափով Նոր-Նախիջևանի գաղութը ընթանում էր հայ մշակույթի զարգացման ճանապարհով՝ բառական է այստեղ բերել ցանկը այն զուտ հայկական վարժարանների, որտեղ կրթութուն էր ստանում երկու սեռի հայ աշակերտութիւնը (նախնական և միջնակարգ)»<sup>231</sup>: Այնուհետև, Համայնական խորհրդի նախկին նախագահը մեջբերում է այդ վարժարանների ցանկը՝ 9-ամյա թեմական դպրոց, Գոգոյան իգական գիմնազիա (ութղասեան), Սանդուխտյան և Հոփսիսիմյան իգական դպրոցներ, Համբարձման և Ս. Թորոս ծխական դպրոցներ և Սահակ-Մեսրոպյան քաղաքային դպրոց. «Այս եօթ դպրոցները ունէին իրենց սեփական քարէ շէնքերը»<sup>232</sup>:

Համրագումարի բերելով Դոնի հայկական ուսումնական հաստատությունների ընդհանուր թիվը, որոնք առանձնացվել էին Ռ. Բերբերյանի կողմից, կարող ենք նշել, որ Նոր Նախիջևան քաղաքում գործում էին տարբեր տիպի (թեմական, ծխական և այլն) զուտ հայկական 8 դպրոցներ՝ արական և իգական: Բացի այս Նոր Նախիջևանում գործում էին ոչ զուտ հայկական ավելի քան 5 պետական և մասնավոր ուսումնական հաստատություններ՝ մեծաթիվ հայ աշակերտներով: Դոնի հայկական գյուղերում միասին կար 12 դպրոց ու վարժարան, Դոնի Ռոստով քաղաքում երկու իգական գիմնազիա, ինչպես նաև Ռ. Բերբերյանի կողմից չհիշատակված Պարսկահայերի Առևտրական ուսումնարանը (Դոնի Ռոստով): Բոլոր վերոհիշյալ ուսումնական հաստատությունների թիվը միասին կազմում էր 28՝ չհաշված Ռոստովի այլ դպրոցներ, ուր սովոր հայ աշակերտություն կար: Այսպիսի լայն և զարգացած դպրոցական ցանց էր առկա Դոնում՝ մինչև խորհրդային կարգերի այստեղ ամրագրումը:

Դոնի հայկական ուսումնական հաստատությունների զգալի մասը դադարեց գործելուց 1920 թ., իսկ փոքր մասն էլ գոյատևեց մինչև 1920-ական թթ. սկզբները, ինչպես օր., Սբ. Խաչ վանքի դպրոցը:

1918 թ. Դրիմում բնակվող հայության շրջանում ևս 1917 թ. հեղափոխությունն ազգային-համայնքային լիարժեք կյանքով ապրելու հույսեր արթնացրեց: Կրթական-մշակութային կյանքի զարթոնքի համար առաջնային էր դիտվում նոր ուսումնական հաստատությունների հիմնումը. «Դրիմի հայերի համար օրակարգային հարց էր հանդիսանում ազգային գիմնազիայի բացման խնդիրը: Այդպիսի գիմնազիան, անշուշտ, կարող էր հսկայական դեր խաղալ և պահել

<sup>227</sup> Армянский..., էջ 24-25.

<sup>228</sup> ՀԱԱ, ֆ.1265, ց.1, գ.40, ք.49:

<sup>229</sup> Նույն տեղում:

<sup>230</sup> ՀԱԱ, ֆ.1265, ց.1, գ.40, ք.49:

<sup>231</sup> Վեմ, Փարիզ, 1934, Յունաբ-Փետրուար, էջ 12:

<sup>232</sup> Նույն տեղում, էջ 13:

հայությանը շրջապատողների ծուլումից և օտար տարրերից»<sup>233</sup>։ 1918 թ. Ղրիմում հայկական գիմնազիա բացել չի հաջողվում, այդ խնդիրն ավելի լայն արժարժան է ենթարկվում ռուսահայ տարբեր համայնքներում։ Գիմնազիայի կազմակերպման համար սկզբնական շրջանում բավականին համեստ խնդիր էր դրված՝ կայացնել 1-ին և 2-րդ դասարանները. «Գիմնազիան նախատեսվում է մոտավորապես 40-50 սովորողների համար»<sup>234</sup>։ Առաջին երկու դասարանների համար նախատեսվում էր ծրագրային 14 առարկա դասավանդումը տարվելու էր հայերենով, բացառությամբ ռուսերեն լեզվի և պատմության։ Գիմնազիայի բացմանը զուգահեռ նախատեսվում էր հայկական մանկապարտեզ բացել մոտ 50 երեխաների համար<sup>235</sup>։

Դեռևս 1916-1917 թթ. եկատերինոդարում գործել են երկու հայկական գիմնազիա, ուր «...հոկտեմբերի 27-ին (1917թ.-ի Ա.) հայոց գիմնազիայի (եկատերինոդար) դահլիճում կայացաւ հայ գինւորական և քաղաքացիական մասերի ընդհանուր ժողով...այստեղ կազմակերպելու հայ զինուորական միութեան ճիւղ»<sup>236</sup>, իսկ արդեն հետհեղափոխական շրջանում՝ 1920 թ., կար հայկական 2 պրոգիմնազիա<sup>237</sup>։

1917 թ. հայկական գիմնազիայի վերակազմավորված Աստրախանի Աղաբաբյան դպրոցը, միջնակարգ ուսումնական հաստատության իր ծրագրով, շարունակեց գործել մինչև խորհրդային իշխանության հաստատումը։ Ավելի ուշ, ՌԽՖՍՀ Կենտրոնականի 1918 թ. հուլիսի 19-ի որոշման հիման վրա, Աստրախանի մյուս պետական կրթական հաստատությունների թվում, հայոց երկսեռ գիմնազիան փակվել է, վերածվել միասնական աշխատանքային դպրոցի. «Աղաբաբյան հայոց երկսեռ գիմնազիան վերափոխվել է խորհրդային միասնական աշխատանքային հայկական դպրոցի (9-ամյա ծրագրով), որը գոյատևել է մինչև 1922 թվականը»<sup>238</sup>։

Լուրջ թափ էր հավաքել ուսումնական գործի կազմակերպումը Սոչու շրջանում, որի լավագույն վկայությունն է Սոչու հայկական դպրոցների խորհրդի գործունեությունը. «1918 թ. Սոչիի հայկական դպրոցների խորհուրդը Թիֆլիսից հրավիրեց ևս 28 հայ ուսուցիչների

Ե. Չարաֆյանի գլխավորությամբ»<sup>239</sup>։

Այսպիսով, Ռուսաստանի տարածքում մինչև հեղափոխությունը գործող, ինչպես նաև նորաբաց, հայկական ուսումնական հաստատությունները 1917-1920 թթ. ապրեցին կարճատև, սակայն բեղուն ժամանակաշրջան։

Սովոր հայ բնակչություն ունեցող Ղոնը, Յուսիսային Կովկասը, Ղրիմն ու Պոլովոժեն արդեն 1920 թ. աշնանը խորհրդային էին, սակայն որոշ հայկական ուսումնական հաստատություններ մինչև 1920-ական թթ. սկիզբը շարունակեցին գործել, մի մասն էլ դադարեցին գոյություն ունենալ հեղափոխությունից անմիջապես հետո, որոնցից էր Պյատիգորսկի ծխական ուսումնարանը<sup>240</sup>։

Ռուսաստանի հայության շրջանում խորհրդային քաղաքականությունը և գաղափարները քարոզելու համար, որպես տեղի հայության ներկայացուցչական մարմին ձևավորված Հայկական Գործերի Կոմիսարիատին փոխանցվեցին խորհրդային իշխանության տակ գտնվող տարածաշրջանների հայկական կազմակերպությունների և հաստատությունների փաստաթղթերը, ունեցվածքը։ Հայկական Կոմիսարիատը խորհրդային իշխանության մոտ ընդունվեց որպես միակ օրինավոր կառույցը, որը ներկայացնում էր հայության շահերը։ Կոմիսարիատի իրավասության ներքո, նախևառաջ, անցավ Լազարյան ճեմարանը։ Խորհրդային իշխանության հաստատումից հետո Լազարյան ճեմարանի լիարժեք գործունեության համար ծանր ժամանակներ եկան. «Դրանցից գլխավորն էր Լազարյաններին պատկանող ձեռնարկություններից ստացվող եկամուտների դադարեցումը և Լազարյան հիմնադրամի փաստացի վերացումը»<sup>241</sup>, տնտեսական ճգնաժամը, քաղաքացիական պատերազմը, սաների շրջանում հիվանդությունների հաճախականությունը ևն։ Պարապմունքները Լազարյան ճեմարանում վերոհիշյալ պատճառներով դադարեց 1918 թ. մարտին։

ՌԽՖՍՀ Լուսժողկոմատը Լազարյան ճեմարանի գործունեության վերահսկողությունը հանձնեց Հայկական Կոմիսարիատին։ Ստեղծված անկանոն և քառսային պայմաններից ելնելով՝ հայկական մամուլում և, մասնավորաբար, «Армянский вестник»-ում լայնորեն քննարկվում էր Լազարյան ճեմարանը Կովկաս տեղափոխելու հարցը, ինչին ընդդիմանում էին հայ բոլշևիկները. «1918 թ. հունիսին

<sup>233</sup> Армянский..., էջ 35։

<sup>234</sup> ՀԱԱ, ֆ. 1265, ց. 1, գ. 40, ք. 27։

<sup>235</sup> Նույն տեղում, ք. 2։

<sup>236</sup> «Ուղևոր», Թիֆլիս, 1917, 20 նոյեմբեր։

<sup>237</sup> Հայ Սփյուռք Հանրագիտարան, էջ 471։

<sup>238</sup> Չարաբյան Հ., Աստրախանի Աղաբաբյան հայոց ուսումնարանը (1809-1918 թթ.), Ե., 1999, էջ 84։

<sup>239</sup> Բանբեր Հայաստանի Արխիվների, Ե., 1983, հ.2, էջ 161։

<sup>240</sup> Амайнк ('Община'), Пятитгорск, 1997, вып. 6, с. 26.

<sup>241</sup> Հայ Գաղթաշխարհի Պատմություն, նշվ. աշխ., էջ 322։

հայկական ազգային գործերի Կոմիսարիատի առաջարկությամբ ՌԽՖՍՀ Լուսժողկոմատը, լուսժողկոմի պաշտոնակատար Մ. Պոկրովսկու, հայկական գործերի կոմիսար Վ. Ավանեսովի և քարտուղար Վ. Տերյանի ստորագրությամբ, որոշում է հրապարակում Պողոս Մակինցյանին Լազարյան ինստիտուտի կոմիսար նշանակելու մասին»<sup>242</sup>։ Այս նշանակումից անմիջապես հետո, ստեղծվեց ինստիտուտի խորհուրդ, ուր մտնում են Պ. Մակինցյանը, Ն. Մառը, Գ. Օրբելին, Կ. Կոստանյանը, Ջ. Մսերյանը և Վ. Տերյանը։ Այս քայլով Լազարյան ճեմարանի փակման կամ տեղափոխման խնդիրը ժամանակավորապես մղվեց հետին պլան։ Լազարյան ինստիտուտի առընչությամբ առավել կարևոր էր ժողկոմխորհի ղեկընտրել Լենինի ստորագրությամբ (ղեկընտրի նախապատրաստմանը մեծ դեր ունեցավ կոմիսար Պ. Մակինցյանը), որն հրապարակվեց 1919 թ. մարտի 4-ին, ուր ճեմարանը վերանվանվում էր Հայկական Ինստիտուտ։ «Մոսկվայի Հայկական ինստիտուտը (նախկ. Լազարյան ինստիտուտ), որը սպասարկում է հայ աշխատավոր զանգվածների մշակութային-լուսավորական կարիքները բաղկացած է Սիասնական աշխատանքային դպրոցի առաջին և երկրորդ աստիճաններից՝ հայերեն լեզվով դասավանդմամբ, պատմա-բանասիրական և սոցիալ-տնտեսական ֆակուլտետներից՝ ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն լեզուներով դասավանդմամբ»<sup>243</sup>։ Ղեկընտրված ամրագրում էր Կոմիսարիատի դերն ինստիտուտի կառավարման գործում, որի ենթակայությանն էին անցնում նախկին Լազարյան ինստիտուտի կապիտալն ու գույքը։ Հետագայում Հայկական Ինստիտուտը վերածվել է Առաջավոր Ասիայի ինստիտուտի, ապա՝ Արևելյան կենդանի լեզուների ինստիտուտի։

Լազարյան ճեմարանի առընչությամբ նոր որոշում կայացվեց 1921 թ. հոկտեմբերի 1-ին, երբ արդեն Հայաստանը խորհրդային էր։ ՌԽՖՍՀ Կենտրոնական գործառնական Մոսկվայում հիմնվեց խորհրդային Հայաստանի Մշակույթի Տուն։ «...Նախկին Լազարյան ինստիտուտը, որը կառուցվել էր հայ բուրժուազիայի միջոցներով, վերանվանել «խորհրդային Հայաստանի Մշակույթի Տուն» և բոլոր նյութական արժեքներով հանձնել Հայաստանի բանվորա-գյուղացիական կառավարության տրամադրությանը»<sup>244</sup>։ Խորհրդային Հայաստանի Մշակույթի Տան պահպանման և ղեկավարման պատասխանատվությունը

հանձնվեց Մոսկվայում Հայկական ԽՍՀ ներկայացուցչին։ Այդ պաշտոնը մինչև 1922 թ. զբաղեցնում էր Ս. Տեր-Գաբրիելյանը, ով նշանակալի դերակատարություն ունեցավ կազմակերպչական առումով։ Այսպիսով, ԽՍՀՍ-ը կրկին վիճակվեց ստանձնել հայկական մշակութային հիմնարկի դերակատարություն՝ դառնալ խորհրդահայ մշակույթի կենտրոնը Մոսկվայում (1921-1953 թթ.)։ Ինչ վերաբերում էր այստեղ գործող հայկական տարրական դպրոցին, ապա այն գոյատևեց ընդամենը մի քանի տարի. «1924 թվականին Մշակույթի Տանը կից ստեղծվեց առաջին հայկական դպրոցը Մոսկվայում բնակվող հայ երեխաներին մայրենի լեզվով ուսուցանելու համար»<sup>245</sup>։

Խորհրդային դպրոցի առաջին տարիներին, ամբողջ կրթական համակարգը հայտնվել էր բավականին ծանր իրադրության մեջ՝ մի կողմից անիրաժեշտ էր լուծել նյութական խնդիրներ, մյուս կողմից՝ ավարտին հասցնել նախանշված վերափոխումները։ Խնդիրներն ընդհանուր էին և հատուկ նաև ազգային դպրոցների համար, այդ թվում՝ հայ դպրոցին։

1920-ական թթ. սկզբին կասկածի տակ էր դպրոցական ոլորտում տարվող քաղաքականության հետագա ընթացքն, ինչի մասին անթաքույց բարձրաձայնվում էր ժամանակակից մամուլի էջերում, այդ թվում՝ տեղերի հայկական թերթերում<sup>246</sup>։

1920-ականներին դժվարին սոցիալ-տնտեսական և գաղափարական-քաղաքական իրավիճակ էր տիրում Ռուսաստանի կրթական համակարգում։ Պահանջվեցին երկար տարիներ հաղթահարելու առկա հիմնախնդիրներն, որոնց հիմնարար լուծումներին խորհրդային իշխանության առաջին տարիներին հնարավոր չէր հասնել։ Նման դժվարին պայմաններում հայկական դպրոցների գործունեության ապահովումը ժողլուսավորության հայկական սեկցիաներից մեծ ջանքեր էր պահանջում։

Դռնում առավել սուր հիմնախնդիր էր դիտվում հայկական գյուղերի դպրոցների ենթակայության հարցը մարզայինից շրջանային ժողլուսբաժիններին փոխանցելու հարցը. «Մի ուրիշ կարևոր հարց զբաղեցնում է ներկայումս մեր գիւղական ուսուցչութեան, այդ այն է, որ գիւղական դպրոցները դուրս գալով Դռնորենարոբրազի իրաւասութիւնից, միացել են շրջանային նարոբրազի հետ, որի կեդրոնը Ազովն է։ այս երևոյթն ունի իր շատ անյարմարութիւններն որովհետև, նախ՝ այդ կենտրոնից նրանք շատ հեռու են գտնուում, ուրեմն յարա-

<sup>242</sup> Каграманов Н., Дом Культуры Советской Армении в Москве, Е., 1982, с. 9-10.

<sup>243</sup> Декреты Советской Власти, том 4, М., 1968, с. 466.

<sup>244</sup> Каграманов Н., նշվ. աշխ., էջ 10։

<sup>245</sup> Նույն տեղում, էջ 28։

<sup>246</sup> Բանվոր, Նոր Նախիջևան, 1921, № 52, էջ 1։

բերութիւն պայպանելը մեծ դժարութիւնների հետ է կապւած, ուստի և շատ անյետաձգելի հարցեր մնում են չլուծւած ու անորոշ, և երկրորդ՝ Յայկական Բիւրոյի համար վերացել է հսկողութեան յարմարութիւնները և խզել է այն բարոյական կապը, որպիսին գոյութիւն ուներ առաջին օրերին»<sup>247</sup>: Այսպիսի անհարմարութիւնների կարգավորումն օրապահանջ խնդրի էր վերածվել:

Անգրագետութեան վերացմանն ուղղված քայլերը բերում էին դպրոցական ցանցի անընդհատ ընդլայնման. «Դոնի շրջանային ժողովրդական Կրթութեան Բաժնի Յայկ. Սեկցիան վերջին ամսւայ (մարտ) ընթացքում անգրագետների համար բաց է արել 6 դպրոց զանազան գործարանների բանւորութեան համար: Եռամսեայ դասընթացքը վերջացնելուց յետոյ՝ ընթերցաւարտների համար բացւելու են 1-ին աստիճանի դպրոցներ:... դեռ բացւելու են մի քանի դպրոցներ և...»<sup>248</sup>: Այս ուղղութեամբ իրականացվող ծրագրերն ավարտվեցին միայն 1930-ական թթ., երբ համատարած անգրիգիտութեան վերացման խնդիրը լուծվեց:

Չնայած մեծ ջանքերին ու ցանկութեանը՝ 1920-ական թթ. չհաջողվեց ամբողջովին լուծել կրթական համակարգի առաջ ծառայած հիմնական խնդիրները՝ անհրաժեշտ քանակի դպրոց-հաստատութիւնների ապահովում, դպրոցական տարիքի բոլոր երեխաների ներգրավումն ուսուցման գործընթաց, ծրագրերի մշակում, ուսումնական ձեռնարկների անհրաժեշտ քանակի ապահովում ևն: Վերը թվարկած բոլոր խնդիրներն էլ հատուկ էին տեղերում գործող հայկական դպրոցներին, և դարձել էին հայութեան մտահոգութեան առարկան: Այսպես, սովոր հայ բնակչութիւնն ունեցող Կրասնոդարի (Եկատերինոդար) հայ հասարակութիւնն ի նպաստ դպրոցի մի շարք միջոցառումներ է իրականացրել՝ ներգրավելու և բարձրացնելու տեղի հայութեան մասնակցութիւնը համայնքի համար անհետաձգելի կարևորութիւնն ունեցող կրթօջախի կայացմանը: Այդ նպատակով կարևորվում է 1922 թ. հոկտեմբերի առաջին կեսին անցկացրած «դպրոցական յոթնօրյակ» միջոցառումը, և արդյունքում, հոկտեմբերի 15-ին հրատարակած միօրյա թերթը՝ նվիրված դպրոցին ու նրա հիմնախնդիրներին<sup>249</sup>: Միօրյա թերթը, որը կոչվում էր «Յայ դպրոցի օրը» իր շէրում լայնորեն ներկայացնում էր տեղի դպրոցական կյանքի անթույլատրելի, անմխիթար վիճակը, կոչ էր անում փրկել

դպրոցը:

Նովոռոսիյսկում, ուր մեծաթիվ հայեր էին ապրում և գաղթականութիւն կար 1924 թ. դրութեամբ հայկական դպրոցներ էին գործում. «Նովոռոսիյսկում կան երկու 1 կարգի դպրոց. ռայոնում մեծամասնութիւնը անգրագետ է»<sup>250</sup>:

Դեռևս 1920 թ. ապրիլի 22-ին Կուբան-Չերնոմորյան ՌԿ օրոշումով երկրամասում բնակվող ազգային փոքրամասնութիւններն իրավասու էին կրթական-ուսումնական գործը կազմակերպել մայրենի լեզվով, իսկ ժողովրդական զանգվածների մշակութային մերժեցման առումով պարտադիր էր ռուսերեն լեզվի դասավանդումը: 1921 թ. դրութեամբ ներկայիս Կրասնոդարի երկրամասի հայկական դպրոցների թիվը հասնում էր 51-ի<sup>251</sup>, որից 22-ը՝ Սոչիի շրջանում:

Կուբան-Չերնոմորիեում, որի կազմում 1926 թ. առանձնացվեց Յայկական շրջանը, ծանր իրավիճակ էր տիրում կրթական գործի կազմակերպման առումով: Բոլոր բնակավայրերում հիմնվեցին ակումբներ և անգրագիտութեան վերացման կայաններ: Շրջանում իրադրութիւնը փոքրիշատե շտկվեց միայն 1920-ական թթ երկրորդ կեսին. «1927-1928 ուստարում Յայկական շրջանում գործում էին 23 հայկական դպրոցներ՝ 26 ուսուցիչներով»<sup>252</sup>: Ուսումնական գործընթացում ներգրավված էին 1.120 աշակերտ: Այնուհանդերձ, դպրոցական գործի կազմակերպման առումով ակնառու թերութիւններ ու դժվարութիւններ կային՝ մանկավարժական կազմի և ուսումնական ձեռնարկների անբավարարութիւն, որը բնորոշ էր նաև մյուս հայկական դպրոցներին:

1926 թ. Դոնում առանձնացվեց Յայկական շրջանը (1928 թ. վերանվանվեց Մյասնիկյանի շրջան), որի 8 հայկական գյուղական վայրերում էլ գործում էին դպրոցներ, որտեղ կրթութիւնը տարվում էր հայերենով<sup>253</sup>:

1927 թ. դրութեամբ Աբխազիայում գործում էին 72 հայկական դպրոցներ, ուր սովորում էին 3.926 աշակերտներ<sup>254</sup>: Այստեղ թե դպրոցական ցանցի ընդլայնումը, թե սովորողների թիվը կտրուկ աճեց հատկապես հաջորդ տասնամյակում՝ 1930-ական թթ.:

<sup>250</sup> Լրաբեր Յայաստանի Ոգնութեան Կոմիտեյի Մոսկվայի Ելուդի, Մոսկվա, 1924, № 1, էջ 12:

<sup>251</sup> Բանբեր Յայաստանի արխիվների, Ե., 1979, № 3(55), էջ 121:

<sup>252</sup> Բանբեր Յայաստանի արխիվների, Ե., 1970, № 3(27), էջ 173:

<sup>253</sup> Тер-Саркисянц А., Армяне на Дону: Их прошлое и настоящее, Вторые Лазаревские чтения по истории армян России: 25-27 ноября 2003 г., М., 2006, с. 268.

<sup>254</sup> Բանբեր Յայաստանի արխիվների, Ե., 1983, № 2(66), էջ 164:

<sup>247</sup> Նույն տեղում, էջ 2:

<sup>248</sup> Նույն տեղում, № 5, էջ 2:

<sup>249</sup> Յայ դպրոցի օրը, Կրասնոդար, 1922, № 1, էջ 2:

Հյուսիսային Կովկասի Ստավրոպոլի երկրամասում 1920-ականների սկզբին տեղի նախկին հայկական դպրոցների հիմքի վրա գործում էին հայկական կրթական հաստատություններ: Այսպես 1924 թ. դրությամբ Ստավրոպոլում գործում էր մեկ հայկական դպրոց. «Կա երկսեռ դպրոց 78 աշակերտ-աշակերտուհիներով. գրադարան, ուր կան 605 հայերեն և 145 գրքեր այլ լեզուներով: Թե դպրոցը և թե գրադարանը պահվում են տեղական միջոցներով»<sup>255</sup>: Երկրամասի հայկական գյուղերից ամենամեծում՝ Եղեսիայում, նույնպես գործում էր հայկական դպրոց:

1920-ական թթ կեսերին, ԽՍՀՄ-ում ԼԵՊ-ի քաղաքականության կիրառման շնորհիվ որոշակի տնտեսական կայունացում արձանագրվեց, որն անմիջապես իր դրական ազդեցությունը թողեց նաև մշակութային-կրթական ասպարեզի վրա՝ մեծացավ այս ոլորտներին տրվող հատկացումների չափը: Այս ամենն իր դրական ներգործությունն ունեցավ նաև ազգային շրջանների, մասնավորապես, ռուսահայ համայնքների կրթական-լուսավորական ցանցի բարեկարգման և ընդլայնման վրա. «Վերջին տարիներում ժողովրդական տնտեսական բարելավումից հետո, մեծապես բազմացել է նաև կուլտ-կրթական հիմնարկների ցանցը որինակ՝ Հյուս. Կովկասում հայերն ունեցել են 100 I-ին աստիճանի և 5 II-րդ աստիճանի դպրոց, 300 ուսուցչով, իսկ այս 25/26 ուսումն. տարում միմիայն Սոչիի շրջանում հայկ. I-ին աստիճ. դպրոցների թիվը մոտ 100-ի յե հասնում, 135 ուսուցիչ-ուհիներով»<sup>256</sup>: Հյուսիսային Կովկասում հայկական կրթական ցանցի ընդլայնումն ակնհայտ էր, թեև՝ ոչ բավարար, քանի որ ընդգծվում էր անգրագիտության բարձր տոկոսը հատկապես տարածաշրջանի գյուղական հայության շրջանում:

Սևծովյան ավազանի մյուս հայաբնակ երկրամասում՝ Ղրիմում նույնպես, 1920-ականների սկիզբը մշակութային-կրթական առանց այն էր անգույն կյանքի անկումային փուլ հանդիսացավ: Այստեղ իրավիճակը շտկվեց 1920-ական թթ. երկրորդ կեսին միայն:

Ղրիմահայերի մշակութային-կրթական ասպարեզի համար առանձնահատուկ մշանակություն ունեցող իրադարձություն էր 1926 թ. հունվարին տեղի ունեցած I Համաղրիմյան Հայկական անկուսակցական համագումարը, որի արդյունքում ընդունվեցին բանաձևեր: Առանձնանում էր Ս. Համայնանի՝ «Կուլտուր-կրթական աշ-

խատանքը Ղրիմի հայ ազգաբնակչության մեջ» գեկույցի հիման վրա ընդունված բանաձևը, ուր նշվում էր. «Լսելով Ղրիմի Ազգային Փոքրամասնությունների խորհրդի գեկուցումը, Համաղրիմյան հայկական անկուսակցական համագումարը շեշտում է Ղրիմի հայ աշխատավորության կուլտուրական շինարարության գործի մեջ տեղի ունեցած հառաջդիմությունը առանձնապես այս վերջին յերկու տարվա ընթացքում»<sup>257</sup>:

Համագումարը հավանություն տվեց Ղրիմի Ազգային Փոքրամասնությունների խորհրդի կողմից, մոտակա ուստարվա համար կազմած, Ղրիմահայերի մշակութային-լուսավորական զարգացման և ամրապնդման միջոցառումներին, ուր առաջարկվում էր. «Հայկական առաջին աստիճանի դպրոցների ցանցի մեծացումը յեկող ուսումնական տարվանից Սևաստոպոլում և Ճանկոյում, հայկական դպրոցներ բանալու միջոցով, այլ և քիչ թե շատ խիտ հայ ազգաբնակչություն ունեցող գյուղական վայրերում: Բոլոր հայկական դպրոցների ներմուծումը հաստատուն ցանցի մեջ համապատասխան Ռայոնական բյուջեների հաշվին»<sup>258</sup>:

Բանաձևի 5-րդ կետով անհրաժեշտ էր դիտվում. «Մի քանի հայկական դպրոցների (Վերչ, Սիմֆերոպոլ) աստիճանական աճումն ու անցումը դեպի յոթնամյա դպրոցները, նրանց կից հանրակացարաններով, Ղրիմի համայն հայ ազգաբնակչության կարիքների բավարարության համար, չվերածելով սակայն վերջիններս հասարակական միջոցներով պահվող դպրոցների, թողնելով հանրակացարանները պահելու գործը ազգաբնակչությանը»<sup>259</sup>:

Ինչ վերաբերում էր անգրագիտության վերացմանն ուղղված միջոցառումներին՝ նախատեսվում էր, հատկապես գյուղական վայրերում, բացել մի շարք լիկկայաններ և նրանց հատկացնել ձեռնարկներ մայրենի լեզվով:

Համագումարը լուրջ տեղաշարժեր բերեց, քանի որ այստեղ շարք մտան նոր դպրոցներ. «...Ղրիմում, 1926 թ. գործեցին 14 նոր հայկական դպրոցներ՝ 500 սովորողներով՝ գյուղերում և ավաններում՝ Ասմա, Հայկաշեն, Ազատ, Կիշկենե, Սարպուզ, Կալմուկարա, Փուրլուջա, Ազամատ, Գրինիչկա, Բարին, Ջանայ, Շահումյանովկա, Մոնաստիրկա, Անտոնովկա»<sup>260</sup>: Գյուղական վայրերում հայկական

<sup>255</sup> Լրաբեր Հայաստանի Օգնության Կոմիտեյի Մոսկվայի Եյուրի, նշվ. աշխ., էջ 12:

<sup>256</sup> Խորհրդային Հայաստան, Ե., 1925, № 264 (1318), էջ 1:

<sup>257</sup> Резолюции Первой Всекрымской Армянской Беспартийной Конференции (23-26 янв. 1926г.), Симферополь, 1926, с. 31.

<sup>258</sup> Նույն տեղում, էջ 32:

<sup>259</sup> Նույն տեղում:

<sup>260</sup> Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 1983, № 2/66, էջ 163:

դպրոցական ցանցի ստեղծմանը նպաստեց նաև գյուղխորհուրդների մանրացման քաղաքականությունը և ազգային հիմքի վրա դրանց ձևավորումը՝ հնարավոր դարձնելով առավելագույնս ընդլայնված դպրոցական ցանց ունենալու:

Ուկրաինայի հայության զգալի հատվածը կազմում էին հայ զաղթականությունը (ըստ ԳՕԿ-ի տվյալների 95%-ը), որոնք գլխավորապես կենտրոնացած էին Խարկովում, ուստիև կրթության գործը լուրջ հիմքերի վրա դնել դժվարին խնդիր էր իրենից ներկայացնում: Այս շրջանում Խարկովում կար դպրոց, գրադարան, թատրոն<sup>261</sup>: Ուկրաինայում քաղաքացիական պատերազմի ավարտից հետո դպրոց է բացվել նաև Օդեսայում, որը գործել է մինչև 1930-ական թթ.<sup>262</sup>: Օդեսայի հայկական N 45 7-ամյա դպրոցը տեղակայված էր քառահարկ շենքում, գործում էր երկու հերթով և 1933 թ. դրությամբ սպասարկում էր 161 հոգու<sup>263</sup>: Նույն ժամանակաշրջանում այստեղ գործել են նաև հայկական մանկապարտեզներ, գրադարաններ, թատերական և երաժշտական խմբակներ: 1930-ական թթ. Խարկովի կաթի տեխնիկումում դասավանդումը տարվել է նաև հայերենով:

1928 թ. սկսած հայկական տարրական կրթական հաստատություն էր գործում նաև Մոլդովայի տարածքում՝ Քիշնևում<sup>264</sup>:

Միջին Ասիայում խորհրդային իշխանության առաջին տարիներին տարածաշրջանի հայկական ուսումնական հաստատությունները թևակոխեցին գոյապահպանման փուլ: Այս ընթացքում բոլորովին խզվել էին կապերը Հայրենիքի և հայկական կենտրոնների հետ, հայկական դպրոցները մեծ զրկանքների գնով առանց ուսումնական ձեռնարկների և անգամ շենքային պայմանների, գոյության կռիվ էին մղում. «Քանի դեռ 18, 19 և 20 թվականներին հնարավոր չէր լինում Կովկասից ստանալ ըստ նախնույն մեր դպրոցների դասագրքերը ու դրա պատճառներն հարգելի եին, ուստի և կարելի էր մի կերպ հաշտվել դրութիան հետ»<sup>265</sup>:

Այսպիսի պայմաններում տեղի հայ մանկավարժների և մտավորականության ջանքերով, 1922 թ. դժվարությամբ հաջողվում է գլուխ բերել «Մայրենի լեզվի» դասագիրք առաջին աստիճանի դպրո-

ցական ծրագրի համար. «...դասագիրքը հետևանք է այն բազմաթիվ չարչարանքների, վոր կրել են թուրքեստանի հայ դպրոցները վերջին հինգ տարիների ընթացքում՝ դասագրքերի պակասութիան պատճառով: ...Բայց երբ 21 և 22 թվականներին ևս Կովկասը մերժեց դասագրքեր հայթայթել, չնայած մեր բոլոր ձեռք առած միջոցներին՝ մեզ մնում էր ենթարկվել դասագրքերի հրամայական պահանջին և փորձել սեփական ույժերով կազմել գոնե անհրաժեշտ ձեռնարկները»<sup>266</sup>: Դասագրքի հեղինակներն իրավամբ գիտակցել են ձեռնարկի հետ կապված խնդիրները, սեփական փորձի բացակայությունն այդ գործում, ինչն էլ առանց համեստության ընդգծում են. «...այն հանգամանքը, վոր հուլիսին սկսած գործը հազիվ կարողանում ենք գլուխ բերել դեկտեմբերին, այն էլ բազմաթիվ թերութիւններով, ինչպես ընկ. ընկ. դասատուները կարող են իսկույն նկատել՝ այդ բոլորը միանգամայն ապացուցում է, վոր մեզ համար ևս հեշտ գործ չէր դասագրքեր կազմելն ու հրատարակելն»<sup>267</sup>: Դասագրքի հեղինակներն իրենց աշխատանքը համարել են կոմպիլյատիվ մի գործ, հույս հայտնել, որ այն կծառայի իր նվազագույն նպատակին, այն է. «...տալ աշակերտներին մի ժամանակավոր ձեռնարկ, վորը ներկայիս պայմաններում թերևս զգալապես ոժանդակի մայրենի լեզվի դասավանդութիանը երկրորդ և մասամբ երրորդ բաժիններում»<sup>268</sup>: Դասագրքում տեղ էին գտել նաև ինքնուրույն և փոխադրական հոդվածներ, որով փորձ էր արվում այն հարմարեցնել մանկավարժության նորագույն պահանջներին: Հետաքրքրական է, որ հայերեն լեզվի նոր ուղղագրության անցնելու խնդիրներն ու պահանջները ևս արծարծված էին դասագրքում: Խորհրդային կանոնների մասին, որը հրապարակվել էր «Խորհրդային Հայաստան» թերթի 1922 թ. մարտի 18-ի համարում, հիմնական կետերով ներկայացվում էր դասագրքի առաջաբանում: ՀիսՄՀ լուսժողկոմի կարգադրությամբ նոր ուղղագրության ամբողջական կիրառումը սկսվելու էր նույն թվականի հոկտեմբերի 2-ից բոլոր դպրոցներում և հիմնարկներում, ինչին ցանկացել էին հետևել նաև դասագրքի հեղինակները, որը սակայն, լրացուցիչ դժվարությունների հետ էր կապված. «...դասագրքի վայելչագիր բնագիրը արդեն հանձնված էր վիճագրատուն, այնպես վոր բնագրի վերարտադրութիւնը ըստ նոր

<sup>261</sup> Լրաբեր Հայաստանի Օգնության Կոմիտեյի Մոսկվայի Եյուղի, էջ 13:

<sup>262</sup> Հայ Սփյուռք Հանրագիտարան, նշվ. աշխ., էջ 594:

<sup>263</sup> Давтян А., նշվ. աշխ., էջ 84:

<sup>264</sup> Тороманян А., Из истории строительной деятельности армян в Молдавии, М., 1991, с. 68; Թորամանյան Ա., Մոլդովայի հայկական պատմաճարտարապետական հուշարձանները, Ե., 1986, էջ 60:

<sup>265</sup> Կազմ. Մելիքեան Գ., Պալեան Գ., Վարդունի Լ., Նոր դպրոց, Տաշքենտ, 1922, էջ 2:

<sup>266</sup> Նույն տեղում:

<sup>267</sup> Նույն տեղում, էջ 2-3:

<sup>268</sup> Նույն տեղում, էջ 3:

ուղղագրության լրիվ կանոնների կապված եր նորանոր ձգձգումների և խոշոր ծախսերի հետ»<sup>269</sup>:

Միջին Ասիայի (Թուրքեստան) հայկական մշակութային-կրթական կյանքի որոշակի աշխուժացում նկատվում է այստեղ հայկական կոմսենկցիաների հիմնումով, Օժանդակիչ Կոմիտեի գործունեությամբ և «Կարմիր շող» շաբաթաթերթի հրատարակությամբ: Օժանդակիչ Կոմիտեին էր վերապահված ղեկավարելու տեղի հայ կուլտ-կրթական կյանքը:<sup>270</sup> Հետաքրքրական է, որ Թուրքեստանի Հայկական Կենտրոնական Օժանդակիչ Կոմիտեն, տեղի հայկական դպրոցների անմխիթար վիճակը կարգավորելու համար, իր կանոնադրությամբ թույլատրում էր իրականացնել կուլտ-կրթական կամավոր տուրք. «Թուրքեստանի հայերը ցանկանում են ունենալ առողջ հիմքերի վրա դրված կուլտ-կրթական գործ համերկրային մաշտաբով»<sup>271</sup>:

«Կարմիր շող»-ն իր առաջին համարում (1924 թ. ապրիլի 30) «Մեր կուլտ-կրթական հիմնարկները» հոդվածում ներկայացրել է Թուրքեստանի հայկական դպրոցական ցանցի պատկերն, ըստ որի. «Դպրոցներ կան Կրասնովոդսկում, Պոլտորացկում, Մերվում, Ղզլ-Արվատում, Թեջենում, Սամարղանդում (2 դպրոց), Անդիժանում, Կոկանդում և Տաշկենտում, ընդամենը 10 դպրոց մոտ 1000 աշակերտ-ուսիկներով և 32 դասատուներով»<sup>272</sup>: Ինչպես երևում է, Թուրքեստանում գործող հայկական կրթական հաստատությունները սփռված էին տարածաշրջանի գրեթե բոլոր հայաբնակ կենտրոններում: Մինչ-հեղափոխական շրջանի հայկական դպրոցական ցանցը պահպանված էր, սակայն առկա էին զգալի դժվարություններ «Դպրոցները և ուսուցիչների նյութական դրությունը անախաճեղի յե, շնորհիվ հասարակության անտարբերության և իրանց ուսուցիչների անգործունեության»<sup>273</sup>: Բացի այդ, տեղի հայկական կրթական ցանցի մեջ ամբողջովին չէին ընդգրկված դպրոցական տարիքի հայ երեխաները: Այս և բազմաթիվ այլ պատճառներով (դպրոցի անհարմարություններն, ուսուցիչների պակասը, գանձվող վճարները ևն) բազմաթիվ հայ մանուկներ հաճախում էին ռուսական դպրոցներ:

Ուսումնական գործընթացի կազմակերպումն անգամ Թուրքեստանի կենտրոնում՝ Տաշքենդում, իրականացվել է մեծ դժվարություններով: Դպրոցական կյանքի վերականգնման գործը պայմանավոր-

ված էր մի շարք հանգամանքներով՝ նյութական, ուսումնական-տեխնիկական, կադրային ևն, որոնք արգելակում էին նրա աշխուժացումը. «Կենդանացումը Տաշկենտի հայկական դպրոցում առաջ է գնում չափազանց դանդաղ... Եթե՛ հայ դպրոցը չունենալով սեպհական շենք, քոչել է մի շինությունից մյուսը, պարապելով 8-13 տարեկան երեխաների հետ երկրորդ հերթին (այն է՝ կեսօրից հետո) ամենածանր պայմաններում, որով և կորցրել է բավականաչափ սովորողներ: Հաճախ փոփոխության է ենթարկվել և ուսուցչական կազմը, որովհետև տեղ են տվել ամեն մի պատահական ուսուցչի»<sup>274</sup>: Այս ամենին հավելելով դպրոցի սուղ միջոցներն, ակնհայտ է, որ այդ ընթացքում հայ դպրոցն ուղղակի գոյություն է պահպանել. «...անհնարին է եղել շարունակել դպրոցական նորմալ աշխատանքները մինչև 21-22 և 22-23 ուսումն. տար. յառաջին եռամսյակը: Բայց սկսած 22-23 ուսումն. տար. երկրորդ եռամսյակից դպրոցական նոր կազմը առանց հուսահատվելու աշխատել է ամեն կերպ բարվոքել դպրոցի կյանքը, ղեկավարել այն անհամեմատ լավ հիմքերի վրա»<sup>275</sup>: Այս դպրոցի համար մասնաշենք հաջողում է ունենալ միայն 1923-1924 ուստարվա սկզբին, մասնակի վերանորոգության ենթարկել այն. «...և ձեռք բերել չնչին քանակությամբ դասագրքեր Հայաստանից»<sup>276</sup>:

1924 թ. հոկտեմբերին Միջին Ասիայի ազգային-պետական կազմավորման գործընթացի սկիզբն է դրվում, ձևավորվում են միութենական հանրապետություններ: Ուզբեկական ԽՍՀ-ում, ուր բնակվում էին Միջին Ասիայի հայության գերակշիռ մասը խորհրդային իշխանության հետագա տարիներին հայ երեխաների մեծ մասը սովորել է ռուսական դպրոցներում, միջինասիական երկաթուղու վարչությանը պատկանող դպրոցներում, Տաշքենդի արհեստավորական ուսումնարանում. «1930-ական թթ., երբ փակվել են Ուզբեկստանի հայկական եկեղեցիները, ծխական դպրոցները հանձնվել են լուսավորության տեղական մարմիններին, այնուհետև ձուլվել ռուսական հանրակրթական դպրոցներին: Խորհրդային իշխանության հետագա տարիներին Ուզբեկստանում չի գործել և ոչ մի հայկական դպրոց»<sup>277</sup>:

Միջին Ասիայի սովորական ազգաբնակչություն ունեցող Թուրքմենական ԽՍՀ-ում նույնպես, ժամանակի ընթացքում հայկական դպրոցները պահպանել չհաջողվեց. «Թուրքմենիայում խորհրդային իշխանության հաստատումից հետո (1920-ական թթ. սկզբին) հայ-

<sup>269</sup> Նույն տեղում, էջ 5:

<sup>270</sup> Կարմիր շող, Տաշկենտ, 1924, № 3, էջ 2:

<sup>271</sup> Նույն տեղում, № 6, էջ 1:

<sup>272</sup> Նույն տեղում, № 1, էջ 2:

<sup>273</sup> Նույն տեղում:

<sup>274</sup> Նույն տեղում, № 5, էջ 1:

<sup>275</sup> Նույն տեղում:

<sup>276</sup> Նույն տեղում:

<sup>277</sup> Հայ Սկիյուռը Հանրազգիտարան, էջ 584:

կական դպրոցները հանձնվել են հանրապետության լուսավորության ժողկոմատին, որը խիստ կրճատել է դրանց հատկացվող ֆինանսական միջոցները: 1930-ական թթ. Թուրքմենիայի հայկական բոլոր դպրոցները փակվել են»<sup>278</sup>:

Խորհրդային իշխանությունների ձեռնարկած դպրոցական համակարգի բարեփոխումների արդյունքում 1920-ական թթ. դպրոցը կրեց նյութատեխնիկական, ուսումնադաստիարակչական և բարայա-հոգեբանական դժվարություններ, լրջորեն ընկավ կրթության որակը. «Քսանական թվականներին լայնորեն տարածված էր դպրոցի՝ որպես ուրույն հասարակական ինստիտուտի վերացման (отмирания) տեսությունը»<sup>279</sup>:

1930-ական թթ. կրթական համակարգի ֆինանսավորման աճի արդյունքում ամբողջ ԽՍՀՄ տարածքում կառուցվեցին մոտ 30 հզ. դպրոց, կրկնակի անգամ ընդլայնվեց մանկավարժական ուսումնական հաստատությունների ցանցը, լայն թափով շարունակվեց պայքարն անգրագիտության վերացման ուղղությամբ. «Առաջին հնգամյա ծրագիրը նախատեսում էր իրականացնել կրտսեր դպրոցական տարիքի երեխաների համընդհանուր տարրական ուսուցումը 1932 թվականին»<sup>280</sup>: Աղքատիկ ֆինանսավորման, թույլ նյութատեխնիկական բազայի, անհրաժեշտ քանակի դասագրքերի և ուսուցիչների պակասի արդյունքում համընդհանուր տարրական կրթության (всесоюз) ծրագիրը տապալվեց. «Համընդհանուր պարտադիր տարրական կրթությունն ամբողջ երկրում, ընդհանուր առմամբ, իրականացվեց երկրորդ հնգամյակի ավարտին (1937թ.)»<sup>281</sup>: Համընդհանուր կրթության ծրագրի ներդրումն ուղեկցվեց տարրական և միջնակարգ դպրոցական համակարգի բարեփոխումներով, ավելին՝ տեղի ունեցավ շրջադարձ դեպի նախահեղափոխական դպրոցի ավանդույթները, դեպի ֆունդամենտալ կրթությունը: Ազգային կրթությունն ազգային հանրապետություններից դուրս մեծ դժվարություններ էր կրում և աստիճանաբար վերացվեց:

Արդեն 1930-ական թթ. սկզբին մերժվեց 20-ական թթ. տիրապետող դպրոցի կազմալուծման, «մահվան» տեսությունը: 1937 թ. քաղաքային բնակավայրերում մցտվեց համընդհանուր պարտադիր թերի միջնակարգ կրթություն (7-ամյա), 1939 թ. խնդիր դրվեց անցում կատարելու լրիվ միջնակարգ կրթության (10-ամյա), թեև բարձր

դասարաններում կրթությունը դարձավ վճարովի (տարին 300 ռ.):

Այսպիսով, երկու հնգամյակների ընթացքում (1928-1932 թթ., 1933-1937 թթ.) հնարավոր եղավ լուրջ տեղաշարժ արձանագրել կրթության ասպարեզում, անգրագիտության վերացման ուղղությամբ, սակայն խնդիրները դեռևս շատ էին, իսկ երրորդ հնգամյակի իրականացումն (1938-1942 թթ.) ընդհատվեց Հայրենական պատերազմի հետևանքով:

1937/1938 ուստարին կարևոր սահմանագիծ է, քանի որ ամբողջ երկրում ավարտվեց անցումը համընդհանուր տարրական կրթության, ուստիև խորհրդային հանրապետություններում առկա հայկական ուսումնակրթական ցանցի պատկերը նույնպես անհրաժեշտ է քննել այս սահմանափուլով:

Այսպիսով, եթե Ուկրաինայում և Միջին Ասիայի հանրապետություններում գործող հայկական ուսումնական հաստատություններն արդեն 1930-ական թթ վերջին, տարբեր պատճառներով, դադարեցին գոյություն ունենալուց, ապա դրանք դեռևս շարունակեցին իրենց գործունեությունը ՌԽՖՍՀ տարածքում, մասնավորաբար, Դոնում և Հյուսիսային Կովկասում: Այստեղ հայկական դպրոցական ցանցն ավելի ընդլայնվեց՝ իր ներքո համախմբելով հայ աշակերտությանը:

1930-ական թթ. ՌԽՖՍՀ տարածքում գործող հայկական կրթական հաստատությունները ժառանգեցին դեռևս 20-ական թթ. առկա խնդիրները: Այս շրջանին հատուկ էին դպրոցական ցանցի զարգացման և վերագինման, կրթական ծրագրերի նորացման և համապատասխանեցման, որակյալ կադրերով համալրման, դաստիարակչական և առաջադիմության խնդիրները:

Արդեն 1930-ական թթ. այս տարածաշրջանում հիմնականում լուծված էին ուսումնական հաստատությունների շենքային խնդիրներն, որոնք կային 20-ական թթ., դրված էր դրանց վերանորոգման և նորերի կառուցման առաջնահերթությունը:

1937/1938 ուստարվա սկզբին Ազով-Սևծովյան երկրամասում, որ ավանդաբար հայկական կրթական հաստատությունների լայն ցանց էր առկա, գործում էին տարբեր աստիճանի և կարգի դպրոցներ. «Երկրամասում հայկական տարրական դպրոցների թիվը հասնում է 100, թերի միջնակարգ դպրոցների թիվը-37, լրիվ միջնակարգ դպրոցների թիվը-8, աշակերտության ընդհանուր քանակը մտ. 13 հազարի, ուսուցիչների թիվը մոտ 600: Այնուամենայնիվ հայկական դպրոցները վորակյալ կադրերի մեծ կարիք են զգում»<sup>282</sup>:

<sup>278</sup> Երևան, 1997, էջ 206:

<sup>279</sup> Орлов А., Георгиев В. и др., Основы курса истории России, М., 1997, с. 491.

<sup>280</sup> Երևան, 1997, էջ 515:

<sup>281</sup> Երևան, 1997:

<sup>282</sup> Բուլշևիկ, Դոնի Ռոստով, 1937, № 62, էջ 3:



Ազով-Սևծովյան երկրամասի հայկական կրթական հաստատությունների շարքում առանձնահատուկ նշանակություն ունեն 1920-ական թթ. հիմնված Ա. Մյասնիկյանի անվան Ազով-Սևծովյան երկրային Հայկական Մանկավարժական Ուսումնարանը (տնօրեն Ա. Իսրայելյան), որը մասնագետներ էր պատրաստում ՌԽՖՍՀ հայկական դպրոցների համար. «Յերկրային Հայկական մանկավարժական ուսումնարանը միակն է մեր յերկրամասում, վորը պատրաստում է կադրեր յերկրամասի հայկական դպրոցների համար»<sup>283</sup>: Լազարյան ծննդարանի և մյուս հայկական գիմնազիաների, ուսումնարանների դերն, ինչ-որ չափով, ստանձնած այս հաստատությունը գտնվում էր Դոնի Ռոստովում, ընդունելություն էր կատարում դպրոցական և նախադպրոցական բաժիններում, ուներ նաև հեռակա բաժին (ղեկ. Դովհաննիսյան): Ուսումնարան կարող էին ընդունվել ԽՍՀՄ 15-35 տարեկան այն քաղաքացիներն, ովքեր ունեին թերի միջնակարգ կրթություն. «Բոլոր ընդունվողները յենթարկվում են պարտադիր ստուգման թերի միջնակարգ դպրոցի ծրագրով՝ հետեվյալ առարկաներից - հայոց լեզու (բանավոր եվ գրավոր), ռուսաց լեզու (բանավոր յեվ գրավոր), թվաբանություն (բանավոր յեվ գրավոր), հանրահաշիվ (գրավոր), յերկրաչափություն (բանավոր), աշխարհագրություն (բանավոր)»<sup>284</sup>: Ազով-Սևծովյան երկրամասի Հայկական Մանկավարժական Ուսումնարանում, այնուհանդերձ, լուծված չէին ուսումնարաստիարակչական և կուլտուր-կենցաղային բնույթի հիմնախնդիրներ:

Հայկական դպրոցներում ուսումնական տարվա ավարտին անցկացվող ստուգում-քննությունները վեր էին հանում բազմաբնույթ թերություններ, որոնց մասին լայնորեն բարձրաձայնվում էր «Բուլշևիկ»-ի էջերում: Այսպես, 1937/1938 ուստարվա նախաշեմին ստուգումներն երկրամասի հայկական դպրոցներում ցույց էին տվել, որ. «Ընթացիկ ուսումնական տարում յերկրամասի հայկական թերի միջնակարգ դպրոցների հայոց լեզվի և գրականության դասատուների 75 տոկոսը, իսկ պատմության դասատուների մոտ 60-61 տոկոսը չունեյին համապատասխան կրթություն»<sup>285</sup>:

«Բուլշևիկ»-ի 1937 թ մայիսի 31-ի համարը տպագրել էր Մոսկվայի մի թղթակցություն, որի հեղինակն էր Լուսժողկոմատի հրահանգիչ Ալ. Դոստյանը: Հոդվածը, որը վերնագրված էր «Ինչպես կատարել

ստուգումները հայկական դպրոցներում», մանրամասնում էր դրանց կիրառման կարգն ու չափորոշիչները՝ միաժամանակ հստակորեն ներկայացնելով այդ դպրոցների իրական վիճակը: Ալ. Դոստյանն, առանձնացնելով այն խնդիրները, որոնց առաջ հայտնվել էր հայ դպրոցը: Դրանք էին՝ ուսումնական ծրագիրը, դասաժամերի ցանցը, մանկավարժական կադրերի կազմը և այլն. «Առանձնակի բարդությունների առաջ են կանգնած վոչ միայն Ռոստովի, Արմավիրի, Գրոզնու և այլ քաղաքների միջնակարգ հայկական դպրոցները, այլև նույնիսկ մեր գյուղական մասսայական (որինակ՝ Յեդեսիայի) դպրոցները»<sup>286</sup>: Հայկական դպրոցներում մայրենի լեզվի և գրականության դասավանդման որակը մի կողմից, մյուս կողմից՝ տարբեր բարբառների առկայությունը խանգարիչ հանգամանք էին հանդիսանում դպրոցի իրական կայացման համար. «Այստեղ աշակերտության խոշոր տոկոսն են կազմում տեղի կամ դրսից յեկած այն յերեխաները, վորոնք չեն տիրապետում վոչ միայն գրական, այլ և առհասարակ հայերեն լեզվին: Յերեխաները խոսում են թուրքերեն, չերքեզերեն, զանազան տեղական բարբառներով, և, պարզ է, վոր գրական լեզուն սովորելու և այդ լեզվով դպրոցական ծրագիրն անցնելու համար այդպիսի յերեխաները դժվարացնում են դպրոցի աշխատանքները»:

Ռոստովի մարզի ազգային փոքրամասնությունների դպրոցների խնդիրները լայնորեն շոշափվեցին 1938 թ. հունվարի 5-9-ը Ռոստովում անցկացված ուսուցչական խորհրդակցության ժամանակ, որին ներկա են գտնվել տարբեր շրջանների 50 ուսուցիչներ՝ հայկական, զերմանական, լեհական, թաթարական և ասորական դպրոցներից. «Որակարգում դրված էր յերկու հիմնական հարց՝ պայքար աշակերտների հետամնացության և յերկրորդ տարին մնալու դեմ և ուսուցիչների քաղաքական լուսավորությունը»<sup>287</sup>: Քննարկված առանցքային հարցերից պարզ է, որ այդ անհանգստացնող երևույթները մեծ չափերի էին հասել, դրանց լուծումը հրատապ խնդիր էր դարձել: Խորհրդակցության ժամանակ բարձրացվել են ուսումնական ծրագրերին, դասագրքերին, լեզվին և գրականությանը, մեթոդիկային վերաբերող խնդիրներ: Հայկական դպրոցներում տիրող իրավիճակը կարելի է միանշանակ բնորոշել որպես քայքայման եզրին հասած, քանի որ ոչ բարեհաջող դպրոցների շարքում նշվել էր անգամ Ռոստովի Ս. Շահունյանի անվան միջնակարգ դպրոցը, որտեղ

<sup>283</sup> Երկրամաս, № 77, էջ 3:

<sup>284</sup> Երկրամաս, № 78, էջ 4:

<sup>285</sup> Երկրամաս, № 62, էջ 3:

<sup>286</sup> Երկրամաս, № 48, էջ 3:

<sup>287</sup> «Բուլշևիկ», 1938, № 4, էջ 4:

նյութատեխնիկական բազան բավական լայն էր և սուր չէր կադրային խնդիրը: Թվարկելով դպրոցների հիմնական դժվարություններն, առանձնացվել են նաև հետևյալները. «...դպրոցները կատարելապես գուրկ են դասագրքերից: Հայկական դպրոցներում, որինակ, դասագրքերի բացակայության պատճառով դասացուցակից դուրս ե հանված հայկական գրականությունը: դասերին ստիպված պարապում են բանավոր կերպով կամ ոգտվում թերթերից, ժուռնալներից»: Հայերեն դասագրքերի խնդիրը 1920-1930 թթ. հանդիսանում էր համայնքներում մեր դպրոցի առանցքային և ամենացավոտ կողմը, որն այս փուլում այդպես էլ չի հաջողվել լուծել:

Հայկական դպրոցին հատուկ ևս մի լուծում չստացած խնդիր էր հանդիսանում դպրոցական ծրագրերի բացակայությունը, ինչպես նաև անհամապատասխանությունը տեղի պայմաններին. «Դպրոցները պարապել են առանց ծրագրի, առանց ղեկավարության, և այսոր պետք է արձանագրել, վոր մի շարք դպրոցներ (Մյասնիկյան ռայոն) մեկ ու կես և նույնիսկ յերկու տարով հետ են մնացել: Հայկական դպրոցների վերաբերյալ պետք է ասել, վոր նրանք մնացել են անթույլատրելի կացության մեջ-դպրոցները յենթարկվում են ՌԽՖՍՀ Լուսժողովմատին, բայց պարապում են Հայաստանի դպրոցների ծրագրով և դասագրքերով (լեզվից և գրականությունից), վորոնք ռուսական դպրոցների ծրագրից շատ են տարբերվում»<sup>288</sup>:

Խորհրդակցությունը ժողլուսբաժինների ոչ արդյունավետ աշխատանքը պայմանավորում էր նաև այն հանգամանքով, որ Լուսժողովմատ և շրջանային լուսբաժիններ էին ներթափանցել ժողովրդի «թշնամիները» և վնասարարություն կատարել տարիներ շարունակ. «Պետք է զորահավաքել լուսավորության ֆրոնտի բոլոր պիտանի և գործոն ուժերը և միահանուռ կերպով ոգնել դպրոցին՝ դուրս բերելու համար նրան ծանր վիճակից: ամենից առաջ մարզային և ռայոնական լուսբաժիններում պետք է անհապաղ նշանակել ընդունակ ղեկավարներ և հրահանգիչներ, վորոնք ի վիճակի լինեն կարճ ժամանակում կարգի բերել նացմենական դպրոցները», - ըստ մասնակիցների սա էր իրավիճակը շտկելու ճանապարհը: Խորհրդակցության մասնակիցների համոզումն էր, որ. «Լուսժողովմատը պետք է կտրուկ միջոցներ ձեռք առնի նացմենական դպրոցներն ապահովելու անհրաժեշտ դասագրքերով, թե ռուսերեն և թե մայրենի լեզուներով»<sup>289</sup>: Դպրոցական կայուն ծրագիր ունենալու համար անհրաժեշտ էր շտկել

<sup>288</sup> Նույն տեղում:

<sup>289</sup> Նույն տեղում:

գործող ծրագրերը, մասնավորապես, ռուսերեն լեզվի և գրականության, ավելացնել դրանց ժամաքանակը: Նույն ծրագրային խնդիրներն ունեին նաև հայկական դպրոցներն, որի լուծման համար անհրաժեշտ էր դիտվում հետևյալը. «...Լուսժողովմատը Ռոստովի մարզի լուսբաժնի միջոցով պետք է Հայաստանի դպրոցների ծրագիրը վերամշակի և հարմարեցնի ռուսական ծրագրերին: Լուսբաժինը պետք է հայոց լեզվի մասնագետներից կազմված հատուկ հանձնաժողովի՝ ծրագրի վերամշակման գործում ձեռնարկած աշխատանքներին (սեպտեմբեր, 1937) համապատասխան ընթացք տա հայկական դպրոցների ուսման վորակը պահանջված չափին հասցնելու համար»<sup>290</sup>:

Առկա խնդիրներին զուգահեռ, երրորդ հնգամյա ծրագրի (1938-1942 թթ., որն անավարտ մնաց) շրջանակներում քննարկումներ էին ընթանում ընդլայնելու հայկական դպրոցական ցանցը. «Մյասնիկյան ռայոնում... ժողովրդական լուսավորության յերրորդ հնգամյա պլանում նախատեսվում է 1938 թվին կառուցել լրիվ միջնակարգ դպրոցներ 2ալթրում - 800 աշակերտների համար, Թոփտում և Մեծ Սալայում 400-ական աշակերտների համար, 1940 թվին ևս մի լրիվ միջնակարգ դպրոց Նեղվիղովկայում 400 աշակերտների համար: Թերի միջնակարգ դպրոցներ նախատեսվում է կառուցել Լենինավանի գյուղխորհրդի «Հեղափոխության ալիք» կոլտոգում 1938 թվին ևն Վեսելեվսկի գյուղխորհրդի Վեսելի խուտորում 1942 թվին»<sup>291</sup>: Երրորդ հնգամյակի ընթացքում Մյասնիկյանի շրջանում նախատեսվում էր բացել նաև 12 նոր մանկապարտեզներ, կառուցել ակումբներ Մեծ Սալայում 400 տեղով, Նեղվիղովկայում և Լենինավանում 300-ական տեղով, Նեսվիթայում 200 տեղով:

Մյասնիկյանի շրջկոմի և շրջխորհրդի օրգան «Կոմունար»-ն իր 1941 թ. հունիսի 19-ի համարում լայն տեղ է հատկացրել Դրիմ գյուղի N 5 միջնակարգ դպրոցի 1940/1941 ուստարվա աշխատանքային արդյունքների ամփոփմանը, ուր հողվածով հանդես էր եկել նույն դպրոցի տնօրեն Մ. Խաչիկյանը: Ընդգծվել է արտադասարանական աշխատանքների լայն ծավալը, ընթացիկ տարում հարստացված գրադարանը, նոր կազմակերպված ռազմական, ֆիզիկական և բնագիտական կաբինետների գործունեությունը: Այս հաջողություններին զուգահեռ, դպրոցի հիմնական խնդիրը հանդիսանում էր առաջադիմության ապահովումը. «Դրիմի միջնակարգ N 5 դպրոցն 1940/1941

<sup>290</sup> Նույն տեղում:

<sup>291</sup> Նույն տեղում, 1937, № 80, էջ 4:

ուսումնական տարում ուներ բավականին աչքի ընկնող թերություններ, վորի ամենագլխավորն է հառաջադիմության ցածր լինելը:... դասարան մնացողները կազմում են 11 տոկոս»<sup>292</sup>: Ինչպես երևում է հայ դպրոցի այս ցավոտ կողմը դեռ երկար ժամանակ չէր հաջողվում հաղթահարել:

1930-ական թթ. լուրջ աշխատանք ծավալվեց անգրագիտության վերացման ուղղությամբ. խնդիրը հիմնականում իր լուծումը ստացավ: Այսպես, Մյասնիկյանի շրջանում 1937 թ. վերջին կային մոտ 1700 կիսագրագետ և անգրագետ, որոնց հետ տարվելիք աշխատանքների համար մարզային լուսբաժինը հատկացրել էր 50 հզ ռուբլի. «Ռայոնի աշխատավորության մեծ տոկոսը մինչև հեղափոխությունն անգրագետ էր, սակայն այժմ գրագետները կազմում են 90 տոկոս»<sup>293</sup>: Այս ուղղությամբ տարվող աշխատանքներում ևս թերացումներ կային, սակայն մասսայական անգրագիտության հաղթահարումն հայ աշխատավորության շրջանում հաջողվեց իրագործել:

Այսպիսով, 1917 թ. հեղափոխությունից հետո նախկին ռուսական կայսրության տարբեր անկյուններում հայ դպրոցի հետագա զարգացումն ու ճակատագիրը դրսևորվեց տարբեր կերպ: Դռնում և Գյուսիսային Կովկասում համայնքային կյանքի ակտիվացման արդյունքում հայկական կրթական կյանքը դրական տեղաշարժեր արձանագրեց, պահպանեց դպրոցի դիմագիծն անգամ դժվարին նյութական կացության պայմաններում: Այստեղ իրադրությունը կտրուկ փոխվեց տարածաշրջանի խորհրդայնացումից անմիջապես հետո, իսկ 1920-ական թթ. դարձան տեղի հայկական դպրոցների համար վերակառուցման, գոյապահպանման ժամանակաշրջան: Տեղի հայկական դպրոցական ցանցը խիստ կրճատվել էր, լուծված չէին շենքային պայմաններն, առկա էին՝ ուսումնական գործընթացի կազմակերպման խնդիրներ ուսումնական ձեռնարկների և կադրերի պակաս:

Ուկրաինայում և Միջին Ասիայի միութենական հանրապետություններում հայ դպրոցը, կտրվելով հայկական կենտրոններից, ինքնուրույն կարողացավ գոյատևել, կրելով բազմաբնույթ դժվարություններ: Այստեղ հայ դպրոցի հետագա զարգացման և ընդլայնման սահմանափակ հնարավորություններ կային, համայնքի օժանդակությունն ու կազմակերպվածությունը թույլ էր, ավելի ուժեղ էր օտար միջավայրի ազդեցությունը, ուստի 1930-ական թթ. դարձան վերջին սահմանագիծը նրանց գոյության համար, որոնք կամ փակվեցին կամ

միավորվեցին տեղի, գլխավորապես, ռուսական դպրոցների հետ:

1920-ական թթ. ամբողջ ԽՍՀՄ-ում տեղ գտած կրթական համակարգի բարեփոխումները, փաստացի խորհրդային դպրոցի շինարարությունն, ուղեկցվեց բազմաթիվ խնդիրներով, դրանց թվում՝ նյութատեխնիկական:

ԽՍՀՄ-ում դպրոցին, այդ թվում, ազգային դպրոցներին հատկացվող միջոցները կտրուկ աճեցին միայն 1930-ական թթ., որը ցրեց լայնորեն շրջանառվող խորհրդային դպրոցի անկման, կազմալուծման տրամադրությունները:

ՌԽՖՍՀ հայության կոմպակտ բնակության շրջաններում, մասնավորապես, Դռնում, Կուբանում, Գյուսիսային Կովկասում, ուր հայ կյանքի և մշակութային-կրթական խորը արմատներ կային, հաջողվեց հայ դպրոցը վերականգնել խորհրդային դպրոցի համակարգում: Այնուհանդերձ, հայ դպրոցը բազմաթիվ խնդիրներ ուներ՝ որակյալ մանկավարժական կադրերի պակաս, ուսումնական ձեռնարկների անբավարարություն, կամ լիակատար բացակայություն, ծրագրային դժվարություններ և սրանցից բխող ուսման որակի ցածր մակարդակ: Գյուսիսային դպրոցներում կադրային պակասը չէր հաջողվում լուծել անգամ Ռոստովում հիմնադրված Գյուսիսային Մանկավարժական Ուսումնարանի առկայության պայմաններում, թեև խնդիրը զգալիորեն մեղմվեց:

1930-ական թթ. մեծ աշխատանք տարվեց անգրագիտության վերացման ուղղությամբ, մշակութային-կրթական ձեռքբերումները հող ձևավորեցին հետագա առաջընթացի համար:

Այսպիսի խնդիրներով էր ներկայացված Անդրկովկասից դուրս գտնվող հայ դպրոցը 1930-ական թթ.: Գյուսիսային դպրոցի գոյությունը լուրջ նախապայման էր համայնքներում ազգային կյանքի պահպանման և զարգացման համար:

### 3.4. Գրական կյանքը

1920-ական թթ. խորհրդային Ռուսաստանում հայ գրական-գեղարվեստական կյանքի ոլորտում լուրջ դերակատարություն են ունեցել նախ Պյատիգորսկի, ապա նաև Մոսկվայի գրական խմբակ-ցությունները:

Պյատիգորսկի Գյուսիսային Գեղարվեստական Խմբակցությունն ու նրա «Ալիք» գրական ժողովածուն ծնունդ են առել Գյուսիսային Կովկասում քաղաքացիական պատերազմի ամենաթեժ շրջանում 1919 թվականին «Տեղումս, այս տարւայ գարնան սկզբներում,

<sup>292</sup> «Կոմունար», 1941, № 55, էջ 4:

<sup>293</sup> «Բոլշևիկ», 1938, № 6, էջ 4:

հիմնեց Պետտիգորսկի Հայ Գրական-Գեղարվեստական Խմբակ-ցութիւնը, որն իրեն նպատակ է դրել՝ համախմբել իր շուրջը գեղարվեստի գանազան ճիւղերում գործող գաղութիս փոքրաթիւ երիտասարդներին, որոնք իրենց համեստ ոյժերով պիտի սպասաւորեն հայրենի գեղարվեստին»<sup>294</sup>։ Այս նպատակով էլ Գրական Գեղարվեստական Խմբակցությունը գործնական քայլեր է իրականացրել թատերական և երաժշտական ասպարեզներում համապատասխան սեկցիաներ հիմնելով, ավելի ուշ հրատարակել գրական սեկցիայի «Ալիք» ժողովածուն։ «Ալիք» գրական ժողովածուն, ծնունդ առնելով բարդ ժամանակաշրջանում, տպագրվում էր Պյատիգորսկի տպարանատեր Գևորգ Սուքիասյանցի տպարանում, ով մեծապէս աջակցում էր այդ գործին. «...գրական որևէ հանդէսի հրատարակութիւնը հայրենի երկրից դուրս՝ գաղութներում-կրկնակի դժվարությունների հետ է կապւած։ Ամենից առաջ նիւթերի կողմից. Հանքային Ջրերի հայ գաղութում պրոֆեսիոնալ գրողներ չըկան, որպէսզի կարողանայինք անելի ճոխացնել մեր ժողովածուի էջերը արժեքաւոր գրւածքներով»<sup>295</sup>։

Խմբակցությունն իր խոսքում, որը տպագրվել է որպէս ժողովածուի նախաբան, ընդգծում էր. «...ժամանակակից թանգութիւնը մեզ երբէք յուսահատութեան դռան չէ կանգնեցրել. մեզ մտավախութիւն պատճառողը եղել է գաղութի վերաբերմունքը դէպի մեր՝ մեծ ծախսեր կլանող գործը... Ի հարկէ, մենք այնքան էլ լաւատես հաւակնութիւն չունինք մեր այս ժողովածուի վերաբերմամբ, բայց, յամենայն դէպս, մեզ թւում է, որ նա որոշ հետաքրքրութիւն ներկայացնում է իրանից»<sup>296</sup>։

Ինչպէս պարզորոշ երևում է, խմբագրությունն իրատեսորեն էր գնահատում «Ալիք»-ի հնարավորությունները, սակայն լի էր վճռականությամբ սկսած գործի հաջողության նկատմամբ. «...մանաւանդ քաղաքացիական այս պատերազմի ընթացքում, և երբ որ այդ դժար ուղին հարթւած է, ինքնին դա ոգևորութեան մի աղբիւր է մեր ապագայ անելի արգասաւոր գործունեութեան»։

«Ալիք»-ի խմբագրությունն իր կողմից նախապէս մատնանշել էր աշխատակիցներին իրենց գործունեության մեջ կատարյալ ազատ և որևէ սահմանափակության մեջ չդնելու մասին՝ սկսած ուղղագրությունից մինչև ոճը, դարձվածքները և այլն։ «Ալիք» գրական ժողովա-

ծուն բովանդակում էր երկու բաժիններ՝ գրական և բանասիրական, ուր իրենց գրվածքներով հանդես էին գալիս բանաստեղծներ Վահրամ Չիթունին, Լևոն Բզնունին, Զ. Բաշինջաղյանը, Գ. Երկունին, Ար. Հովհաննիսյանը, արձակագիրներ Մխիթար Հարությունյանը, Ե. Տեր-Մարտիրոսյանը, Ն. Տիրոսենցը և այլք։ Գրական այս ուժերի մասնակցությամբ էլ «Ալիք» ժողովածուն որոշակիորեն իր շուրջը համախմբեց Հյուսիսային Կովկասի (Եկատերինոդար, Արմավիր, Եսսենտուկի, Ռոմանովսկի ևն) հայ գրական ուժերը։

Գրական Գեղարվեստական Խմբակցությունը 1919 թ դեկտեմբերի 21-ին կազմակերպել է ներկայացում. «Թատերական սեկցիան այդ օրը խաղաց «Նաւթի ֆանտան» վոդևիլը...»<sup>297</sup>։

1920 թ. հունվարի 12-ին տեղի է ունենում Խմբակցության չորրորդ գրական հավաքը՝ նվիրված «Ալիք» ժողովածուի առաջին գրքույկին։ Այս հավաքույթի ժամանակ ունկնդրության են արժանացել Ե. Տեր-Մարտիրոսյանի «Մենություն» գրվածքն, որը ներկայացնում էր գյուղական տառապող ուսուցչի հոգեկան ապրումները, ինչպէս նաև Վ. Չիթունու «Խաչված երազներ» ու «Որպէս երկու մանուկներ» աշխատանքները։

1920 թ. հունվարի 26-ի Գրական Գեղարվեստական Խմբակցության Ընդհանուր ժողովը, լսելով գործունեության հաշվետվությունը, որոշում է կայացրել «Ալիք» ժողովածուի երկրորդ գրքույկի հրատարակման մասին։

Պետք է նկատել, որ Պյատիգորսկի Գրական Գեղարվեստական Խմբակցությունը նշել է նաև հայ անվանի գրական և ազգային գործիչների հորելյաններն. այսպէս՝ Հ. Թումանյանի 50-ամյակի առթիվ «Ալիք»-ի առաջին գրքույկում անդրադարձ-հոդված է գրվել, իսկ 1920 թ. ապրիլի 4-ին Խրիմյան Հայրիկի ծննդյան 100-ամյակի առթիվ ծրագրվել էր հրատարակել միօրյա թերթ՝ ամբողջովին նվիրված հորելյարին<sup>298</sup>։

Գրական Գեղարվեստական Խմբակցության կազմակերպած միջոցառումները նպատակ են հետապնդել նաև ապահովել նյութական բազա, նվիրատվություններ, որոնց մասին տվյալները գետեղված էին ժողովածուներում։ Այնուհանդերձ, արդեն 1920 թ. սկզբին Հյուսիսային Կովկասը դառնում է քաղաքացիական պատերազմի ակտիվ թատերաբեմ, արգելակում նաև Պյատիգորսկի Խմբակցության գործունեությանը. «Փետրուարի 15-ին և 22-ին նշանակւած հերթական

<sup>294</sup> «Ալիք», Պյատիգորսկ, գրք. 1, 1919 թ., էջ 3։

<sup>295</sup> Նույն տեղում։

<sup>296</sup> Նույն տեղում։

<sup>297</sup> «Ալիք», Պյատիգորսկ, գրք. 2, 1920, էջ 61։

<sup>298</sup> Նույն տեղում, էջ 62։

հավաքոյթները չկայացան քաղաքական իրադարձությունների պատճառով»<sup>299</sup>:

Պյատիգորսկի խմբակցության հետագա գործունեության և «Ալիք» ժողովածուի հրատարակության վերաբերյալ տվյալները բացակայում են: Քաղաքացիական պատերազմի այս վճռական փուլում փակվել և իրենց գործունեությունը դադարեցրել են մեծ թվով հայ պարբերականներ և համայնքային-հասարակական կառույցներ, որոնց ծակատագրին վիճակված էր հետևել նաև այս գրական խմբակին:

Թեև իր կարճատև գործունեությանը Պյատիգորսկի Հայ Գրական Գեղարվեստական խմբակցությանն որոշ չափով հաջողվեց իր առանցքի շուրջ համախմբել Հյուսիսային Կովկասի հայ գրական ուժերն, անհայտությունից հանել նրանց և հրամցնել հասարակությանը, կազմակերպել հրատարակություն:

Խորհրդային տարիներին նշանակալի դերակատարություն ունեցավ Մոսկվայում հիմնված հայ Գրական Գեղարվեստական «Մուրճ և Մանգաղ» խմբակցությունը, որը դարձավ հայ գրական-գեղարվեստական մտքի կենտրոնը Ռուսաստանում 1920-ական թթ. «1922 թ. գարնանը մի խումբ հայ երիտասարդ գրականագետների մէջ միտք յղացաւ համախմբել գրականութեանն ու արւեստին նւիրած նոր ու սկսնակ ուժերին»<sup>300</sup>: խմբակի հիմնադիր և նոր անդամների 1922 թ. մայիսի 13-ի ընդհանուր ժողովում ընտրվում է ժամանակավոր Վարչություն, իսկ օգոստոսի 4-ին կայացած ընդհանուր ժողովում ժամանակավոր Վարչության փոխարեն հաստատվում է նոր Վարչություն և խմբագրական կոլլեգիա:

Խմբագրության գործունեությունն ամփոփվել է ներքին հավաքոյթների, հրատարակային դասախոսությունների և երեկոյթների, հրատարակչության մեջ:

Գրական խմբակի աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերել Գուրգեն Հայկունին, Ա. Արշարունին, Ե. Տեր-Մարտիրոսյանը, Շամունցը, Աբովը և ուրիշներ: Մի շարք հասարակական երեկոյթների մասնակիցներն են դարձել տեղի հայ երաժշտական խմբակի անդամները, դրամատիկական ստուդիայի ուսանողները, ռուս պրոլետգրողների «Դարբնոց» (Кузница) խմբակցությունը և այլք:

Դասախոսություններով հանդես են եկել Գ. Հայկունին («Երեքի» դեկլարացիան և Չարենցի ստեղծագործությունները), Զ. Գյուլի-Քելխ-

յանը («Պրոլետարական պոեզիան») և այլն:

1922 թ. դեկտեմբերի 30-ին ի պատիվ համառուսական X-րդ համագումարի հայ պատգամավորների կազմակերպված երեկոյթին մասնակցել են Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինը և Կենտգործկոմի նախագահ Ս. Համբարձումյանը:

Գրական խմբակցության հրատարակչական գործը, հակառակ հոռետես տրամադրությունների, ուշացումով, սակայն գլուխ բերվեց. «Նիւթական միջոցների բացակայութիւնքը, տպագրական, տէխնիկական ոչ բաւարար պայմանները, և այլն, այս ամենը, սակայն, չկասեցրին սկսած գեղեցիկ գործը»<sup>301</sup>:

Խորհրդային իշխանության առաջին իսկ տարիներից խորհրդահայ տարբեր համայնքներում սկսվեցին հրատարակվել պարբերականներ, այդ թվում գրական-ստեղծագործական հանդեսներ, ուր ամփոփվում էին հայ գրողների և ստեղծագործ ուժերի գրվածքները: Այդպիսի հրատարակություններից էր գրական-գեղարվեստական և սատիրական օրգան «Քուրա»-ն, որն հրատարակվում էր Մոսկվայում և հանդիսանում «Մուրճ և Մանգաղ» գրական խմբակի հանդեսը:

«Քուրա» հանդեսը կոչված էր համախմբելու պրոլետարական ստեղծագործական մտքի նախահեղափոխական փոքրաթիվ ուժերը, ապահովելու պրոլետարական մտավորականության և մշակութային կյանքի զարգացումը. «Պրոլետարական խաւերի ծնունդ-մտաւոր ուժերի բեղմնաւորումն և զարգացումը երաշխիք են, անշուշտ, որ վաղը բանւոր դասակարգի առաջ պիտի բացւին ու ծաղկին գիտութեան և գեղարւեստի նորանոր հորիզոններ...»<sup>302</sup>: «Քուրա» հանդեսն, որի առաջին համարը տպագրվել է 1923 թ. մարտին, խմբագրում էր Գ. Հայկունին: Հանդեսի առաջին համարի առաջաբանում Գ. Հայկունին ներկայացնում էր հայ պրոլետգրողների առջև ծանրացած հիմնական խնդիրը, այն է՝ հանդես գալ պրոլետարական կուլտուրայի առաջապահ դիրքերում, դառնալ հայ բանվորության զինակիցը:

«Մուրճ և Մանգաղ» խմբակցության համանուն հրատարակչությունը բացի մի ամբողջ շարք գրքերի լույսընծայումից, զբաղվել է նաև թարգմանություններով՝ հայ ընթերցողին ծանոթացնելով ռուսական և համաշխարհային նորագույն, հեղափոխական գրականության հետ: Այս հրատարակչությունում տպագրվել է Գորկու «Մայրը», Պլեխանովի «Գեղարվեստը» և այլ աշխատություններ: Հրատար-

<sup>299</sup> Նույն տեղում:

<sup>300</sup> «Քուրա», Մոսկվա, № 1, 1923, էջ 13:

<sup>301</sup> Նույն տեղում, էջ 15:

<sup>302</sup> Նույն տեղում, էջ 1:

րակչությունն իր նպատակներից մեկն էլ տեսնում էր նրանում, որ պետք էր խրախուսել տաղանդավոր, երիտասարդ սկսնակներին, անհայտության գրկից հրապարակ հանել շնորհալի և կենսունակ գրական ուժերին, ովքեր որոշակի անցում էին կատարել դեպի պրոլետարական գրականություն:

Գրական Գեղարվեստական Խմբակցությունն, ոչ առանց հպարտության ընդգծում էր, բարենպաստ պայմանների դեպքում կարելի էր անել կրկնակին. «Մոսկվայի Գրական-գեղարվ. Խմբակցութեան «Մուրճ և Մանգաղ» հրատարակչութիւնը իր բովանդակալից ու սիրուն գրքերով արդէն բռնել է իր հանրօգուտ ու պատուաւոր տեղը հայ հրատարակչութեան պատմութեան մէջ: Եւ ոչ մի անաչառ պատմագիր այլևս անգոր է լռութեամբ անցնելու հայ գրականութեան մէջ այդ փայլուն շինարարական ու ստեղծագործական գործի վրայից: Ամբողջ Ռուսաստանի ու Կովկասի հայ իրականութեան մէջ, չհաշւած պետական հրատարակչութիւնը, նա այսօր առաջինն ու միակն է»<sup>303</sup>: Այնուամենայնիվ, Խմբակցությունն իրավացիորեն գտնում էր, որ ամեն ինչ կատարյալ չէ, ուստի և կոչ էր անում կուսակցական, հասարակական և գրական համապատասխան շրջանակներին, զորավիճ ու մեցուկ հանդիսանալ կարևոր այդ ձեռնարկին:

Շարունակելով իր գրական գործունեությունը՝ Մոսկվայի Հայ Գրական Գեղարվեստական Խմբակցությունը «Քուրա»-յի 2-րդ համարն լույս է ընծայում 1923 թ. հոկտեմբեր ամսին: Վերոհիշյալ համարում, բացի գեղարվեստական բաժնից, տպագրված նյութերն ունեին տեսական և քննադատական բնույթ, որն անխոս առավել էր արժևորում հանդեսը: Հոկտեմբերի համարը ներկայացված էր գեղարվեստական, տեսական և քննադատական բաժիններով, ուր հանդես են եկել նոր գրական ուժեր (Ս. Դարբինյան, Բ. Սահակյան, Հ. Խաչանյան ևն): Արժարժվել են այնպիսի տեսական թեմաներ ինչպիսիք են «Պրոլետարական գրականություն» (Ի. Ֆիլիպչենկո՝ «Դարբնոց» խմբ. նախագահ), «Գեղարվեստի մասին» (Վ. Վանդեկ), «Արդի գեղարվեստական գրականությունը Հայաստանում» (Դր. Տեր-Սիմոնյան) և այլք:

Հետաքրքրական է, որ արդեն 1928 թ. հոկտեմբերին հրատարակված «Քուրա»-ն ներկայանում էր որպես հասարակական-քաղաքական, գրական-գեղարվեստական, գիտական-քննադատական ավանախ, և ներկայացնում Մոսկվայի՝ Խորհրդային Հայաստանի Կուլտուրայի Տան հրատարակչությունը:

1928 թ. հոկտեմբերին «Քուրա»-յի հրատարակության վերսկսման առթիվ խնամարությունը կրկին անգամ արժևորում էր այն նպատակները, որոնք դրված էին դեռևս 1923 թ. «Քուրա»-ն վորոշ չափով պիտի կարողանա իր վրա առնել P.C.Փ.C.P.-ում ապրող հարյուր հազարավոր հայ բանվորա-գյուղացիական մասսաների կուլտուրական պահանջները բավարարելու մի մասը: Քուրա-ն պիտի իրագործե շրջանիս կուլտուրական անհատ ուժերի կամ խմբավորումների ավելի լայն ու կուռ համախմբումը պրակտիկ, ստեղծագործական հողի վրա...»<sup>304</sup>:

Փոքր-ինչ վերակառուցված «Քուրա»-ն, իր առաքելությունն էր դիտում պարբերական ավանախներով հրապարակ հանել նորանոր, ամբողջացած ու մնայուն երկեր, բարոյապես և նյութապես խրախուսել վաստակավոր և հուսատու հայ գրականագետներին. «Քուրա-ն՝ քաղաքական-հասարակական, գիտական, գրական-գեղարվեստական և քննադատական ավանախներով պիտի բավարարե շրջանիս հայ մասսաների կուլտուրական լայն պահանջների նվազագույնը...»<sup>305</sup>: «Քուրա»-ն վերահաստատում էր իր գործունեությունը՝ համաշխարհային գրականության հեղափոխական նմուշների թարգմանության ուղղությամբ իրականացված ձեռնարկումները և դրանք դարձնելու լայն խավերի սեփականությունը: Այս ավանախում տեղ էր գտել նաև Մոսկվայի հայ ուսանող Ս. Ալիխանյանի «Հայ ուսանողության անելիքները» հոդվածն, ուր բացահայտվում էր նոր իրողության պայմաններում հայ ուսանողությանն առաջադրվող խնդիրները: Ընդգծելով, որ Մոսկվան և Պետերբուրգը հայ մտավորականության և հեղափոխական գործիչների համար եղել են կրթական դարբնոց, առանձնացվում էին ներկայի պահանջներից բխող հետևյալ խնդիրները. «Հայ ուսանողը, լինի այն կուսակցական, բանվոր թե ինտելիգենտ, մոռացության չպիտի տա այն հանգամանքը, վոր յեթե ինքը չորս հազար վերստ տարածություն կտրելով ուղարկվել է այստեղ սովորելու, նա պիտի սովորի միայն այն յերկրի համար, վորը նրան ուղարկել է: Դեպքեր են լինում, յերբ Հայաստանից թոշակ ստացող ուսանողը բարձրագույն դպրոց ավարտելով հետ չի գնում աշխատելու»<sup>306</sup>:

Այսպիսով, Մոսկվայի Հայ Գրական Գեղարվեստական Խմբակցությունն ու նրա «Քուրա» հանդեսը լուրջ աշխուժություն մտցրեցին

<sup>303</sup> Երկրորդ տեղում, էջ 15:

<sup>304</sup> Քուրա, 1928, III, էջ 10:

<sup>305</sup> Երկրորդ տեղում:

<sup>306</sup> Երկրորդ տեղում, էջ 161:

ոչ միայն Մոսկվայի հայ մտավոր կյանքում, այլև դարձան այն օղակը, որի շուրջ համախմբվեցին գրական-գիտական նշանակալի ուժեր: Այս դրական կողմերով հանդերձ, «Քուրա»-ն ներկայացնում և քարոզում էր միայն հայ պրոլետարական գրականությանը, գտնվելով ժամանակի գաղափարական-քաղաքական հայացքների ներքո, ուր, բացակայում էին գրական, հասարակական, գաղափարական ազատությունն ու բազմակարծությունը: Այդ հանգամանքը չի նսեմացնում «Քուրա»-յի արժեքն ու կարևորությունը, որը կարողացավ ուղղության տալ Մոսկվայի Հայ գրական կյանքին 1920-ական թթ.:

Արդեն 1930-ական թթ ՌԽՖՍՀ հայ գրական-հասարակական կյանքում. առանձնահատուկ կարևորություն և հետաքրքրություն է ներկայացնում Դոնի խորհրդային գրողների միության հայկական սեկցիան:

Դեռևս 1932 թ. ապրիլի 13-ին ՀամԿ/Բ/Կ ԿԿ որոշումով վերացվեց պրոլետգրողների կազմակերպությունը՝ ՌԱՊՊ-ը, որն ուղղակիորեն ցույց տվեց խորհրդային իշխանության բացասական վերաբերմունքը գրական ասպարեզում առկա փոքր-ինչ ազատ, ստեղծագործ աշխատանքի նկատմամբ. «...գրական այդ կազմակերպությունն ու շատ ուրիշ գրական կազմակերպություններ վոչ մի առնչություն չունեն խորհրդային գրականության հետ և արգելակում են նրա լիարյուն զարգացումը: Կուսակցական Կենտկոմի նույն վորոշմամբ 1932 թվին կազմակերպվեց խորհրդային գրողների միությունը, վորը և հանդիսացավ այն միակ կազմակերպությունը, վորտեղ հավաքվեցին խորհրդային գրականության լավագույն ուժերը...»<sup>307</sup>:

1930-ական թթ. Դոնի հայ գրական ուժերն իրենց վրա կրեցին Սիուբյան ներսում լայնորեն կիրառվող հետապնդումների և «մերկացումների» քաղաքականությունը, անհիմն կերպով ենթարկվեցին հալածանքների: Նման քաղաքականությունը տեղ գտավ խորհրդային գրական այլ շրջանակներում: Առավել մեծ չափերով այդ հետապնդումները սուր շարունակություն ստացան բռնաճնշումների հիմնական փուլում 1937 թ., որին անդրադարձել են և լայնորեն շոշափել ժամանակի հայկական կուսակցական մամուլը: Այսպես, «Բուլշևիկ»-ն իր 1937 թ. հունիսի 6-ի համարում «Բուլշևիկյան անխնա քննադատությամբ մերկացնել թշնամուն» հողվածում լուսաբանում էր Դոնի Ռոստովի խորհրդային գրողների եռորյա ժողովի արդյունքները. «3 օր անընդհատ գրողների և ընթերցողների ակտիվը քննարկում եր տրոցկիստական-ֆաշիստական գործակալության լրտեսական,

դիվերսիոն, վնասարարական գործողությունը խորհրդային գրականության մեջ:...Գրողների ժողովը պարզորոշ կերպով յերևան հանեց խորհրդային ժողովրդի այդ թշնամիների գործունեության ամբողջ էությունը առանձնապես մեր յերկրամասում»<sup>308</sup>.

Դոնի խորհրդային գրողների տեղական կառույցի հակախորհրդային գործելակերպի և գրաքննադատության բացակայության մեղավորությունը ժողովի մասնակիցները դրեցին տեղի ղեկավար կազմի վրա, որոնք մեծապես շեղել և սխալ ճանապարհի վրա էին դրել երիտասարդ ուժերին: Դոնի երկրամասում հակախորհրդային գործունեություն ծավալելու մեղադրանքով ժողովը «մերկացրել» էր մի շարք հայազգի ստեղծագործողների. «Ձակրուտկինը (մանկավարժական ինստիտուտ) ժողովականների առաջ պարզեց Լինինի (քննադատ) կապերը ժողովրդի թշնամի Թաթուլովի հետ, թե ինչպես նա հրատարակած պուշկինյան ժողովածվում քողարկված կերպով տեղավորել էր լրտես Թաթուլովի վնասարար հողվածը: Թաթուլովի հակախորհրդային գործունեության փաստերի շարանում հիշատակվեց և այն, թե ինչպես իր մերկացման նախորդակում, պրոլետարական մեծագույն բանաստեղծ Մայակովսկու մասին արած զեկուցման մեջ նա աշխատել է կեղտոտել Մայակովսկու անունը, նսեմացնել նրա պրոլետարական պոեզիայի առաջնակարգ դերը:...ժողովում պարզվեց ժողովրդի թշնամիներ Վարդանյանի, Գոգոբերիձեյի և ուրիշների քողարկված վնասարարական աշխատանքը, յերբ նրանք ամեն կերպ աշխատում էին իրենց ազդեցության տակ առնել մեր յերիտասարդ, անգամ և լավ գրողներին»<sup>309</sup>:

Հետաքրքրական է, որ վերոհիշյալ ժողովում քննադատության են արժանացել ազգային փոքրամասնությունների շրջանում գրական կարգերի պատրաստման աշխատանքները, քննադատության և ինքնաքննադատության պակասը, որը հնարավորություն կբացեր վեր հանել թերացումները և չշեղվել ուղուց՝ «անադարտորեն» իրականացնելու համար կուսակցության գլխավոր գիծը խորհրդային գրականության մեջ:

«Բուլշևիկ»-ն իր հետագա համարներում ևս անդրադարձել է խորհրդային գրական այս կառույցի շրջանակներում տարվող «զտումներին», որին զոհ էին դառնում անգամ իրենց «մերկացնողները»: Այսպես, 1937 թ. հոկտեմբերի 18-ին «Բուլշևիկ»-ն արտատպում է երկրամասի կենտրոնական մամուլում «Մուլտ»-ում, հոկտեմբերի

<sup>307</sup> Բուլշևիկ, Դոնի Ռոստով, 1937, № 54, էջ 3:

<sup>308</sup> Նույն տեղում:

<sup>309</sup> Նույն տեղում:

15-ին տպագրված Հ. Ղուկասյանի ««Գրականագետների» դիմակի տակ» հոդվածն, ուր «բացահայտված» էր երկրամասի հակախորհրդային հայ գրական խմբակն ու նրա թշնամական գործունեությունը, որի համար տանիք էր ծառայել նաև հայալեզու կուսակցական օրգանը՝ «Բուլշևիկ»-ը: Վերոնշյալ հոդվածը սկսվում էր հետևյալ տողերով. «Ժողովրդի թշնամիները, բուրժուական մացիոնալիստները, քիչ վնաս չհասցրին յերկրամասի հայկական կուլտուրային և գրականությանը: Այժմ մերկացված լրտես և դիվերսանտ Ավագովը, որը յերկար ժամանակ գործում էր յերկրային (այժմ մարզային) «Բուլշևիկ» թերթում, անց էր կացնում բացահայտ վնասարարական հակահեղափոխական գիծ: Մաքսանենգությամբ քաշ տալով հակահեղափոխական-տրոցկիստական և ազգայնական «զաղափարներ», Ավագովն ամեն բան անում էր, վորպեսզի վիժեցներ յերկրամասի բազմահազար հայ բնակչության կոմունիստական լուսավորությունը և դաստիարակությունը: ...Ավագովը մերկացված և անվնաս է դարձված, բայց նրա արմատները դեռ մինչև վերջ արմատախիլ չեն արված»<sup>310</sup>:

«Մոլոտ»-ում հանդես եկող Հ. Ղուկասյանը նույն պիտակավորմամբ մեղադրական է ներկայացնում «Բուլշևիկ»-ի մեկ այլ պատասխանատու աշխատակցի՝ Արսեն Հովհաննիսյանին, որին անվանում է անսկզբունք և բարոյազուրկ, իրեն «պոետ» հորջորջող անձնավորություն: Ա. Հովհաննիսյանի ծանոթությունը Դոնի հայ գրական և քննադատական այն շրջանակի հետ, որոնց թվում էին Թաթուլովն ու Վարդանյանը, նրան դասում էր հակաժողովրդական-թշնամական գրական ճամբարի շարքը. «Հայտնի է, օրինակ, վոր տրոցկիստական դիվերսանտ Վարդանյանը, որը գործում էր Տազանրոզում, շատ հետաքրքրվում էր Հովհաննիսյանի անձնավորությամբ: Ժողովրդի թշնամի Թաթուլովի հետ միասին Տազանրոզում նա կազմակերպեց այդ խորամակնի «ստեղծագործական» երեկույթները... Իրականում Հովհաննիսյանի ամբողջ ստեղծագործությունը - դա բացահայտ հակահեղափոխական-տրոցկիստական մաքսանենգություն է: Նա ունի մի քանի «գրական աշխատություններ»: Այդ գրքերում քաշ է տրվում զգվելի ֆաշիստական գրպարտություն խորհրդային ժողովրդի և մեր երկրի դեմ»<sup>311</sup>: Մեջտեղ էին բերվում Ա. Հովհաննիսյանի ստեղծագործություններն ու դրանցում թույլ տրված «շեղումները», այսպես. ««Լուսաբացի լիրիկա» գրքում նա անում է ստոր

պրովոկացիոն հարձակում Լենինի և Լենինիզմի դեմ, խորհրդային ժողովրդի դեմ և հենց այդ տեղ էլ բառացիորեն վերլուծում է Հուլա Տրոցկու հակահեղափոխական մտքերը: Մյուս գրքում, - «Յերգեր հաղթական վերելքի»՝ Հովհաննիսյանը կոպիտ կերպով խեղաթյուրում է Մարքսի ուսմունքը»<sup>312</sup>: Ա. Հովհաննիսյանի՝ թշնամական դիտված ստեղծագործությունների թվին էր դասվում նաև 1934 թ. լույս ընծայված «Կարմիր տախտակի վրա» գիրքը, որը որակվել էր «քաղցր շշմջում» թշնամու առաջ. «...ամբողջ գիրքն իսկապես նվիրված է երկու «հերոսների»- Յեղիազարյանին և Դոկուկինին, այժմ մերկացված տրոցկիստական դիվերսանտներին և լրտեսներին: Հովհաննիսյանը ներկեր չի խնայում ստորաքարշ զեղումների համար ֆաշիստական թունդ ավազակների առաջ, նրանց անունները նա արտասանում է բառացիորեն յուրաքանչյուր էջում և վոչ այլ կերպ, քան այսպիսի մականուններով՝ «մեր անփոխարինելի ղեկավարներ», «ամենասիրելի», «թանկագին» և այլն: ... Հովհաննիսյանը մի ժամանակ գլխավորելով յերկրամասի պրոլետարական գրողների հայկական սեկցիան, յեռանդուն կերպով քաշ էր տալիս տրոցկիստական-ավերբախյան «զաղափարիկներ»»<sup>313</sup>:

Հակահեղափոխական գրական գործունեության մեղադրական էր ներկայացվում «Բուլշևիկ»-ի մեկ այլ աշխատակից և Դոնի Ռոստովի մանկավարժական ինստիտուտի դասախոս Եգոր Բարսեղյանին. ««Բուլշևիկի» խմբագրության մոտ շահատակում է մի ուրիշ «գրականագետ», վոմն Յեգոր Բարսեղյան, իր սեփական խոստովանությամբ, Հովհաննիսյանի «անփոխարինելի բարեկամը»: Այս «պրոֆեսորը» գրպարտիչ յեկույթներում կուսակցության, խորհրդային պետության և կոլխոզնիկների դեմ վոչ միայն հետ չի մնում, այլ նույն իսկ գերազանցում է իր գինակից Հովհաննիսյանին: 1934 թվին նա լույս է ընծայում «Ունեվոր կյանքի ուղին» բրոշյուրը»<sup>314</sup>: Ե. Բարսեղյանի վերոնշյալ աշխատությունը Լենինիզմի և կոլտնտեսային կարգի դեմ ուղղված բացահայտ սադրանք էր դիտվում. «Բրոշյուրում անամոթաբար և դիտավորյալ կերպով խեղաթյուրված են ընկեր Ստալինի աշխատություններից բերված մեջբերումները: Մի տեղում թույլ է տրված բառերի ուղղակի թշնամական տեղադրություն: Ուրիշ տեղում Բարսեղյանը ցինիկաբար պնդում է, վոր իբր թե «սերմային ֆոնդի գտման հետևանքով մեր դաշտերը ծածկվեցին մոլախոտով» (էջ 24) և

<sup>310</sup> Նույն տեղում, № 100, էջ 2:

<sup>311</sup> Նույն տեղում:

<sup>312</sup> Նույն տեղում:

<sup>313</sup> Նույն տեղում:

<sup>314</sup> Նույն տեղում:



այլն, և այլն»<sup>315</sup>։ Ե. Բարսեղյանի երկրորդ աշխատությունը՝ «Աշխատանքի սոցիալիստական ձեվերը», որը լույս էր տեսել Ավագովի խմբագրությամբ 1933 թ., դիտվում էր հակաստալինյան և նրա քաղաքական-գաղափարական հակառակորդ Տրոցկու ընդգծված ցիտատներով լի։ «Նա (նկատի է առնվում աշխատությունը) նույնպես լի յե տրոցկիստական գրպարտիչ հարձակումներով ընդդեմ կոմունիստական կուսակցության, ընդդեմ պրոլետարական դիկտատուրայի... Այդպես են Յովհաննիսյանի և Բարսեղյանի իսկական դեմքերը, վորոնք խորհրդային գրականագետների դիմակի տակ թագնվել են հայկական «Բոլշևիկ» թերթում։ Այստեղ նրանք անպատիժ կերպով անում են իրենց գարշելի, հակահեղափոխական գործը»<sup>316</sup>։

«Մոլոտ»-ի էջերում տպագրված «բացահայտումներն» առիթ դարձան, որպեսզի «Բոլշևիկ»-ի խմբագրական կազմին՝ Ս. Գիգոյանի գլխավորությամբ, թերթի կուսկազմակերպության 1937 թ. հոկտեմբերի 16-17-ի ժողովում մեղադրանք ներկայացվի հակահեղափոխական մտքեր և քաղաքական սխալներ թույլ տալու համար. «Համարել հաստատված, վոր մի շարք հակահեղափոխական գրքեր հրատարակված են «Ազով-Սևոմյան հրատարակչության» հայկական բաժանմունքի նախկին խմբագիր Գ. Պոտենցի կողմից, վորի մասին հաղորդել ԳԿ/Բ/Կ Յերևանի քաղկոմին որտեղ ներկա ժամանակ նա գտնվում է»<sup>317</sup>։

Բացահայտ հակահեղափոխական գործունեության մեղադրանքով Արսեն Յովհաննիսյանին կուսժողովը հեռացրեց թերթի խմբագրակազմից և խորհրդային Գրողների Միության մարզային բաժանմունքի առաջ հարց բարձրացրեց նրա անդամության հնարավորության բացառման վերաբերյալ, իսկ Եգոր Բարսեղյանի վերաբերյալ բոլոր նյութերը որոշվեց հանձնել այն կուսկազմակերպությանն, ուր նա գտնվում էր։

«Մոլոտ» թերթի էջերում «բացահայտված» հակահեղափոխական և ժողովրդի թշնամի որակումը ստացած գրականագետներն, որոնք իբրև թե բույն էին դրել «Բոլշևիկ»-ի խմբագրությունում, ինչպես պարզ է դառնում 1938 թ., գրպարտության զոհ էին։ Այսպես, «Բոլշևիկ»-ի 1938 թ. փետրվարի 11-ի համարում տպագրված «Զրպարտողը մերկացնողի դիմակի տակ» հոդվածում բացահայտվում է ոչ միայն

«Բոլշևիկ»-ի, այլ նաև «Մոլոտ»-ի արդեն նախկին աշխատակից Գ. Ղուկասյանի գրպարտիչ գործունեությունը։ Սուր քննադատության է արժանացել մամուլի միջոցների անհարկի շտապողականությունը, ինքնապահովագրման տրամաբանությունը նմանօրինակ հոդված թերթի էջերում զետեղելու համար։ Միևնույն ժամանակ, իրավացիորեն նշվում էր, որ հապշտապ և հախուռն «որոշման» հեղինակները խորամուխ չլինելով գործի էությանն, իրենք են ինքնաքննադատության և զգաստության ոչ պատշաճ դրսևորում հանդես բերել։ «Նույն հանցագործ վերաբերմունքն է ցույց տվել Արսեն Յովհաննիսյանի նկատմամբ նայել խորհրդային գրողների Միության Ռոստովի բաժանմունքը։ Վերջինիս համար բավական է յեղել «Մոլոտի» հոդվածը և «Բոլշևիկի» կուսակցական ու կոմյերիտական կազմակերպության վորոշումը, վորպեսզի կենդանական ահով բռնվեր, առանց ժանոթանալու Յովհաննիսյանի գրվածքների ու սխալների հետ և նրա բացակայությամբ վորոշում հաներ գրողների Միության թեկնածությունից հեռացնել Արսեն Յովհաննիսյանին»<sup>318</sup>։ Շարունակելով նման իրականության փակ կողմերի բացահայտումը՝ մեջտեղ են բերվում Ա. Յովհաննիսյանին վերագրված «հակաժողովրդական» դիրքը. «Այն, վոր 1935 թվին Տազարոզի կուսքաղաքային կոմիտեն, վորի քարտուղարն էր այդ ժամանակ ժողովրդի թշնամի Ս. Վարդանյանը, կազմակերպում է այդ ժամանակ Ռոստովում գումարված գրողներին կոնֆերանսին մասնակցող 17 գրողներից գրական յերեկո, վորտեղ մասնակցում է նաև Արսեն Յովհաննիսյանը։ Զրպարտչի համար բավական է միայն, վոր յեղել է գրական յերեկույթ, վորտեղ մասնակցել է Արսեն Յովհաննիսյանը... վորպեսզի նրան թշնամիների շարքը դասի»։

Զրպարտության զոհ դարձած Ա. Յովհաննիսյանի ազնիվ անունը վերականգնվեց միայն ամիսներ անց. «Պետք է անցներ յերեք ամիս, վորպեսզի կոմյերիտիության քաղաքային կոմիտեն քններ այդ հարցը և ստոր գրպարտության զոհ դարձած Արսեն Յովհաննիսյանին վերականգնել կոմյերիտիության շարքերում»<sup>319</sup>։

Այսպիսով, 1920-ական թթ. հանձին Պյատիգորսկի և Մոսկվայի Հայ Գրական Գեղարվեստական խմբակցությանների և նրանց «Ալիք», «Քուրա» հրատարակչությանների ռուսահայ գրական կյանքում երևան եկավ նկատելի աշխուժություն։ Պյատիգորսկի Հայ Գրական խմբակցությունը հիմնադրվեց և գործեց հասարակական-քա-

<sup>315</sup> Նույն տեղում։

<sup>316</sup> Նույն տեղում։

<sup>317</sup> Նույն տեղում։

<sup>318</sup> Նույն տեղում, 1938, № 14, էջ 3։

<sup>319</sup> Նույն տեղում։

ղաքական բարդ պայմաններում, սակայն կարողացավ իր շուրջը համախմբել Գյուսիսային Կովկասի հայ գրական փոքրաթիվ ուժերին, կազմակերպել հրատարակչություն, անհայտությունից փրկել և ուղղորդել հայ գրական կյանքի թեկուզև փոքրիկ ուժերը:

Մոսկվայի 3-րդ հրատարակչական կենտրոնի խմբակցությունն ու նրա «Քուրա» հանդեսը լուրջ աշխուժություն մտցրեցին ոչ միայն Մոսկվայի հայ մտավոր կյանքում, այլև դարձան այն օղակն, որի շուրջ համախմբվեցին գրական-գիտական նշանակալի ուժեր: Այս դրական կողմերով հանդերձ, «Քուրա»-ն ներկայացնում և քարոզում էր հայ պրոլետարական գրականությանը և ժամանակի գաղափարական-քաղաքական հայացքներն, ուր բացակայում էին գրական, հասարակական, գաղափարական ազատությունն ու բազմակարծությունը: Այնուհանդերձ, գրական խմբակցությունների արժեքն ու խաղաղացած դերը մեծ էր, որոնք կարողացան ուղղություն տալ ռուսահայ գրական կյանքին 1920-ական թթ.:

1930-ական թթ. Դոնի հայ գրական կյանքում հետաքրքրական իրողություններ էին տեղ գտել, որոնց մասին բացառապես ոչինչ հայտնի չէր: Այստեղ հայ գրական կյանքին անհայտ բազմաթիվ անուններ կան, որոնք 1930-ական թթ. խորհրդային ամբողջատիրական մեքենայի և «գաղափարախոսության» զոհը դարձան: 1930-ական թթ. ամբողջ Միությունում տեղ գտած բռնաճնշումներն ու «մերկացումներն» իրենց շրջապատույտի մեջ առան նոր-նոր կազմավորվող Դոնի հայ գրական ուժերին:

Նրանց գործունեությունը որակվեց հակահեղափոխական, հակաժողովրդական հակապետական և այլ պիտակավորումներով:

1930-ականների լայն կիրառությամբ գտած «թշնամիների որսը» իրականացվում էր գրապարտությունների և սադրանքների անմաքուր եղանակով:

Դեռևս բազում անհայտ էջեր կան խորհրդահայ գրական կյանքի ամբողջական և իրական պատկերը վեր հանելու համար, այնուհանդերձ, ակնհայտ է, որ խորհրդահայ համայնքներում տեղաշարժերն այս ասպարեզում ևս նկատելի էին:

### 3.5. Մամուլը

Հետհեղափոխական առաջին տարիները բեկունային ժամանակաշրջան էին նախկին Ցարական Ռուսաստանի տարածքում բնակվող հայության գրական-հրատարակչական գործունեության համար: Այդ տարիներին Ռուսաստանի տարբեր երկրամասերում գտնվող հայկա-

կան համայնքները թևակոխեցին երկրում ծավալվող ներքաղաքական խնդրումների ժամանակաշրջան: Առաջին աշխարհամարտի տարիներին սկսված աննախընթաց աշխուժությունն ու ազգային խնդիրների նկատմամբ անթաքույց հետաքրքրությունը համախմբող դեր ունեցավ ռուսահայ գաղթօջախների կարողության, նյութական և բարոյական միջոցների միավորման համար, որն իր արտահայտությունն ունեցավ տարբեր բնագավառներում՝ իր դրսևորումը գտնելով նաև գրական-հրատարակչական բնագավառում:

Այդ տարիներին Մոսկվայում հրատարակվեց հայ պոեզիայի գոհարներից «Պոեզիա Արմենիի» գիրքը, իսկ Պետրոգրադում լույս տեսավ հայ գրական մի ուրիշ ժողովածու՝ «Արմյանսկի գրոնիկը», որոնց հաջող ընթացքը խրախուսեց և անհրաժեշտ դարձրեց Մոսկվայի հայկական հրատարակչության գոյությունը: 3-րդայության համար ստեղծված դժվարին կացությունը ծնունդ տվեց «Արմյանսկի վեստնիկ» պարբերականի հրատարակությանը. «Փետրվարյան հեղափոխությունը, իսկ այնուհետև նաև հոկտեմբերյան հեղաշրջումը առաջացրին հայ ազգային կյանքի բուռն ալեկոծություն: Այդ ամիսներին Մոսկվայում կարևոր իրադարձություն դարձավ 1917 թ. ապրիլին «Արմյանսկի վեստնիկի» խմբագիր Գ. Ամիրյանի նախաձեռնությամբ «Մոսկվայի հայկական հրատարակչություն» բաժնետիրական ընկերության ստեղծումը, որն իր խնդիրն էր համարում հայերենով գեղարվեստական, գիտական և հանրամատչելի գրքերի, ինչպես նաև ռուս և հայ հեղինակների ուշագրավ ստեղծագործությունների թարգմանությունների հրատարակությունը»<sup>320</sup>: Նախատեսվում էր հայ հեղինակների գործերի թարգմանությունների հրատարակում ռուսերեն, ինչպես նաև գրապահեստի, գրադարանի, գրախանութի հիմնում: 3-րատարակվեցին Վ. Տոտոյանցի, Ա. Ջիվելեգովի և Ի. Անանովի աշխատությունները: 3-րատարակչության գործունեությունը դադարեց 1917 թ. վերջին կիսատ թողնելով այդքան անհրաժեշտ գործը:

1916-1918 թթ. Մոսկվայում կյանքի կոչվեց «Արմյանսկի վեստնիկ» պարբերականը՝ Գ. Ամիրյանի և Ա. Ջիվելեգովի (փաստացի խմբագիրը) ջանքերի շնորհիվ, որը շուտով դարձավ օրինակը չունեցող մամուլի օրգան, զարգացման նոր հարթության վրա դնելով հայ-ռուսական հասարակական, մշակութային-գրական կապերը: «Արմյանսկի վեստնիկ»-ն, փաստացիորեն, հանդիսանում էր 1914 թ. հիմնված Մոսկվայի հայկական կոմիտեի տպագիր օրգանը. «Լրագիրը, որ լույս էր տեսնում ամեն ամիս, հիմնադրվել էր ռուս ըն-

<sup>320</sup> 3-րդ գաղթաշխարհի պատմություն, էջ 320:

թերցողին հայ ժողովրդի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքին, Հայաստանի պատմությանը, Հայկական հարցին ծանոթացնելու նպատակով»<sup>321</sup>: «Արմյանսկի վեստնիկ»-ն երբեք հայերեն բաժին չունեցավ, հրատարակվեց ռուսերեն լեզվով, որը հնարավորություն ընձեռեց պարբերականի աշխատակիցների կազմում ընդգրկելու ռուսական գրական միջավայրի նշանավոր դեմքերի՝ Մ. Գորկուն, Վ. Բրյուսովին, Ա. Բլոկին, Ա. և Յու. Վեսելովսկիներին, Վ. Նեմիրովիչ-Պանչենկոյին և այլոց: Առաջին աշխարհամարտի տարիներին Արևմտյան Հայաստանում ընթացող ռազմական գործողությունները լայնորեն լուսաբանվում էին ռուսական մամուլում, իսկ Ռուսաստանում անախադեպ կերպով աճեց հետաքրքրությունը հայ ժողովրդի պատմության, արվեստի, գրականության նկատմամբ: Ահա այս խնդրի գլուխ բերման ուղղությամբ հսկայական աշխատանք վերապահվեց «Արմյանսկի վեստնիկ»-ին և նրա խմբագրակազմին, որոնց ջանքերը միայն այս ասպեկտով, միանգամայն բավարար էին ըստ արժանվույն գնահատելու: «Արմյանսկի վեստնիկ» ծառայություններից մեկը կայանում է հենց նրանում, որ նա հանդես եկավ, որպես հայ գրականության ու մշակույթի պրոպագանդիստ ռուսական միջավայրում»<sup>322</sup>: «Արմյանսկի վեստնիկ»-ն իր ողջ գոյության ընթացքում մեծ ուշադրություն դարձրեց հայ գրական արժեքները ռուսերեն լեզվով ներկայացնելու գործին, ուստիև բոլոր համարներն էլ լույս տեսան հայ գրական երկերով. «Երկու հարյուր գրական գործ տպագրվեցին շաբաթաթերթում, մեծ մասամբ չափածո գրվածքներ»<sup>323</sup>: Պարբերականը կարողացավ իր շուրջը համախմբել մտավորական անվանի ու կարող ուժերի, լուսաբանել հայ ազգային կյանքի հրատապ հարցեր: «Արմյանսկի վեստնիկ»-ի շուրջ ձևավորված մթնոլորտը հնարավորություն տվեց թերթի էջերում լայնորեն արծարծելու հայ կյանքի բազմաթիվ խնդիրներ, հայ իրականության և ապագայի, պատերազմի հետևանքների հաղթահարման հիմնահարցեր: Նախևառաջ, պատմական, մշակութային և գրական հողված-ակնարկներ հրապարակվեցին հայ ժողովրդի պատմության փառավոր էջերի վերաբերյալ, որոնք ռուս հանրությանը մոտիկից էին ներկայացնելու այն ժողովրդի անցյալին, որի բախտն ու ֆիզիկական գոյության ճակատագիրը օրակարգի հարց էր դարձել:

Խորհրդահայ անդրանիկ պարբերականը՝ «Կոմունիստ»-ը, հրա-

տարակվել է Մոսկվայում 1918 թ. (մինչև 1919 թ. հունվար) և հանդիսանում էր ՌԽՖՍՀ Ազգությունների ժողովմատին առընթեր Հայկական Գործերի Կոմիսարիատի օրգանը:

«Կոմունիստ»-ի 47 աշխատակիցների թվում էին Վ. Տերյանը (խմբագիր), Ալ. Մյասնիկյանը, Պ. Մակինցյանը, Գ. Բժշկյանը, Ա. Կարինյանը, Գ. Հակոբյանը: Շաբաթաթերթը քաղաքական պարբերական էր, որը հիմնականում տպագրում էր խորհրդային կառավարության դեկրետները հայաստանյան և միջազգային իրադարձությունների նվիրված տեղեկատվություն:

Խորհրդային իշխանության առաջին տարիներին՝ 1918-1919 թթ., Մոսկվայում հրատարակված երկրորդ պարբերականը «Կարմիր դրոշակ»-ն էր, «Կոմունիստ»-ի անմիջական հաջորդը՝ գրեթե միևնույն աշխատակազմով: Եթե «Կոմունիստ»-ը Կոմիսարիատի օրգանն էր, ապա «Կարմիր դրոշակ»-ը՝ հայ կոմունիստների մամուլի օրգանը: Հասարակական-քաղաքական այս պարբերականի առաջին համարի առաջնորդող հողվածը կրում էր «Հայաստանի Կոմունիստական Կուսակցություն» վերնագիրը, թեև հրատարակիչը Հայկական Գործերի Կոմիսարիատն էր: «Կարմիր դրոշակ»-ը հրատարակվեց Ռուսաստանի ներքին և միջազգային բարդ իրավիճակի շրջանում՝ 1919 թ.: Ընդամենը 16 համար լույս ընծայած թերթի խմբագիրն էր Ա. Կարինյանը<sup>324</sup>, իսկ աշխատակիցների թվում էին Վ. Տերյանը, Ա. Գովհաննիսյանը, Գ. Հայկունին, Գ. Բժշկյանը, Վ. Ավանեսովը: Ինչպես «Կոմունիստ»-ին «Կարմիր դրոշակ»-ին նույնպես չհաջողվեց թղթակիցների լայն ցանց ստեղծել և ապահովել մշտական տեղեկատվություն, ինչը շատ բանով պայմանավորված էր Ռուսաստանի քաղաքական իրողություններով՝ երկրի հաղորդակցության խափանումներով: Մոսկվայի բոլշևիկյան հայ մամուլի հիմնական խնդիրներից էր Ռուսաստանի հայաբնակ վայրերում առաջացած կոմունիստական մամուլին ուղղություն տալը:

Պյատիգորսկում 1918 թվականին հրատարակվեց «Կարմիր օրեր»-ը, իսկ 1919 թ. Աստրախանում «Կարմիր բանվոր»-ը<sup>325</sup>:

Ավելի ուշ՝ 1920-1921 թթ., Կրասնոդարում լույս տեսան բոլշևիկյան հայ մամուլի ևս երկու օրգաններ՝ «Բանվորի ծայնը»-ը և «Կարմիր աստղ»-ը:

Արմավիրում առաջին պարբերականին՝ «Կարիք»-ին, որը կարճ ժամանակով լույս տեսավ 1917 թ., հաջորդեց 1918 թ. կրկին կարճ

<sup>321</sup> Նույն տեղում:

<sup>322</sup> Արշարունի Ա., Մոսկվայի հայ մամուլը, Ե., 1971, էջ 253:

<sup>323</sup> Նույն տեղում:

<sup>324</sup> Հայ Սփյուռք հանրագիտարան, էջ 502:

<sup>325</sup> Արշարունի Ա., էջ 293:

ընթացք ունեցած բոլշևիկյան «Բանվորի ծայն»-ը. «Արմավիրում խորհրդային իշխանության հաստատումից հետո, 1920 թ. թերթը կրկին սկսում է լույս տեսնել, որպես ՌԿ/Բ/Կ Արմավիրի հայկական սեկցիայի օրգան: Թերթի խմբագիրն էր Արշակ Երտևյանը»<sup>326</sup>:

1920 թ. Արմավիրում հրատարակվում է նաև «Բանվորի կարիք» շաբաթաթերթը (խմբ. Գ. Վեքիլյան), իսկ 1924 թ. «Աշխատանքի ճանապարհ» օրաթերթը, որը հանդիսանում էր կուսակցության Արմավիրի հայկական սեկցիայի օրգանը. «1918-1921 թթ. խորհրդային Ռուսաստանի տարբեր քաղաքներում հրատարակվում էին 19 հայկական թերթեր»<sup>327</sup>:

Այս շրջանի խորհրդահայ պարբերական մամուլն արտացոլեց հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող պայքարը արտահայտելով կուսակցական-գաղափարական գիծը, միևնույն ժամանակ ունենալով նաև իրենց խոցելի կողմերը, որոնցից առավել նկատելի էր նաև հայ (նաև հայաստանյան, կովկասահայ) իրականությունից կտրված լինելը:

Առաջին աշխարհամարտի տարիներին ռուս հասարակությանը հայ իրականության հետ ծանոթացնելու, պատերազմի հետևանքով հայությանը հասցված արհավիրքները լուսաբանելու համար Օդեսայում հիմնվում է հասարակական-քաղաքական, գրական ամսագիր «Армяне и Война» անունով:

Ամսագիրը սկսում է հրատարակվել 1916 թ. մարտից մինչև 1917 թ. հունվար-փետրվար ամիսները, լույս տեսան ամսագրի ընդամենը 12 համար: Առաջին իսկ համարում ամսագրի խմբագիր-հրատարակիչ Ա. Ունանովը ընդգծում էր. «Մեր ամսագրի գլխավոր և հիմնական նպատակը ռուս և հայ մտավորականությանը հայ իրականության հետ լայնորեն ծանոթացնելն է»<sup>328</sup>: Ամսագրի ընթերցողների շրջանակը բավական լայն էր, որին բաժանորդագրվում էին Մոսկվայում, Պետրոգրադում, Սամարայում, Կիևում, Խարկովում, Դոնի Ռոստովում, Իրկուտսկի նահանգում (գ. Ինոկենտևսկոյե), ինչպես նաև Անդրկովկասում Երևանում, Թիֆլիսում, Բաքվում ևն. «...ամսագրի մեծ մասը տարածվում էր Ռուսաստանի հարավի հայկական գաղթօջախներում»<sup>329</sup>: Ամսագրի կայացմանն ու աշխատանքներին ներգրավվել էին հայ և ռուս հայտնի հրապարակախոսներ, գրականագետներ, հասարակական գործիչներ՝ Կ. Բրյուսովը, Յ. Վեսելովսկին,

<sup>326</sup> Погосян А., նշվ. աշխ., էջ 170:

<sup>327</sup> Նույն տեղում:

<sup>328</sup> Армяне и Война, Одесса, 1916, №1, с.2.

<sup>329</sup> Բանբեր Հայաստանի Արխիվների, №3 (18), 1967, էջ 282:

Գ. Չալխուշյանը, Մ. Բերբերյանը, Մարիետա Շահինյանը և այլք:

Ամսագրի վերջին համարում 1917 թ. N11-12-ում, Ս. Գազիևը մատնանշում էր այն դժվարություններն, որ կրում էր խմբագրությունը. «Հիանալի հասկանալով, որ մենակ տանել այդպիսի դժվար գործը ուժերից վեր է և Օդեսայում չունենալով ոչ մի հայ աշխատակից, ես դիմեցի Կովկասի շատ հայ հրապարակախոսների, գրականագետների և հասարակական գործիչների՝ խնդրելով համագործակցություն: ...ստիպված էի դիմել անցանկալի արտատպումների ուրիշ մամուլի միջոցների հետաքրքիր նյութերի, որոնք վերաբերում էին հայությանը՝ կապված պատերազմի հետ»<sup>330</sup>:

Ամսագրի տարբեր համարներում ներկայացվել է տարածաշրջանի հայկական կոմիտեների (Օդեսա, Ակկերման, Սիմֆերոպոլ, Յալթա) ստեղծումն ու գործունեության որոշ դրվագներ:

Օդեսայում 1918-1920 թթ. հրատարակվել է «Հոսանք» գրական, հասարակական-քաղաքական թերթը, որը խմբագրում էր Դ. Բաղդասարյանը: Թերթի առաջին համարը լույս է ընծայվել 1918 թ. նոյեմբերի 5-ին: Թերթն իր առջև նպատակ էր դրել վերհանել Օդեսայի հայ համայնքի կյանքի և հասարակական-քաղաքական իրողությունները.

«1. Ճշգրիտ տեղեկութիւններ տալ մեր գաղութին ընդհանուր քաղաքական եւ մանաւանդ ազգային իրադարձի եւ դրութեան մասին:

2. Հիտակ եւ անաչառ կերպով լուսաբանել հասարակական, ազգային ինչպէս նաեւ տեղական բնոյթ ունեցող կարեւորագոյն խնդիրները»<sup>331</sup>: Շարունակ ընդգծելով տեղի գաղթօջախի անմխիթար վիճակը՝ «Հոսանք»-ն իր N 6-ում հստակ ներկայացնում էր առկա իրական պատկերն ու դրա պատճառներն, այն շտկելու ուղիները:

Անմխիթար պայմաններում գտնվող հայ գաղութի համար նոր հիմնախնդիրներ առաջ բերեց Առաջին աշխարհամարտը՝ Օդեսայում կենտրոնացել էին հազարավոր հայ փախստականներ Ռումինիայից, Բուլղարիայից, Արևմտյան Հայաստանից, Թուրքիայից ևն, ինչպես նաև հարյուրավոր նախկին հայ ռազմագերիներ պատերազմի ավարտից հետո, ովքեր մտադիր էին անցնել Հայաստան և օգնություն էին հայցում:

Թերթի «Տեղական կյանք» բաժնում շոշափվել են գաղութի ամենահրատապ խնդիրները՝ ինչպիսիք են տեղի հայ հասարակական

<sup>330</sup> Армяне и Война, 1917, № 11-12, с. 158.

<sup>331</sup> «Հոսանք», Օդեսա, 1918, № 1, էջ 1:

հիմնարկների գործունեությունը, գաղթականության և ռազմագերիների հարցերը, հայկական հյուպատոսարանի գործունեությունը, համայնքային կառույցի ձևավորման ընթացքը ևն:

Այստեղ լուսաբանվել են Օդեսայի հայկական գործող և մի շարք նորաստեղծ կազմակերպությունների վերաբերյալ բազմաբնույթ տեղեկատվություն, Ուկրաինայում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության գործուն քայլերը Օդեսայում լուրջ դերակատարություն ունեցող համայնքային-ազգային կառույց ունենալու, ուղղությամբ: Թերթը ներկայացնում է 1919 թ. հունվարի-փետրվարին Ուկրաինայում ՀՀ միասիայի ղեկավար Գ. Չամոյանի նախագահությամբ հայկական հասարակական գործիչների ժողով-խորհրդակցությունները. «խորհրդակցությունը աչքի առաջ ունեւելով, որ Օդեսայում կան մի քանի հասարակական հաստատություններ և այնուամենայնիւ ազգային և հասարակական գործերը անկարգ ու անկազմակերպ վիճակի մէջ են՝ եկաւ այն եզրակացութեան, որ պէտք է Օդեսայում հիմնել մի Ազգային Կոմիտէ, որ պարփակէ իւր մէջ Օդեսայի և շրջակայ մանր գաղութների ազգային-հասարակական կեանքի բոլոր կողմերը և լինի ամբողջ շրջանի համար մի բարձրագոյն ազգային հաստատութիւն»<sup>332</sup>. «Հոսանք»-ն իր 1919 թ. մարտի 22-ի համարում տեղեկացնում էր Օդեսայի Ազգային խորհրդի ընդունած ազգային տուրքի որոշման մասին. «Ամեն չափահաս հայ և հայուհի, որ մշտապէս կամ ժամանակաւորապէս ապրում է Օդեսայում կամ Խերսոնշչինայում և ունի որևէ գոյք կամ եկամուտ, պարտաւոր է ազգային տուրք վճարել»<sup>333</sup>.

«Ներքին տեսություն» բաժինն, արտացոլելով ոչ միայն գաղութահայ կյանքի անցուդարձն, առանձնանում էր «Մեր կարիքները», «Մեր ցաւերից», «Հայութեան ապագայնացումը» հոդվածաշարերով, ուր ներկայացվում էր գաղութահայ կառույցների ու ուժերի գործունեությունը, բացահայտվում էր առանցքային, հիմնական խնդիրները:

Լուրջ խնդիրների շարքում «Հոսանք»-ն առանձնացնում էր Օդեսայում կուտակված գաղթականության խնդիրների լուծումը. «...սուր կարիքը, որ աչքի է զարնում իւր քանակով և որակով՝ դա Օդեսայի հայ գաղթականութիւնն է, աւելի ուղիղ՝ նրա չքաւոր մասը: Երկու տարի անցաւ արդէն այն օրից, երբ հայ գաղթականները Ռումանիայից մեծ և փոքր խմբերով եկան Օդեսա, ոմանք անմիջապէս առաջ

զնացին Դրիմ, Նախիջևան, իսկ մեծ մասը մնաց Օդեսայում: Դժար և ծանր էր նրանց վիճակը սկզբում ոչ լեզու գիտէին, ոչ քաղաքին ծանօթ էին, ոչ օրէնքներին և ոչ սովորութիւններին: Սոսկալի ծմեռն էլ չափից դուրս շատ զոհեր տարաւ»<sup>334</sup>:

«Հոսանք»-ի էջերում անդրադարձ է կատարվել նաև Բուլղարիայի և Ռումինիայի հայ գաղութներին և նրանցում գործող հայկական հաստատություններին, ինչն հնարավորություն է ընծեռում վեր հանել տեղի հայ կյանքի որոշակի դրվագներ:

«Հոսանք»-ի 1919 թ. մարտի 15-ի համարից հստակորեն տեղեկանում ենք Օդեսայում նոր ռուսալեզու հայ թերթի հրատարակության մասին. «Այսօր լոյս է տեսնում տեղումս ռուսերէն լեզուով «Վեստնիկ Արմենիի» հայ թերթը, որ ամբողջապէս նւիրւած է լինելու հայ ժողովրդի և Հայաստանի շահերին»<sup>335</sup>:

Խորհրդային կարգերի հաստատումն ինչպէս ամենուրեք, այնպէս էլ Օդեսայում, եզրափակեց ազգային-համայնքային կյանքի փոքր-ինչ ակտիվացած ընթացքը: Ընդհիվ «Հոսանք»-ի լրջորեն լուսաբանվեցին ոչ միայն Օդեսայի, այլ նաև հարակից հայ գաղութների և համայնքների իրական պատկերը:

Դոնի հայ գաղութում գրական-մշակութային և հասարակական-քաղաքական մտքի զարգացումը նոր լիցքեր ստացավ հանձին «Հայ Համայնք» շաբաթաթերթի: «Հայ Համայնք» շաբաթաթերթը խմբագրեցին Դոնի հայ գաղութի նշանավոր դեմքեր Ե. Շահագիզն ու Ռ. Բերբերյանը: «Հայ Համայնք» գրական-հասարակական շաբաթաթերթը տպագրվում էր Ս. Ավագյանի (Ավակով) տպարանում 1918-1920 թթ.<sup>336</sup>: Թեև շաբաթաթերթի կարճատև գոյության շրջանին, ձևավորվեց ազգային-համայնական մամուլի օրգան, որն առանձնահատուկ դեր ունեցավ գաղութի կյանքում՝ դառնալով Ռուսաստանի հարավի հայության խոշոր և ազդեցիկ պարբերականը:

«Հայ Համայնք»-ն արժարժում էր ամենատարբեր խնդիրներ և իր էջերում առանցքային տեղ էր հատկացնում Համայնական խորհրդի և Վարչության գործունեության լուսաբանմանը, տեղական կյանքի անցուդարձին, կովկասյան իրականությանը, հայ գաղթականության խնդիրներին, Ռուսաստանի տարբեր հայ գաղթօջախների կյանքին, մշակութային-կրթական խնդիրներին ևն:

Համայնական կառույցների գործունեության լուսաբանմանը

<sup>334</sup> Երկրի տեղում, № 12, էջ 1:

<sup>335</sup> Երկրի տեղում, № 37, էջ 4:

<sup>336</sup> Հայ պարբերական մամուլը. Համահավաք ցուցակ (1794-1980), կազմ. Բաբլոյան Ս., Ե., 1986, էջ 116:

<sup>332</sup> Երկրի տեղում, № 26, էջ 3:

<sup>333</sup> Երկրի տեղում, № 38, էջ 2:

նվիրված բաժինը հաճախակի վերնագրված էր «պաշտօնական»՝ ընդգծելով շաբաթաթերթի՝ Համայնական կառույցների օրգան լինելու հանգամանքը: Այս բաժնում մանրակրկիտ ներկայացված էր նաև Համայնական հորհրդի և նրա ֆրակցիաների դիրքորոշումը համայնքային կյանքի տարբեր ոլորտների ու խնդիրների առնչությամբ: Համայնական հորհրդի նիստերի լուսաբանման նշանակությունն ավելի մեծ էր, քանի որ այն տարածաշրջանում ազդեցիկ հայկական կառույց էր, որի հետ շատ ազգային խնդիրների լուծումը կապում էր նաև նորանկախ Հայաստանի Հանրապետությունը: «Հայ Համայնք»-ի 1918 թ. հուլիսի 22-ի համարում ներկայացված էր Համայնական հորհրդի նիստերից մեկի օրակարգը, ուր քննարկվել են համագործակցության առաջարկներ. «1918 թ. յուլիսի 8-ին կայացաւ Նոր-Նախիջևանի Հայ Համայնական հորհրդի նիստը: Նախագահում էր Ռ. Բերբերյանը: Ներկայ են 35 պատգամավոր: Նախագահը ժողովը բանալով յայտարարում է նիստի հետևեալ օրակարգը.

Ուկրայինական կառավարութեան կից Հայաստանի կոմիսարիատի նախաձեռնութեամբ հրաւիրուելիք համագումարի մասին խորհրդակցութիւն և պատգամաւորների ընտրութիւն», - ապա անցնելով առաջին հարցի քննարկմանը, հայտնում է, - «Ուկրայնական կառավարութեան կից Հայաստանի կոմիսարիատի ներկայացուցիչ Ա. Տօնեան, որ ներկայումս այստեղ է, կոմիսարիատի նախաձեռնութեամբ առաջարկում է յուլիսի 10-ին Համայնական հորհրդի ժողովարանում զումարել մի համագումար, որտեղ պիտի մասնակցեն Ուկրայինայի, Ղրիմի, Դոնի և Սոլդաիայի հայ կազմակերպութիւնների ու կոմիտեների ներկայացուցիչներ՝ վճռելու մի շարք կարևոր հարցեր, որոնք վերաբերում են թէ վերոյիշեալ պետութիւնների մէջ ապրող հայերի ազգային կազմակերպութիւններին և թէ նորակազմ Հայկական պետութեան ներքին կազմակերպութեան»<sup>337</sup>:

«Հայ Համայնք»-ն իր «Տեղական կյանք» բաժնում լուսաբանում էր Նոր Նախիջևանում և Դոնում գործող բազմաթիվ հայկական կազմակերպությունների, կոմիտեների, հոգաբարձությունների գործունեությունն ու դրանց հաշվետվությունները: Շաբաթաթերթը լայն տեղեկատվություն է ապահովել Նոր Նախիջևանի Բարեգործական ընկերության, Աղքատաց Եկեղեցական Հոգաբարձության, Կարմիր հաչի Ռոստովի Հայկական Կոմիտեի: Դոնի տարաբնույթ հայկական կազմակերպությունների՝ Հայկական Կոմիտեի, Կանանց համամատար Ընկերության, Սպառողական Ընկերության, հայրենակցական միու-

թյունների իրականացրած ծրագրերի մասին: Թերթի «Գյուղական կյանք» բաժնում տեղ էին գտնում Դոնի հայկական գյուղերի ընթացիկ կյանքը, հայ գյուղացու առօրեական խնդիրները:

«Հայ Համայնք»-ի համար կարևոր նախապայման էր իր էջերում չճշտված տեղեկատվության հրապարակումը, ինչից խուսափում էր խմբագրությունը. «Հրապարակի վրայ գտնուող թերթերին որքան էլ թոյլատրելի լինի այս և այն պատահական ստացած լուրերը տպել, այդ բանը թոյլատրելի չէ համայնքի պաշտօնական օրգանին»<sup>338</sup>: Նման մոտեցումը, որ ցուցաբերում էր «Հայ Համայնք»-ի խմբագրությունը, խոսում է նրա լրջմիտ գործելաոճի և պատասխանատվության գիտակցման մասին, ինչը միայն դրական կողմերով կարող է բնութագրել այս օրգանին:

Գաղթականության խնդիրը «Հայ Համայնք» շաբաթաթերթի էջերում զբաղեցրել է առանցքային տեղ, քանի որ այն հանդիսանում էր հրատապ լուծ ունենր պահանջող և խիստ արդիական թեմա: «Հայ համայնք»-ի բոլոր համարներում էլ մեծ տեղ է զբաղեցրել հայ գաղթականության հոգսերը թեթևացնելուն ուղղված կոչերը: Շաբաթաթերթը լուսաբանել է նաև Վրաստանի և Ադրբեջանի վերաբերմունքը դեպի հայ գաղթականները, ինչպես նաև նրանց փրկելու «արինաժոր» Հայաստանի քայլերը: «Հայ Համայնք»-ի կողմից գաղթականության խնդիրը մշտապես ուշադրության կենտրոնում ունենալու շնորհիվ, հնարավոր է որոշակիորեն խոսել ոչ միայն նրանց տեղաբաշխման շրջանների, այլ նաև գաղթի հիմնական ուղղությունների և թվի, տեղերում ձեռնարկված օգնության վերաբերյալ:

Դոնի հայ գաղութի և նրա կյանքի լուսաբանումից բացի, «Հայ Համայնք»-ը հաճախակի է անդրադարձել տարբեր համայնքների հասարակական-քաղաքական և մշակութային կյանքին: Այդ տեղեկատվությունն առավել հաճախ էր Դոնին մոտ գտնվող հայաբնակ տարածաշրջաններից՝ Կուբանից, Հյուսիսային Կովկասի տարբեր շրջաններից, Ղրիմից, Ուկրաինայից ևն: Շաբաթաթերթն իր թղթակցությունների միջոցով լայն տեղեկատվություն է ապահովել այս տարածաշրջաններում գործող հայկական տարաբնույթ կազմակերպությունների գործունեության վերաբերյալ: Հատկանշական է, որ վերոհիշյալ տարածաշրջաններում գործող հայկական կառույցներն ու հիմնարկներն իրենց գործունեության դաշտի և ուղղությունների վերաբերյալ հրահանգավորվում էին Ռոստովից կամ Թիֆլիսից, ինչն էլ հեշտացնում էր նրանց ձեռնարկումների լուսաբանումը «Հայ

<sup>337</sup> Հայ Համայնք, 1918, հ. 11, էջ 137:

<sup>338</sup> Նույն տեղում:

Համայնք»-ի էջերում: Այսպես, շաբաթաթերթը լուսաբանելով Ղրիմի հայությանը, ազգային խնդիրներով մտահոգվելու առթիվ, գրում է. «Հունւար 13-ին Սիմֆերոպոլում գումարուեց Տաւրիկեան (բացի Ղրիմից նաև 3 գավառները մասնակցում էին, որ հիմա Ուկրաինային էին անցել) նահանգի հայկական հերթական (վերջինը 1917 թ. դեկտ. 18-ին) համագումարը: Համագումարը գտաւ, որ ազգի դրութիւնը «շատ փափուկ է և վտանգի ենթակայ»<sup>339</sup>: Շաբաթաթերթն իր հաջորդ համարներում ևս անդրադարձել է Ղրիմահայերի համագումարին, ներկայացնելով նրան հաջորդած գործնական քայլերը. «Կոմիտէներ հիմնւեցին Տաւրիկի հետևեալ քաղաքներում և գիւղաքաղաքներում՝ Սիմֆերոպոլ, Սևաստոպոլ, Եալթա, Սուդակ, Եւպատորիա, Ղարասուբազար, Ջանկոյ, Հին-Ղրիմ, Սուբաշի, Կերչ, Թեոդոսիա, Արմեանսկ և Սելիտոպոլ»<sup>340</sup>:

«Հայ Համայնք» շաբաթաթերթը բազմաթիվ հրապարակումներ է նվիրել Ղրիմի և մյուս հայ գաղթօջախների մշակութային-կրթական, ազգային լեզվի պահպանման հրատապ խնդիրներին:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում թերթի էջերում տպագրված Երվանդ Շահազիզի «Հայերն ու Վրացիները» հոդվածաշարը, որը բացահայտում էր երկու հարևան ժողովուրդների քաղաքական փոխհարաբերությունները ժամանակակից փուլում: Ե. Շահազիզն իրավամբ գրում էր, որ հայերն իրենց լավագույն ներկայացուցիչների բերանով բազմիցս նշել են և քարոզել կովկասյան ազգերի համերաշխության գաղափարը, թեև մահմեդականների հետ պատմական հանգամանքների բերումով հաշտ լինել չէին կարող. «...բայց ընդհանրապես մեղմ դիրք են բռնել (հայերը-Հ.Ա.) և հաշտեցուցիչ եղանակ ընտրել, միշտ աչքի առաջ ունենալով Կովկասում ստեղծած ազգերի փոխարարբերութեան փափուկ վիճակը, որ այդպիսի վեճերից ու բանակռիւներից կարող էր չարաչար փորձութիւնների հանդիպել»: Այսպիսով, Ե Շահազիզը նշում էր, որ հայերի հանդեպ վրաց պետական շրջանակների քայլերն ուղված էին քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում մեծ դիրքերի հասած Վրաստանի մեծաթիվ հայ ազգաբնակչության թուլացմանն ու աստիճանական դուրս մղմանը երկրից. «Վրաստանը անկախ հասարակապետութիւն հրատարակելով իրան, կազմում է իւր կառավարութեան դահլիճը որը հէնց առաջին քայլերից ցոյց է տալիս այնպիսի թթու ազգայնական շովէն ու հակադեմոկրատիք գործու-

<sup>339</sup> Նույն տեղում, հ. 9, էջ 114:

<sup>340</sup> Նույն տեղում, հ. 11, էջ 140:

նելութիւն, որ զարմացնում է բոլոր շրջանները...վրացիք դէն ձգելով իրանց երեսից կեղծ սոցիալ-դեմոկրատութեան դիմակը, դուրս են գալիս ասպարեզ իբրև զուտ վրացի ազգային գործիչներ հակահայ և հակառուս գործելակերպով»<sup>341</sup>:

«Հայ Համայնք» շաբաթաթերթի գործունեությունը ժամակաշիջներդրում էր ոչ միայն Ղրիմի հայ գաղթօջախի, այլ նաև ամբողջ Հարավային Ռուսաստանի հայության հոգևոր-լուսավորական, հասարակական-քաղաքական մտքի զարգացման ասպարեզում: Կյանք մտնելով բարդ ու ցնցումներով լի ժամանակաշրջանում, «Հայ Համայնք»-ն իր կարճատև գոյության ընթացքում (1918-1920 թթ.) ստանձնեց և պատասխանատվությամբ կրեց իրեն բաժին ընկած լուրջ դերակատարությունը՝ շարունակելով Ղրիմի հայ մամուլի ավանդույթները, սակայն իր մեջ ամփոփելով ժամանակի շունչն ու ազատ միտքը: «Հայ Համայնք»-ը մյուս հայ պարբերական մամուլի օրգանների շարքում ունեցավ իր ուրույն տեղն ու ձեռագիրը, սակայն ինչպես մյուս հայկական համայնքային պարբերականները 1920-ականների սկզբին դադարեց գոյություն ունենալ. ազդարարված էր Ղրիմի խորհրդահայ մամուլի ժամանակը:

Խորհրդային իշխանության տարիներին Թուրքեստանում լույս է ընծայվում Թուրքեստանի Կոմկուսի Կենտկոմի և Ազգային Փոքրամասնությունների Խորհրդի շաբաթաթերթ «Կարմիր շող»-ը: Թեև տարբեր հրատարակություններում (Հայ Սփյուռք Հանրագիտարան, Երևան, 2003, էջ 585) նշվում է, որ «Կարմիր շող»-ի 11 համարները հրատարակվել են 1923-1924 թթ., սակայն իրականում շաբաթաթերթի առաջին համարը լույս է տեսել 1924 թ. ապրիլի 20-ին: «Պահպանեցեք ձեր թերթը» առաջաբանով: «Կարմիր շող»-ի առաջին համարում շարադրված էին այն խնդիրներն, որոնք նպատակադիր էր իրագործել շաբաթաթերթը. «Այսօրվանից Թուրքեստանի հայ աշխատավորությունը ունենալու յն իր սեփական թերթը...Հայերեն լրագիրը - թեկուզ շաբաթական մի անգամ լույս տեսնող, նշանավոր զարկ կարող է տալ Թուրքեստանի հայ աշխատավորության հասարակակրթական առաջադիմության»<sup>342</sup>: Շաբաթաթերթի գլխավոր նպատակներից էր, անշուշտ, հայ աշխատավորությանը մոտեցնել խորհրդային իշխանությանը, դառնալ նրա գաղափարների տարածողը:

«Կարմիր շող»-ի էջերում առանցքային տեղ էր հատկացված Թուրքեստանի հայկական կուլտուր-կրթական կյանքին և հիմնարկ-

<sup>341</sup> Նույն տեղում, հ. 23, էջ 331:

<sup>342</sup> Կարմիր շող, Տաշքենդ, 1924, № 1, էջ 1:

ներին, այստեղ սփռված հայ գաղութներին և կենտրոններին, հայության հասարակական և կուսակցական կյանքին, Հայաստանի խնդիրներին, հայրենիքի հետ կապին ևն:

Թուրքեստանում գործող հայկական մշակութային, և մանավանդ, կրթական հիմնարկների ցանցի մասին ամփոփ կերպով ներկայացված է «Կարմիր Շող»-ի առաջին իսկ համարում. «Թուրքեստանի հայկական կուլտ-կրթական կյանքի խթանները հանդիսանում են կոմսեկցիաները, դպրոցները, բանվորական տները, թատրոնը և հասարակական ոժանդակիչ կոմիտեները: Կոմսեկցիաներ գոյություն ունեն միայն Տաշկենտում և Պոլտորացկում»<sup>343</sup>:

Թուրքեստանում սփռված հայկական համայնքների կենսագործունեության տարբեր հարցեր շոշոփվել են «Կարմիր Շող»-ի էջերում, ինչն հնարավորություն է տալիս որոշակիորեն պատկերացում կազմել դրանց վերաբերյալ: Տեղի հայկական կենտրոններին անդրադարձ է կատարվել շաբաթաթերթի «Գաղութներում» բաժնում: Այստեղ գետեղվում էին «Կարմիր Շող»-ի տեղերից ստացված թղթակցությունները, որոնք համապարփակ ներկայացնում էին անտարբեր վերաբերմունքը համայնքային խնդիրների ամբողջ շղթայի նկատմամբ:

«Կարմիր Շող»-ն Թուրքեստանի հայության ոչ աշխույժ կենսագործունեության գլխավոր բացթողումը համարում էր հասարակական գործերից խուսափելը, կուսակցական կառույցների և նրանցում ընդգրկված ազգությամբ հայ գործիչների ոչ համապատասխան վերաբերմունքը: Թուրքեստանի հայության հասարակական կյանքն ակտիվության մղող կարևոր դեր, խթան ունեցող կառույցներից էր Կենտրոնական Օժանդակիչ Կոմիտեն, որը կազմակերպվել էր 1924 թ. ապրիլին (նախագահ՝ Մ. Մելքոնյան):

«Կարմիր Շող»-ն իր էջերում ընթերցողներին հնարավորություն էր ընձեռում հաղորդակցվել հայ իրականությունը՝ ներկայացնելով «խորհրդային Հայաստանում» հողվածաշարերը: Շաբաթաթերթն իր առաջին իսկ համարում ներկայացել էր խորհրդային Հայաստանի կատարած տնտեսական քայլերն ու հաղթանակները: Ներկայացնելով խորհրդային Հայաստանի տնտեսական և հասարակական կյանքի ձեռքբերումները, շաբաթաթերթը, միևնույն ժամանակ, հրավիրում էր Թուրքեստանի հայերին անձնական մասնակցություն հանդես բերել հայրենիքի շինարարության գործին. «Հայկական բանվորագյուղացիական կառավարությունը հրավիրում է աշխարհի բոլոր կողմերում ցրված հայերին մասնակցել Հայաստանի շինարարության

մեջ: Թուրքեստանի հայերի մեջ ևս շատ կան քաղաքացիներ, վորոնք ամենայն սիրով գնում են հայրենիք պիտանի մշակներ դառնալու համար»<sup>344</sup>:

ՌԽՖՍՀ հարավում հայ պարբերական մամուլն անգամ հետիոկտեմբերյան շրջանում (1917-1920 թթ.) կարողանում էր ազգային խնդիրներ վեր հանել՝ անկախ իր քաղաքական հայացքներից: Խորհրդային իշխանության ամրապնդումից հետո իրավիճակը կտրուկ փոխվեց, եկել էր խորհրդահայ մամուլի ժամանակը. «Այլ կերպ դասավորվեց պարբերական մամուլի ճակատագիրը նոր իշխանության օրոք: Հայ պարբերական մամուլն ազգային էր միայն իր լեզվական կատարումով, սակայն ոչ իր բովանդակությամբ: Նույնիսկ համեմատաբար լիբերալ 20-ական թթ.-ին անցանկալի էր համարվում «ազգային մշակույթի» մասին հիշատակումը: Որպես կանոն, 1917 թվականից հետո հայկական թերթերը Մյասնիկովսկի ազգային շրջանի հայկական կուսակցական սեկցիաների պաշտոնական օրգաններն էին»<sup>345</sup>:

Այս ժամանակաշրջանում հայ պարբերական մամուլի օրգաններ տպագրվել են ինչպես Դոնում, այնպես էլ Հյուսիսային Կովկասի, Կուբանի հայկական կենտրոններում. «1918-1922 թթ. թերթեր են հրատարակվել երկրի հարավում «Կարմիր օրեր»-ը - Պյատիգորսկում, «Բանվորի ծայն»-ը՝ Արմավիրում, «Կարմիր աստղ»-ը՝ Կրասնոդարում, «Բանվորի կռիվ»-ը, «Խարիպկիթ»-ը և «Բանվոր»-ը՝ Նոր Նախիջևանում»<sup>346</sup>:

1922-1925 թթ. Հյուսիսային Կովկասի հայկական պարբերական մամուլի համար դադարի տարիներ էին, որն անսովոր էր շուրջ 200.000 հայ բնակչություն ունեցող տարածաշրջանի համար: 1920-ական թթ. կազմակերպվեց Հյուսիս-Կովկասյան երկրամասը, խորհրդային իշխանություններն աստիճանաբար գիտակցեցին նման մեծաթիվ ազգային փոքրամասնություն շրջանում գաղափարական աշխատանքի անհրաժեշտությունը, որն առանց մամուլի միջոցների ցածր արդյունավետություն էր ունենալու: Երկրամասի հայ պարբերականների հրատարակության վերականգնման ուղղությամբ առաջին քայլերն իրականացրեցին հայկական կուսակցական սեկցիաները. «1925 թվականի փետրվարին հայկական կուսակցական սեկցիան ՀամԿ/Կ/Կ երկրային կազմակերպության առջև հարց դրեց իր

<sup>344</sup> Նույն տեղում, № 5, էջ 2:

<sup>345</sup> Акоюн В., К истории национальной периодической печати Северного Кавказа в 20-е годы (армянская газета "Мурч Мангак"), Тезисы научной конференции: Армяне на Дону и Северном Кавказе, Ростов-на-Дону, 1993, с. 25.

<sup>346</sup> Նույն տեղում:

<sup>343</sup> Նույն տեղում, էջ 2:



տպագրական օրգանի հրատարակության մասին: Սեկցիան ոչ քիչ դժվարություններ հաղթահարեց, մինչև որ աշնանը լույս տեսավ «Մուրճ-Մանգաղ» նոր թերթի առաջին համարը»<sup>347</sup>: Մյասնիկյանի ազգային շրջանի կազմակերպումով, «Մուրճ-Մանգաղ» թերթը դարձավ շրջկոմի և կուսսեկցիայի միասնական մամուլի օրգանը: Դռնի Ռոստովում 1931-1937 թթ. հրատարակվեց «Գրոհ» թերթը, որպես Համկոմկուսի Գյուսիսային Կովկասի երկրկոմի, ապա ՀամԿ/Բ/Կ Ազով-Սևծովյան երկրկոմի օրգան՝ հանդիսանալով «Մուրճ-Մանգաղ»-ի շարունակությունը<sup>348</sup>: Հետաքրքրական է, որ «Գրոհ» թերթն ուներ նաև նույնանուն հավելվածը կիսագրագետների համար: Հավելվածը, որը տպագրվել է 1931-1933 թթ.՝ հանդիսանում էր Ազով-Սևծովյան երկրամասի Լուսժողխորհի և «Կորչի անգրագիտությունը» ընկերության օրգանը (խմբ.՝ Վ. Ծոկյան)<sup>349</sup>: «Մուրճ-Մանգաղ»-ի և «Գրոհ»-ի անմիջական շարունակությունը հանդիսացավ «Բոլշևիկ»-ը, որը տպագրվեց 1937-1938 թթ. Դռնի Ռոստովում դառնալով նոր ձևավորված ՀամԿ/Բ/Կ Ռոստովի մարզկոմի օրգանը: Տարբեր անվանումներով և հրատարակչական կոլեկտիվի գրեթե նույն կորիզով Դռնի Ռոստովում հանդես եկած այս պարբերականները, Անդրկովկասից դուրս ամենամասսայական ու փորձառու հայ օրգանն էր 1920-1930-ական թթ.:

«Բոլշևիկ»-ն իր էջերում մանրակրկիտ ներկայացնում էր Դռնի և Գյուսիսային Կովկասի հայության կյանքի ամենատարբեր կողմերը՝ դպրոցը, մշակութային-գրական կյանքը, հայ գյուղացուն և բանվորին, հայ կուսակցական և կոմերիտական կազմակերպություններին ևն: Թերթի էջերում լայնորեն քննարկվել է Մյասնիկյանի և Հայկական շրջանների սոցիալ-տնտեսական, կուսակցական-վարչական դեկավարման խնդիրներն ու հաջողությունները:

1938 թ., բռնությունների լայն ալիքի շրջանում, դադարեց թերթի աշխատանքը: Այս ալիքի հորձանուտում հայտվեց նաև Չալթրում 1931-1941 թթ. հրատարակվող՝ ՀամԿ/Բ/Կ Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջկոմի, շրջգործկոմի և շրջպրոֆխորհրդի եռօրյա օրգանը՝ «Կոմունար»-ը: «Բոլշևիկ»-ն իր 1937 թ. հուլիսի 21-ի համարում գրում էր «Կոմունար»-ի խմբագրակազմի վերաբերյալ կուսժողովի իրականացրած «բացահայտումների» մասին. «...խոսողներն առանձնապես կանգ են առնում ռայկոմի նախկին կուլտպրոպագանդիստ և ներկայիս «Կոմունար» թերթի խմբագիր Ռիանյանի քայքայիչ գոր-

ծունեության վրա»<sup>350</sup>:

Հայ կյանքի բազմաթիվ կողմերն արտահայտող «Բոլշևիկ»-ը հասու էր Դռնի, Գյուսիսային Կովկասի և Միության տարբեր կենտրոնների հայ իրականությանը: Այս տարածաշրջանում 1930-ական թթ. հրատարակվող խորհրդահայ մամուլի միջոցներից էին Տուսապետում 1932 թ. հրատարակվող «Գրոհ»<sup>351</sup>-ը (խմբ.՝ Գ. Առաքելյան), որն ունեցավ ընդամենը 32 համար և հանդիսանում էր ՀամԿ/Բ/Կ Գյուսիսային Կովկասի երկրկոմի Սոչու Հայկական շրջանի հրատարակություն հատկապես միտված ծխախոտագործության զարգացմանը: Անկանոն պարբերականությամբ (41 համար) 1933-1935 թթ. խարկովում լույս է տեսել տեղի հայ բանվորական ակումբի վարչության օրգան «Սոցարշավ»-ը՝ Մ. Աշխիբաշյանի խմբագրությամբ: 1940-1953 թթ., Կրասնոդարում ընդհատումներով լույս է տեսել «Կոմունար»-ը՝ Կրասնոդարի երկրամասի Հայկական շրջկոմի և շրջխորհրդի (գյուղ Շահունյան) օրգանը:

Տեղերում հրատարակվող խորհրդահայ մամուլն արտացոլել է հայ համայնքների պատմության առանցքային դրվագներ, որոնց ներկայությունն ու վեր հանումն ունի կարևոր պատմաքաղաքական և արդիական նշանակություն:

Այսպիսով, խորը արձատներ և պատմություն ունեցող ռուսահայ մամուլն իր առանձնահատուկ դերակատարությունը շարունակեց հետհեղափոխական շրջանում ևս՝ արձանագրելով ձեռքբերումների և անկումների մի նոր շրթա:

Ռուսաստանյան, ապա նաև խորհրդահայ համայնքներում 1917-1941 թթ. հրատարակված մամուլի պատմությունը հստակորեն կարելի է բաժանել 2 հիմնական փուլերի.

1. Գործունեության առաջին փուլն ընդգրկում է 1917-1920 թթ., երբ Ռուսաստանն ամբողջությամբ ներքաշված էր երկարատև քաղաքացիական պատերազմի մեջ: Խորհրդային իշխանություն ենթակայությունից դուրս գտնվող հայահոծ տարածաշրջաններում և կենտրոններում, տեղի ազգային-համայնքային կյանքի աշխուժացման պայմաններում կյանք մտան մի քանի նոր հայ պարբերականներ, որոնք հանդիսանում էին համայնքային հիմնարկների պաշտոնաթերթ կամ տվյալ համայնքի մտավորականության ջանքերի արգասիք:

2. 1920-1941 թթ. ընդգրկում են ԽՍՀՄ տարբեր տարածաշրջաններում հրատարակվող բացարձակապես բոլշևիկյան,

<sup>347</sup> Նույն տեղում:

<sup>348</sup> Բաբլոյան Մ., նշվ. աշխ., էջ 188:

<sup>349</sup> Նույն տեղում:

<sup>350</sup> Բոլշևիկ, Դռնի Ռոստով, 1937, № 71, էջ 2:

<sup>351</sup> Բաբլոյան Մ., էջ 195:

խորհրդային հայ մամուլի պատմության կարևոր փուլերից մեկը: Միութենական հանրապետություններում հրատարակվող հայ մամուլն ամբողջովին արտահայտում էր խորհրդային գաղափարախոսության սկզբունքները, իշխող կուսակցության քաղաքական գիծը: Ելնելով խորհրդահայ մամուլի գործունեության վերոնշյալ շրջանակներից՝ ակնհայտ է դառնում այդ պարբերականների ազգային նկարագրի բացակայությունը:

1916-1918 թթ. Մոսկվայում հրատարակված և, փաստացիորեն, Մոսկվայի Հայկական Կոմիտեի օրգան հանդիսացող «Արմյանսկի վեստնիկ»-ն իր գործունյա խմբագրակազմի ջանքերով կարողացավ որակական նոր հարթակի վրա դնել հայ-ռուսական հասարակական-քաղաքական և գրական-մշակութային կապերը, դառնալ ռուսահայ շրջանակների հույսերի և ձգտումների արտահայտիչը՝ հայության խնդիրների վրա սեռելով ռուսական հասարակական լայն շրջանակների ուշադրությունը:

Օդեսայում 1916-1917 թթ հրատարակվել է «Армяне и война», իսկ 1918-1920 թթ. «Հոսանք» պարբերականները, որոնք, թեև իրենց կարծատև գործունեությանը, էական նշանակություն ունեցան ոչ միայն օդեսահայ համայնքի մշակութային-հասարակական կյանքում, այլ նաև իրենց կարևոր ներդրումն ունեցան տարածաշրջանի ցի-րուցան հայության համախմբման գործում:

Դոնի հայ գաղութում 1918-1920 թթ. հրատարակվող «Հայ համայնք» շաբաթաթերթը, նոր մակարդակի բարձրացրեց հայ հասարակական-քաղաքական և գրական միտքը՝ հանդիսանալով Նոր Նախիջևանի և Դոնի Ռոստովի հայ համայնքի պաշտոնաթերթը: «Հայ համայնք»-ն իր էջերում արժարժեց գաղութահայ կյանքի ամենատարբեր և հրատապ խնդիրներ, առանձնահատուկ ուշադրություն հատկացրեց ՀՀ-ում, Անդրկովկասում և Ռուսաստանում տեղի ունեցող զարգացումներին: Դոնի հայության պաշտոնաթերթի էջերում ներկայացվում էր համայնքային կառույցների գործունեությունը և լուսաբանվում Հարավային Ռուսաստանի հայ իրականությունը:

Հյուսիսային Կովկասի մի շարք հայաշատ կենտրոններում՝ Եկատերինոդար, Արմավիր, ևն հրատարակվել են հայկական այլ պարբերականներ, որոնք սակայն տեղերում խորհրդային իշխանության հաստատումից հետո դադարեցրել են իրենց գործունեությունը:

Նույն շրջանում Ռուսաստանի տարբեր կենտրոններում, այդ թվում՝ Մոսկվայում կարճ ժամանակով հրատարակվել են նաև բոլշևիկյան հայ մամուլի օրգաններ՝ «Կոմունիստը», «Կարմիր օրեր», «Կարմիր բանվոր» ևն, որոնց գաղափարական-քաղաքական սահմա-

նափակ ուղղվածությունը նրանց հնարավորություն չտվեց ամբողջականորեն դառնալ հայ կյանքի հայելին:

1920-ական թթ. դարձան խորհրդահայ մամուլի զարգացման և ընդլայնման շրջան, կյանք մտան բազմաթիվ հայ պարբերականներ, որոնցից առավել լուրջ դերակատարություն ունեցան Դոնի Ռոստովում 1920-1930-ական թթ. տարբեր անուններով և անկանոն պարբերականությամբ հրատարակվող «Մուրճ-Մանգաղ»-ը (հետագայում՝ «Գրոհ», «Բոլշևիկ»), 1924 թ. Տաշքենտում հրատարակված «Կարմիր շող»-ը ևն, որոնց գործունեության շնորհիվ լայնորեն լուսաբանվել են այդ տարածաշրջանների հայության կյանքի բազմաթիվ կողմեր:

Այսպիսով, խորհրդահայ համայնքների հոգևոր-մշակութային կյանքը 1917-1941 թթ. ապրեց բեկունային ժամանակաշրջան՝ ունենալով կարճատև ձեռքբերումների ու զարթոնքի ժամանակաշրջան, իսկ 1920-1930-ական թթ սկսած՝ ազգային դիմագծի աստիճանական կորստի շրջան: Խորհրդային ամբողջատիրական համակարգի պայմաններում թե ազգային եկեղեցին, թե դպրոցն ու մամուլը, հոգևոր արժեքները մեծ վնասներ կրեցին: ԽՍՀՄ հայահոծ համայնքներում ազգային կյանքը թեև ամբողջական անկում չապրեց, սակայն համայնքային կառույցների, հոգևոր-կրթական հաստատությունների փակումից ու լուծարումից հետո վտանգվեց համայնքների հայապահպան և սերնդի հայեցի դաստիարակության գործը:

Վերազգային քաղաքական մշակույթը, խորհրդային հանրույթի սկզբնավորումը և ռուսական միջավայրի հզոր ազդեցությունն անպաշտպան և խոցելի դարձրեցին հայրենիքից հեռու գտնվող համայնքների գոյությունը: Այնուհանդերձ, Հայաստանից դուրս գտնվող համայնքների համախումբ տեղաբաշխումն ու ազգային արմատները պահելու ձգտումը պայմաններ ստեղծեցին հաղթահարելու խորհրդային իշխանության առաջին տասնամյակներին տեղ գտած բազմաթիվ արհավիրքներ:

Այս ամենով հանդերձ, հայ եկեղեցուն, դպրոցին, ազգային մամուլին և հոգևոր-մշակութային մյուս հաստատություններին ու արժեքներին հասցված վնասը հսկայական էր:

## ՎԵՐՉԱԲԱՆ

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունով Ռուսաստանում տապալվեց ինքնակալությունը: Նախկին ցարական Ռուսաստանի տարբեր տարածաշրջաններում բնակվող հայությունը ոգևորությամբ ընդունեց ցարիզմի տապալումը՝ իր ազգային ձգտումների հանգուցալուծումը տեսնելով դեմոկրատական կարգերի հաստատման մեջ: Ռուսաստանը ներքաշվեց երկարատև քաղաքացիական պատերազմի մեջ, ավելի ուշ ձևավորվեցին ինքնուրույն խորհրդային հանրապետություններ:

Խորհրդային հանրապետություններում բնակվող հայությունը հայտնվեց նոր հասարակական-քաղաքական իրողությունների պայմաններում:

Հանրագումարի բերեցք հետազոտության հիմնական արդյունքները: Այսպես.

1. Ցարական Ռուսաստանի տարբեր տարածաշրջաններում բնակվող հայությունն իր մասնակցությունն ունեցավ 1917 թ. հետո երկրում ծավալվող հասարակական-քաղաքական իրադարձություններին: Քաղաքացիական պատերազմի տարիներին ինչպես Հյուսիսային Կովկասում, Դոնում, Սև ծովի առափնյա շրջանում, Դրիմում, այնպես էլ Սիբիրում և Միջին Ասիայում բնակվող հայությունը ներգրավվեց հակամարտող կողմերի քարոզչության և շահերի դաշտում, ինչպես նաև հանդես եկավ տեղի հայության անվտանգության ապահովման դիրքերից:

Բազմաթիվ հայ անուններ՝ Հ. Բժշկյանց, Հ. Մելքունով, Գ. Ոսկանյան, Ա. Մյասնիկյան, Վ. Ավանեսով և այլք, հաստատուն կերպով մտել են Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի տարեգրության մեջ:

Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի տարիներին կազմակերպված հայկական մարտական ջոկատները (Հյուսիսային Կովկասում, Թուրքեստանում ևն) բացի այն, որ սատարում էին հակամարտ կողմերից մեկին, գլխավոր նպատակ ունեին պաշտպանել տեղի հայ բնակչությանը, դա կլինե՞ր մահմեդական մոլեռանդներից (Թուրքեստանում), կամ թե այլ քաղաքական կենտրոնների ազգայնամոլական և ռազմաքաղաքական հաշվարկներից (Սոչիի շրջանում):

2. 1917-1920 թթ., Դոնում, Հյուսիսային Կովկասում, Դրիմում, Հարավային Ուկրաինայում ծնունդ առան հայկական համայնքային կառույցներ՝ Նոր Նախիջևանում, Սիմֆերոպոլում, Թեոդոսիայում, Օդեսայում և այլ վայրերում, որոնք լուրջ դերակատարություն ունեցան հայ կյանքի օրապահանջ խնդիրները լուծելու ուղղությամբ:

1918 թ. հունիսի 12-ին Խորհրդային Ռուսաստանի ժողովրդխորհի ընդունած դեկրետով լուծարման էին ենթարկվում Խորհուրդների իշխանության տակ գտնվող բոլոր հայկական ազգային կոմիտեները, խորհուրդները, համայնքային կազմակերպությունները և այլ կառույցներ: Օրենքի կիրառությունը տեղ էր գտնում խորհրդային իշխանության՝ տեղերում հաստատվելու զուգահեռ:

Նոր Նախիջևանի և Դոնի հայության ազգային-մշակութային, հասարակական կյանքը 1917-1922 թթ. տնօրինել են Հայ Համայնական Խորհուրդն ու Վարչությունը: Նոր Նախիջևանի Հայ Համայնական Խորհուրդն իրավամբ հանդիսացել ոչ միայն Դոնի, այլ նաև ամբողջ Հարավային Ռուսաստանի հայության կենտրոնական և հեղինակավոր կառույցը՝ ներկայացրել է հայության շահերը տեղական իշխանությունների առջև, օղակ հանդիսացել ՀՀ և Հարավային Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների միջև: Կառույցում ներկայացված են եղել հայ ազգային կուսակցությունները՝ ՀՀԴ, ՍԴ Հնչակյան և այլն:

1919 թ. հունվարին տեղի ունեցած Դրիմի համահայկական համագումարից անմիջապես հետո կազմակերպվել է Սիմֆերոպոլի Հայ Համայնական Խորհուրդն ու Վարչությունը: Այս կառույցների գործունեությունը դադարել է Դրիմում 1920 թ. նոյեմբերին խորհրդային իշխանության հաստատումով: Դրիմի համայնական կառույցների գործունեության կենտրոնում ազգային-մշակութային հիմնարկների և հայ գաղթականության հիմնախնդիրներն էին:

Օդեսայում ազգային-համայնական հիմնարկություն ստեղծելու ուղղությամբ գործնական քայլեր է իրականացվել այստեղ գործող ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության անմիջական մասնակցությամբ 1919 թ. փետրվարին: Օդեսայի հայկական բոլոր հասարակական-մշակութային հաստատությունների մասնակցությամբ և միավորումով հիմնված Ազգային Խորհուրդը տնօրինել է Օդեսայի և Խերսոնցինայի հայության կյանքը, սակայն զոյատևել է մի քանի ամիս:

Վերոհիշյալ համայնքային կառույցներից բացի տարբեր տարածաշրջաններում գործել են հայկական բազմաբնույթ այլ կառույցներ՝ հայրենակցական և ուսանողական միություններ, մշակութային-լուսավորական հաստատություններ:

Հասարակական-քաղաքական բարդ ժամանակաշրջանում ստեղծված հայկական կազմակերպություններն անգնահատելի դերակատարություն ստանձնեցին.

ա. փախստական դարձած հազարավոր հայերի պատսպարման,

խնամքի կազմակերպման և մի մասին էլ հայրենիք վերադարձնելու գործում:

բ. համախմբեցին հայությանը գործող կազմակերպությունների և միությունների շուրջ, իրականացրեցին անհրաժեշտ ազգային-մշակութային միջոցառումներ՝ նպաստելով օտար ավերում հայտնված հայության ինտեգրմանը նոր միջավայրին:

